



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ**



ՏԱՐԵՎԱՆ ԶԵԿՈՒՅՑ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ՝
ՈՐՊԵՍ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... | 4 |
| ԳԼՈՒԽ 1. ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 6 |
| ԳԼՈՒԽ 2. ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ | 15 |
| 2.1. Ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովում | 15 |
| 2.2. Գերբնակեցում և խցերում անհավասար տեղաբաշխում | 48 |
| 2.3. Ազատությունից զրկված չծխող անձանց ծխողների հետ միևնույն խցում կամ կացարանում պահելու հետ կապված խնդիրներ..... | 53 |
| 2.4. Պատժախցերի պահման պայմաններ..... | 56 |
| 2.5. Կարանտինային բաժանմունքների պահման պայմաններ..... | 58 |
| 2.6. Լոգանքի ապահովում և սանհանգույցներ..... | 59 |
| 2.7. Սանիտարահիգիենիկ և պահման ընդհանուր պայմաններ..... | 62 |
| 2.8. Ազատությունից զրկված անձանց անհրաժեշտ պարագաներով ապահովում..... | 65 |
| 2.9. Պատշաճ սննդի ապահովում..... | 66 |
| 2.10. Հանգստի, ներառյալ՝ բացօդյա զբոսանքի կամ մարմնամարզությամբ զբաղվելու իրավունքի ապահովում..... | 69 |
| 2.11. Կապն արտաքին աշխարհի հետ..... | 72 |
| 2.12 Իրավական պաշտպանության միջոցների հասանելիությունը Քրեակատարողական հիմնարկներում..... | 78 |
| 2.13. Տրանսպորտային հաղորդակցում | 80 |
| 2.14. Ազատությունից զրկված անձանց կրթության իրավունքի ապահովում..... | 82 |
| 2.15. Աշխատանք և զբաղվածություն | 86 |
| 2.16. Քրեակատարողական հիմնարկների ծառայողների աշխատանքային պայմաններ.... | 88 |
| 2.17. Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելում..... | 90 |

| | |
|---|-----|
| ԳԼՈՒԽ 3. ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՑԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ | 96 |
| ԳԼՈՒԽ 4. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ | 99 |
| 4.1. Ազատությունից զրկված անձանց ձեռնաշղթաներով տեղափոխում և անվտանգության ապահովում | 99 |
| 4.2. Տրանսպորտային միջոցների պայմաններ | 103 |
| ԳԼՈՒԽ 5. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐ | 106 |
| 5.1. Պահման պայմաններ | 106 |
| 5.2. Բժշկական օգնության տրամադրում և արձանագրում..... | 111 |
| 5.3. Փաստաբանի անարգել մուտքի իրավունք | 114 |
| 5.4. Կապն արտաքին աշխարհի հետ | 116 |
| ԳԼՈՒԽ 6. ԽՈՇՏԱՆԳՄԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՄ ՊԱՏԺԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՐԳԵԼՔԸ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ | 120 |
| ԳԼՈՒԽ 7. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ | 128 |
| 7.1. Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համակարգը | 128 |
| 7.2. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի գործունեության հետ կապված խնդիրները..... | 139 |
| 7.3. Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննությունների արձանագրության ձևեր և ուղեցույց..... | 149 |
| 7.4. Ազատությունից զրկված անձանց միջև ամուսնության գրանցումը. օրենսդրական և գործնական խնդիրներ | 152 |
| 7.5. Ներքին կանոնակարգի խախտում կատարելու հետևանքով ազատությունից զրկված անձի 24 ժամով ժամանակավոր մեկուսացում..... | 156 |
| 7.6. Քրեակատարողական համակարգում իրավասու մարմինների գործողությունների և անգործության բողոքարկման մեխանիզմ..... | 158 |

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ցանկացած այլ դրսևորում բացարձակ անընդունելի է՝ անկախ նրանից, թե ում նկատմամբ է դա կատարվել և որտեղ: Այս երևույթների բացառման տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի դրանց կանխարգելումը: Սա իր հերթին ենթադրում է շարունակական ու համակարգված միջոցառումներ թե՛ օրենսդրական, թե՛ գործնական մակարդակում՝ միջազգային պահանջներին համապատասխան: Ընդ որում, արդյունավետ կանխարգելման հասնել հնարավոր է այդ նպատակի համար կոնկրետ գործառույթներ, դրանց գործադրման անհրաժեշտ մեխանիզմներ ունեցող մարմինների համակարգի շնորհիվ: Այս գործում, իհարկե, պետք է անհրաժեշտ մասնակցություն ունենա նաև քաղաքացիական հասարակությունը՝ ժողովրդավարական վերահսկողության հիմնարար դերին համահունչ:

Այս հարցը հատկապես զգայուն է, քանի որ վերաբերում է այնպիսի վայրերի, որտեղ անձինք պահվում են սեփական կամքին հակառակ, այսինքն՝ զրկված են ազատությունից: Այս վայրերը թե՛ իրավունքների ապահովման, թե՛ անվտանգության ապահովման տեսանկյունից առանձնահատուկ են, ուստի պահանջում են աշխատանքի խիստ մասնագիտական մոտեցումներ, որոնք ուղղված լինելով կոնկրետ խնդիրների վեր հանմանը՝ պետք է ապահովեն կոնկրետ արդյունքներ:

Միավորված ազգերի կազմակերպության «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունած կամընտիր արձանագրությունը (այսուհետ՝ Կամընտիր արձանագրություն) նախատեսեց կանխարգելման անկախ ազգային մեխանիզմի ստեղծում, որը պետք է օժտված լինի լայն լիազորություններով, ունենա ազատ մուտքի և համապատասխան ուսումնասիրությունների անցկացման հնարավորություն բոլոր այն վայրերում, որտեղ մարդիկ կարող են զրկված լինել ազատությունից:

Կամընտիր արձանագրության վավերացումից հետո՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» 2003 թվականի հոկտեմբերի 21-ի ՀՀ օրենքը լրացվեց 6.1-րդ հոդվածով, որով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ճանաչվեց կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ: Այս միակ դրույթը, սակայն, չէր սահմանում Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործառույթների ու ազատությունից զրկման վայրերի շրջանակը, չէր կանխորոշում կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակում համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ, առկա կարգավորումները հնարավորություն չէին տալիս վարձատրել Պաշտպանին կից Խոշտանգումների կանխարգելման

խորհրդի անդամներին, չէին լուծում նրանց կողմից կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակի շրջանակներում ձեռք բերված տեղեկությունների գաղտնիության պահպանման խնդիրը և այլն:

Այնուհետև, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխություններով պայմանավորված 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը (այսուհետ՝ Սահմանադրական օրենք), որի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին է վերապահված Կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը: Սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածն արդեն սահմանում է ինչպես Պաշտպանի լիազորությունները՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ, այնպես էլ տալիս է ազատությունից զրկման վայրերի հստակ շրջանակ: Նշված օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ կանխարգելման մեխանիզմի կարգավիճակով Պաշտպանի գործունեության նպատակն է խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելումն ազատությունից զրկման վայրերում:

Ներկայում կանխարգելման մեխանիզմի գործառույթների իրականացումն ապահովվում է Պաշտպանի աշխատակազմի Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության, ինչպես նաև կանխարգելման ազգային մեխանիզմի անկախ փորձագետների միջոցով: Այդ մեխանիզմի գործունեության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները ներկայացված են սույն զեկույցի հաջորդ շարադրանքում:

Կանխարգելման մեխանիզմի գործունեության անբաժան մասն է կազմում համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ: Դա նախևառաջ դրսևորված է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր Խոշտանգումների կանխարգելման խորհրդի աշխատանքով, որի կազմում ընդգրկված են հասարակական կազմակերպությունների՝ խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման ոլորտում մասնագիտացած ներկայացուցիչներ և նույն ոլորտի անկախ մասնագետներ:

ԳԼՈՒԽ 1. ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2017 թվականի ընթացքում նոր կարգավորումների հիման վրա որդեգրվել են մասնագիտական աշխատանքի բարձր որակ ու արդյունավետություն ապահովելուն ուղղված՝ միջազգայնորեն ընդունված սկզբունքներ:

Մասնավորապես, իրականացվել է անհատական բողոքների կամ գործերի քննարկման և կանխարգելման մեխանիզմի շրջանակներում մշտադիտարկման գործառույթների տարանջատում: Ներկայում Պաշտպանի աշխատակազմում այդ գործառույթներն իրականացվում են երկու տարբեր ստորաբաժանումների կողմից: Անհատական բողոքների կամ գործերի քննարկումը թույլ է տալիս վեր հանել ազատությունից զրկման վայրերում կոնկրետ իրավիճակներին առնչվող խնդիրները, իսկ մշտադիտարկումը հնարավորություն է տալիս ուսումնասիրության ենթարկել ողջ համակարգը (գործնական, օրենսդրական և այլն)՝ անկախ բողոքների առկայությունից: Ընդ որում, այս ստորաբաժանումների աշխատանքը փոխլրացնում է իրար. մշտադիտարկման ընթացքում ի հայտ եկած անհատական դեպքերը փոխանցվում են դրանց քննարկող ստորաբաժանմանը և հակառակը՝ անհատական բողոքներով վեր հանվող համակարգային բնույթի հարցերը ներկայացվում են կանխարգելման մեխանիզմի ստորաբաժանման ուշադրությանը: Գործում է տեղեկությունների փոխանակման ճկուն համակարգ:

Սահմանադրական օրենքի հիման վրա Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչությունում, որը գործում է մշտական հիմունքներով, ներգրավված են իրավաբաններ, ինչպես նաև բժիշկ: Կանխարգելման մեխանիզմի աշխատանքներին Պաշտպանի կողմից ներգրավվել են նաև անկախ մասնագետներ՝ գիտական ոլորտի և (կամ) հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ովքեր ունեն կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետի կարգավիճակ (հոգեբան, սոցիոլոգ, բժիշկներ, այդ թվում՝ հոգեբույժ):

Սահմանադրությունը և դրա հիման վրա ընդունված Սահմանադրական օրենքն առաջին անգամ սահմանում են կանխարգելման ազգային մեխանիզմի ֆինանսական երաշխիքներ: Նախ, Սահմանադրության 193-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Պետությունն ապահովում է Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության պատշաճ ֆինանսավորումը: Սահմանադրական օրենքը դրա հիման վրա արդեն ամրագրում է Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության հատուկ ֆինանսավորման պահանջ: Բացի դրանից, կանխարգելման մեխանիզմի անկախ փորձագետների վարձատրությունը, ի տարբերություն, նախկինի, իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ այդ նպատակով

Պաշտպանի աշխատակազմին հատկացված ֆինանսական միջոցներից: Այս առումով, հատկապես կարևոր է այն, որ Սահմանադրական նոր օրենքի պահանջի շնորհիվ Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից:

Անկախ փորձագետները կանխարգելման ազգային մեխանիզմի աշխատանքներում ընդգրկվում են նրանց հետ կնքված պայմանագրի հիման վրա, որը հնարավորություն է տալիս ոչ միայն վարձատրել նրանց կատարված աշխատանքի համար, այլ նաև հատուցել գործուղումների և աշխատանքի կատարման ընթացքում կատարված այլ ծախսերը:

Մարդու իրավունքների պաշտպանի հրամանով հաստատվել են կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների աշխատակարգը և վարքագծի կանոնները:

Մասնավորապես, Պաշտպանի հրամանով կարգավորվել են փորձագետների գործունեության սկզբունքները և վարքագծի հստակ կանոնները, մշտադիտարկման այցերի նախապատրաստման, իրականացման, ապա ամփոփման փուլերում փորձագետների հստակ պարտականությունները, դրանք կատարելու ընթացքում և դրանցից դուրս կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության շրջանակում փորձագետներին հայտնի դարձած տեղեկությունների հրապարակման արգելքը, բացառվել են շահերի բախման, ինչպես նաև փորձագետների՝ միաժամանակ այլ մշտադիտարկում իրականացնող խմբերում ընդգրկվելու հնարավորությունը:

Սահմանադրական օրենքով հատուկ ուշադրություն է դարձվում նաև Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց և կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների գործունեության այլ երաշխիքներին: Այսպես, Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձինք և կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետները կարող են բացատրություն տալ կամ հարցաքննվել Պաշտպանին հասցեագրված դիմումների կամ բողոքների էության կամ դրանց ուսումնասիրությունների արդյունքում Պաշտպանի կայացրած որոշումների վերաբերյալ, ինչպես նաև դրանք այլ անձանց տրամադրել ծանոթացման՝ միայն Պաշտպանի գրավոր համաձայնությամբ (տե՛ս Սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մաս):

ՀՀ քրեական օրենսգրքի 332.1-րդ հոդվածը պատասխանատվություն նախատեսեց Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու, այդ թվում՝ նրա գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու, Մարդու իրավունքների պաշտպանի՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման հետ կապված՝ նրա կամ նրա որոշմամբ հանդես եկող իրավասու անձի մուտքը ցանկացած վայր չթույլատրելու համար:

2017 թվականի ընթացքում կանխարգելման ազգային մեխանիզմի շրջանակում կատարվել է 160 այց Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ, Ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրեր, հոգեբուժական կազմակերպություններ և ազատությունից զրկման այլ վայրեր:

Օրենքով 2008 թվականից կանխարգելման մեխանիզմ ճանաչվելուց ի վեր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր գործել է Խոշտանգումների կանխարգելման փորձագիտական խորհուրդ: 2017 թվականին, նոր օրենսդրության կարգավորումներին համապատասխան, խորհուրդը ենթարկվել է փոփոխությունների: Մասնավորապես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի որոշմամբ ստեղծվել է Պաշտպանին առընթեր Խոշտանգումների կանխարգելման խորհրդատվական խորհուրդ և հաստատվել է խորհրդի կազմավորման և գործունեության կարգը: Խորհրդի կազմում ընդգրկվել են հասարակական կազմակերպությունների՝ խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման ոլորտում մասնագիտացած ներկայացուցիչներ և նույն ոլորտի անկախ մասնագետներ:

2017 թվականի ընթացքում պարբերաբար տեղի են ունեցել Խորհրդի նիստեր, այդ թվում՝ ընդլայնված, որոնց մասնակցել են խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ոլորտի մասնագետներ և իրավասու պետական մարմինների ներկայացուցիչներ: Նիստերի ընթացքում քննարկվել են ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովմանն առնչվող բազմաթիվ խնդիրներ (պայմանական վաղաժամկետ ազատման համակարգ, հոգեբուժական կազմակերպություններում անձի իրավունքների ապահովման վիճակ և այլն):

Աշխատանքի նշված փոփոխություններով հանդերձ, որդեգրվել են նաև հիմնարար նշանակության սկզբունքներ ու մոտեցումներ, որոնք դրված են աշխատանքի հիմքում:

Խոսքն առաջին հերթին վերաբերում է ազատությունից զրկված անձի նկատմամբ վստահության կանխավարկածի արմատավորմանը: Սա նշանակում է, որ ազատությունից զրկման վայրում պահվող յուրաքանչյուր անձի նկատմամբ պետք է ցուցաբերվի անհատական մոտեցում՝ անկախ ենթադրաբար կամ դատարանի դատավճռով հաստատված արարքի ծանրությունից կամ բնույթից: Այդ մոտեցումը պետք է հիմքում ունենա ազատությունից զրկված անձի վարքագծի ռիսկային գնահատման սկզբունքը: Ընդ որում, հանցանքի համար արդեն իսկ դատապարտվածների պարագայում պետք է գործի նրանց ազատ արձակվելուն աստիճանական նախապատրաստելու հիմնարար մեխանիզմը՝ ազատությունից զրկման վայր նրանց մուտք գործելու առաջին օրից սկսած: Կանխարգելման մեխանիզմի գործունեության ելակետային սկզբունքներից է նաև ազատությունից զրկված անձանց ներգրավումն իրենց վերաբերող որոշումների կայացմանը:

ցանկացած անձ, այդ թվում՝ ազատությունից զրկված անձը, ով չի կարող օտարացած լինել իրեն վերաբերող որոշումների կայացման հարցում:

Թվարկված ելակետային մոտեցումները բխում են նաև այն հիմնարար գաղափարից, որ արդար դատաքննության պահանջներն ու վատ վերաբերմունքի բացարձակ արգելքը չեն դադարում գործելուց, երբ մարդը հայտնվում է ազատությունից զրկման վայրում:

Կանխարգելման մեխանիզմի աշխատանքի կարևորագույն սկզբունքներից է նաև ազատությունից զրկման վայրում կատարած աշխատանքի արդյունքում ձեռք բերած տեղեկության գաղտնիության պահպանումը: Սա պետք է դիտարկել նաև մեկ այլ սկզբունքի համատեքստում, որն առնչվում է արդյունքի հասնելու հարցում համատեղ աշխատանքին ու չվնասելուն: Դրա հետ միասին, կանխարգելման մեխանիզմի ներկայացուցիչների կողմից գործադրվել է արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկների՝ միջազգայնորեն ընդունված երկու հիմնական տեսակ՝ անմիջապես ներկայացվող առաջարկներ, ինչպես նաև անհրաժեշտ ուսումնասիրությունից հետո գրավոր ձևակերպմամբ իրավասու մարմնին ներկայացվող պահանջներ կամ առաջարկներ:

Նկարագրվածը հիմքում ունենալով՝ 2017 թվականի ընթացքում ազատությունից զրկման վայրերի հետ կապված մշտադիտարկումն իրականացվել է հատուկ մեթոդաբանությամբ: Օրինակ՝ այցերի ընթացքում ուսումնասիրվում են պահման պայմանները, տեղի են ունենում առանձնագրույցներ ազատությունից զրկված անձանց և այդ վայրերի աշխատակիցների հետ: Վեր հանված խնդիրները քննարկվում են ազատությունից զրկման վայրերի վարչակազմերի կամ տնօրինությունների ներկայացուցիչների հետ, ուսումնասիրվում են ազատությունից զրկված անձանց վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը, իրականացվում է ստացված տեղեկությունների համադրում և վերլուծություն, վեր են հանվում օրենսդրական կարգավորման բացերը և թերությունները:

Ընդ որում, յուրաքանչյուր այցից առաջ տեղի է ունենում հատուկ քննարկում, որն ուղղված է կոնկրետ հաստատություն այցից առաջ բոլոր հարցերի պարզաբանմաները՝ այց իրականացնող խմբի առջև դրված խնդիրներ, այցի ընթացքում աշխատանքի սկզբունքներ, ազատությունից զրկված անձանց հետ առանձնագրույցներ ու նրանց վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն: Այցի արդյունքներն ամփոփող քննարկում տեղի է ունենում նաև այցից անմիջապես հետո: Ընդ որում, տեղեկության փոխանակման նպատակով այդ քննարկումներին մասնակցում են նաև այն ստորաբաժանման իրավասու ներկայացուցիչները, որն իրականացնում է ազատությունից զրկման վայրերի հետ կապված անհատական բողոքների կամ գործերի քննարկում:

Այցերի ընթացքում օգտագործվում են տարածությունը, ջերմությունը, խոնավությունը չափող սարքեր: Նշված սարքավորումներն օգտագործվում են

քրեակատարողական հիմնարկներում, ձերբակալված անձանց պահման և ազատությունից զրկման այլ վայրերում մշտադիտարկում իրականացնելիս, ինչը բարձրացնում է խոշտանգումների կանխարգելման ոլորտում գործունեության արդյունավետությունը:

Այցերի, ինչպես նաև անհատական բողոքների քննարկման արդյունքում արձանագրված խնդիրների, դրանց արդյունավետ լուծումների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվել են քննարկումներ, կատարված այցերի վերաբերյալ իրավասու մարմիններից պահանջվել են պարզաբանումներ, կայացվել են մարդու իրավունքների և ազատությունների խախտումները վերացնելու առաջարկ ներկայացնելու մասին որոշումներ՝ մատնանշելով առկա խնդիրները, առաջարկելով դրանց լուծման իրավական և գործնական մեխանիզմներ: Ներկայացվել են ոլորտը կարգավորող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ:

Կանխարգելման մեխանիզմի համար տեղեկությունների աղբյուր են հանդիսացել նաև Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված անհատական բողոքները, ազատությունից զրկման վայրեր կատարված այցերը, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների, միջազգային կառույցների, հասարակական կազմակերպությունների և դիտորդական խմբերի հրապարակած նյութերն ու ուսումնասիրությունները:

Ազատությունից զրկման առանձին վայրերում և մտահոգություն ներկայացնող հարցերի շուրջ Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ընթացքում վեր հանված խնդիրների ներկայացման համար 2017 թվականին ընտրվել է դրանց վերաբերյալ արտահերթ զեկույցներով հանդես գալու կառուցակարգը: Նման մոտեցումը հնարավորություն է տվել առավել ընդգրկուն և մանրակրկիտ ներկայացնել վեր հանված խնդիրները, այդ կապակցությամբ օրենսդրական կարգավորման բացերն ու թերությունները, գործնականում դրանց հիմքում ընկած հանգամանքները՝ ներկայացնելով ոլորտի բարեփոխման հստակ առաջարկներ:

Այսպես, 2017 թվականին հրապարակվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը՝ քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովման վերաբերյալ¹:

Միաժամանակ, 2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում են եղել, ի թիվս ազատությունից զրկման այլ վայրերի, հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող

¹Տե՛ս <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/b8beba20cc5240c574dd202b118ce109.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ:

անձանց իրավունքների ապահովման հարցերը: Դրանց ուսումնասիրման նպատակով կանխարգելման ազգային մեխանիզմի ստորաբաժանման ներկայացուցիչների և փորձագետների կողմից հոգեբուժական կազմակերպություններում իրականացվել են մշտադիտարկման այցեր:

Մշտադիտարկման աշխատանքների ընթացքում վեր հանված խնդիրները, դրանց կապակցությամբ կատարված մասնագիտական վերլուծություններն ու լուծմանն ուղղված առաջարկները համակարգված ներկայացվել են 2018 թվականի մարտի 21-ին հրապարակված «Հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցում²:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի առջև դրված խնդիրների իրագործմանը ու աշխատանքի արդյունավետության բարձրացմանը զգալիորեն նպաստել են նաև Մարդու իրավունքների պաշտպանի նոր լիազորությունները:

Խոսքն, օրինակ, վերաբերում է մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման գործառույթը: Այսպես, 2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի համար ներկայացվել են օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթներ: Դրանց կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմի կարծիքներում, իրականացված մշտադիտարկման այցերի և անհատական դիմումների քննարկման արդյունքում վեր հանված խնդիրների հաշվառմամբ, արվել են բազմաթիվ գործնական առաջարկներ, կազմակերպվել են դրանց վերաբերյալ աշխատանքային քննարկումներ:

Միաժամանակ, Պաշտպանը՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ իր գործունեության ընթացքում վեր է հանել ազատությունից զրկման վայրերում մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող մի շարք այնպիսի խնդիրներ, որոնք օրենսդրական բացերի ու թերությունների, միջազգային չափանիշներին և պետության ստանձնած պարտավորություններին համահունչ օրենսդրական կարգավորումների անհամապատասխանության արդյունք են: Այս կապակցությամբ 2017 թվականի սկզբից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվել և շրջանառության մեջ են դրվել վեր հանված խնդիրների լուծմանն ուղղված և ազատությունից զրկված անձանց վիճակը բարելավող օրենսդրական մի շարք նախագծեր:

Վերոնշյալ նախագծերի փաթեթներով, օրինակ, առաջարկվում է՝

²Տե՛ս <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/74369f4bd6584c4f665b712b164ce129.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ:

✓ ազատագրկման դատապարտված և կալանավորված անձանց կարճատև մեկնումներ տրամադրելու հիմքում դնել ոչ թե անձի կատարած հանցագործության ծանրության աստիճանը, այլ հաշվի առնել վերջինիս անհատական վարքագիծը և ռիսկայնությունը.

✓ կալանավորված անձանց համար նախատեսել երկարատև տեսակցության հնարավորություն.

✓ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխա ունեցող դատապարտյալի համար նախատեսել կարճաժամկետ մեկնում տրամադրելու հնարավորություն՝ երեխային մանկատանը կամ ազգականի մոտ տեղավորելու նպատակով.

✓ տեսակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակից առանձնացնել կալանավորված անձի ընտանիքների անդամներին կամ մերձավոր ազգականներին ու նրանց հետ տեսակցելու իրավունքը սահմանափակելու հնարավորության համար նախատեսել հստակ հիմքեր և ընթացակարգ.

✓ ընտանիքների անդամների կամ մերձավոր ազգականների հետ տեսակցելու իրավունքը սահմանափակող որոշումների համար նախատեսել պատճառաբանվածության պահանջ՝ բողոքարկման իրավական հնարավորության լիարժեք ապահովման նպատակով.

✓ ընտանիքների անդամների կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության իրավունքը սահմանափակող որոշումը դարձնել պարբերական վերանայման առարկա.

✓ ՀՀ քրեական օրենսգրքի՝ փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու հանցակազմի սուբյեկտ, պաշտոնատար անձից բացի, համարել ցանկացած այլ այնպիսի անձի, ով խոչընդոտել է փաստաբանի օրինական գործունեությունը՝ առանց սուբյեկտների շրջանակի սահմանափակման և այլն:

Վերոնշյալ նախագծերը և դրանց հիմնավորումներն օրենքով սահմանված կարգով շրջանառության մեջ են դրվել և կարծիքի համար ուղարկվել են շահագրգիռ պետական մարմիններին: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից նախագծերը կարծիքի են ուղարկվել նաև ոլորտի մի շարք իրավապաշտպան կազմակերպություններին: Այժմ դրանք գտնվում են լրամշակման և վերջնական ամփոփման փուլում:

2017 թվականն արժևորվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի հետ սերտ համագործակցությամբ: Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ընթացքում վեր հանված խնդիրների լուծման տեսանկյունից սկզբունքային է Սահմանադրական դատարան դիմելու Պաշտպանի սահմանադրական լիազորությունը: Այս առումով հարկ է առանձնացնել, օրինակ, դատարան ներկայացված դիմումը, որում բարձրացվել էին ազատությունից զրկում ենթադրող ընթացակարգերի օրենսդրական կարգավորումների լիարժեքության և, ըստ այդմ, ազատությունից զրկված անձի նվազագույն իրավունքների (լռելու, բժշկի,

փաստաբանի և այլ իրավունքներ) գործնական երաշխավորման հետ կապված հարցեր: Այդ դիմումի կապակցությամբ ընդունված որոշմամբ Սահմանադրական դատարանը հաստատել է Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումները:

Մարդու իրավունքների ոլորտում համակարգային հարցերի լուծմանը նպաստելու առումով սկզբունքային է նաև Սահմանադրական դատարանի կողմից քննվող գործերով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հատուկ դիրքորոշում ներկայացնելու պրակտիկայի ներդրումը:

Միջազգային կազմակերպությունների, գործընկեր պետական մարմինների ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցությամբ կազմակերպվել են զգալի թվով վերապատրաստման դասընթացներ դասավանդողների դասընթացներ, որոնց մասնակցել են Պաշտպանի աշխատակազմի, Պաշտպանին առընթեր Խոշտանգումների կանխարգելման խորհրդատվական խորհրդի անդամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ ու անկախ փորձագետներ, լրագրողներ, ոլորտի պետական մարմինների ծառայողներ: Դասընթացները կազմակերպվել են այնպիսի թեմաներով, ինչպիսիք են քրեակատարողական հիմնարկներում բժշկական զննության սկզբունքները, ինքնավաստումների և ինքնասպանության կանխարգելմանն ուղղված միջոցառումները, մեկուսացումը քրեակատարողական հիմնարկներում, խոցելի խմբերի նկատմամբ վերաբերմունքի առանձնահատկություններն ազատությունից զրկման վայրերերում և այլն:

«Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և արտասահմանյան մի շարք երկրների կանխարգելման ազգային մեխանիզմների ներկայացուցիչների հետ համատեղ՝ միջազգային փորձագետների մասնակցությամբ, անցկացվել է սեմինար-փորձի փոխանակում՝ կապված հոգեբուժական կազմակերպությունների մշտադիտարկման միջազգային չափանիշների ներդրման հետ: Ավելին, Պաշտպանի աշխատակազմում միջազգային փորձագետի և այլ երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ մշակվել է կանխարգելման ազգային մեխանիզմի՝ հոգեբուժական կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնելու աշխատանքային ուղեցույց³:

Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ 2017 թվականի ընթացքում իրականացրել է նաև «Արդարադատության ակադեմիայում, «Փաստաբանների դպրոցում և «Ոստիկանության կրթահամալիրում դասավանդվող խոշտանգումների կանխարգելման ոլորտի դասընթացների ծրագրերի ուսումնասիրություն՝ դրանց կատարելագործման վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու նպատակով:

³ Տե՛ս http://www.ombuds.am/images/Uxecuyc_hogebuzharanner_15.03.2018.pdf կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ:

Կանխարգելման ազգային մեխանիզմի աշխատանքը ենթադրում է նաև մշտական ակտիվ կապ միջազգային կազմակերպությունների ու առաջին հերթին ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի հետ, ինչպես նաև այլ երկրների գործընկերների հետ: 2017 թվականի ընթացքում ակտիվ է եղել աշխատանքը նաև Խոշտանգումների կանխարգելման ոլորտի միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների հետ (օրինակ՝ Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիա և այլն): Հայաստանյան փորձի ուսումնասիրության նպատակով Հայաստան են այցելել պատվիրակություններ Մարոկկոյից, Թունիսից, Բոսնիա և Հերցեգովինայից և այլն:

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

2.1. Ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովում

2017 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ (այսուհետ՝ Քրեակատարողական հիմնարկներ) իրականացված մշտադիտարկման այցերի, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված անհատական բողոքների քննարկման արդյունքում վեր են հանվել ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովմանն առնչվող այնպիսի խնդիրներ, որոնք արդիական են դարձնում ոլորտում շարունակական բարեփոխումների իրականացումը: Այդ խնդիրները, մասնավորապես, հանգում են հետևյալին.

Բժշկական անձնակազմի համալրվածություն, ինստիտուցիոնալ անկախություն և բժշկական տեխնիկայի հազեցվածությունը

Քրեակատարողական հիմնարկներում բժշկական անձնակազմի աշխատանքն ունի կարևոր դեր՝ որպես բժշկական օգնության պատշաճ ապահովման ու կազմակերպման երաշխիք: Բժշկական ծառայության նախատեսված հաստիքները, դրանց համալրվածությունն ու բժշկական անձնակազմի մասնագիտական կարողություններն անմիջականորեն կապված են Քրեակատարողական հիմնարկներում բժշկական օգնության ապահովման ու կազմակերպման գործընթացների հետ:

Բժշկական օգնության պատշաճ կազմակերպման ու արդյունավետության բարձրացման հարցում կարևոր է նաև բժշկական անձնակազմի անկախությունը:

Բժշկական ծառայությունների բավարարության և որակի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է քրեակատարողական ծառայության կողմից՝ այսպիսով չապահովելով բժշկական անձնակազմի անկախությունը: Մինչդեռ, հարկ է ընդգծել, որ Պաշտպանի գործունեության ընթացքում վեր հանված խնդիրները՝ կապված ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովման հետ, ի թիվս այլնի, պայմանավորված են բժշկական անձնակազմի մասնագիտական սկզբունքների և էթիկայի հետևողական պահպանման համար անկախության ոչ բավարար երաշխիքների առկայությամբ:

Կատարված ուսումնասիրության արդյունքները հիմք են տալիս եզրակացնելու, որ գործող ինստիտուցիոնալ ենթակայության պայմաններում բժշկական անձնակազմի նկատմամբ առկա է վստահության ցածր մակարդակ: Գերակշիռ դեպքերում բժիշկն ընկալվում է՝ որպես քրեակատարողական ծառայող, իսկ պացիենտները բժշկական անձնակազմի համար՝ ազատությունից զրկված անձինք: Արդյունքում, բժշկի մասնագիտական անկախության և սոցիալական երաշխիքները բավարար չեն արդյունավետ մասնագիտական գործունեություն ծավալելու համար:

Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի լիարժեք իրացման հարցում բժշկական անձնակազմի կարևորագույն դերակատարության մասին են վկայում նաև միջազգային իրավական չափանիշները:

Այսպես, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R(98)7 հանձնարարականն ամրագրում է, որ *ազատությունից զրկված անձի առողջական վիճակին վերաբերող կլինիկական որոշումները և այլ գնահատականները պետք է հիմնված լինեն միայն բժշկական չափանիշների վրա: Բժշկական անձնակազմը պետք է գործի լիովին անկախ՝ իր որակավորման ու իրավասության սահմաններում*⁴:

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (այսուհետ՝ ԽԿԿ) չափանիշների համաձայն՝ *առողջապահական հարցերում անձնակազմի անկախությունն երաշխավորելու համար, Կոմիտեն կարևոր է համարում անձնակազմի սերտ կապվածությունը հասարակության առողջապահության հիմնական համակարգի հետ*⁵:

ՄԱԿ-ի 2015 թվականի դեկտեմբերի 17-ի «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների»-ի (Նեյսոն Մանդելայի կանոններ) կանոնների 25-րդ կանոնն ամրագրում է, որ *առողջապահական ծառայությունները պետք է տրամադրվեն բավարար որակավորում ունեցող, այդ թվում՝ հոգեբանության և հոգեբուժության ոլորտում բավարար փորձառություն ունեցող միջոցիցսցիպլինար խմբի կողմից՝ բժշկական լիարժեք անկախության պայմաններում: Որակավորված արամնաբույժի ծառայությունները ևս պետք է յուրաքանչյուր դատապարտյալի հասանելի լինեն*:

Բժշկական գաղտնիքի առնչությամբ իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անձի առողջական վիճակի, վերջինիս նկատմամբ իրականացված բժշկական հետազոտությունների վերաբերյալ տվյալները հասանելի են նաև Քրեակատարողական հիմնարկի ոչ բժշկական անձնակազմին: Այսպիսի

⁴ Տե՛ս <http://hrlibrary.umn.edu/instreet/coerecr98-7.html> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 20:

⁵ Տե՛ս ԽԿԿ-ի գործունեության մասին 3-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 1992 թվականի հունվարի 1-ից դեկտեմբեր 31-ն ընկած ժամանակահատվածը <https://rm.coe.int/1680696a40> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 71:

պայմաններում լրջորեն խաթարվում են բժշկական անձնակազմի ինստիտուցիոնալ անկախության և գաղտնիության պահպանման սկզբունքները:

Այս մասին մանրամասն անդրադարձ է կատարված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի «Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային գեկույցում⁶:

2017 թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ արդարադատության նախարարությունը կարծիքի համար Մարդու իրավունքների պաշտպանին է ներկայացրել «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ ստեղծելու մասին ՀՀ կառավարության որոշման և վերջինիս կանոնադրությունը հաստատելու մասին Արդարադատության նախարարի հրամանի նախագծերը:

Քրեակատարողական ծառայությունում բժշկական սպասարկման որակն ու արդյունավետությունը բարձրացնելու, բժշկական անձնակազմի անկախությունն ապահովելու տեսանկյունից ՀՀ արդարադատության նախարարության նշված նախաձեռնությունը կարևոր է, որը պահանջում է «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ստեղծման և կարողությունների ընդլայնման հարցում հետևողական աշխատանք:

Բժշկական անձնակազմի համալրվածության վերաբերյալ կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման գործում կարևոր են ոչ միայն Քրեակատարողական հիմնարկներում նախատեսված հաստիքների համալրումը, այլև նրանց քանակական բաշխումը:

Այսպես, գրեթե բոլոր Քրեակատարողական հիմնարկներում նախատեսված են բժշկական ծառայության պետ, գլխավոր մասնագետ, առաջին և երկրորդ կամ երրորդ կարգի մասնագետներ, սակայն հաստիքների բաշխման մեխանիզմները երբեմն չեն ապահովում Քրեակատարողական հիմնարկների կարիքները: Ստացվում է այնպես, որ անկախ Քրեակատարողական հիմնարկների լրակազմի և այնտեղ պահվող ազատությունից զրկված անձանց առողջական խնդիրների գնահատման, նախատեսվում են նույն թվով բժշկական հաստիքներ, որոնք առաջացնում են բժշկական ծառայությունների գերծանրաբեռնված աշխատանք և, որպես հետևանք, դրանց ոչ պատշաճ կազմակերպում:

Այսպես, ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած վիճակագրական տվյալների համաձայն՝ 2018 թվականի հունվարի 8-ի դրությամբ «Հրազդան», «Սևան» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում նախատեսված են նույն թվով բժշկական անձնակազմի հաստիքներ, այն

⁶ Տե՛ս

<http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/b8beba20cc5240c574dd202b118ce109.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջեր 42-47:

պարագայում, երբ այդ Քրեակատարողական հիմնարկների լրակազմերն անհամեմատ տարբեր են՝ համապատասխանաբար կազմելով 215, 518 և 339 ազատությունից զրկված անձ: Ինչպես նաև «Գորիս» և «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկներում նախատեսված են բժշկական անձնակազմի միևնույն հաստիքներ, երբ նրանց լրակազմերը համապատասխանաբար կազմում են 182 և 60 ազատությունից զրկված անձ:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման⁷ 61-րդ կետի կարգավորման համաձայն՝ *անհետաձգելի բժշկական օգնության ծավալը կախված է հիմնարկի տեսակից, իր ենթակայության տակ գտնվող բժիշկ-մասնագետներից և տեխնիկական միջոցներից, հիմնարկի տեղակայման հանգամանքից:*

Մատնանշված դրույթը, սակայն, չի ապահովում բժշկական օգնության և սպասարկման նվազագույն պահանջները: Այդ իսկ պատճառով բժշկական անձնակազմի նախատեսվող հաստիքները պետք է սահմանել Քրեակատարողական հիմնարկի լրակազմին, հիվանդությունների տարածվածության ու անհրաժեշտ բժշկական օգնության և սպասարկման պահանջներին համապատասխան:

Մտահոգության առարկա է առանձին դեպքերում Քրեակատարողական հիմնարկում բժշկի բացակայությունը: Օրինակ՝ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնում բժշկի հաստիքը տևական ժամանակ թափուր է:

Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ կարգավորված չէ նախատեսված հաստիքներում բժշկական մասնագիտական պատրաստվածություն ունեցող բժիշկների ընտրության հարցը: Քրեակատարողական հիմնարկի բժշկական անձնակազմը երբեմն համալրված է միայն այնպիսի նեղ մասնագետներով, ինչպիսիք են ատամնաբույժը, հոգեբույժը և այլն:

Օրինակ, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում բժշկական սպասարկման բաժնում ընդգրկված են հոգեբույժ և գինեկոլոգ, կամ «Սևան» քրեակատարողական հիմնարկներում՝ ատամնաբույժ ու վնասվածքաբան: Նշված Քրեակատարողական հիմնարկների բժշկական սպասարկման բաժնում ընդգրկված չեն *որակավորված ընդհանուր բժիշկներ*¹ թերապևտներ կամ ընտանեկան բժիշկներ: Արդյունքում հոգեբույժը, գինեկոլոգը կամ ատամնաբույժը հարկադրված են լինում ոչ մասնագիտական խորհրդատվություն տրամադրել կամ կանչել շտապ բժշկական օգնության ծառայություն:

⁷ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշում:

Բժշկական սպասարկման բաժնում *որակավորված ընդհանուր բժշկ* ընդգրկված լինելու պահանջ է ամրագրված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից թիվ (2006)2 հանձնարարականով ընդունված «Եվրոպական բանտային կանոններում» (այսուհետ՝ Եվրոպական բանտային կանոններ)⁸: Նշված կանոնների համաձայն՝ *յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկ պետք է օգտվի առնվազն մեկ որակավորված ընդհանուր բժշկի ծառայություններից*:

Ինչ վերաբերվում է նեղ բժշկ մասնագետներով համալրմանը, հարկ է ամրագրել, որ ոչ բոլոր Քրեակատարողական հիմնարկների բժշկական սպասարկման բաժիններն են համալրված ատամնաբույժի և հոգեբույժի մասնագիտացում ունեցող բժիշկներով: Այս մասին մանրամասն անդրադարձ է կատարվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի «Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցում⁹:

Այս առումով, դրական է, որ 2015 թվականի հունվարին համագործակցության համապատասխան հուշագիր է կնքվել ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի միջև:

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ Քրեակատարողական ծառայության բժշկական սպասարկման ոլորտի ավագ և միջին բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և պրակտիկ հմտությունների բարելավմանն ու կատարելագործմանն ուղղված՝ Երևանի «Մխիթար Հերացու» անվան պետական բժշկական համալսարանի բազայի հիման վրա կազմակերպվել են դասընթացներ, որոնց մասնակցելու նպատակով 2017 թվականին կրթության և գիտության նախարարության կողմից պետպատվերի շրջանակներում տրամադրվել է քրեակատարողական ծառայության 15 բժշկի և 10 միջին բուժաշխատողի տեղ:

Պետք է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարությունը թեև որոշակի ջանքեր գործադրում է բժշկական հաստիքները համալրելու ուղղությամբ, սակայն Քրեակատարողական հիմնարկների բժշկական սպասարկման բաժիններում դեռևս առկա են թափուր հաստիքներ: Նույնը վերաբերում է նաև Քրեակատարողական հիմնարկների բժշկական անձնակազմի պատշաճ և պարբերական վերապատրաստումներին:

⁸ Տե՛ս [https://pjp-eu.coe.int/documents/3983922/6970334/CMRec+\(2006\)+2+on+the+European+Prison+Rules.pdf/e0c900b9-92cd-4dbc-b23e-d662a94f3a96](https://pjp-eu.coe.int/documents/3983922/6970334/CMRec+(2006)+2+on+the+European+Prison+Rules.pdf/e0c900b9-92cd-4dbc-b23e-d662a94f3a96) կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 41.1:

⁹ Տե՛ս <http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/b8beba20cc5240c574dd202b118ce109.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջեր 32-38:

Քրեակատարողական հիմնարկների զգալի մասում ապահովվում է ազատությունից զրկված անձանց շուրջօրյա բժշկական օգնությունը (շուրջօրյա հերթապահություն չեն իրականացվում «Գորիս» և «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկներում), սակայն շուրջօրյա հերթապահության մեջ սովորաբար ներգրավված են լինում մեկ բուժակ կամ բուժքույր, սակայն ոչ բժիշկներ՝ բացառությամբ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի:

Ինչ վերաբերում է տեխնիկական հագեցվածությանը, կատարված անմիջական դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ Քրեակատարողական հիմնարկների բժշկական սպասարկման բաժինները 2017 թվականի ընթացքում համալրվել են որոշակի նոր բժշկական սարքավորումներով և գործիքներով: Սակայն առկա են դեպքեր, երբ համապատասխան մասնագետներ չլինելու պատճառով նշված տեխնիկական չի շահագործվում:

Օրինակ՝ «Գորիս» քրեակատարողական հիմնարկում առկա է ատամնաբուժական համալիր, սակայն ատամնաբույժ չունենալու պատճառով ազատությունից զրկված անձինք ստիպված են լինում իրենց միջոցների հաշվին օգտվել առողջապահական մարմինների ատամնաբուժական ծառայությունից կամ սպասել ՀՀ արդարադատության նախարարության բժշկական աշխատանքային հանձնաժողովի պլանային այցելությամբ «Գորիս» քրեակատարողական հիմնարկ գործուղվող ատամնաբույժին:

Ուստի, վերը շարադրվածի հիման վրա անհրաժեշտ է՝

✓ ***ապահովել Քրեակատարողական հիմնարկներում բժշկական անձնակազմի ինստիտուցիոնալ անկախությունը.***

✓ ***յուրաքանչյուր Քրեակատարողական հիմնարկում հստակեցնել բժշկական ծառայության ծավալները, այն համապատասխանեցնել Քրեակատարողական հիմնարկի լրակազմին, հիվանդությունների փարածվածությանն ու անհրաժեշտ բժշկական օգնության և սպասարկման պահանջներին¹⁰՝ ներառելով նաև անհետաձգելի և առաջնային բժշկական օգնության ապահովումը և ատամնաբուժական ու հոգեբուժական ծառայությունների հասանելիությունը.***

✓ ***ապահովել համապատասխան որակավորում ունեցող բժշկական անձնակազմի հաստիքների բավարար քանակություն.***

✓ ***յուրաքանչյուր Քրեակատարողական հիմնարկում ապահովել անհետաձգելի շուրջօրյա բժշկական օգնությունը.***

¹⁰ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման թիվ 1 հավելվածի 61-րդ կետի կարգավորման հիմքում ճիշտ հակառակ տրամաբանությունն է ընկած: Ըստ վերոնշյալ դրույթի՝ անհետաձգելի բժշկական օգնության ծավալը կախված է հիմնարկի տեսակից, իր ենթակայության տակ գտնվող բժիշկ-մասնագետներից և տեխնիկական միջոցներից, հիմնարկի տեղակայման հանգամանքից:

✓ կազմակերպել բժշկական անձնակազմի մասնագիտական որակների բարձրացմանն ուղղված շարունակական միջոցառումներ՝ հաշվի առնելով նաև աշխատանքի՝ ազատությունից զրկման վայրում բժշկական սպասարկման իրականացման հանգամանքով պայմանավորված դժվարությունները:

✓ գործուն քայլեր իրականացնել բժշկական թափուր հաստիքները համալրելու ուղղությամբ, օրինակ՝ պեդակալ ֆինանսավորմամբ հոգալ բժշկական նեղ մասնագիտացում ստացող կլինիկական օրդինատորների ուսման ծախսերը, որով բժիշկ-մասնագետը պարտավորված կլինեն պայմանագրային հիմունքներով աշխատել Քրեակատարողական հիմնարկների բժշկական ծառայություններում:

Դեղորայքային ապահովվածությունը

Քրեակատարողական հիմնարկներ կատարված այցերի ընթացքում ուսումնասիրվել է դրանց բժշկական սպասարկման բաժինների դեղորայքով ապահովվածությունը, որի արդյունքում այցելած հիմնարկներում արձանագրվել են բժշկական սպասարկման ստորաբաժանումների դեղամիջոցների ոչ բավարար քանակով և սահմանափակ տեսականիով համալրվածության դեպքեր: Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ Քրեակատարողական հիմնարկի կողմից Քրեակատարողական վարչությանն ուղղված պահանջագրով ներկայացվող դեղորայքի հայտը բավարարվում է ոչ ամբողջությամբ («Գորիս» քրեակատարողական հիմնարկ): Ազատությունից զրկված անձանց պնդմամբ՝ այդ դեպքերում իրենք անհրաժեշտ դեղորայքը ձեռք են բերում ազգականների միջոցով, իսկ Քրեակատարողական հիմնարկն ապահովում է միայն առաջին օգնության համար անհրաժեշտ դեղերը:

Մշտադիտարկման այցերի ընթացքում արձանագրվել է դեղորայքի քանակական և տեսակային սակավություն: Հիմնականում բժշկական ծառայությունն ապահովված է եղել առաջին բժշկական օգնության համար անհրաժեշտ դեղամիջոցներով: Արձանագրվել է հակաբակտերիալ քսուքների, ցավազրկող, հակաբորբոքիչ, հիպերտենզիկ, հակաշոկային և այլ դեղամիջոցների անբավարարություն:

Օրինակ՝ «Գորիս» քրեակատարողական հիմնարկ կատարված այցի ընթացքում պարզվել է, որ բաց տեսակի ուղղիչ հիմնարկի (Մեղրիի տեղամաս) ազատությունից զրկված անձանց անհրաժեշտ դեղորայքը ձեռք է բերվում միայն վերջիններիս միջոցների հաշվին:

«Կոշ» քրեակատարողական հիմնարկ այցի արդյունքների վերաբերյալ գրությանն ի պատասխան՝ ստացվել են պարզաբանումներ, որ Քրեակատարողական ծառայության անհրաժեշտ գնումները, այդ թվում՝ դեղորայքը ձեռք են բերվում ՀՀ

պետական բյուջեից կատարվող ֆինանսավորմամբ՝ հիմք ընդունելով «Գնումների Մասին» ՀՀ օրենքը: 2014 թվականից սկսած ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կողմից յուրաքանչյուր տարի պլանավորվում և ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվում շուրջ 60 մլն ՀՀ դրամի դեղորայք և պարագաներ ձեռք բերելու հայտ, որից մշտապես բավարարվել է միայն 43 մլն-ը: Բժշկական սարքավորումներ գնելու նպատակով 33 մլն ՀՀ դրամի չափով հայտը մշտապես մերժվել է:

2017 թվականի ընթացքում Քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի կողմից Քրեակատարողական հիմնարկներին տրամադրված դեղատեսակների ցանկի վերաբերյալ հարցադրմանն ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարության տրամադրված տեղեկության համաձայն՝ այդ ցանկում ներառված է 389 տեսակի դեղամիջոց և բժշկական պարագա, ևս 27-ը ձեռք է բերվել հումանիտար օգնության շրջանակում:

Պետք է նշել, որ ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանը (ռեեստրը) հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2016 թվականի հուլիսի 12-ի թիվ 25-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 06-Ն հրամանի հավելվածով հաստատված է 4583 դեղ: Հետևաբար, կարելի է փաստել, որ Քրեակատարողական ծառայությունն ապահովված է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի մոտ 8%-ով:

Ակնհայտ է, որ խնդիրը պետք է հիմնարար լուծում ստանա: Մշտադիտարկման ենթարկված Քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել են ազատությունից զրկված անձանց ցուցված դեղորայքի տրամադրման հետ կապված խնդիրներ: Դեղերի ոչ բավարար քանակի և տեսականու մասին են վկայում նաև մերձավոր ազգականների կողմից ազատությունից զրկված անձանց դեղորայք տրամադրելու դեպքերը:

Արձանագրվել են դեպքեր, երբ մերձավոր ազգականների կողմից փոխանցվող դեղորայքի համար ազատությունից զրկված անձանց բժշկական փաստաթղթերում հիմնավորում առկա չի եղել, սակայն Քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի աշխատակիցը թույլատրում է այն փոխանցել հասցեատիրոջը: Ավելին, առանձին դեպքերում մերձավոր ազգականների կողմից տրամադրվող դեղերն առկա են լինում Քրեակատարողական հիմնարկում, սակայն հաճախ դրանք բավարար քանակով չեն լինում:

Նշվածը վկայում է Քրեակատարողական հիմնարկներն անհրաժեշտ քանակությամբ դեղորայքով չապահովելու մասին, որը կարող է հանգեցնել պետության՝ իր հսկողության ներքո գտնվող անձանց պատշաճ բուժօգնության, մասնավորապես՝ բժշկի հսկողությամբ և բժշկական ցուցման հիման վրա դեղորայքային բուժման ապահովման պարտականության չկատարմանը:

«Արթիկ» և «Գորիս» քրեակատարողական հիմնարկներ կատարած այցերի վերաբերյալ Պաշտպանի գրություններին ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական համակարգի 2018 թվականի բյուջետային հայտի քննարկումների ընթացքում ընդունվել է Քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին դեղորայքով և բժշկական նյութերով ապահովելու նպատակով՝ ներկայիս պետական բյուջեից հատկացվող 43 մլն ՀՀ դրամը 150 մլն ՀՀ դրամի հասցնելու առաջարկությունը: Կայացած քննարկումների արդյունքում որոշվել է անազատության մեջ պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին դեղորայքային ապահովման համար հատկացնել 109 մլն 827 հազար ՀՀ դրամ գումար: Սա դրական ազդեցություն կունենա Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց պետպատվերի շրջանակներում տրամադրվող բժշկական ծառայությունների որակի վրա:

Խնդրահարույց է դեղամիջոցներն ըստ անհրաժեշտության ձեռք բերելու գործընթացի կազմակերպումը՝ ժամանակատարության տեսանկյունից: Օրինակ՝ եթե ազատությունից զրկված անձին ցուցվել է դեղամիջոց, որն առկա չէ Քրեակատարողական հիմնարկի դեղատանը, ապա Քրեակատարողական հիմնարկը դիմում է Քրեակատարողական վարչությանը՝ այն ձեռք բերելու միջնորդությամբ: Բոլոր այն դեպքերում, երբ Քրեակատարողական ծառայությունում նշված դեղամիջոցներն առկա չեն, պետք է սկսել գնումների գործընթաց՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, որը կարող է տևել ամիսներ: Ազատությունից զրկված անձին անհրաժեշտ դեղամիջոցի տրամադրումը նման գործընթացի առկայության պարագայում կարող է լինել ժամանակավրեպ, որն էլ իր հերթին կհանգեցնի ազատությունից զրկված անձի առողջության պահպանման իրավունքի նկատմամբ պետության պարտավորությունների ոչ պատշաճ կատարմանը:

Քրեակատարողական հիմնարկների դեղամիջոցների ոչ բավարար քանակի և սահմանափակ տեսականու մասին հարցը բարձրացվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով: Մասնավորապես, նշվել է, որ Քրեակատարողական հիմնարկներն ապահովված չեն բավարար քանակության անհրաժեշտ դեղատեսակներով: Անհրաժեշտ դեղերի բացակայության պատճառով երբեմն նշանակվում են դրանց փոխարինող դեղամիջոցներ, որոնք հաճախ բուժման բավարար արդյունավետություն չեն ապահովում:

Այսպես, «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված անձի մոտ ախտորոշվել է «սրտի իշեմիկ հիվանդություն, անկայուն ստենոկարդիա, զարկերակային հիպերտենզիա, վիճակ աորտալ փականի և վերել աորտայի պրոթեզավորումից հետո, աորտայի աղեղի միջնամասի լուկալ դիսսեկցիա, աջ, կամ ոչ կորոնար սինուսի հարևանությամբ աորտայի և փականի

պրոթեզների միջև դիսսեկցված խոռոչ» և նշանակվել են «Կոնկոր», «Կապտոպրիլ», «Կարդիոմագնիլ», «Պրեդուկտալ ՄՌ», «Ամլոդիպին», «Ատորվաստատին», «Մոնոսորբ» և «Ֆիզիոտենզ» դեղերը: Քրեակատարողական հիմնարկը, սակայն, ցուցված դեղերից տրամադրել է միայն «Կապտոպրիլ» և «Վարֆարին» դեղամիջոցները:

Ըստ Քրեակատարողական վարչության պարզաբանման՝ նշանակված «Մոնոսորբ» և «Ֆիզիոտենզ» դեղատեսակները ներառված չեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված գնումների միասնական անվանացանկում, հետևաբար քրեակատարողական ծառայությունը դրանք չի կարող ձեռք բերել:

Մեկ այլ դեպքում Քրեակատարողական վարչության բժշկական աշխատանքային հանձնաժողովն ազատությունից զրկված անձին նշանակել է «Դիկլոֆենակ» և «Միդոկալմ» դեղամիջոցները, սակայն Քրեակատարողական հիմնարկում դրանց բացակայության պատճառով, առաջարկել է սեփական միջոցների հաշվին ձեռք բերել նշանակված դեղերը: Քրեակատարողական վարչությունը պարզաբանել է, որ նշանակված դեղամիջոցներն առկա չեն և փոխարենը տրամադրվել է «Ֆինալգոն» քսուքը, որի օգտագործման արդյունքում, ըստ դիմումատուի, դրական դինամիկա չի արձանագրել:

Հարկ է նկատել, որ դեղորայքային ապահովման պետական քաղաքականության՝ օրենքով ամրագրված հիմնական ուղղություններն ու սկզբունքները պետք է կիրառելի լինեն նաև Քրեակատարողական հիմնարկներում առողջապահական համակարգի կազմակերպման գործընթացների նկատմամբ:

Ուստի, վերը շարադրվածի հիման վրա անհրաժեշտ է՝

✓ կատարելագործել ազատությունից զրկված անձանց ըստ անհրաժեշտության դեղորայքով ապահովման գործընթացը՝ քրեակատարողական ծառայությանն անհրաժեշտ դեղերի ցանկի ընդլայնման և վերջիններիս քանակի ավելացման միջոցով.

✓ մշակել ազատությունից զրկված անձանց իրենց կամ մերձավոր ազգականների հաշվին ձեռք բերված դեղամիջոցների Քրեակատարողական հիմնարկներ ընդունելու հստակ մեխանիզմներ՝ առաջնորդվելով բժշկական համապատասխան ցուցմամբ և չվնասելու սկզբունքով.

✓ մշակել դեղերի ձեռք բերման այլընտրանքային ճկուն մեխանիզմ, որը կապահովի առանց ժամանակի կորստի ազատությունից զրկված անձանց ըստ անհրաժեշտության դրանց տրամադրումը:

Բժշկական հետազոտությունների կազմակերպումը

Մշտադիտարկման ընթացքում բարձրացված խնդիրների և Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված անհատական բողոքների քննարկման արդյունքում պարզվել է, որ Քրեակատարողական հիմնարկներում բժշկական հետազոտություններ անցնելու հնարավորությունը սահմանափակ է: Նեղ մասնագիտական խորհրդատվության կամ լաբորատոր-գործիքային հետազոտություններ անցնելու համար անհրաժեշտություն է առաջանում օգտվել առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում գործող բժշկական ծառայություններից և առանձին դեպքերում այն կազմակերպելու համար սպասել տևական ժամանակ:

Այսպես, «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված անձին ցուցվել է ամիսը մեկ անգամ իրականացնել արյան մակարդեղիության հետազոտություն: Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ հայտնվել է, որ Քրեակատարողական հիմնարկի բժշկական ծառայությունը հագեցած չէ նմանատիպ հետազոտություն կատարելու համար համապատասխան սարքավորումով:

ՀՀ արդարադատության նախարարությունը պարզաբանել է նաև, որ արյան քննության տվյալ հետազոտությունը քրեակատարողական համակարգում չի իրականացվում և այն սահմանված կարգով կկատարվի վճարովի սկզբունքով: Նման դեպքերում հնարավոր է՝ ազատությունից զրկված անձի առողջական վիճակի վատթարացում:

Վերը նշված հարցի կապակցությամբ հարկ է ընդգծել, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպվում են՝ հիվանդանոցային ձևով, երբ անհրաժեշտ է բժշկական միջոցառումների համալիր կիրառում՝ ախտորոշում, բուժում, տևական հսկողություն և հատուկ խնամք (...):* Նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ *ձերբակալված, կալանավորված և ազատագրված վայրերում պատիժ կրող անձինք իրավունք ունեն ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:*

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1256-Ն որոշմամբ հաստատված ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կանոնադրության 11-րդ կետի «է» ենթակետի համաձայն՝ *վարչության խնդիրներից է կալանավորված անձանց և դատապարտյալների կյանքի ու առողջության պահպանման (...) համար պատշաճ պայմաններ ապահովելը:*

Ըստ Եվրոպական բանտային կանոնների մասին 40.3-րդ կանոնի՝ *ազատությունից զրկված անձանց պետք է հասանելի լինեն պետությունում առկա առողջապահական ծառայությունները՝ առանց նրանց իրավական կարգավիճակով պայմանավորված խտրականության:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հայաստանի վերաբերյալ վճիռներում, անդրադառնալով ազատությունից զրկված անձանց պատշաճ բժշկական օգնություն տրամադրելու պետության պոզիտիվ պարտականությանը, նշել է, որ

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 3-րդ հոդվածը պետության համար առաջացնում է ազատությունից զրկված անձանց ֆիզիկական անձեռնմխելիությունը, այդ թվում՝ անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու միջոցով պաշտպանելու պարտականություն¹¹:

Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ *պետության նման պարտականության կատարումն առավել կարևորվում է այն առումով, որ ազատությունից զրկված անձինք, իրենց կարգավիճակով պայմանավորված, կախվածության մեջ են գտնվում իշխանություններից: Վերջիններիս ցանկացած գործողություն կամ անգործություն ամենայն հավանականությամբ մեծ ազդեցություն կունենա ազատությունից զրկված անձանց ֆիզիկական բարեկեցության վրա*¹²:

Ազատությունից զրկված անձանց անհրաժեշտ բժշկական օգնության իրավունքի ապահովման կարևորությանն անդրադարձել է նաև ԽԿԿ-ն:

ԽԿԿ-ի իրավաբանության համաձայն՝ *ազատությունից զրկված անձինք պետք է հնարավորություն ունենան օգտվել լավ սարքավորված քաղաքացիական հիվանդանոցի կամ ազատությունից զրկման վայրի հիվանդանոցի բժշկական ծառայություններից: Դրա հետ մեկտեղ, բուժական ծառայությունը պետք է ունենա ազատությունից զրկված անձանց ինչպես բժշկական օգնությունը և խնամքը կազմակերպելու, այնպես էլ հատուկ սննդակարգով ապահովվելու հնարավորություն, ընդ որում՝ այնպիսի պայմաններում, ինչպիսիք ապահովվում են քաղաքացիական բուժական հիմնարկներում*¹³:

Այսպիսով, վերը նշված դիրքորոշումները ենթադրում են պետության պարտականությունը՝ ձեռնարկելու այնպիսի անհրաժեշտ միջոցներ, որոնք ուղղված են ազատությունից զրկված անձի առողջության պահպանմանը, այն է՝ ազատությունից զրկման վայրում պատշաճ բժշկական օգնության և սպասարկման տրամադրմանը:

Սա ենթադրում է, որ ազատությունից զրկման վայրերի բժշկական ծառայության բժշկական օգնության և սպասարկման ծավալի ոչ բավարար լինելու դեպքում առողջական խնդիրներ ունեցող անձը պետք է փոխադրվի առողջապահական մարմինների բուժական հիմնարկ:

¹¹ Տե՛ս Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով 2010 թվականի հունիսի 15-ի վճիռ, գանգատ թիվ 34334/04, կետ 103, Դավթյանն ընդդեմ Հայաստանի գործով 2015 թվականի մարտի 31-ի վճիռ, գանգատ թիվ 29736/06, կետ 80:

¹² Տե՛ս Կուդլան ընդդեմ Լեհաստանի գործով 2000 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռ, գանգատ թիվ 30210/96, կետ 94:

¹³ Տե՛ս ԽԿԿ գործունեության մասին 3-րդ գլխավոր զեկույցը, որն ընդգրկում է 1992 թվականի հունվարի 1-ից դեկտեմբեր 31-ը ընկած ժամանակահատվածը, <https://rm.coe.int/1680696a40> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետեր 36, 38:

Ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովման տեսանկյունից կարևոր հարց է նաև անձնական միջոցների հաշվին և իրենց նախընտրած բժշկ մասնագետի մոտ հետազոտություն ու բուժում ստանալը:

Իրենց հաշվին և իրենց ընտրությամբ այլ բժշկ-մասնագետների ծառայություններից օգտվելու համար երբեմն անհրաժեշտ է լինում ազատությունից զրկված անձանց տեղափոխել առողջապահական մարմինների բուժական հիմնարկ, ինչը պահանջում է տեխնիկական և մարդկային ռեսուրսներ: Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներն ու առանձնազրույցները վկայում են, որ առկա են դեպքեր, երբ սեփական միջոցների հաշվին իրենց նախընտրած բժշկի ծառայություններից օգտվելու նպատակով իրավասու մարմիններին հասցեագրված դիմումները մերժվում են, կամ նրանց անվտանգությունն ապահովելու համար բավարար քանակի աշխատակիցներ չլինելու պատճառաբանությամբ ազատությունից զրկված անձանց անհրաժեշտ հետազոտություններն ու խորհրդատվությունները ստանալու համար առողջապահական մարմինների բուժական հիմնարկ տեղափոխումը կազմակերպվում է ձգձգումներով:

Այսպես, դիմումատուն Մարդու իրավունքների պաշտպանին հայտնել է, որ ունի ծնկան հոդի շրջանում ցավեր և դժվարությամբ է տեղաշարժվում, որի կապակցությամբ ցանկություն է հայտնել հետազոտվել իր նախընտրած բժշկ մասնագետի մոտ, քանի որ Քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի համապատասխան մասնագետների կողմից նշանակված երկարատև բուժման արդյունքում դրական դինամիկա հիվանդության լավացման գործընթացում չի արձանագրվել: Քրեակատարողական վարչությունը, սակայն, ըստ համապատասխան գրավոր պարզաբանման, նպատակահարմար չի համարել անձի տեղափոխումը քաղաքացիական բժշկական հաստատություն՝ նշելով, որ վերջինիս հետազոտությունները հաջողությամբ կատարվել են «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում: Քրեակատարողական վարչությունը պատրաստակամություն է հայտնել Քրեակատարողական հիմնարկ հրավիրված բժշկին տրամադրել ազատությունից զրկված անձի վերաբերյալ անհրաժեշտ բժշկական փաստաթղթերը:

Խնդիր է նաև այն, որ գործնականում առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում աշխատող բժշկ մասնագետները հաճախ հրաժարվում են բժշկական զննություն և խորհրդատվություն իրականացնել Քրեակատարողական հիմնարկներում:

Մեկ այլ դեպքում Քրեակատարողական վարչությունը թույլատրել է ազատությունից զրկված անձին իր հաշվին իր ընտրությամբ բժշկի ծառայություններից օգտվել (կորոնարոգրաֆիկ, համակարգչային տոմոգրաֆիկ հետազոտություն անցնելու համար), որը պետք է կազմակերպվեր առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից մեկում: Ցուցված հետազոտությունների

կատարումը, սակայն, ձգձգվել է լրացուցիչ հենակետի անվտանգության ապահովման աշխատակիցների ոչ բավարար քանակի պատճառաբանությամբ:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշումն ամրագրում է իր հաշվին և իր ընտրությամբ բժիշկ-մասնագետների ծառայություններից օգտվելու ազատությունից զրկված անձի իրավունքը, որը չի նախատեսում որևէ սահմանափակում: ՀՀ Սահմանադրության 77-րդ և 78-րդ հոդվածների մեկնաբանությունից բխում է, որ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, իսկ սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Հետևաբար, անընդունելի են Քրեակատարողական վարչության կողմից ազատությունից զրկված անձին իրենց հաշվին և իրենց ընտրությամբ այլ բժիշկ-մասնագետների ծառայություններից օգտվելու հնարավորության նկարագրված սահմանափակումները:

Ազատությունից զրկված անձանց անհրաժեշտ հետազոտությունները պետք է կազմակերպվեն ժամանակին և առանց ձգձգումների:

Ազատությունից զրկված անձանց տեղափոխումը բուժական ուղղիչ հիմնարկ կամ առողջապահական մարմինների բուժական հիմնարկ

Մշտադիտարկման ընթացքում ազատությունից զրկված անձանց կողմից բարձրացվող մտահոգիչ հարցերից է ըստ անհրաժեշտության՝ բժշկական ցուցմամբ ազատությունից զրկված անձանց բուժական ուղղիչ հիմնարկ կամ առողջապահական մարմինների բուժական հիմնարկ տեղափոխելու խնդիրը: Մատնանշված հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին 2017 թվականի ընթացքում հասցեագրվել են նաև անհատական բողոքներ:

Ազատությունից զրկված անձը ստացիոնար բուժման անհրաժեշտության դեպքում կարող է տեղափոխվել Քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի ստացիոնար, բայց, քանի որ Քրեակատարողական հիմնարկների բժշկական սպասարկման բաժինների ստացիոնարները չեն կարող ապահովել անհրաժեշտ ամբողջ ծավալով ստացիոնար բուժում (բժշկական նեղ մասնագիտացում ունեցող բժիշկների, անհրաժեշտ բժշկական տեխնիկայի և համապատասխան լիցենզիա չունենալու պատճառով), ուստի հարկ է առաջանում ազատությունից զրկված անձանց տեղափոխել բուժական ուղղիչ հիմնարկ կամ առողջապահական մարմինների բուժական հիմնարկներ:

Պրակտիկան վկայում է, որ այս գործընթացը հաճախ կազմակերպվում է բողոքի որևէ ձևով (հացադուլ, տարբեր ատյաններ բողոք-դիմումների ներկայացում, ինքնավնասում և այլն) այն դրսևորելու պարագայում, երբեմն ազատությունից զրկված անձինք առողջապահական մարմինների բուժական հիմնարկ տեղափոխվում են միայն առողջական վիճակի ծայրահեղ վատթարացման դեպքում:

Առողջապահական մարմինների բուժական հիմնարկ տեղափոխելու համար Քրեակատարողական հիմնարկը միջնորդություն է ներկայացնում Քրեակատարողական վարչություն, որն էլ իր հերթին դիմում է ՀՀ առողջապահության նախարարությանը: Ինչպես արդեն նշվեց ՀՀ առողջապահության նախարարությունը հավաստել է, որ ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի հունիսի 14-ի N 1664-Ա հրամանի համաձայն՝ քաղաքացիների բժշկական օգնության կազմակերպման վերաբերյալ գրությունները քննարկվում են հինգ աշխատանքային օրվա ընթացքում, սակայն ազատությունից զրկված անձանց առողջապահական մարմինների բուժական հիմնարկներ տեղափոխումը կազմակերպվում է դրա անհրաժեշտությունն առաջանալուց տևական ժամանակ հետո՝ բացառությամբ շտապ դեպքերի: Արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ անձն առողջապահական մարմինների բուժական հիմնարկներ բուժման կամ հետազոտման նպատակով տեղափոխվել է տրված ցուցումից մինչև 4 ամիս հետո:

Այսպես, ազատությունից զրկված անձին ուրուլոգի հերթական խորհրդատվության արդյունքում ցուցվել է վիրահատական միջամտություն: 15 օր անց Քրեակատարողական վարչության կողմից համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ առողջապահության նախարարություն՝ բուժումը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության շրջանակներում կազմակերպելու համար: Տրամադրված տեղեկությունների համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարությունից 20 օր հետո է ստացվել վիրահատությունը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության շրջանակներում կազմակերպելու ուղեգիրը, իսկ ազատությունից զրկված անձի վիրահատությունը կազմակերպելու նպատակով վերջինս առողջապահական մարմինների բուժական հիմնարկ է տեղափոխվել ցուցումից մեկուկես ամիս անց:

Այն դեպքերում, երբ ազատությունից զրկված անձի բուժումը կամ նշանակված հետազոտությունները հնարավոր է կազմակերպվել բուժական ուղղիչ հիմնարկում, հիմնականում տեղափոխումն իրականացվում է ձգձգումներով: Ավելին, այն դեպքերում, երբ Քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնում ընդգրկված չեն նեղ մասնագիտացում ունեցող բժիշկներ, ինչպիսիք են, օրինակ՝ հոգեբույժը, վարակաբանը, միևնույն է պատշաճ ստացիոնար հետազոտման և բուժման նպատակով ազատությունից զրկված անձին «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու հարցը քննարկելու և

այն կազմակերպելու համար պահանջվում է տևական ժամանակ, որը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ ոչ միայն ազատությունից զրկված անձի առողջության համար, այլ նաև ազատությունից զրկված այլ անձանց և շրջակա միջավայրի համար:

Այսպես, ազատությունից զրկված անձը հայտնել է, որ նախկինում տառապել է թոքախտ հիվանդությամբ, որի կապակցությամբ ստացել է համապատասխան բուժում: Վերջինս նշել է, որ պահվում է թոքախտ հիվանդությամբ տառապող ազատությունից զրկված մեկ այլ անձի հետ: Վերոգրյալի կապակցությամբ Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարությունը գրությամբ տեղեկատվություն է տրամադրել այն մասին, որ բողոք ներկայացրած ազատությունից զրկված անձի խցակիցը տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ, քանի որ վերջինիս մոտ եղել է «թոքերի տուբերկուլյոզով» հիվանդացության կասկած: Դիմումատուն հետազոտվել է միայն Պաշտպանին դիմում ներկայացնելուց 20 օր հետո, որի արդյունքում անձի մոտ ժխտվել է թոքախտի վարակը:

Քրեակատարողական հիմնարկներում հոգեբուժական ծառայությունների մատուցումը պատշաճ չի կազմակերպվում այն պատճառով, որ հիմնականում բժշկական անձնակազմերը համալրված չեն հոգեբույժներով, իսկ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ստացիոնար բուժումը կարող է կազմակերպվել միայն «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքով ազատությունից զրկված անձը հայտնել է, որ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունի և Քրեակատարողական հիմնարկում իր բուժումն արդյունավետ չի կազմակերպվում: Հայտնել է նաև, որ երկար ժամանակ բուժում է ստացել «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում, ինչպես նաև ամբուլատոր կարգով շարունակել է ստանալ հոգեբուժի կողմից նշանակված դեղորայքային բուժումը, սակայն առողջական վիճակն օր օրի վատթարացել է՝ ունեցել է կպչուն մտքեր, ախորժակի բացակայություն, անքնություն և անգիտակցաբար կատարել է ինքնավնասումներ: Նշված Քրեակատարողական հիմնարկում բժշկական անձնակազմում բժիշկ-հոգեբույժ ընդգրկված չէ: Ազատությունից զրկված անձի տեղափոխումը բուժական ուղղիչ հիմնարկ իրականացվել է կարգազրի պահանջ ներկայացնելուց մոտ 15 օր հետո:

Մեկ այլ դեպքում ազատությունից զրկված անձին անհրաժեշտ հոգեբուժական օգնություն չտրամադրելու արդյունքում նրա մոտ արձանագրվել է հոգեկան անկայուն վիճակ, որի հետևանքով վերջինս կատարել է ներքին կանոնակարգով արգելված արարք: Քրեակատարողական հիմնարկի վարչակազմն ազատությունից զրկված անձին ենթարկել է կարգապահական տույժի՝ առանց հաշվի առնելու նրա հոգեկան

վիճակը և քննարկման առարկա չի դարձրել վերջինիս կատարած արարքը հոգեկան առողջության խնդիրներ ունենալու և առողջական վիճակի վատթարացման հետևանք հանդիսանալու հնարավորության հարցը: Ավելին, ազատությունից զրկված անձը Քրեակատարողական հիմնարկներում տևական ժամանակ գտնվել է մեկուսացման մեջ՝ առանց նրա առողջական վիճակը և մեկուսի պահման դեպքում դրա հետագա վատթարացման հնարավորությունը գնահատելու: Արդյունքում, Մարդու իրավունքների պաշտպանը կայացրել է մարդու իրավունքների և ազատությունների խախտումները վերացնելու առաջարկ ներկայացնելու մասին որոշում:

Ազատությունից զրկված անձանց անհրաժեշտ բժշկական օգնության իրավունքի ապահովման կարևորությանն անդրադարձ է կատարվել ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ»-ում, որի 22-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ *ազատությունից զրկված հիվանդ անձանց, ովքեր մասնագետի ծառայության կարիք ունեն, պետք է տեղափոխել հատուկ բժշկական հաստատություններ կամ քաղաքացիական հիվանդանոցներ:*

Ավելին, Ախմետովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *թեև իշխանությունները ձեռնարկել են քայլեր քրեակատարողական համակարգից դուրս անձի արմատական բուժումն իրականացնելու ուղղությամբ, այդուհանդերձ հաշվի առնելով գործի հանգամանքները՝ այդպիսի միջոցները բավարար չտրապողականությամբ չեն ապահովվել:* Ավելին, Եվրոպական դատարանը հավելել է, որ *անձի վիճակի ծանր ու բարդ բնույթի հաշվառմամբ՝ իշխանությունները պետք է գիտակցեին անձի բուժօգնության ձգձգման պատճառով առկա վրանգի անդառնալիությունը: Հետևաբար, վերջիններս պետք է նախաձեռնեին քաղաքացիական հիվանդանոցում անձի բուժօգնության հարցի քննարկումը՝ այդպիսի առաջարկություն ստանալու պահից, այլ ոչ թե ավելի քան մեկ տարի սպասեին Հատուկ բժշկական հանձնաժողովի հետազոտության արդյունքներին¹⁴:*

Ուստի, անհրաժեշտ է ժամանակին և առանց անհարկի ձգձգումների կազմակերպել ազատությունից զրկված անձանց անհրաժեշտ բժշկական օգնությունը բուժական ուղղիչ հիմնարկում կամ առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում:

¹⁴ Տե՛ս Ախմետովն ընդդեմ Ռուսաստանի գործով 2010 թվականի ապրիլի 1-ի վճիռը, գանգատ թիվ 37463/04, կետ 83:

Պեպրության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ապահովումը

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները և մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ պետական միջոցների հաշվին անհրաժեշտ բժշկական միջամտությունների հետ կապված հիմնականում առաջանում են խնդիրներ՝ կապված ֆինանսական հատկացումների ոչ բավարար լինելու հետ: Գործնականում արձանագրվել են դեպքեր, երբ բժշկական միջամտությունները պետական միջոցների հաշվին կազմակերպելու համար պահանջվել է անթույլատրելի տևական ժամանակ:

2017 թվականի հունիսի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի ապրիլի 20-ի «ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 57-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» թիվ 18-Ն հրամանը, որի համաձայն՝ ուժը կորցրած է ճանաչվել սրտի վիրահատական ծառայությունների պետության մասնակցության մասին փոխհատուցման վերաբերյալ դրույթը, ինչի հետևանքով սրտի վիրահատության ցուցում ունեցող ազատությունից զրկված անձինք չեն ստանում պատշաճ բժշկական օգնություն:

Պաշտպանին են հասցեագրվում բողոքներ այն մասին, որ ազատությունից զրկված անձանց ցուցված բժշկական հետազոտությունները կամ այլ բժշկական միջամտությունները պետական միջոցների հաշվին կազմակերպելու համար պահանջվում է տևական ժամանակ:

Հարցն անհատական դիմումների շրջանակում գրավոր կարգով քննարկվել է ՀՀ առողջապահության նախարարության հետ և ստացվել է պատասխան այն մասին, որ ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի հունիսի 14-ի N 1664-Ա հրամանի համաձայն՝ քաղաքացիների բժշկական օգնության կազմակերպման վերաբերյալ գրությունները քննարկվում են հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ազատությունից զրկված անձին ցուցված երիկամի պերկուտան լիթոտոմիան, սակայն, կատարվել է բժշկի ցուցումից երեք ամիս անց այն դեպքում, երբ ՀՀ առողջապահության նախարարության հավաստմամբ ազատությունից զրկված անձի նկատմամբ բժշկական միջամտությունը պետական միջոցների հաշվին կազմակերպելու համար միջնորդագիրը սահմանված ժամկետներում բավարարվել է:

Թեև առողջության պահպանման իրավունքի լիարժեք ապահովումն ուղղակիորեն կախված է պեպրության ֆինանսական հնարավորություններից, հարկացումների անբավարարությունը չի ազատում ոլորտի պարասխանափու մարմիններին անձի առողջական վիճակով պայմանավորված առաջնահերթությունների հաշվառմամբ գործուն քայլեր ձեռնարկելու և առաջին իսկ հնարավորության դեպքում պեպրության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն փրամադրելու պարտականությունից:

Ավելին, հաշվի առնելով առողջության պահպանման իրավունքի ապահովման պետության պարտականությունը՝ անհրաժեշտ է բժշկական միջամտություններն իրականացնել առանց անհարկի ձգձգումների:

***Ազատությունից զրկված անձի նախընտրած բժշկի մուտքը
Քրեակատարողական հիմնարկ***

Հաշվի առնելով, որ քրեակատարողական ծառայությունը համալրված չէ բավարար քանակով և նեղ մասնագիտացում ունեցող բժշկական անձնակազմով, ազատությունից զրկված անձինք ցանկություն են հայտնում խորհրդատվություն և բուժում ստանալ, ինչպես նաև հետազոտություն անցնել իրենց նախընտրած բժշկի մոտ:

Միջազգային պահանջներին համահունչ նման հնարավորություն ամրագրված է ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշմամբ: Սակայն արձանագրվել են դեպքեր, երբ Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը թույլ չի տվել ազատությունից զրկված անձի կողմից հրավիրված բժշկին հետազոտության նպատակով մուտք գործել Քրեակատարողական հիմնարկ: Արձանագրված դեպքերից մեկի առնչությամբ հարկ է նշել, որ բժշկի մուտքն արգելվել է վերջինիս կողմից պատշաճ փաստաթղթեր չներկայացնելու պատճառաբանությամբ այն դեպքում, երբ անձը ներկայացրել է բժշկական հաստատության կողմից փաստաբանին ուղղված գրությունը, որով փաստվել է անձի կոնկրետ առողջապահական կազմակերպության բժիշկ հանդիսանալու հանգամանքը: Միաժամանակ, ներկայացվել է նույնականացման քարտը:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը կոնկրետ դեպքում չի թույլատրել վերջինիս մուտքը՝ պատճառաբանելով, որ բժիշկը չունի ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված համապատասխան «լիցենզիա», ինչպես նաև ներկայացված փաստաթուղթը (փաստաբանի հարցման պատասխան գրությունը) եղել է պատճենահանված և ուղղված չի եղել Քրեակատարողական հիմնարկի պետին: Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը նշել է նաև է, որ գրության բովանդակությունը հնարավորություն չի ընձեռել նույնականացնել գրության մեջ նշված և Քրեակատարողական հիմնարկ այցելած անձին: Բացի այդ, հայտնվել է, որ բացակայել է վարույթն իրականացնող մարմնի թույլտվությունն այն պայմաններում, երբ առկա է կալանավորված անձի տեսակցություններն արգելող քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշում:

Մինչդեռ, համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման թիվ 1 հավելվածի 9-րդ կետի՝ *կալանավորված անձը և դատապարտյալն իրենց հաշվին և իրենց ընտրությամբ պետք է հնարավորություն ունենան օգտվել այլ*

բժիշկ-մասնագետների ծառայություններից, այսինքն՝ այլ բժիշկ-մասնագետների ծառայություններից օգտվելու գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ նախապայման է միայն անազատության մեջ պահվող անձի կամարտահայտությունը:

Համաձայն ներկայացված դիրքորոշման՝ բժիշկը պետք է Քրեակատարողական հիմնարկ մուտք գործեր կա՛մ որպես տեսակցող, որը տեսակցության արգելքի պարագայում իրավաչափ կերպով չէր թույլատրվի, կա՛մ որպես բժշկական օգնություն ցուցաբերող անձ: Սակայն հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման պահանջները՝ բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով անձի մուտքը չի թույլատրվել՝ անձը և վերջինիս որակավորումը հաստատող փաստաթղթերի, ինչպես նաև կալանավորված անձի՝ այլ բուժաշխատողի կողմից գննվելու կամարտահայտությունը հավաստող դիմումի բացակայության հիմնավորմամբ:

Արդարադատության նախարարությունն ընդունել է Պաշտպանի դիրքորոշումն այն մասին, որ անազատության մեջ պահվող անձին բժշկական օգնություն ցուցաբերելու համար Քրեակատարողական հիմնարկ այցելող բժշկի նկատմամբ կալանավորված անձի տեսակցություններին վերաբերող իրավական կարգավորումներ կիրառելն անթույլատրելի է, և նշել, որ բժիշկ-մասնագետի կողմից ազատությունից զրկված անձին բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով այցելելը չի կարող դիտարկվել և գնահատվել որպես տեսակցություն: Նշվել է նաև, որ տվյալ դեպքում ևս այն չի քննարկվել և մերժվել տեսակցություն տրամադրելու տեսանկյունից, այլ մերժվել է բժիշկ-մասնագետի կողմից համապատասխան անհրաժեշտ փաստաթղթեր չներկայացնելու, ինչպես նաև կալանավորված անձի այլ բժիշկ-մասնագետի ծառայությունից օգտվելու ցանկության վերաբերյալ դիմում ներկայացված չլինելու հիմքով:

Բողոքի քննարկման շրջանակներում Քրեակատարողական հիմնարկից պարզաբանում է տրամադրվել այն մասին, որ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո բժշկին թույլ է տրվել մուտք գործել Քրեակատարողական հիմնարկ և բժշկական օգնություն ցուցաբերել իր պացիենտին:

Կալանավորված անձանց և դատապարտյալների իրենց հաշվին և իրենց ընտրությամբ այլ բժիշկ-մասնագետների ծառայություններից օգտվելու հնարավորությունն ամրագրված է ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման թիվ 1 հավելվածի 9-րդ կետով: Տվյալ դրույթում, սակայն, ամրագրված չեն այս իրավունքի իրացումը կարգավորող ընթացակարգերը և կառուցակարգերը, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչն էլ լրացուցիչ դժվարություններ է առաջացնում գործընթացը պատշաճ կազմակերպելու համար:

Մեկ այլ դեպքով արգելվել է ֆիզոթերապևտի մուտքը Քրեակատարողական հիմնարկ: Չնայած նրան, որ հրավիրված մասնագետը ներկայացրել է

մասնագիտական որակավորման վերաբերյալ փաստաթղթեր, վերջինիս թույլ չի տրվել մուտք գործել Քրեակատարողական հիմնարկ:

Արդարադատության նախարարության պարզաբանումների համաձայն՝ վերջինս չունի բժշկի որակավորում և հանդիսանում է ֆիզիոտերապևտ, ով Հայաստանի Հանրապետությունում չի համարվում բարձրագույն բժշկական կրթություն և բժշկի որակավորում ունեցող անձ:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հարկ է արձանագրել, որ կալանավորված անձանց և դատապարտյալներին իրենց հաշվին և իրենց ընտրությամբ այլ բժիշկ-մասնագետների ծառայություններից օգտվելու հնարավորության օրենսդրական ամրագրումը բավարար չէ գործընթացը պարշաճ կազմակերպելու համար: Ուստի, անհրաժեշտ է այն կանոնակարգել՝ սահմանելով բժշկի և ազատությունից զրկված անձի կամ օրինական ներկայացուցչի կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, այն կազմակերպելու կարգը և ժամկետները:

Ծանր հիվանդության հիմքով կալանավորված անձին և ազատագրկման ձևով պարիժը կրող դատապարտյալին համապատասխանաբար՝ կալանքից և պարիժից ազատելը

Ազատությունից զրկված անձանց ծանր հիվանդության հիմքով պատժի կրումից (կալանավորված անձի դեպքում՝ կալանքից) ազատվելու գործընթացի հստակ ու ամբողջական իրավական կարգավորումն ունի կարևորագույն նշանակություն:

Այս խնդրին հատուկ անդրադարձ է կատարված նաև Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2016 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցում¹⁵:

2017 թվականին մշտադիտարկման և անհատական դեպքերի ուսումնասիրման հիման վրա, սակայն, կարելի է փաստել, որ բարձրացված առանձին խնդիրներ լուծում չեն ստացել, իսկ գործնականում ազատությունից զրկված անձանց ծանր հիվանդության հիմքով պատժի կրումից (իսկ կալանավորված անձի դեպքում կալանքից) ազատվելու գործընթացի առկա ընթացակարգերի պարագայում արձանագրվել են խնդիրներ:

Նախ, իրավասու բժշկական հանձնաժողովի որոշումները պետք է ունենան անհրաժեշտ հիմնավորումներ և պատճառաբանվածություն: Նշված որոշումներում ընդամենը նշվում է, որ առկա հիվանդությունը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշմամբ հաստատված

¹⁵Տե՛ս <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/107efea7ef699b67309a61ffdf8d0fle.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջեր 90-93:

հավելված 2-ով սահմանված պարիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին:

Քննարկվող հարցի կարգավորման իրավական ընթացակարգերի հարցում նույնպես առկա են թերությունները, որոնք հանգեցնում են խնդիրների և արդյունքում՝ դառնում ազատությունից զրկված անձի իրավունքների խախտման պատճառ:

ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի «ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 800-Ն որոշմամբ կատարվել են օրենսդրական փոփոխություններ ծանր հիվանդության հիմքով պատժի կրումից (իսկ կալանավորված անձի դեպքում կալանքից) ազատվելու գործընթացի կապակցությամբ: Նշված փոփոխություններով պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկում ներառված հիվանդությունների ակտորոշումները համապատասխանեցվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 871-Ն հրամանի հավելվածով սահմանված հիվանդությունների դասակարգչին¹⁶:

Հիվանդությունների մեխանիկական համապատասխանեցումը, սակայն, բավարար չէ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդության առկայության պարագայում դատապարտյալներին պատժի հետագա կրումից (իսկ կալանավորված անձի դեպքում կալանքից) ազատելու գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար:

Պատժի կրման հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների ցանկում պետք է լինեն հիվանդությունների ներառման հիմնական սկզբունքներն ու չափորոշիչները: Ընդունելի չէ դրանք վերը նշված վիճակագրական դասակարգչին մեխանիկական համապատասխանեցնելը:

2017 թվականի դեկտեմբերի 20-ին կարծիքի համար ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելու միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որն ուսումնասիրվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում:

Վերը նշված նախագծով առաջակվում են կարգավորումներ Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց ծանր հիվանդության

¹⁶ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի «ՀՀ տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգիչ» հաստատելու և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2005 թվականի մարտի 31-ի թիվ 67-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 871-Ն հրաման:

հետևանքով, բացի հոգեկան առողջության վիճակին վերաբերող խնդիրներից, պատժից ազատելու նպատակով բժշկական փորձաքննության իրականացման և դրա վերաբերյալ եզրակացության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

Այս կարգավորումներն, իհարկե, ինքնին դրական քայլ են, սակայն դրանք չեն կարող դիտվել՝ որպես ոլորտի խնդիրների լիարժեք լուծում:

Մասնավորապես, ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 1636-Ն որոշման¹⁷ հիման վրա, սակայն, գործում է ևս երկու հանձնաժողով: Այսպիսով, կարծիքի ներկայացված նախագիծը կարգավորում է ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 1636-Ն որոշմամբ նախատեսված երեք նույնաբնույթ հանձնաժողովներից մեկի գործունեությունը: Բացի այդ, հիմնարար կարգավորման են ենթակա հանձնաժողովների փոխհարաբերությունները, գործունեության միասնական չափանիշներին առնչվող խնդիրները:

Դեռևս կարգավորման կարիք ունի առողջական խնդիրներ ունեցող դատապարտյալի գործը Քրեակատարողական հիմնարկի կողմից բժշկական աշխատանքային հանձնաժողովին ներկայացնելու հարցը: Այսպես, որևէ իրավական ակտով կարգավորված չէ, թե ում կողմից և ինչ ժամկետներում այն պետք է իրականացվի, արդյոք ազատությունից զրկված անձը, վերջինիս օրինական ներկայացուցիչը կամ նրա բուժող բժիշկը կարող է դիմել բժշկական աշխատանքային հանձնաժողովին հարցի քննարկում սկսելու համար: Կարգավորված չեն նաև բժշկական աշխատանքային հանձնաժողովի կողմից որոշում կայացնելու ժամկետները և այն հարցերի շրջանակը, որոնց վերաբերյալ բժշկական աշխատանքային հանձնաժողովը կարող է որոշումներ կայացնել: Պետք է սահմանվի նաև բժշկական աշխատանքային հանձնաժողովի կողմից կայացված որոշումների հիմնավորման հստակ պահանջ:

Օրենսդրական կարգավորման կարիք ունի բժշկական աշխատանքային հանձնաժողովի որոշումների առարկան և հասցեատերերի շրջանակը: Այսպես, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման թիվ 1 հավելվածի 18-րդ կետի համաձայն՝ *բժշկական աշխատանքային հանձնաժողովի որոշումները ենթակա են պարտադիր կատարման*: Պետք է հստակ լինի, թե ում համար են այդ որոշումները պարտադիր, և ով պետք է դրանք կատարի: Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի համար պարտադիր լինելու պարագայում վերջինս չի կարող դրանց հակասող որոշում կայացնել:

ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 1636-Ն որոշման հավելվածով նախատեսված երեք հանձնաժողովների դեպքում էլ որոշմամբ չեն

¹⁷ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի «Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգը հաստատելու մասին» թիվ 1636-Ն որոշում:

սահմանվում հանձնաժողովների անդամների առավելագույն կամ նվազագույն թվերը, ինչպես նաև վերջիններիս ներկայացվող մասնագիտական պահանջները:

Այդ որոշմամբ յուրաքանչյուր բժշկական հանձնաժողովի համար սահմանվում է, որ հանձնաժողովի կազմում պետական կառավարման լիազոր մարմնի անդամներից բացի, անդամ են ընդգրկվում նաև մեկական ներկայացուցիչներ այլ գերատեսչություններից: Սակայն չի հստակեցվում պետական կառավարման լիազոր մարմնի անդամների քանակական մասնակցությունը, որը կապահովի ձայների համամասնությունը հարցի բազմակողմանի, օբյեկտիվ և մասնագիտական քննարկում ապահովելու համար:

Հաշվի առնելով միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի կողմից իրականացվող գործունեության խիստ մասնագիտական՝ բժշկական բնույթը՝ անհրաժեշտ է նաև սահմանել չափանիշներ միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի անդամների ընտրության վերաբերյալ: Բժշկական հանձնաժողովը պետք է լինի մասնագիտացված կոլեգիալ մարմին, որը քննարկման արդյունքներով պետք է տրամադրի հիմնավորված և պատճառաբանված բժշկական մասնագիտական եզրակացություն:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից քննության առնված անհատական դեպքերով արձանագրվել են դեպքեր, երբ կալանավորված անձի խափանման միջոցը փոխելու նպատակահարմարության հետ կապված հարցի քննարկման արդյունքում Առողջապահության նախարարության ենթակայության տակ գործող միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի կողմից հաստատվել է, որ ազատությունից զրկված անձի մոտ առկա է այնպիսի հիվանդություն, որը ներառված է ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ով սահմանված պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին: Սակայն այդ ժամանակահատվածում անձը ձեռք է բերել դատապարտյալի կարգավիճակ և ախտորոշման համապատասխանության հաստատված ՀՀ առողջապահության նախարարության միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունը հիմք չի հանդիսացել պատժի կրումից ազատվելու հարցը քննարկելու համար:

Վերը նկարագրված դեպքում Պաշտպանի հարցման ի պատասխան Արդարադատության նախարարությունը պնդել է, որ դատապարտված անձի պատժի կրումից ազատվելու հարցը քննարկվում է այլ ընթացակարգով, այն պարագայում, երբ անկախ ազատությունից զրկված անձի կարգավիճակից գործնականում պատժի կրումից (իսկ կալանավորված անձի դեպքում կալանքից) ազատվելու հիմք է հանդիսանում հիվանդությունների միևնույն ցանկը:

Ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը չի բովանդակում այնպիսի իրավակարգավորումներ, որոնք թույլ կտային միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներից մեկին հիմք ընդունել մյուս միջգերատեսչական բժշկական

հանձնաժողովի կայացրած եզրակացությունը՝ ողջամիտ ժամկետներում լուծելով ծանր հիվանդության հիմքով դատապարտյալին պատժից ազատելու հետ կապված հարցը:

Մեկ այլ դեպքում, դատապարտյալը Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով ճանաչվել է անգործունակ՝ հոգեկան այնպիսի խանգարման հիմքով, որն անձին զրկել է իր գործողությունների բնույթը և հասարակական վտանգավորության աստիճանը գիտակցելու հնարավորությունից: Դատարանը վերջինիս կնոջը նշանակել է ամուսնու խնամակալ: Պաշտպանի համապատասխան գրությանն ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարությանը տրամադրել է տեղեկություն առ այն, որ Քրեակատարողական ծառայության բժշկական աշխատանքային հանձնաժողովը միայն անգործունակ ճանաչելուց 2 ամիս անց է ուսումնասիրել դատապարտյալի բժշկական փաստաթղթերը և եզրակացրել, որ դատապարտյալի ախտորոշումը համապատասխանում է ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ով սահմանված պատժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին, այն էլ՝ այնպիսի կետով, որտեղ ամրագրված են սոմատիկ (ոչ հոգեբուժական) հիվանդություններ:

Ստացվում է, որ ազատությունից զրկված անձի հոգեկան առողջության խնդիրները քննարկման առարկա չեն դարձել, և անգործունակ ճանաչված անձը 4 ամիս շարունակել է կրել նշանակված պատիժը:

Վերոշարադրյալ խնդիրները սպառիչ չեն և ունեն ինչպես օրենսդրական կարգավորման, այնպես էլ գործնական լուծումների կարիք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ պատժի կրմանը խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկը վերանայել՝ սահմանելով հիվանդությունների ընտրության հիմնական սկզբունքներ ու չափորոշիչներ.

✓ մշակել բժշկական աշխատանքային հանձնաժողովի ծանր հիվանդության հիմքով պատժի կրումից (իսկ կալանավորված անձի դեպքում կալանքից) ազատվելու գործընթացի կարգավորման, այդ թվում՝ վերջինիս դիմելու ընթացակարգ՝ ամրագրելով բժշկական աշխատանքային հանձնաժողովի որոշումների առարկան և հասցեատերերի շրջանակը, որոշում կայացնելու ժամկետները և այլն.

✓ հստակեցնել միջգերատեսչական բժշկական հանձնաժողովների գործունեության կարգը և դրանց փոխհարաբերությունները:

Մեթադոնային փոխարինող բուժումը

2017 թվականի ընթացքում կատարված մշտադիտարկման արդյունքում վեր են հանվել «Մեթադոնային փոխարինող բուժման» ծրագրում ազատությունից զրկված անձանց ընդգրկման և մեթադոնային բուժման պատշաճ կազմակերպման հետ կապված խնդիրներ:

Շարունակում է մտահոգիչ լինել այն, որ ափիոնատիպ նյութերից կախվածություն ունեցող ազատությունից զրկված անձինք չեն կարողանում ընդգրկվել «Մեթադոնային փոխարինող բուժման» ծրագրում, որը հիմնականում պայմանավորված է նշված ծրագրում ազատությունից զրկված սահմանափակ թվով անձանց ընդգրկելու հնարավորությամբ: ՀՀ առողջապահության նախարարության ներկայացրած պաշտոնական տեղեկության համաձայն՝ 2016-2018 թվականներին «Գլոբալ» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում շահառուների քանակը սահմանափակ է՝ 500 անձ, և այն համալրված լինելու պատճառով ազատությունից զրկված անձինք ընդգրկվում են ծրագրում՝ շահառուի ազատ տեղ առաջանալու դեպքում:

ՀՀ առողջապահության նախարարության «Նարկոլոգիական Հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գրավոր տեղեկատվության համաձայն՝ մեթադոնային փոխարինող բուժում ստանալու նպատակով Քրեակատարողական հիմնարկներից դիմում ներկայացրած անձանց տվյալները տրամադրվում են Քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժին՝ նրանց անհրաժեշտ մասնագիտացված բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով, իսկ «Մեթադոնային փոխարինող բուժման» ծրագրում թափուր տեղեր առաջանալու դեպքում առաջնահերթություն է տրվում ՄԻԱՎ վարակով ապրող անձանց:

Այսպիսով, մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ պետք է գործուն միջոցներ ձեռնարկել ծրագրի շարունակականության ապահովման և ծավալների ընդլայնման ուղղությամբ՝ հնարավորինս ներգրավելով մեթադոնային փոխարինող բուժման կարիք ունեցող ազատությունից զրկված բոլոր անձանց:

Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ մեթադոնային բուժում ստացող ազատությունից զրկված անձինք նշանակված դեղամիջոցներն ընդունել են քրեակատարողական ծառայության սպայական կազմի ներկայացուցիչների ներկայությամբ, և գրեթե բոլոր հսկիչներին և այլ՝ ոչ բժշկական անձնակազմի ներկայացուցիչներին հայտնի են մեթադոնային բուժում ստացողների անունները, երբեմն նույնիսկ վերջիններիս ընդունած դեղաչափերն ու դրանց փոփոխությունները:

Ավելին, մեթադոնային բուժում ստանալու համար անձինք, երբեմն խմբերով, ուղեկցվում են այդ նպատակի համար առանձնացված սենյակ, որը շատ դեպքերում նախատեսված չէ բժշկական ծառայությունների մատուցման համար: Օրինակ՝ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում այն կազմակերպվում է քննչական

գործողություններ կատարելու համար նախատեսված առանձնացված բաժանմունքի ընդհանուր սենյակում, որտեղ կարող են լինել նույնիսկ քրեակատարողական ծառայողներ չհանդիսացող անձինք՝ քննիչներ և տեսակցության եկած անձինք:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ըստ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման թիվ 1 հավելվածի 7-րդ կետի՝ *բժշկական գաղտնիքը պետք է երաշխավորված և պահպանված լինի բժշկական անձնակազմի կողմից:*

Ուստի, անհրաժեշտ է «Մեթադոնային փոխարինող բուժման» ծրագրի շահառուների բուժումն ապահովել պարզաճ պայմաններում՝ պահպանելով նրանց բժշկական գաղտնիքը:

Խնամքի ապահովումը Քրեակատարողական հիմնարկներում

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման և մշտադիտարկման այցերի արդյունքում արձանագրվել է, որ ազատությունից զրկված անձանց տրամադրվող խնամքի ծավալն անբավարար է: Խնամքի տրամադրման խնդիրները մանրակրկիտ վերլուծված են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի «Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցում¹⁸:

Քրեակատարողական հիմնարկներում կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ պատշաճ խնամքի տրամադրման անհնարինության դեպքում անձանց խնամքը չի կազմակերպվում առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում:

Խնամքի ապահովման հետ կապված ուսումնասիրվել է նաև հատուկ մասնագիտական պատրաստվածություն չունեցող անձանց կողմից խնամքը կազմակերպելու հարցը: Ինչպես 2016, այնպես էլ 2017 թվականի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ անձի խնամքը կազմակերպվել է ազատությունից զրկված այլ անձանց (խցակիցների) կողմից: Այս առումով, հարկ է նկատել, որ միջազգային պահանջներին համապատասխան՝ պետությունը պարտավոր է ապահովել ազատությունից զրկված՝ հատուկ կարիքներ ունեցող անձանց մշտական խնամքը հատուկ պատրաստում ունեցող մասնագետների կողմից: Հետևաբար, խցակցի կողմից ազատությունից զրկված անձի խնամքը կազմակերպելն ինքնին կարող է խնդրահարույց չլինել, եթե այդ խնամքն իրականացվում է ազատությունից

¹⁸ Տե՛ս

<http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/b8beba20cc5240c574dd202b118ce109.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջեր 12-19:

զրկված այնպիսի անձի կողմից, ով ունի համապատասխան մասնագիտություն կամ անցել է հատուկ վերապատրաստում այդ նպատակով:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումի համաձայն՝ դատապարտյալն ունեցել է գլխուղեղի կաթված, ինքնուրույն չի կարողացել տեղաշարժվել և սնվել: Նման պայմաններում վերջինս դուրս է գրվել բժշկական կենտրոնից և տեղափոխել Քրեակատարողական հիմնարկ: Քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձի նկատմամբ համապատասխան խնամք չի իրականացվել, ինչի պատճառով դատապարտյալի վիճակը վատթարացել է:

Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրել են, որ Քրեակատարողական հիմնարկում դատապարտյալին խնամել է համապատասխան վերապատրաստում չունեցող մեկ այլ դատապարտյալ, ավելին՝ դատապարտյալի լոգանքը երկու ամսվա ընթացքում կազմակերպվել է ընդամենը մեկ անգամ, այն էլ մյուս դատապարտյալների օգնությամբ: Անձին 24 ժամվա համար տրամադրվել է 1 տակդիր, չեն տրամադրվել նաև բավարար չափով անկողնային պարագաներ, մասնավորապես՝ սավաններ:

Պատշաճ խնամքի վերաբերյալ բողոքների քննարկման արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանը կայացրել է մի շարք որոշումներ՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտումները վերացնելու առաջարկ ներկայացնելու մասին: Այդ որոշումներում Մարդու իրավունքների պաշտպանը հիմք է ընդունել խնամքի կարիք ունեցող անձին առանց պատշաճ հիմնավորման ստացիոնար բուժումից դուրս գրելու, կենսական նշանակություն ունեցող կարիքները (լոգանք, զբոսանք և այլն) հոգալու համար անհրաժեշտ պայմաններ չապահովելու, ազատությունից զրկված, հատուկ դասընթացներ չանցած այլ անձի կողմից վերջիններիս խնամքը կազմակերպելու, ինչպես նաև պատշաճ խնամքը չապահովելու պայմաններում անձին շարունակաբար անազատության մեջ պահելու հանգամանքները:

Ուստի, անհրաժեշտության դեպքում Քրեակատարողական հիմնարկներում պետք է ապահովվել ազատությունից զրկված անձանց պարզաճ խնամքը, իսկ բուժական ուղղիչ հիմնարկներում տրամադրվող խնամքի ծավալների անբավարարության դեպքերում ազատությունից զրկված անձանց պետք է տեղափոխել մասնագիտացված բուժական հիմնարկներ:

Բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպումը

Մշտադիտարկման ընթացքում բարձրացված և Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են խնդիրներ կապված ազատությունից զրկված անձանց նկատմամբ հաշմանդամության խումբ սահմանելու հետ:

Նախ, ազատությունից զրկված անձինք տեղեկացված չեն, թե ինչ մեխանիզմներ են գործում և ինչ փաստաթղթեր են պահանջվում հաշմանդամության խումբ սահմանելու համար:

Արձանագրվել են դեպքեր, երբ անձը դիմում է ներկայացրել իր նկատմամբ հաշմանդամության խումբ ստանալու համար, սակայն ՀՀ քաղաքացու անձնագիր չունենալու պատճառով միջնորդագիր չի ուղարկվել տարածքային բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողով:

Թեև ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի «ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1328-Ն որոշմամբ կատարվել են օրենսդրական փոփոխություններ և ավելի դյուրին է դարձել Քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի բժշկասոցիալական փորձաքննության ենթարկելու կարգը, այնուամենայնիվ խնդիրներ են առաջանում բժշկասոցիալական փորձաքննության և բժշկական փորձաքննության կազմակերպման գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ հետազոտություններն ու բժիշկ-մասնագետների խորհրդատվությունները կազմակերպելու հարցերում:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրման արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ ազատությունից զրկված անձը նախկինում ունեցել է հաշմանդամության խումբ, սակայն հաշմանդամության ժամկետը լրացել է, և անձը վերափորձաքննության կարիք է ունեցել: Բժշկասոցիալական փորձաքննություն անցնելու նպատակով անհրաժեշտ է եղել հետազոտվել առողջապահական մարմինների բուժական հիմնարկում:

Պաշտպանի աջակցությամբ կազմակերպվել է ազատությունից զրկված անձի առողջապահական մարմինների բուժական հիմնարկում հետազոտումը և վերջինիս փաստաթղթերն ուղարկվել են բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովին: Բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում վերահաստատվել է վերջինիս հաշմանդամության 3-րդ խումբը:

Մեկ այլ դեպքում ազատությունից զրկված անձի հավաստմամբ՝ իր նկատմամբ հաշմանդամության խումբ սահմանելու համար առողջապահական կազմակերպության բժիշկները հրաժարվել են ուղեգրել բժշկասոցիալական փորձաքննության՝ համապատասխան բժշկական փաստաթղթերի բացակայության պատճառաբանությամբ:

Այսպիսով, իրականացված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց նկատմամբ հաշմանդամություն սահմանելու գործընթացը պարզաճ կազմակերպելու համար պետք է առանց ձգձգումների պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության շրջանակներում

կազմակերպել անհրաժեշտ բժշկական խորհրդարկությունն ու հետազոտությունները, ինչպես նաև բարելավել ազատությունից զրկված անձանց իրազեկելու գործընթացները:

Բժշկական հսկողությունը սննդից կամ ջրից հրաժարված անձանց նկատմամբ

Մշտադիտարկման այցերի ընթացքում, անհատական բողոքների շրջանակներում, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով ստացված ազատությունից զրկված անձանց կողմից հացադուլ հայտարարելու վերաբերյալ տեղեկությունների դեպքերում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն այցելում են նրանց, առանձնազրույցներ ունենում վերջիններիս հետ և մշտական ուշադրության կենտրոնում պահում նրանց առողջության պահպանման իրավունքի ապահովումը: Այս աշխատանքների նպատակն է Պաշտպանի իրավասության սահմաններում երաշխավորել, որպեսզի նրանց նկատմամբ ցուցաբերվի բացառապես բժշկական սկզբունքներով վերաբերմունք:

ՀՀ արդարադատության նախարարության 2018 թվականի փետրվարի 14-ին տրամադրած տեղեկության համաձայն՝ հացադուլ հայտարարելու պատճառները հիմնականում կապված են քրեական գործերի, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի որոշումների, անձնական խնդիրների, հոգեկան անհավասարակշիռ վիճակի և այլ հանգամանքների հետ:

Մշտադիտարկման և անհատական դիմումների վերլուծությունների արդյունքում արձանագրվել է, որ հացադուլ հայտարարելու պատճառներ են հանդիսացել նաև բուժական ուղղիչ հիմնարկից կամ բժշկական սպասարկման բաժնի ստացիոնարից ազատությունից զրկված անձի դուրս գրումը, երբեմն խցի կամ կացարանի ոչ բավարար պայմանները, բժշկական պատշաճ օգնություն չտրամադրելը, այդ թվում՝ հետազոտություններ չկազմակերպելն ու առողջապահական մարմինների բուժական հիմնարկներ չտեղափոխելը:

Դրական պետք է համարել այն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 782-Ն որոշմամբ կանոնակարգվել են սննդի ընդունումից հրաժարված կալանավորված անձանց և դատապարտյալներին (այսուհետ՝ հացադուլ իրականացնող անձանց) պահման պայմանների և նրանց նկատմամբ հսկողության առանձնահատկությունները:

Ազատությունից զրկված անձանց բժշկական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ բժշկի պատճառաբանված

եզրակացությունների բացակայության պարագայում ազատությունից զրկված անձին չեն տրամադրվել քրոնիկ հիվանդությամբ պայմանավորած մշտապես ընդունվող դեղամիջոցները՝ հացադուլում գտնվելու պատճառով: Օրինակ, չեն տրվել հոգեմետ, հակահիպերտենզիվ (զարկերակային արյան ճնշումն իջեցնող) կամ հակադիաբետիկ (արյան մեջ շաքարի քանակը նվազեցնող) դեղամիջոցները: Նման դեպքում կարիք կա հատուկ բժշկական հսկողությամբ (օրինակ՝ չափելով արյան մեջ շաքարի քանակը) որոշելու տրամադրվող դեղամիջոցի չափաքանակի նվազեցման հնարավորությունը՝ պացիենտի առողջության պահպանման նպատակով:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք երբեմն հրաժարվում են ընդունել սնունդ, որը կարող է հենց հիվանդության ախտանիշ լինել: Նման պարագայում պետք է անհապաղ կազմակերպել հոգեբույժի խորհրդատվություն և հետևողական բժշկական հսկողություն սահմանել պացիենտի ըստ անհրաժեշտության դեղամիջոցների ժամանակին ընդունման նկատմամբ:

Խնդրահարույց են նաև սննդից հրաժարված ազատությունից զրկված անձանց ամենօրյա բժշկական հսկողության ծավալները: Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ հիմնականում վերջիններիս նկատմամբ իրականացվում է արյան զարկերակային ճնշման և սրտի զարկերի հաշվում: Հացադուլ իրականացնող անձանց քաշի նկատմամբ հսկողություն (ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2018 թվականի փետրվարի 14-ին տրամադրած տեղեկության համաձայն՝ Քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման որևէ բաժին համալրված չէ կշեռքով) կամ ըստ բժշկական ցուցման այլ հետազոտություններ չեն իրականացվում (օրինակ՝ արյան մեջ շաքարի քանակի որոշում):

Ուստի, սննդից հրաժարված ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի նկատմամբ հարկ է սահմանել անհատական բժշկական մոտեցում և հսկողություն՝ վերջիններիս պարբերաբար իրազեկելով հացադուլի հետևանքով առողջությանը հասցված բացասական հետևանքների մասին:

Բժշկական փաստաթղթերի վարումը

Կատարված այցերի ընթացքում արձանագրվել են նաև ազատությունից զրկված անձանց բժշկական փաստաթղթերի ոչ պատշաճ վարման դեպքեր, մասնավորապես՝ այցի պահին լրացված չեն եղել մարմնական զննության արդյունքները, բացակայել են նշանակված բուժման և բուժման ընթացքի վերաբերյալ գրառումները (օրինակ՝ «Գորիս», «Կոշ» քրեակատարողական հիմնարկներ): Բացի այդ, արձանագրվել է հիվանդության պատմագիր բացված չլինելու դեպք (օրինակ՝ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ):

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման թիվ 1 հավելվածի 47-րդ կետի՝ հիվանդ կալանավորված անձին կամ դատապարտյալին զննելուց հետո բժիշկ-մասնագետը կամ միջին բուժանձնակազմը բժշկական քարտում և կալանավորված անձանց և դատապարտյալների ամբուլատոր բժշկական օգնության ցուցաբերման մատյանում և կալանավորված անձանց և դատապարտյալների ստոմատոլոգիական օգնության ցուցաբերման մատյանում կատարում են համապատասխան գրառումներ:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված կարգին համապատասխան ապահովել ազատությունից զրկված անձանց բժշկական փաստաթղթերի պատշաճ վարումը:

Ազատությունից զրկված անձանց հետ փարվող հոգեբանական աշխատանքների կազմակերպումը

Անձին միայն ազատությունից զրկելն արդեն իսկ կարող է հոգեբանական խնդիրների առաջացման պատճառ հանդիսանալ, և մասնագիտական ոչ արդյունավետ աջակցությունը կարող է հանգեցնել անձի համար բացասական հետևանքների:

Ըստ Արդարադատության նախարարության՝ 2018 թվականի հունվարի 8-ի դրությամբ Քրեակատարողական հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժիններում ընդգրկված է մեկական հոգեբան՝ բացառությամբ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի: Այստեղ նշված աշխատանքների կազմակերպման գործընթացում հոգեբան ներգրավված չէ: «Նուբարաշեն» և «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներում ներգրավված է երեքական հոգեբան:

Այսպիսով, «Գորիս» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձինք մասնագիտական հոգեբանական աջակցություն չեն ստանում: Հարկ է ամրագրել, որ այն Քրեակատարողական հիմնարկներում, որտեղ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների կազմակերպման գործընթացում ներգրավված է մեկական հոգեբան, ազատությունից զրկված անձանց թիվը շատ տարբեր է (նվազագույնը՝ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում՝ 60, իսկ առավելագույնը՝ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում՝ 640): Ուստի, անհրաժեշտ է պահպանել Քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց և հոգեբանների թվային հարաբերակցությունը, ինչն էլ հոգեբանների կատարած աշխատանքի արդյունավետության պակասի պատճառ է:

Հոգեբանական աջակցության արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն նաև հոգեբանների մասնագիտական պարբերական վերապատրաստումները:

Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց հետ հոգեբանական աշխատանքը պետք է կազմակերպվի հստակ ընթացակարգով: Ընդունելությունը պետք է իրականացվի կանոնավոր՝ ինչպես խցերում, այնպես էլ հոգեբանի առանձնասենյակում: Ընդունելությունների ավարտին դրա իրականացման վերաբերյալ գրառում է արվում ազատությունից զրկված անձի անձնական գրքույկներում: Գործնականում երբեմն մասնագիտական գրառումներ չեն կատարվում («Արթիկ» քրեակատարողական հիմնարկ), ինչը թույլ չի տալիս դիտարկել ազատությունից զրկված անձանց հոգեբանական վիճակի դինամիկան և կանոնակարգել նրանց հետ աշխատանքը:

Քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձանց հետ իրականացվող հոգեբանական աշխատանքները պետք է կազմակերպվեն երեք փուլով՝ 1) նախնական, 2) ընթացիկ, 3) ավարտական: Յուրաքանչյուր փուլում առկա է հոգեախտորոշիչ, ադապտացիոն և կանխարգելիչ, իսկ որոշ դեպքերում՝ խորհրդատվական-հոգեթերապևտիկ աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտություն:

Մինչդեռ, մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում նկարագրված փուլերում նման աշխատանքներ չեն իրականացվում: Տրամադրվող հոգեբանական օգնությունը պատշաճ չէ. աշխատանքի ոճն իրադրային է, ախտորոշումը՝ «աչքաչափով», խորհրդատվությունը՝ «ընկերական» կամ «ձնողական»:

Ռիսկայնության բարձր աստիճան ունեցող ազատությունից զրկված անձանց կամ մեղսունակությունը չբացառող հոգեկան հիվանդության նախանշաններ կամ ինքնավնասման կամ ինքնասպանության հակում ունեցող անձանց հետ նպատակաուղղված հոգեբանական ծրագրեր չեն իրականացվում (օրինակ՝ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ):

Քրեակատարողական հիմնարկների հոգեբանական ծառայությունների պատշաճ կազմակերպման համար պետք է լինեն մեթոդական ուղեցույցներ:

Քրեակատարողական հիմնարկների խցերում կամ կացարաններում, ըստ անձնային տիպերի համապատասխանության, ազատությունից զրկված անձանց տեղաբաշխումը պետք է իրականացվի խմբավորման հստակ չափանիշների հիման վրա:

Ամփոփելով վերոշարադրյալն՝ անհրաժեշտ է՝

✓ վերանայել Քրեակատարողական հիմնարկներում հոգեբանների հաստիքները՝ համապատասխանեցնելով այնպեղ պահվող ազատությունից զրկված անձանց լրակազմին, ինչպես նաև անհրաժեշտ հոգեբանական

աջակցության ծավալին՝ նախապես գնահատելով մարուցվող ծառայությունների կարիքները.

✓ **մշակել Քրեակատարողական հիմնարկներում հոգեբանական ծառայության աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար մեթոդական ուղեցույցներ.**

✓ **պարբերաբար կազմակերպել հոգեբանների մասնագիտական վերապատրաստումը՝ շեշտադրելով քրեակատարողական ծառայության առանձնահատկությունները:**

2.2. Գերբնակեցում և խցերում անհավասար տեղաբաշխում

Գերբնակեցման խնդրի լուծման կապակցությամբ 2016 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի վեց մասնաշենքերը (1240 լրակազմով) շահագործման հանձնելուց հետո 2018 թվականի հունվարի 8-ի դրությամբ 715 անձ տեղափոխվել է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ:

Այնուամենայնիվ, 2017 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության որոշ Քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել են գերբնակեցման և խցերում անհավասարաչափ բաշխման խնդիրներ:

ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական տվյալների համաձայն՝ 2018 թվականի հունվարի 8-ի դրությամբ Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց թվաքանակը և սահմանված լրակազմն ունեն հետևյալ պատկերը (*գերբնակեցված Քրեակատարողական հիմնարկներն ընդգծված են*)՝

| ՔԿ հիմնարկ | Բուժական ուրիշ հիմնարկ (ըստ լրակազմի) | Քաց ՈՒՀ (ըստ լրակազմի) | Քաց ՈՒՀ 08.01.18թ. դրությամբ | Կիսաբաց ՈՒՀ (ըստ լրակազմի) | Կիսաբաց ՈՒՀ 08.01.18թ. դրությամբ | Կիսափակ ՈՒՀ (ըստ լրակազմի) | Կիսափակ ՈՒՀ 08.01.18թ. դրությամբ | Փակ ՈՒՀ (ըստ լրակազմի) | Փակ ՈՒՀ 08.01.18թ. դրությամբ | Կայանավոր. պահելու վայր (ըստ լրակազմի) | Կայանավոր. պահելու վայր 08.01.18թ. դրությամբ | ԸՆԴԱՄԵՆԸ (ըստ լրակազմի) | ԸՆԴԱՄԵՆԸ 08.01.18թ. դրությամբ |
|-------------------|---------------------------------------|------------------------|------------------------------|----------------------------|----------------------------------|----------------------------|----------------------------------|------------------------|------------------------------|--|--|-------------------------|-------------------------------|
| «Նուբարաշեն » ՔԿՀ | - | 10 | 2 | 40 | 28 | 40 | 20 | 100 | 66 | 590 | 681 | 780 | 797 |
| «Գորիս» ՔԿՀ | - | 50 | 3 | 7 | 2 | 15 | 18 | 60 | 42 | 50 | 29 | 182 | 94 |

| | | | | | | | | | | | | | |
|-------------------------------|-----|-----|----|-----|-----|------|-----|-----|-----|------|------|------|------|
| «Արթիկ» ՔԿՀ | - | 25 | 3 | 141 | 113 | 54 | 67 | 103 | 69 | 50 | 55 | 373 | 307 |
| «Սևան» ՔԿՀ | - | 15 | 9 | 483 | 354 | 50 | 2 | - | - | - | - | 548 | 365 |
| «Կոշ» ՔԿՀ | - | 25 | - | 50 | 239 | 465 | 82 | 100 | 1 | - | - | 640 | 322 |
| «Արովյան» ՔԿՀ | - | 29 | 3 | 81 | 58 | 40 | 26 | 15 | 1 | 100 | 42 | 265 | 130 |
| «Վարդաշեն» ՔԿՀ | - | 200 | 38 | 70 | 85 | 25 | 19 | 10 | 3 | 34 | 69 | 339 | 214 |
| «Վանաձոր» ՔԿՀ | - | 10 | 0 | 15 | 7 | 75 | 83 | 65 | 51 | 80 | 69 | 245 | 210 |
| «Դատ. հիվ.» ՔԿՀ ¹⁹ | 424 | 10 | 2 | 14 | 24 | 5 | 42 | 5 | 29 | 6 | 52 | 464 | 149 |
| «Հրազդան» ՔԿՀ | - | - | - | 4 | - | 24 | 52 | 107 | 73 | 80 | 79 | 215 | 204 |
| «Երևան-Կենտրոն» ՔԿՀ | - | - | - | 5 | 1 | 3 | 1 | 7 | 5 | 45 | 35 | 60 | 42 |
| «Արմավիր» ՔԿՀ | - | 5 | - | 83 | 2 | 550 | 335 | 402 | 163 | 200 | 215 | 1240 | 715 |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 424 | 379 | 60 | 993 | 913 | 1346 | 747 | 974 | 503 | 1235 | 1326 | 5351 | 3549 |

Այսպես, այցերի ընթացքում «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի որոշ խցերում արձանագրվել են գերբնակեցման խնդիրներ: Օրինակ՝ նշված Քրեակատարողական հիմնարկի մոտ 30 քմ մակերես ունեցող խցերից մեկում պահվել է 14 ազատությունից զրկված անձ, որոնց համար նախատեսված է եղել ընդամենը 11 մահճակալ: Այս կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի մարդու իրավունքների և ազատությունների խախտումները վերացնելու առաջարկ ներկայացնելու մասին որոշմամբ արձանագրվել է, որ խախտվել է նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին պարբերության 10-րդ կետով նախատեսված ազատությունից զրկված անձանց հանգստի, ներառյալ՝ գիշերային քնի իրավունքը:

Գերբնակեցման խնդիր է արձանագրվել նաև «Գորիս» քրեակատարողական հիմնարկի որոշ խցերում, օրինակ՝ 22,5 քմ մակերես ունեցող խցում պահվում է ազատությունից զրկված 6 անձ:

¹⁹ «Դատարարայինների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի ուղղիչ հիմնարկներում (բաց, կիսաբաց, կիսափակ և փակ) պահվող ազատությունից զրկված անձանց թվաքանակը ներկայացված է ըստ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի տեղաբաշխած ուղղիչ հիմնարկների, սակայն վերջիններս պահվում են բուժական ուղղիչ հիմնարկում՝ կիսաբաց տեսակի ուղղիչ հիմնարկի համար նախատեսված պայմաններում:

Քրեակատարողական հիմնարկներ կատարած այցերի արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ խցերում ազատությունից զրկված անձանց անհավասարաչափ բաշխումը ոչ միշտ է պայմանավորված եղել օրենսդրությամբ սահմանված պահանջներով կամ անվտանգության և համակեցության նկատառումներով: Խցերում անհավասարաչափ տեղաբաշխման խնդիր արձանագրվել է նաև գերբնակեցում չունեցող Քրեակատարողական հիմնարկներում, որի արդյունքում կրկին չի պահպանվել ՀՀ օրենսդրությամբ ամրագրված ազատությունից զրկված մեկ անձին հատկացվող բնակելի տարածության չափը²⁰:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 73-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ *ձերբակալված, կալանավորված, դատապարտված անձանց հարկացված բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից՝ յուրաքանչյուր անձի համար:*

ԽԿԿ-ի 2-րդ ընդհանուր զեկույցում արձանագրվել է, որ *ազատությունից զրկման վայրում նախատեսվածից ավելի մեծ թվով անձանց պահելու անհրաժեշտությունը ծայրահեղ վար է անդրադառնում այնտեղ մատուցվող բոլոր ծառայությունների և իրականացվող միջոցառումների վրա. զգալիորեն նվազեցնում է կյանքի որակի ընդհանուր մակարդակը: Ավելին, ազատությունից զրկման վայրի կամ նրա որևէ մասի գերբնակեցման աստիճանն ինքնըստինքյան կարող է լինել անմարդկային կամ նվաստացուցիչ²¹:*

ԽԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում անդրադարձել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում մահճակալների ոչ բավարար քանակին և ազատությունից զրկված անձանց հերթափոխով քնելու խնդրին՝ նշելով, որ Պետությունը պետք է շարունակական քայլեր ձեռնարկի խցերի բնակեցվածության աստիճանը նվազեցնելու և յուրաքանչյուր ազատությունից զրկված անձի համար առնվազն 4 քմ բնակելի տարածություն ապահովելու ուղղությամբ²²:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հետևողականորեն արտահայտվում է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ *ազատությունից զրկված անձանց գերբեռնվածության պայմաններում պահելն ինքնին կարող է որակվել անմարդկային կամ արժանապատվությունը*

²⁰Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2016 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/107efea7ef699b67309a61ffdf8d0f1e.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջ 13:

²¹Տե՛ս <https://rm.coe.int/1680696a3f> կայքէջում՝ 30.03.2018թ.-ի դրությամբ, կետ 46:

²²Տե՛ս <https://rm.coe.int/16806bf46f> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետեր 63, 65:

նվաստացնող վերաբերմունք, եթե անգամ իրավասու մարմինները նման նպատակ չեն հետապնդել²³:

Հարկ է նշել, որ անձնական նվազագույն տարածքի բացակայության առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա) 3-րդ հոդվածի խախտում է արձանագրվել նաև Հայաստանի վերաբերյալ կայացված մի շարք վճիռներով:²⁴

Կանխարգելման ազգային մեխանիզմի ներկայացուցիչների կողմից կատարված այցերի և դրանց ընթացքում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է նաև, որ տարբեր ուղղիչ հիմնարկներում գերբնակեցվածության պատճառներից է դատապարտյալներին բաց ուղղիչ հիմնարկ տեղափոխումն անհիմն մերժելը (օրինակ՝ «Կոշ» քրեակատարողական հիմնարկ): Մասնավորապես, բողոքներ են ներկայացվել, որ բաց ուղղիչ հիմնարկ տեղափոխումը մերժվում է՝ հիմք ընդունելով դատապարտյալի կողմից նախկինում դատվածություն ունենալու փաստը, ինչպես նաև չմարված քաղաքացիական հայց ունենալը: Ազատությունից զրկված անձանցից ոմանք նշել են, որ ՀՀ քրեական օրենսգրքի որոշ հոդվածներով դատապարտված լինելու պարագայում դատապարտյալը զրկվում է բաց ուղղիչ հիմնարկ տեղափոխվելու իրավունքից: Բաց ուղղիչ հիմնարկ տեղափոխման ենթակա դատապարտյալների թիվը, ըստ Քրեակատարողական հիմնարկի պետի, մոտ 100 անձ է:

Հարցի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *դատապարտյալների պատիժը կատարելու համար բաց ուղղիչ հիմնարկ կարող են տեղափոխվել, եթե բավարարում են նշված օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա», «բ», «գ», կամ «դ» ենթակետերով սահմանված պահանջները՝ հիմք ընդունելով նրանց կողմից **դրսևորած դրական վարքագիծը**: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ *պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը փոխում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովը՝**

²³ Տե՛ս Լաբզովն ընդդեմ Ռուսաստանի գործով 2005 թվականի հունիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ 62208/00, կետ 44, Նովոսելովն ընդդեմ Ռուսաստանի 2005 թվականի հունիսի 2-ի վճիռը, գանգատ թիվ 66460/01, կետ 41, Մայգիտն ընդդեմ Ռուսաստանի 2005 թվականի հունվարի 20-ի վճիռը, գանգատ թիվ 63378/00, կետ 39, Նովոսելովն ընդդեմ Ռուսաստանի 2005 թվականի հունիսի 2-ի վճիռը, գանգատ թիվ 66460/01, կետ 41, Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի 2002 թվականի հունիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 47095/99, կետ 97, Պիրսն ընդդեմ Հունաստանի 2001 թվականի ապրիլի 19-ի վճիռը, գանգատ թիվ 28524/95, կետ 69 և այլն:

²⁴ Տե՛ս Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի գործով 2008 թվականի դեկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 31237/03, կետեր 40-59 և Կարապետյանն ընդդեմ Հայաստանի գործով 2009 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 22387/05, կետեր 33-47:

հաշվի առնելով որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձի դրսևորած վարքագիծը, մեկուսացվածության աստիճանի նպատակահարմարությունը և ՀՀ քրեակատարողական օրենսգրքով նախատեսված ուղղիչ հիմնարկում դատապարտյալներին անջատ պահելու կանոնները:

Նշված դրույթների ձևակերպումից պարզ է, որ ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու համար հաշվի են առնվում ոչ թե ազատությունից զրկված անձի կողմից կատարված հանցանքը կամ առկա չմարված քաղաքացիական հայցը, այլ անձի դրսևորած վարքագիծը, մեկուսացվածության աստիճանի նպատակահարմարությունը, ուղղիչ հիմնարկներում դատապարտյալներին անջատ պահելու համապատասխան կանոնները և օրենսգրքով սահմանված այլ պահանջները:

ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի հայեցակարգում անդրադարձ է կատարվել այսպես կոչված «պրոգրեսիվ համակարգ»-ին, որը կիրառվում է աշխարհի բազմաթիվ երկրներում և ապրել է որոշակի զարգացում: «Պրոգրեսիվ համակարգ»-ը պատժի իրավական կառուցվածքի մասն է կազմում և խթանում է դատապարտյալների ուղղման գործընթացը, քանի որ խրախուսում է օրինապահ վարքագիծ դրսևորող դատապարտյալներին, մեղմացնում նրանց պատժի կրման պայմանները և ընդհակառակը՝ պատժի կրման պայմանների խստացում է նախատեսում հակաօրինական վարքագիծ դրսևորողների նկատմամբ: Պատժի կրման պայմանների փոփոխման նախատեսումը մեկ ուղղիչ հիմնարկի շրջանակներում անշուշտ կունենա դրական ազդեցություն պատժի կատարման և դրա նպատակների իրականացման արդյունավետության վրա:

Այս խնդրի շրջանակներում անհրաժեշտ է ներմուծել նաև ուղղիչ ռեժիմների աստիճանական փոփոխության ճկուն մեխանիզմ՝ խիստ ռեժիմից դեպի թույլը:

Գերբնակեցվածության պատճառներից կարող է հանդիսանալ այն, երբ ազատությունից զրկված անձին մեկուսացվածության առավել ցածր աստիճան ունեցող կիսաբաց ուղղիչ հիմնարկ տեղաբաշխելը պայմանավորված է տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ընդգրկվելու պարտադիր պայմանով (օրինակ՝ «Գորիս» քրեակատարողական հիմնարկ):

Մասնավորապես՝ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի կիսաբաց տեսակի ուղղիչ հիմնարկը տեղակայված է քրեակատարողական հիմնարկի հիմնական շենքից դուրս և անձանց ազատ տեղաշարժումն ապահովելու համար ունի առանձին մուտք: Մշտադիտարկման այցի ընթացքում, սակայն պարզվել է, որ կիսաբաց տեսակի ուղղիչ հիմնարկում պահվող ազատությունից զրկված բոլոր անձինք ներգրավված են տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում:

Վերոգրյալի հետևանքով ազատությունից զրկված 3 անձինք տեղաբաշխված են կիսաբաց տեսակի ուղղիչ հիմնարկ, սակայն իրենց դիմումի հիման վրա պահվում են կիսափակ տեսակի ուղղիչ հիմնարկի պայմաններում:

Ամփոփելով հարկ է ընդգծել, որ պետությունը պետք է շարունակական քայլեր ձեռնարկի ազատությունից զրկված անձանց ներպետական և միջազգային չափանիշներին համահունչ անձնական տարածությամբ ապահովելու ուղղությամբ: Խնդիրը պետք է դիտարկել ինչպես ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ նվազագույն բնակելի տարածության (չորս քառակուսի մետր), այնպես էլ մարդկային արժանապատվության հետ համատեղելի պայմաններով անձնական տարածության ապահովման տեսանկյունից:

Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ դատապարտյալների բաց ուղղիչ հիմնարկ տեղափոխումը ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 101-րդ և 102-րդ հոդվածների պահանջներին համաձայն կազմակերպելու ուղղությամբ:

2.3. Ազատությունից զրկված չժխող անձանց ծխողների հետ միևնույն խցում կամ կացարանում պահելու հետ կապված խնդիրներ

2017 թվականին ներկայացվել են բողոքներ այն մասին, որ չժխող դատապարտյալը կամ կալանավորված անձը պահվում է ծխողների հետ նույն խցում կամ կացարանում: Ըստ ազատությունից զրկված անձանց՝ ուղղիչ հիմնարկի վարչակազմն իրենց ըստ խցերի տեղաբաշխելիս հաշվի չի առնում այդ հանգամանքը:

Արդյունքում, ծխի²⁵ երկրորդային վնասակար ազդեցության (կամ այլ կերպ՝ պասիվ ծխելու) հետևանքով ազատությունից զրկված չժխող անձանց առողջությանը պատճառվում է վնաս կամ ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ խախտվում են համակեցության կանոնները: Նման պայմաններն ազատությունից զրկված անձանց միջև նաև կոնֆլիկտային իրավիճակներ են առաջացնում:

Հարցի արդիականության, ինչպես նաև համապատասխան միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին են վկայում Պաշտպանի կողմից քննության առարկա դարձած այդպիսի բողոքները: Օրինակ՝ բողոքներից մեկով պարզվել է, որ բողոքը ներկայացրած ազատությունից զրկված անձն ունի սիրտ-անոթային համակարգի հետ կապված խնդիրներ: Արձանագրվել է նաև, որ վերջինս վատ օդափոխություն ունեցող խցում պահվել է ազատությունից զրկված երեք այլ անձանց հետ, ովքեր, ի տարբերություն իրեն, ծխող են: Այս կապակցությամբ դիմումատուն նշել է, որ պասիվ ծխելն իր առողջության վրա բացասական ազդեցություն է ունենում և խնդրել է Պաշտպանի աջակցությունն իրեն պահելու համապատասխան

²⁵ Ըստ «Ծխախոտային արտադրատեսակների օգտագործման բացասական ազդեցության նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի՝ երկրորդային ծուխը բնորոշվում է որպես ծուխ, որն առկա է օդում որտեղ ծխում են կամ նախկինում ծխել են, այդ թվում նաև ծուխ, որն արտաշնչվում է ծխախոտ օգտագործողի կողմից:

պայմաններ ապահովելու կամ այլ Քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու հարցերում:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքի քննարկման ընթացքում կրկին պարզվել է, որ բողոք ներկայացրած անձի ամուսինն ունի սիրտ-անոթային համակարգի հետ կապված խնդիրներ: Վերջինս, դիմումատուի պնդմամբ, պահվում է ազատությունից զրկված 13 այլ ծխող անձանց հետ նույն խցում:

Բողոքների քննարկման ընթացքում առաջին դեպքում դիմումատուն պատժի հետագա կրելը շարունակելու նպատակով տեղափոխվել է այլ Քրեակատարողական հիմնարկ, որտեղ խցերի պատուհանների չափերը թույլ են տալիս բավարար բնական օդափոխություն ապահովել, իսկ մյուս դեպքում՝ անձը տեղաբաշխվել է ազատությունից զրկված չծխող անձանց հետ:

Չնայած անհատական մակարդակում արձանագրված դրական արդյունքներին՝ այնուամենայնիվ խնդիրն ունի համակարգային լուծումների կարիք, այդ թվում՝ օրենսդրական:

Հատկանշական է, որ հարցի կապակցությամբ առկա է Քրեակատարողական վարչության պետի 2015 թվականի ապրիլի 8-ի «Չծխող դատապարտյալների և կալանավորված անձանց իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ սահմանելու մասին» հրամանը, որի համաձայն՝ *քրեակատարողական օրենսդրությամբ ամրագրված իրավական սահմանափակումների բացակայության պարագայում կալանավորված անձանց կամ դատապարտյալների՝ ըստ խցերի (կացարանների) տեղաբաշխման գործողությունները հնարավորինս պետք է կազմակերպել այնպես, որ նվազագույնի հասցվեն չծխող անձանց ծխողների հետ միևնույն խցում (կացարանում) պահելու դեպքերը*²⁶:

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման²⁷ հավելվածի 15-րդ կետի համաձայն՝ (...) *կալանավորված անձինք ըստ խցերի տեղաբաշխվում և կալանավորվածներին պահելու վայրերում անջատ են պահվում «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի, իսկ դատապարտյալներն ըստ խցերի կամ կացարանների տեղաբաշխվում են ՀՀ քրեակատարողական օրենսգրքի համաձայն՝ հաշվի առնելով նաև անձանց համատեղելիությունը, առողջական վիճակը և անվտանգության ապահովումը:*

Չնայած օրենսդրական այս կարգավորումներին, այցերի ընթացքում կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ դրանք հայեցողական են և գործուն չեն:

Նշված հարցի առնչությամբ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Այսպես, ըստ *Էլեֆթերիադիսն*

²⁶ Տե՛ս <http://ced.am/government-instructions.html> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ:

²⁷ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշում:

ընդդեմ Ռումինիայի գործով վճռում դիմողը, ով տառապել է թոքերի քրոնիկ հիվանդությամբ, մոտ 10 ամիս պահվել է ազատությունից զրկված երկու այլ անձանց հետ միևնույն խցում, ովքեր, ի տարբերություն իրեն, ծխող են եղել: Միաժամանակ, դիմողը մասնակցել է մի շարք դատական նիստերի և դատարանում պահվել ծխողների հետ միևնույն խցերում: Բացի այդ, դիմողի պնդմամբ՝ նա ենթարկվել է ծխախոտի ծխի բացասական ազդեցությանը նաև Քրեակատարողական հիմնարկից դատարան փոխադրման ճանապարհին:

Այս գործով Եվրոպական դատարանն արձանագրել է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ նշելով, որ *պետությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել ազատությունից զրկված անձանց երկրորդային ծխի վնասակար ազդեցություններից պաշտպանելու ուղղությամբ, այն դեպքում, երբ բժշկի խորհրդատվությունը և բժշկական զննությունը վկայում են այն մասին (ինչպես և դիմումատուի դեպքում), որ դա անհրաժեշտ է առողջական վիճակի նկատառումներից ելնելով:*

Ինչ վերաբերում է Եվրոպական դատարանում չծխող անձանց ծխողների հետ դատարանի միևնույն խցերում պահվելու հարցին, ապա այս կապակցությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ *եթե նույնիսկ չծխող անձանց ծխողների հետ պահելը տևել է կարճ ժամանակ, ապա դա միևնույն է եղել է բժշկական ցուցումին հակառակ, քանի որ բժիշկը խորհուրդ էր տվել դիմումատուին խուսափել ծխախոտի ծխի վնասակար ազդեցությունից*²⁸:

Մեկ այլ՝ Ֆլորեան ընդդեմ Ռումինիայի գործով վճռում Եվրոպական դատարանն արձանագրել է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ հիմք ընդունելով այն, որ դիմումատուն, ով տառապում էր քրոնիկ հեպատիտով և զարկերակային հիպերտենզիայով, շուրջ ինն ամիս պահվել է ազատությունից զրկված 110-ից 120 այլ անձանց հետ, որոնցից, վերջինիս պնդմամբ, 90%-ը ծխող էին: Դիմումատուի դժգոհությունները կապված են եղել նաև ծխախոտի ծխի վնասակարության վերաբերյալ բժշկի նախազգուշացման պարագայում իրեն Քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնում ծխողների հետ միևնույն հիվանդասենյակում պահելու հետ²⁹:

Հարցի առնչությամբ ԽԿԿ-ն Գերմանիայի վերաբերյալ 2007 թվականի զեկույցում առաջարկել է *վերանայել ազատությունից զրկված անձանց, ըստ խցերի (կացարանների), տեղաբաշխման քաղաքականությունը և պրակտիկան՝ հաշվի առնելով նաև պասիվ ծխելու խնդիրները*³⁰:

²⁸ Տե՛ս Էլեֆթերիադիսն ընդդեմ Ռումինիայի գործով 2011 թվականի հունվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 38427/05, կետեր 49, 50:

²⁹ Տե՛ս Ֆլորեան ընդդեմ Ռումինիայի գործով 2010 թվականի սեպտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 37186/03:

³⁰ Տե՛ս <https://rm.coe.int/1680696304> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 117:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ քննարկված խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է՝

✓ **ՀՀ արդարադատության նախարարության քրեակարարողական վարչության պետի 2015 թվականի ապրիլի 8-ի «Չծխող դատապարտյալների և կալանավորված անձանց իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ սահմանելու մասին» հրամանի առավել լիարժեք կիրառումն ապահովելու նպատակով ազատությունից զրկված չծխող անձանց ծխողների հետ միևնույն խցում (կացարանում) պահելու սահմանափակումներին նվիրված քրեակարարողական ծառայողների համար կազմակերպել դասընթացներ.**

✓ **ազատությունից զրկված չծխող անձանց ծխողներից անջատ պահելու ընդհանուր կանոնից զատ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ՝ նախատեսելով անձի առողջական վիճակով պայմանավորված բժշկական ցուցման հիման վրա ազատությունից զրկված չծխող անձանց ծխողներից անջատ պահելու ոչ թե հայեցողական, այլ պարտադիր պայման.**

✓ **հաստատել և իրականացնել երկրորդային ծխով պայմանավորված վնասի վերաբերյալ ազատությունից զրկված անձանց իրազեկմանն ուղղված ծրագրեր, այդ թվում՝ փարեկան:**

2.4. Պատժախցերի պահման պայմաններ

Ինչպես 2016 թվականին³¹, այնպես էլ 2017 թվականի ընթացքում անբավարար պահման պայմաններ են արձանագրվել նաև որոշ Քրեակատարողական հիմնարկների պատժախցերում:

Այսպես, «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում նախատեսված է 9 պատժախուց: Խցերի մեծ մասի պատուհաններն այցի պահին կոտրված են եղել կամ բացակայել են: Խցերի սանիտարական պայմաններն անբավարար են եղել և առկա է եղել վերանորոգման կարիք: Խցերից 7-ում սանհանգույցներ չեն եղել, իսկ պատժախցերում գտնվող ազատությունից զրկված անձինք օգտվել են բաժանմունքի ընդհանուր օգտագործման համար նախատեսված սանհանգույցից:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկում նախատեսված է 3 պատժախուց: Այցի պահին պատժախուց տեղափոխված ազատությունից զրկված անձ չի եղել: Պատժախցերում սանհանգույցներ առկա չեն և այնտեղ գտնվող ազատությունից

³¹ Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2016 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/107efea7ef699b67309a61ffdf8d0f1e.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջեր 25-26:

զրկված անձինք օգտվում են բաժանմունքում նախատեսված սանհանգույցից: Խցերում առկա է վերանորոգման կարիք, իսկ խոնավության մակարդակը բարձր է:

Պատժախցերի անբավարար պայմաններ են արձանագրվել նաև «Աբովյան» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում:

Հարկ է նշել, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պատժախցերի պայմաններին անդրադարձել է նաև ԽԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում՝ նշելով, որ դրանք վատ են լուսավորված, խոնավ են, կիսաքանդ, աղտոտված և հեղեղված միջավայրերով: ԽԿԿ-ն ընդգծել է, որ անհրաժեշտ է դադարեցնել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պատժախցերի շահագործումը, իսկ մյուս քրեակատարողական հիմնարկների պատժախցերում ապահովել մարդու նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ պայմաններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով բնական լուսավորության ապահովմանը, ինչպես նաև սանհանգույցների առանձնացմանը³²:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկի պատժախցերում սանհանգույցները նույնպես ամբողջապես առանձնացված չեն բնակելի տարածությունից:

Այսպիսով, անհրաժեշտ է Քրեակատարողական հիմնարկների պատժախցերում ապահովել պարզաճ պայմաններ, այդ թվում՝ պարզաճ բնական լուսավորություն, ինչպես նաև սանհանգույցների առկայությունն ու առանձնացվածությունը:

Քրեակատարողական հիմնարկների մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են բժշկական փաստաթղթերի և հաշվառման մատյանների ոչ պատշաճ վարման դեպքեր:

Պատժախցում գտնվող դատապարտյալների (կալանավորված անձանց) հաշվառման մատյանի ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված մատյանը վարվում է ոչ պատշաճ, մասնավորապես՝ այցի պահին ֆիքսված չեն եղել պատժախցից վաղաժամ դուրս բերելու օրեր և ժամեր, այն լրացված է եղել ջնջումներով և բացթողումներով: Պատշաճ չի վարվել նաև կալանավորված անձանց և դատապարտյալներին բուժական ուղղիչ հիմնարկ կամ առողջապահական մարմինների բուժական հիմնարկ տեղափոխումները հաշվառելու մատյանը: Այն նույնպես վարվել է բացթողումներով, մասնավորապես՝ ամրագրված չեն եղել ազատությունից զրկված անձանց Քրեակատարողական հիմնարկ վերադառնալու ամսաթվերը (օրինակ՝ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ):

Այցի ընթացքում Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի աշխատակիցները մատյանները թերի լրացված լինելը հիմնականում պայմանավորել են հերթապահությանը բավարար թվով անձնակազմ ներգրավված չլինելով, որի

³² Տե՛ս <https://rm.coe.int/16806bf46f> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետեր 63, 65:

հետևանքով չունեն հաշվառման մատյանները պատշաճ լրացնելու համար անհրաժեշտ ժամանակ:

Դատապարտյալների կամ կալանավորված անձանց կողմից թույլ տրված ներքին կանոնակարգի խախտումների հաշվառման մատյանի ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված մատյանը վարվում է ոչ պատշաճ, մասնավորապես՝ այն լրացված է եղել ջնջումներով: Մատյանի ուսումնասիրությամբ արձանագրվել է նաև դեպք, երբ ազատությունից զրկված անձը ենթարկվել է «բանավոր նկատողություն» տույժի (օրինակ՝ «Գորիս» քրեակատարողական հիմնարկ):

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *տույժի բոլոր միջոցները կիրառվում են գրավոր՝ ուղղիչ հիմնարկի պետի կամ նրա պարտականությունները կատարող անձի որոշմամբ:*

Ուստի, անհրաժեշտ է ապահովել Քրեակատարողական հիմնարկներում հաշվառման մատյանների պատշաճ վարումը, քննարկել հերթապահությանը ներգրավվող անձնակազմի քանակն ավելացնելու հարցը՝ մատյանների վարման վերոշարադրյալ խնդիրները բացառելու նպատակով:

Միաժամանակ, անընդունելի է բանավոր տույժերի կիրառման պրակտիկան, որի բացառման նպատակով անհրաժեշտ է խիստ վերահսկողություն իրականացնել:

2.5. Կարանտինային բաժանմունքների պահման պայմաններ

2017 թվականի ընթացքում արձանագրել են կարանտինային խցերի պայմաններին, այդ թվում՝ սանիտարահիգիենիկ վիճակին առնչվող խնդիրներ (օրինակ՝ «Արթիկ», «Նուբարաշեն», «Կոշ», «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկներ): Մասնավորապես, «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի կարանտինային բաժանմունքում բնական լուսավորությունը բավարար չի եղել: Բավարար չեն եղել նաև սանիտարական պայմանները, մասնավորապես՝ մաքրման աշխատանքները պատշաճ կազմակերպված չեն եղել:

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի համաձայն՝ *կալանավորված անձը կամ դատապարտյալը կարանտինային բաժանմունքում պահվում է նվազագույնը նույն պայմաններում, ինչպիսի պայմաններում կալանավորված անձը կամ դատապարտյալը պահվում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի այլ խցում կամ կացարանում:*

Հարկ է նշել, որ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում նախատեսված չէ առանձին կարանտինային բաժանմունք, իսկ «Երևան-Կենտրոն»

քրեակատարողական հիմնարկում նախատեսված միակ կարանտինային խուցն օգտագործվում է ազատությունից զրկված անձի մշտական բնակության համար: Այդ իսկ պատճառով կալանավորված անձինք կամ դատապարտյալներն անմիջապես տեղավորվում են բնակելի գոտում՝ փաստացի չենթարկվելով պատշաճ բժշկական զննության, ինչպես նաև զրկվելով ուղղիչ հիմնարկի պայմաններին ծանոթանալու և հարմարվելու օրենսդրությամբ նախատեսված հնարավորությունից: Մինչդեռ, ըստ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի՝ *ուղղիչ հիմնարկ փոխադրված դատապարտյալը բժշկական զննություն անցնելու և ուղղիչ հիմնարկի պայմաններին հարմարվելու նպատակով մինչև յոթ օր ժամկետով տեղավորվում է կարանտինային բաժանմունքում:*

Վերոգրյալի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից ստացված գրավոր պարզաբանումների համաձայն՝ բոլոր Քրեակատարողական հիմնարկներում առկա են կարանտինային բաժանմունքներ (կամ խցեր), բացառությամբ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի, որտեղ կարանտինային մասնաշենքը չի գործում. այն կապիտալ վերանորոգման և կահավորման կարիք ունի:

Այս կապակցությամբ, անհրաժեշտ է բոլոր Քրեակատարողական հիմնարկներում ապահովել մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ պայմաններով կարանտինային բաժանմունքներ՝ հաշվի առնելով հարկապես ազատազրկման առաջին անգամ դատապարտվելու պարագայում ուղղիչ հիմնարկի պայմաններին հարմարվելու կարևորությունը:

2.6. Լոգանքի ապահովում և սանհանգույցներ

2017 թվականի ընթացքում Քրեակատարողական հիմնարկներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել են ազատությունից զրկված անձանց լոգանքի կազմակերպման հետ կապված խնդիրներ:

Լոգասենյակների ոչ բավարար պայմաններ են արձանագրվել «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի կիսաբաց տեսակի ուղղիչ հիմնարկում:

Պարզվել է, որ կիսաբաց ուղղիչ հիմնարկի մասնաշենքի յուրաքանչյուր հարկի լոգարանները և սանհանգույցները եղել են ոչ ընդունելի սանիտարական վիճակում, ցնցուղները՝ կոտրված:

ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանման համաձայն՝ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում 2016-2017 թվականներին ընթացիկ վերանորոգման աշխատանքներ են իրականացվել բնակելի գոտու մասնաշենքերի խցերում, սանհանգույցներում և միջանցքներում, ինչպես նաև հիմնովին վերանորոգվել է սննդի պատրաստման արտադրամասը: Վերանորոգման և հարդարման աշխատանքներ են իրականացվել բնակելի գոտու 5 մասնաշենքերում,

բաց ռեժիմային գոտու մասնաշենքում, մեկուսարանում, ճաշարանում, ինչպես նաև կաթսայատանը: Վերանորոգվել է դատապարտյալների ընդունման սենյակը:

Այցի ընթացքում պարզվել է, որ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման ստացիոնար բաժանմունքի միայն որոշ հիվանդասենյակներ են ապահովված եղել ջրով, որտեղ առանձնացված են եղել նաև սանհանգույց և լոգարան:

Բժշկական սպասարկման բաժնի ընդհանուր օգտագործման սանհանգույցը գտնվել է հակասանիտարական պայմաններում, օդի աղտոտվածության մակարդակը եղել է բարձր: Լոգարանը նույնպես հիգիենիկ ոչ պատշաճ վիճակում է եղել:

Վերոգրյալի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը տեղեկացրել է, որ բժշկական սպասարկման ստացիոնար բաժանմունքի լոգասենյակների և սանհանգույցի կահավորման և հարդարման համար արդեն իսկ տրամադրվել են անհրաժեշտ շինարարական նյութեր և պարագաներ հայտնաբերված թերությունները (ցնցուղի բացակայություն, թափված ծեփամածիկ) վերացնելու համար:

«Կոշ» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են, որ դեռևս լուծված չեն բժշկական սպասարկման բաժնի միջամտությունների սենյակը մշտական հոսող ջրով և ջրահեռացման համակարգով ապահովվածության հարցերը, ինչպես նաև սանիտարահիգիենիկ ոչ բավարար պայմաններ:

«Արթիկ» քրեակատարողական հիմնարկի պատժախցերի բաժանմունքի լոգարանը չի շահագործվում, և ազատությունից զրկված անձինք պատժախցում գտնվելու ընթացքում: Ազատությունից զրկված որոշ անձանց պնդմամբ՝ իրենք կարող են օգտվել ընդհանուր մասնաշենքերի լոգարաններից, սակայն, օրինակ՝ տուբերկույրով վարակակիր լինելու կասկածանքով ազատությունից զրկված անձինք իրենց դիմումների հիման վրա պահվում են պատժախցի մասնաշենքի առանձին խցում, բայց չեն օգտվում ընդհանուր օգտագործման լոգարանից:

Ավելին, պատժախցում գտնվող անձանց լոգանքի տրամադրման մատյանի ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերջին անգամ այն լրացված է եղել մշտադիտարկման այցից երեք ամիս առաջ:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկում կատարված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ Քրեակատարողական հիմնարկի մասնաշենքի 2-րդ հարկի լոգարանները գտնվում են սանիտարահիգիենիկ անթույլատրելի վիճակում, առկա է վերանորոգման և մաքրման աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն: Բացի այդ, լոգարաններից մեկի պատուհանի ապակին այցի պահին եղել է կոտրված, որը պատճառաբանվել է օդափոխության անհրաժեշտությամբ:

Քրեակատարողական հիմնարկի առաջին հարկում՝ լվացքատանը կից տեղակայված լոգարանը նույնպես գտնվել է սանիտարական ոչ բավարար վիճակում:

Այսպես, բացի վերանորոգման և ախտահանման վերոհիշյալ խնդիրներից՝ լոգասենյակում ապահովված չէ արհեստական լուսավորությունը:

«Կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման հավելվածի 36-րդ կետի համաձայն՝ *յուրաքանչյուր կալանավորված անձ կամ դատապարտյալ լոգանք կամ ցնցուղ պետք է ընդունի կլիմային համապատասխան ջերմաստիճանի պայմաններում՝ առնվազն յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ, իսկ հնարավորության դեպքում՝ ավելի հաճախակի, եթե դա անհրաժեշտ է ընդհանուր հիգիենայի պահպանման համար:*

Այս կապակցությամբ ԽԿԿ-ն իր գործունեության մասին 2-րդ ընդհանուր զեկույցում նշել է, որ *ազատությունից զրկված անձինք պետք է ունենան համապատասխան հնարավորություն օգտվելու ցնցուղներից կամ լոգանքի այլ հնարավորություններից: Ցանկալի է նաև, որ խցերում լինի հոսող ջուր*³³:

Բացի այդ, ԽԿԿ-ն Հայաստան, ինչպես նաև մի շարք այլ երկրների կատարած այցերի ընթացքում իշխանություններին բազմիցս կոչ է արել ավելացնել անազատության մեջ պահվող անձանց լոգանք ընդունելու հաճախականությունը՝ հիմք ընդունելով Եվրոպական բանտային կանոնների 19.4-րդ կանոնը: Ըստ այդ կանոնի՝ *պետք է համարժեք հնարավորություններ ստեղծել, որպեսզի ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ կարողանա կլիմային համապատասխան ջերմաստիճանի պայմաններում ցնցուղ ընդունել կամ լողանալ, ընդ որում՝ հնարավորության դեպքում ամեն օր, սակայն շաբաթն առնվազն երկու անգամ (իսկ անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ)*՝ *ելնելով ընդհանուր հիգիենայի պահպանության նպատակից:*

ԽԿԿ-ի Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում ներկայացված առաջարկների համաձայն՝ **լոգանք ընդունելու հնարավորություն պետք է ընձեռվի առնվազն շաբաթը երկու անգամ**³⁴:

Ելնելով վերոգրյալից՝ ազատությունից զրկված անձանց լոգանքի պարզաճ կազմակերպման նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ Քրեակարարողական հիմնարկներում լոգասենյակների և սանհանգույցների վերանորոգման աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ:

Միաժամանակ, ազատությունից զրկված անձանց ընդհանուր հիգիենայի պահպանման անհրաժեշտությունից ելնելով՝ «Կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ պետք է կարարել փոփոխություն՝ ազատությունից զրկված անձանց համար նախատեսելով շաբաթական առնվազն 2 անգամ լոգանքի հնարավորություն:

³³ Տե՛ս <https://rm.coe.int/1680696a3f> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 49:

³⁴ Տե՛ս <https://rm.coe.int/16806bf46f> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 73:

Տեղաշարժման սահմանափակումներ ունեցող ազատությունից զրկված անձանց լրգանքի կազմակերպման, ինչպես նաև նշված անձանց լրգասենյակների և խցերի սանհանգույցների հասանելիության խնդիրներ են արձանագրվել դեռևս 2016 թվականին³⁵: Դրանք շարունակական բնույթ են կրել նաև 2017 թվականի ընթացքում (օրինակ՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ):

Նշվածի հետ միասին, Քրեակատարողական հիմնարկներում հաշմանդամություն ունեցող կալանավորված և դատապարտված անձանց բնակավայրերի ուսումնասիրություն անցկացնելուց հետո, բոլոր Քրեակատարողական հիմնարկներում տեղադրվում են զուգարանակոնքեր, իսկ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում հատուկ պայմաններ են ստեղծվել նաև լրգարանում՝ համապատասխան հարմարություններով:

Ուտրի, անհրաժեշտ է լրգասենյակներն ու խցերի սանհանգույցները հասանելի դարձնել տեղաշարժման սահմանափակումներ ունեցող ազատությունից զրկված անձանց:

2.7. Սանիտարահիգիենիկ և պահման ընդհանուր պայմաններ

2016 թվականի ընթացքում Քրեակատարողական հիմնարկներ կատարած այցերի ընթացքում արձանագրվել են անբավարար սանիտարահիգիենիկ և նյութակենցաղային պայմաններին առնչվող մի շարք խնդիրներ:

Մասնավորապես՝ դեռևս 2016 թվականի ընթացքում արձանագրվել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ինչպես առաջին հարկի բոլոր խցերի այնպես էլ միջանցքի խիստ անբավարար սանիտարահիգիենիկ պայմաններ³⁶:

«Վարդարադատության նախարարությունը պարզաբանել է, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջին հարկի խցերում պահվող ազատությունից զրկված անձինք տեղափոխվել են այլ հարկերում գտնվող խցեր: Միաժամանակ նշվել է, որ թիվ 7, 8, 9 կարանտինային խցերի և պատժախցերի տեղափոխման հարցը քննարկման փուլում է:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջին հարկում արձանագրված խնդիրների կապակցությամբ կատարված ուսումնասիրությունների

³⁵ Տե՛ս «Վարդարադատության նախարարությունը պարզաբանել է, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ինչպես առաջին հարկի բոլոր խցերի այնպես էլ միջանցքի խիստ անբավարար սանիտարահիգիենիկ պայմաններ» հարցազրույցի մեխանիզմի 2016 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/107efea7ef699b67309a61ffdf8d0f1e.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջ 22:

³⁶ Տե՛ս «Վարդարադատության նախարարությունը պարզաբանել է, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ինչպես առաջին հարկի բոլոր խցերի այնպես էլ միջանցքի խիստ անբավարար սանիտարահիգիենիկ պայմաններ» հարցազրույցի մեխանիզմի 2016 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/107efea7ef699b67309a61ffdf8d0f1e.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջեր 19-20:

արդյունքում պարզվել է, որ Քրեակատարողական հիմնարկի առաջին հարկի որոշ խցերի շահագործումը դեռևս շարունակվում է (կարանտինային բաժանմունք, պատժախցեր, հացադուլ հայտարարած ազատությունից զրկված անձանց առանձնացնելու համար):

Հարկ է նշել, որ անհրաժեշտ է հետևողական քայլեր ձեռնարկել Քրեակատարողական հիմնարկի առաջին հարկի շահագործումն առհասարակ դադարեցնելու նպատակով:

Մշտադիտարկման ընթացքում պարզվել է, որ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի շենքը 4-րդ աստիճանի վթարային է, ինչով հիմնականում պայմանավորված են Քրեակատարողական հիմնարկում պահման և սանիտարահիգիենիկ անբավարար պայմանները:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկում արձանագրվել է նաև աղբահանության հետ կապված խնդիր: Ներկայացված պարզաբանումների համաձայն՝ աղբահանությունը կատարվում է ամսվա ընթացքում 3-4 անգամ, սակայն այցի պահին Քրեակատարողական հիմնարկի բակի աղբահանության համար նախատեսված տարածքում արձանագրվել է աղբի մեծ կուտակում:

Աղբահանության հետ կապված խնդիր է արձանագրվել նաև «Կոշ» քրեակատարողական հիմնարկում: Ներկայացված տեղեկատվության համաձայն՝ նշված քրեակատարողական հիմնարկի ամբողջ աղբահանությունն իրականացվում է պայմանագրային հիմունքներով: Այնուամենայնիվ, այցի պահին Քրեակատարողական հիմնարկի տարածքում՝ սանհանգույցների հարևանությամբ մեծ աղբակույտեր են եղել: «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում արձանագրվել են նաև սանհանգույցների հակասանիտարական պայմաններ: Նման պայմաններ են արձանագրվել «Կոշ» քրեակատարողական հիմնարկի ատամնաբուժական սենյակում:

«Քրեակատարողական օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ *ուղղիչ հիմնարկում դատապարտյալին հարկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական և սանիտարահիգիենիկ չափանիշներին, ինչպես նաև ապահովի նրա առողջության պահպանումը:*

Եվրոպական բանտային կանոնների 19.1-րդ կանոնի համաձայն՝ *անազատության մեջ պահելու վայրերի տարածքները պետք է մշտապես պահվեն մաքուր և պարշաճ վիճակում:*

Հարկ է նաև նշել, որ Քրեակատարողական վարչության պետի թիվ 1 ցուցումի 4-րդ կետով Քրեակատարողական հիմնարկի պետերին հանձնարարվել է՝ *պարշաճ հսկողություն սահմանել քրեակատարողական հիմնարկներում տարվող սանիտարական աշխատանքների կատարման նկատմամբ, (...) կատարել ախտահանիչ աշխատանքներ՝ բացառելով աղտոտվածությունը և գարշահոտությունը:*

Այսպիսով, Քրեակատարողական հիմնարկներում պետք է ուժեղացնել հսկողությունը սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմատիվների պահպանման նկատմամբ:

Պետք է լիարժեք պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 03-Ն հրամանով ամրագրված բժշկական թափոնների հավաքման և վնասագերծման միջոցառումները (օրինակ՝ «Կոշ» քրեակատարողական հիմնարկ):

Պետք է նշել նաև, որ Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագրի շրջանակներում առաջնային բժշկական օգնության տրամադրման համար նախատեսված սենյակների ընդհանուր պայմանների բարելավման համար վերանորոգման աշխատանքներ են իրականացվել բոլոր Քրեակատարողական հիմնարկներում՝ բացառությամբ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի:

Խնդիրների լուծման համար անհրաժեշտ է ապահովել իրավական ակտերով նախատեսված բժշկական սպասարկման բաժինների շինարարական և սանիտարահիգիենիկ պահանջները:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2017 թվականի ընթացքում ստացվել է նաև բողոք այն մասին, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում քննչական գործողություններ կատարելու համար նախատեսված առանձնասենյակները չեն ջեռուցվում, սենյակների աթոռները կտրված են, իսկ սանիտարահիգիենիկ պայմաններն՝ անբավարար:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի նշված սենյակների պայմանները կատարված այցերի ընթացքում ուսումնասիրել և արձանագրել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները և բարձրացված հարցի կապակցությամբ սկսվել է քննարկման ընթացակարգ:

Արդարադատության նախարարության պարզաբանման համաձայն՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի տեսակցության համար նախատեսված բոլոր սենյակներն ապահովված են ջեռուցման նոր համակարգով, որը շահագործվում է 2016 թվականի դեկտեմբերի 15-ից: Քննչական գործողություններ կատարելու համար նախատեսված սենյակները գույքով մասամբ համալրվել են, իսկ բաժանմունքի ձախ թևի սենյակներում առկա անսարք էլեկտրական սարքերը փոխարինվել են նորերով, ինչպես նաև իրականացվել են լրացուցիչ մաքրման աշխատանքներ:

2017 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները, ինչպես մշտադիտարկման, այնպես էլ բողոքների կապակցությամբ կատարված

այցերի ընթացքում մշտապես ուսումնասիրել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի քննչական գործողություններ կատարելու համար նախատեսված սենյակները, դրանց պայմաններն, այդ թվում՝ մաքրությունը և կահավորանքով ապահովվածությունը:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի քննչական գործողություններ կատարելու համար նախատեսված սենյակներում ձմռան ամիսներին ջեռուցման խնդրի առկայության կապակցությամբ 2017 թվականի ընթացքում նշված Քրեակատարողական հիմնարկ կատարված հերթական այցի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները կրկին ուսումնասիրվել են այդ սենյակները և դրանց պայմանները: Բոլոր սենյակներն այցի դրությամբ ջեռուցվել են:

Հարկ է նշել, որ Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց քննչական գործողություններ կատարելու համար նախատեսված սենյակների պայմանները գտնվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուշադրության կենտրոնում:

Քրեակատարողական հիմնարկներում ցանկացած դեպքում քննչական գործողություններ կատարելու համար նախատեսված առանձնասենյակներում պարզաձև ջեռուցման, բավարար քանակությամբ կահավորանքի և լուսավորության բացակայությունը, ինչպես նաև սանիտարահիգիենիկ անբավարար պայմանները խոչընդոտում են իրավական օգնություն ստանալու իրավունքի իրացմանը:

2.8. Ազատությունից զրկված անձանց անհրաժեշտ պարագաներով ապահովում

2017 թվականի ընթացքում Քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանցից ստացվել են մի շարք բողոքներ վերջիններիս անհրաժեշտ իրերը և պարագաները չտրամադրելու վերաբերյալ:

«Արթիկ» քրեակատարողական հիմնարկի կարանտինային բաժնի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ազատությունից զրկված անձինք օգտագործում են անձնական անկողնային պարագաներ, իսկ Քրեակատարողական հիմնարկի կողմից անկողնային պարագաներ տրամադրված չեն եղել:

Կարանտինային բաժանմունքում պահվող ազատությունից զրկված անձանցից մեկի անձնական գործի ուսումնասիրությունից պարզվել է, որ Քրեակատարողական հիմնարկին պատկանող և օգտագործման նպատակով ազատությունից զրկված անձին տրված իրերի և առարկաների (անկողնային պարագա, սպասք և այլն) ցանկում կատարված նշումների համաձայն՝ ազատությունից զրկված անձին վերջին անգամ անկողնային պարագաներ տրամադրվել են 2015 թվականի հունվարի 4-ին:

Մինչդեռ, համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1182-Ն որոշման հավելված 3-ի՝ Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինների և դրանց շահագործման ժամկետների ցանկի՝ ծածկոց, ներքնակ և բարձ տրամադրվում է 2 տարվա ընթացքում մեկ անգամ: Նույն որոշման համաձայն՝ սավան տրամադրվում է 1 տարվա ընթացքում 4 հատ, իսկ բարձի երես՝ 3 անգամ:

Արդյունքում չեն պահպանվում ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1182-Ն որոշման հավելված 3-ի պահանջները, մասնավորապես՝ անկողնային ու հիգիենիկ պարագաների շահագործման ժամկետները:

Եվրոպական բանտային կանոնների 21-րդ կանոնի համաձայն՝ *ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի, պետք է տրամադրվի պատշաճ անկողնային պարագաներով առանձին մահճակալ. մաքրությունն ապահովելու համար դրանք պետք է հաճախակի փոխվեն:*

Ամփոփելով վերոշարադրյալը հարկ է նշել, որ պետությունը պետք է քայլեր ձեռնարկի ազատությունից զրկված անձանց կլիմայական պայմանների համապատասխան, անկողնային պարագաներով ապահովելու ուղղությամբ:

2.9. Պատշաճ սննդի ապահովում

Քրեակատարողական հիմնարկներում պատշաճ սննդի ապահովումը կենսական նշանակություն ունի ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման համար: Ազատությունից զրկված անձի կողմից իր սննդակարգի կառավարումը որոշակի առումով սահմանափակված է, քանի որ վերջինս ստանում է Քրեակատարողական հիմնարկի ճաշացանկերով նախատեսված ճաշատեսակները:

2017 թվականին ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց սննդի որակի և քանակի հետ կապված ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական խնդիրներ:

Սննդի ապահովմանն առնչվող բողոքներ են ստացվել «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց կողմից՝ կապված սննդի որակի և քանակի հետ: Այս կապակցությամբ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի ճաշացանկերի ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 2017 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում որոշ օրերին ազատությունից զրկված անձանց չի տրամադրվել պանիր, միրգ, ձուկ և հյութ:

Բարձրացվել է նաև ազատությունից զրկված անձանց դիետիկ սննդով ապահովելու հարցը: Այսպես, որոշ հիվանդությունների հետ կապված (օրինակ՝ շաքարային դիաբետ, խոցային հիվանդություն և այլն) ազատությունից զրկված

անձինք ունեն հատուկ սննդակարգի կարիք: Քրեակատարողական հիմնարկներում տրամադրվող սննդի վերաբերյալ օրենսդրական նախկին կարգավորումներն այս դեպքերում անձանց դիետիկ կամ հատուկ կերպով պատրաստված սննդով ապահովելու հնարավորություն չէին նախատեսում:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց տրամադրվող սննդի չափաբաժինները սահմանվում են ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1182-Ն որոշմամբ³⁷, որը 2017 թվականի մայիսի 18-ին ենթարկվել է որոշակի փոփոխությունների:

Հատուկ սննդակարգի կապակցությամբ վերոնշյալ որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետն արդեն սահմանում է, որ *հիմք ընդունելով բժշկի կողմից տրված եզրակացությունը կամ խորհրդարկությունը՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող հղի, կերակրող մայր և (կամ) հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին տրամադրվում է նույն որոշման թիվ 1 հավելվածով նախատեսված սննդատեսակներից պատրաստված համապատասխան ճաշատեսակներ:*

Որոշման նախկին տարբերակում հղի, կերակրող մայր, անչափահաս կամ հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների համար նախատեսված էին միայն հավելյալ սննդի չափաբաժինները, որոնք չէին համապատասխանում հատուկ սննդակարգ ընդունելու պահանջ ունեցող անձանց կարիքներին: Նշված որոշման նոր խմբագրությունը նախատեսում է նաև հավելյալ սննդի տրամադրման հնարավորություն:

ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1182-Ն որոշման մեջ կատարված մեկ այլ կարևոր փոփոխությունն է որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված դրույթը, որի համաձայն՝ *որոշման թիվ 1 հավելվածով նախատեսված սննդատեսակները ձեռք բերելիս և դրանց համապատասխան ճաշատեսակները պատրաստելիս հնարավորինս հաշվի են առնվում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների կրոնական համոզմունքները, ինչպես նաև մշակութային առանձնահատկությունները (կենդանական ծագման սննդամթերք չօգտագործողներ):*

Կրոնական համոզմունքներով պայմանավորված հատուկ սնունդ տրամադրելու հետ կապված, սակայն, շարունակում են առկա լինել խնդիրներ, որոնց անդրադարձ

³⁷ ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական նվազագույն չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 413-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1182-Ն որոշում:

է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի «Հայաստանի Հանրապետությունում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցում³⁸:

ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1182-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններով նվազել են ազատությունից զրկված անձանց տրամադրվող որոշ սննդատեսակների օրական չափաբաժինները: Այս առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՀՀ կառավարություն է ներկայացել քննադատական դիրքորոշում այն առումով, որ այդպիսի փոփոխությունների հիմքում պետք է դրվեն հիմնավոր հաշվարկներ ու լուծումներն էլ հիմնված լինեն դրանց վրա:

Ազատությունից զրկված անձանց սննդով ապահովելու առնչությամբ անչափ կարևոր է սնունդը պատշաճ պայմաններում պատրաստելը: Այս կապակցությամբ 2017 թվականի մշտադիտարկման այցերի արդյունքներում արձանագրվել է, որ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի խոհանոցը գտնվում է ոչ սանիտարահիգիենիկ վիճակում՝ բորբոսնած է և ունի վերանորոգման կարիք: Սպասքի լվացման սրահում նույնպես արձանագրվել է հակասանիտարական վիճակ: Նմանատիպ իրավիճակ է արձանագրվել նաև «Գորիս» քրեակատարողական հիմնարկի խոհանոցում:

«Արթիկ» քրեակատարողական հիմնարկում, օրինակ, վերանորոգվել է խոհանոցի՝ սննդի պատրաստման համար նախատեսված սենյակը: «Սևան» քրեակատարողական հիմնարկում վերանորոգվել և հարդարվել են ռեժիմային գոտու խոհանոցը և միջանցքը:

Ազատությունից զրկված անձանց պատշաճ որակի և քանակի սննդով ապահովման կարևորությունն ամրագրված է միջազգային չափանիշներում: Այսպես, ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ»-ի 20.1-ին կետի համաձայն՝ *քրեակատարողական հիմնարկն ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի պետք է ապահովի նրա առողջությունը (...)* պահպանելու համար բավականաչափ սննդարար, որակյալ, լավ պատրաստված ու մաքուր սննդով:

Եվրոպական բանտային կանոնների 22.3-րդ կանոնի համաձայն՝ *սնունդը պետք է պատրաստվի և տրամադրվի հիգիենիկ պայմաններում:*

Քրեակատարողական հիմնարկների խոհանոցների սանիտարահիգիենիկ պայմաններն ուղղակիորեն ազդում են պատրաստվող և ազատությունից զրկված անձանց տրամադրվող սննդի որակի վրա, ինչը կարող է ազատությունից զրկված անձանց առողջության համար անբարենպաստ հետևանքներ առաջացնել:

³⁸Տե՛ս <http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/20f0503aafb55a1154e9ddd605d71bca.pdf> կայքէջում՝ 31.03.2017թ.-ի դրությամբ, էջ 51:

Մնունդը հակասանիտարահիգիենիկ խոհանոցներում պատրաստելն անթույլատրելի է: Ուստի, անհրաժեշտ է պահպանել Քրեակատարողական հիմնարկների խոհանոցների սանիտարահիգիենիկ պատշաճ պայմանները:

Որակական չափանիշների հետ մեկտեղ պետք է ապահովել նաև ազատությունից զրկված անձանց տրամադրվող սննդի քանակական չափանիշները՝ ապահովելով ոլորտը կարգավորող իրավական ակտով նախատեսված սննդի տեսականին և չափաբաժինները:

Կարևոր է նաև ըստ անհրաժեշտության հատուկ սննդակարգի ապահովումը, որն էական նշանակություն ունի ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման տեսանկյունից:

2.10. Հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզությամբ զբաղվելու իրավունքի ապահովում

2017 թվականի ընթացքում Քրեակատարողական հիմնարկներում մշտադիտարկման այցերի ընթացքում վեր են հանվել խնդիրներ, որոնք կապված են ազատությունից զրկված անձանց հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզությամբ զբաղվելու իրավունքի ապահովման հետ:

Այսպես, ազատությունից զրկված անձանց բացօթյա զբոսանքի կազմակերպման համար «Գորիս» քրեակատարողական հիմնարկում նախատեսված է 3 զբոսաբակ: Զբոսաբակերից մեկը կահավորված է մարմնամարզությամբ զբաղվելու համար անհրաժեշտ տարբեր մարզասարքերով, սակայն բացակայում է եղանակային վատ պայմաններից պատասպարվելու հնարավորություն. ծածկը չափազանց նեղ է և չի ծածկում մարզագույքը: Մյուս 2 զբոսաբակերը կահավորված են միայն նստարաններով: Այնտեղ ևս առկա է վատ եղանակային պայմաններից պաշտպանվելու համար բավարար չափով ծածկի խնդիր, ավելին՝ զբոսաբակերում առկա նստարաններն ամրացված են գետնին՝ զբոսաբակի կենտրոնական հատվածում: Զբոսաբակերում բացակայել են նաև աղբամանները:

Նշված խնդրի առնչությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը պարզաբանել է, որ անբարենպաստ եղանակային պայմաններից պատասպարվելու համար «Գորիս» քրեակատարողական հիմնարկի զբոսաբակերում տեղադրվել են բավարար չափերի ծածկեր և ծածկերի տակ՝ նոր նստարաններ: Ծածկեր են տեղադրվել նաև «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի բոլոր զբոսաբակերում:

Խնդիրը լուծված չէ նաև «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում: Ազատությունից զրկված անչափահաս անձանց համար նախատեսված զբոսանքի վայրերում մարմնամարզությամբ զբաղվելու համար առկա չեն բավարար

պայմաններ: Միաժամանակ, անչափահասների մարմնամարզությամբ զբաղվելու գործընթացը պատշաճ չի կազմակերպվում:

Խորապես մտահոգում է նաև ազատությունից զրկված անչափահաս անձանց հետ առանձնագրույցների ընթացքում ստացած այն տեղեկությունը, որ իրենք չեն օգտվում օրենսդրությամբ նախատեսված առնվազն երկու ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքի իրավունքից: Վերջիններիս պնդմամբ՝ զբոսանքի տևողությունը որոշում է վարչակազմը և այն, որպես կանոն, չի գերազանցում մեկ ժամը:

2017 թվականի ընթացքում «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ կատարված այցերի ընթացքում բազմիցս արձանագրվել են ազատությունից զրկված անձանց զբոսանքի տրամադրման հետ կապված խնդիրներ, օրինակ՝ զբոսանքն օրենսդրությամբ սահմանված առնվազն մեկ ժամից պակաս կազմակերպելու, ոչ աշխատանքային և հանգստյան օրերին ազատությունից զրկված անձանց զբոսանքը չկազմակերպելու դեպքեր: Նշված խնդիրները հիմնականում կապված են վարչակազմի ոչ բավարար քանակի հետ:

Հանգստի, այդ թվում՝ բացօթյա զբոսանքի իրավունքը երաշխավորված է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային փաստաթղթերում:

Զբոսանքի ընթացքում ազատությունից զրկված անձանց մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորության տրամադրման կարևորությանն անդրադարձ է կատարվել նաև Եվրոպական բանտային կանոններում: Նշված փաստաթղթի 27.3-րդ և 27.4-րդ կանոնները նախատեսում են, որ *ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացմանն ուղղված համապատասխան միջոցառումները, մարզվելու և ժամանցի համար հնարավորությունների ապահովումը պետք է կազմեն ազատությունից զրկման վայրի ռեժիմի մի մասը, իսկ ազատությունից զրկման վայրի ղեկավարությունը պետք է նպաստի դրան՝ ապահովելով համապատասխան սարքերով և սարքավորումներով:*

Այսպես, ՄԱԿ-ի 2015 թվականի դեկտեմբերի 17-ի «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների»-ի (Նեյսոն Մանդելայի կանոններ) 23-րդ կանոնի՝ *բոլոր ազատությունից զրկված անձինք, ովքեր ներգրավված չեն բացօթյա աշխատանքներում, ունեն ամենօրյա՝ մեկ ժամից ոչ պակաս տևողությամբ բացօթյա մարմնամարզությամբ զբաղվելու իրավունք:*

Նույն կանոնի 2-րդ մասն ամրագրում է, որ *անչափահաս և այդ տարիքային խմբին համապատասխան մյուս ազատությունից զրկված անձանց համար, ովքեր գտնվում են ֆիզիկապես լավ վիճակում, պետք է ապահովվել մարզանքի և խաղերի հնարավորություն: Դրա համար պետք է ունենալ անհրաժեշտ հրապարակներ, սարքեր և գույք:*

Քննարկվող իրավունքն իր հստակ ամրագրումն է ստացել նաև ներպետական օրենսդրությունում: Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-

ին մասի 10-րդ կետի համաձայն՝ *դատապարտյալն իրավունք ունի՝ (...) հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի:*

Նույնաբովանդակ դրույթ է ներառում նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը:

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման հավելվածի 87-րդ կետի համաձայն՝ *կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում անչափահաս կալանավորված անձանց կամ դատապարտյալների համար նախատեսված զբոսանքի վայրերը պետք է հարմարեցված լինեն ֆիզիկական վարժությունների, զանազան խաղերով ու սպորտով զբաղվելու համար:*

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 56-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ (...) *անչափահաս դատապարտյալն օգտվում է առնվազն երկու ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքի իրավունքից:* Ինչպես արդեն նշվել է, առնվազն երկու ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքի իրավունքից օգտվում են նաև ձերբակալված կամ կալանավորված անչափահաս անձինք:

Ըստ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության՝ *ձերբակալված կամ կալանավորված կանայք և անչափահասներն օգտվում են ամենօրյա՝ երկու ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանքի իրավունքից, որի ընթացքում հնարավորություն է տրվում զբաղվել մարմնամարզությամբ:*

Հարկ է նշել, որ այստեղ առկա է նաև ձերբակալված կամ կալանավորված կանանց ու կին դատապարտյալներին տրամադրվող զբոսանքի տևողության տարբերակման խնդիր: Այսպես, եթե ձերբակալված կամ կալանավորված կանայք օգտվում են ամենօրյա՝ 2 ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանքի իրավունքից, ապա կին դատապարտյալների համար նման իրավունք նախատեսված չէ: Այս մասին նշվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ 2016 թվականի զեկույցում³⁹:

Չնայած դրան՝ իրավասու մարմնի կողմից քայլեր չեն ձեռնարկվել օրենսդրության մեջ առկա վերոշարադրյալ ընդհանուր տրամաբանությունից շեղումը շտկելու ուղղությամբ:

Այսպիսով, ազատությունից զրկված անձանց առօրյան պետք է ներառի մարմնամարզությունը, սպորտը, ժամանցային ծրագրերը: Այս առումով պետությունը պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք ուղղված կլինեն վերը նշված միջոցառումների ապահովմանը:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

³⁹ Տե՛ս

<http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/107efea7ef699b67309a61ffdf8d0f1e.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջեր 35-37:

✓ ապահովել Քրեակատարողական հիմնարկների զբոսաբակերում բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզությամբ զբաղվելու իրավունքի պարզաճ իրացումը՝ զբոսաբակերում տեղադրելով նստարաններ, մարզասարքեր, ինչպես նաև անբարենպաստ եղանակային պայմաններից պարսպարվելու համար բավարար չափերի ծածկեր.

✓ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անչափահաս անձանց համար նախատեսված զբոսանքի վայրերը կահավորել մարմնամարզությամբ, խաղերով ու սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պարագաներով.

✓ ապահովել միասնական օրենսդրական մոտեցում ազատությունից զրկված կանանց զբոսանքի տևողության հարցում, որը կանաց հնարավորություն կընձեռնի, անկախ կարգավիճակից, օգտվել ամենօրյա՝ երկու ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանքի իրավունքից.

✓ Քրեակատարողական հիմնարկներում ապահովել ազատությունից զրկված անձանց առնվազն մեկ ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքի իրավունքը:

2.11. Կապն արտաքին աշխարհի հետ

Հասարակությունից մեկուսացվելով ազատությունից զրկված անձանց համար էականորեն սահմանափակվում է արտաքին աշխարհի հետ կապը: Ազգականների և արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու հնարավորությունը չափազանց կարևոր է ազատությունից զրկված անձանց ինչպես հոգեկան վիճակի, այնպես էլ օրինապահ վարքագիծ ձևավորելու և հասարակություն վերաինտեգրվելու համար:

Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց՝ արտաքին աշխարհի հետ կապի պահպանման առնչությամբ արձանագրված խնդիրները հիմնականում վերաբերում են տեսակցություններին և հեռախոսակապին:

Այսպես, արձանագրվել են Մարդու իրավունքների պաշտպանի 116 «թեժ գծի» հեռախոսահամարին Քրեակատարողական հիմնարկի տաքսոֆոններից զանգահարելու տեխնիկական խնդիրներ (օրինակ՝ «Գորիս» քրեակատարողական հիմնարկ):

Ազատությունից զրկված անձանց տեսակցություններին առնչվող խնդիրները կապված են տեսակցությունների տրամադրման ընթացակարգերի, ինչպես նաև տեսակցությունների համար նախատեսված սենյակների ու դրանց պայմանների հետ:

2017 թվականի ընթացքում ստացվել են մի շարք բողոքներ ազատությունից զրկված անձանց տեսակցությունների կազմակերպման՝ ինչպես վերջիններիս, այնպես էլ նրանց մերձավոր ազգականների կողմից: Խնդիրները վերաբերել են,

օրինակ, տեսակցության համար նախատեսված սենյակների զբաղվածությանը, տեսակցությունների տրամադրման ձգձգումներին և այլ հարցերին:

Օրինակ՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձի ազգականը տեսակցություն տրամադրելու դիմում է ներկայացրել Քրեակատարողական հիմնարկի վարչակազմ, սակայն տեսակցության կազմակերպումը մերժվել է, քանի որ ազատությունից զրկված անձի տված գրավոր համաձայնությունը Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչները չեն գտել:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում խնդիր է առաջացել նաև կալանավորված անձին տեսակցություն տրամադրելու հետ, քանի որ վերջինիս տեսակցությունների նկատմամբ նախկինում կիրառված է եղել արգելք, և այն վերացնելու վերաբերյալ որոշում Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը չի ստացել: Տեխնիկական և կազմակերպչական բացթողման պատճառով ազատությունից զրկված անձի՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքը շարունակել է սահմանափակված մնալ՝ համապատասխան հիմքի բացակայության պարագայում:

Պաշտպանի ներկայացուցիչների աջակցությամբ բարձրացված խնդիրը լուծվել է՝ Քրեակատարողական հիմնարկը ստացել է իրավունքի սահմանափակումը վերացնելու մասին դատարանի որոշումը, և ազատությունից զրկված անձին տրամադրվել է տեսակցություն:

Առկա են խնդիրներ նաև տեսակցությունների տրամադրման համար նախատեսված սենյակների պայմանների հետ: Օրինակ՝ «Գորիս» քրեակատարողական հիմնարկում կարճատև տեսակցությունները կազմակերպվում են հանձնուքների, ծանրոցների և փաթեթների ընդունման համար նախատեսված սենյակում, որտեղ բնական լուսավորությունը գրեթե բացակայում է, իսկ պատերին առկա են ճաքեր: Մշտադիտարկման այցի ընթացքում սենյակը գտնվել է սանիտարահիգիենիկ ոչ բավարար պայմաններում:

«Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում բացակայում են երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակները, ինչն արձանագրվել է նաև նախորդ տարիներին: Համապատասխան սենյակների բացակայությամբ պայմանավորված ազատությունից զրկված անձինք փոխադրվում են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ, որտեղ կազմակերպվում են երկարատև տեսակցությունները:

Պետք է նշել նաև, որ մինչև տեսակցությունների կազմակերպումը մերժավոր ազգականների համար հատուկ առանձնացված սպասասրահներով կահավորված են «Արմավիր», «Սևան» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկները:

Հաշվի առնելով տեսակցության տևողությունը, ինչպես նաև մերժավոր ազգականների հետ համատեղ բնակվելու իրավունքը՝ երկարատև

տեսակցությունների համար նախատեսված սենյակները պետք է ապահովված լինեն անհրաժեշտ պայմաններով: Դրանց շարքին է դասվում նաև առանձնացված սանհանգույցը: Օրինակ՝ «Սևան» քրեակատարողական հիմնարկում երկարատև տեսակցության համար նախատեսված միայն 4 նոր սենյակներն են ապահովված առանձին սանհանգույցներով: Մասնաշենքի մյուս 5 տեսակցության սենյակներում առանձնացված սանհանգույցներ առկա չեն: Դրանց համար մասնաշենքում նախատեսված է երկու ընդհանուր սանհանգույց: «Կոշ» քրեակատարողական հիմնարկում երկարատև տեսակցության սենյակներում նույնպես առանձնացված սանհանգույցներ առկա չեն:

Կարևոր է նաև երկարատև տեսակցության ընթացքում բացօդյա զբոսանքի ապահովման հնարավորությունը: Բացառությամբ «Արմավիր» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկների՝ մյուս հիմնարկների երկարատև տեսակցության տեղամասերում զբոսաբակերը բացակայում են:

Արձանագրվել են նաև դեպքեր կապված ազատությունից զրկված երկու մերձավոր ազգականների տեսակցությունների կազմակերպման հետ:

Պաշտպանին ներկայացված բողոքով նշվել է, որ ազատությունից զրկված անձինք հանդիսանում են մերձավոր ազգականներ, սակայն կարճատև տեսակցություն տրամադրելու Քրեակատարողական հիմնարկի վարչակազմին ուղղված իրենց դիմումը մերժվել է: Նշվածը պատճառաբանվել է ազատությունից զրկված անձանց միջև տեսակցությունների կազմակերպումը կանոնակարգող օրենսդրական կարգավորումների բացակայությամբ:

Բարձրացված խնդիրների կապակցությամբ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը սահմանում է, որ *դատապարտյալն իրավունք ունի արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու, այդ թվում՝ վարելու նամակագրություն, ունենալու տեսակցություններ, օգտվելու հեռախոսակապից, գրականությունից և հնարավոր լրատվական միջոցներից:*

Օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *ուղղիչ հիմնարկի վարչակազմը ստեղծում է համապատասխան պայմաններ՝ ընդանիքի և արտաքին աշխարհի հետ դատապարտյալի կապն ապահովելու նպատակով: Այդ նպատակով ուղղիչ հիմնարկում ստեղծվում են կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ:* Նույնաբովանդակ դրույթ է ամրագրված նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածում:

ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքն ազատությունից զրկված անձանց տեսակցությունների սահմանափակման համար տալիս են սպառիչ հիմքեր: Հետևաբար, նման հիմքերի բացակայության պայմաններում ազատությունից զրկված

անձի տեսակցությունների սահմանափակումն ապօրինի է և խախտում է արտաքին աշխարհի հետ կապի նրա իրավունքը:

Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի (...) նկատմամբ հարգանքի իրավունք:*

Եվրոպական բանտային կանոնների 24.1-րդ կանոնի համաձայն՝ *ազատությունից զրկված անձանց պետք է թույլատրվի հնարավորինս հաճախ նամակի, հեռախոսի կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել և տեսակցել իրենց ընտանիքի անդամների, այլ անձանց և կազմակերպությունների հետ, իսկ 24.2-րդ կանոնի համաձայն՝ տեսակցությունները և հաղորդակցությունը կարող են սահմանափակման և անհրաժեշտ հսկողության ենթակա լինել՝ ելնելով քրեական գործով քննությունը շարունակելու, անվտանգությունը և կարգը պահպանելու, հանցագործությունները կանխելու և տուժողներին պաշտպանելու պահանջներից, սակայն նման սահմանափակումները, այնուամենայնիվ, պետք է թույլատրեն հաղորդակցության ընդունելի նվազագույն մակարդակ:*

Միջազգային և ներպետական չափանիշների վկայում են, որ ազատության իրավունքի սահմանափակումը չպետք է հանգեցնի ազատությունից զրկված անձի՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու հնարավորության կորստին: Ավելին, Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը պետք է քայլեր ձեռնարկի ընտանիքի անդամների և արտաքին աշխարհի հետ կապի պահպանմանը նպաստելու ուղղությամբ: Յուրաքանչյուր սահմանափակում պետք է կիրառվի օրենքով սահմանված կարգով և հստակ հիմքերի առկայության դեպքում: Համապատասխան սահմանափակումների կիրառմամբ, այնուամենայնիվ, ազատությունից զրկված անձինք չպետք է ամբողջապես կորցնեն արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու հնարավորությունը:

Այսպիսով, ազատությունից զրկված անձանց՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի կապակցությամբ անհրաժեշտ է՝

✓ **ապահովել Մարդու իրավունքների պաշտպանի 116 «թեժ գծի» հեռախոսահամարին զանգահարելու հնարավորություն.**

✓ **բոլոր Քրեակատարողական հիմնարկներում ապահովել ազատությունից զրկված անձանց տեսակցության իրավունքի պարզաճ իրացումը՝ բացառելով անհարկի և օրենքով չնախատեսված սահմանափակումները.**

✓ **«Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում նախատեսել երկարարև տեսակցություն կազմակերպելու հնարավորություն.**

✓ **մերձավոր ազգականների համար բոլոր Քրեակատարողական հիմնարկներում ապահովել հատուկ առանձնացված սպասասրահներ.**

✓ **ապահովել կարճարև և երկարարև տեսակցությունների համար նախատեսված սենյակների բավարար լուսավորություն, ջերմաստիճան, կահավորանք և սանիտարահիգիենիկ պայմաններ.**

✓ **ապահովել երկարապարսկ տեսակցությունների ընթացքում բացօթյա զբոսանքի իրավունքը՝ նախատեսելով դրա համար առանձին զբոսաբակեր:**

✓ **երկարապարսկ տեսակցության սենյակներում ապահովել առանձնացված սանհանգույցներ:**

Արտաքին աշխարհի հետ կապի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել ազատությունից զրկված անձանց՝ արտաքին աշխարհի հետ կապի պահպանման կապակցությամբ նաև օրենսդրական խնդիրներ: Քննարկման առարկա են դարձել ազատությունից զրկված անձանց կարճատև մեկնումների տրամադրման հետ կապված խնդիրները և կալանավորված անձանց համար երկարատև տեսակցություն տրամադրելու հնարավորության բացակայությունը: Խնդիրները պայմանավորված են օրենսդրական կարգավորումներում անձի անհատական ռիսկայնությունը հաշվի չառնելու, կարճատև մեկնումը միայն անձի կատարած հանցագործության ծանրության աստիճանի հետ կապելու և այլ հանգամանքներով:

Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **դատապարտյալին, բացառությամբ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքի, կարող է տրամադրվել կարճաժամկետ մեկնում անձնական բացառիկ հանգամանքների (մերձավոր ազգականի մահ կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդություն, փարեռային աղետ, որը զգալի նյութական վնաս է պատճառել դատապարտյալին կամ նրա ընտանիքին) դեպքում, ինչպես նաև սոցիալական վերականգնման նպատակով:**

Այս կապակցությամբ պետք է նշել, որ ԽԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում կրկին ընդգծել է, որ *հիմնավորապես սխալ է այն համակարգը, որի համաձայն արտաքին աշխարհի հետ ազատությունից զրկված անձանց կապի սահմանները որոշվում են որպես նշանակված պատժի մի մաս (և ըստ այն ռեժիմի, որով նա կրում է իր պատժը)*⁴⁰:

Կալանավորված անձանց համար օրենսդրությամբ նախատեսված չէ երկարատև տեսակցություն ունենալու հնարավորություն: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 12-րդ պարբերության համաձայն՝ *կալանավորված անձին մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ ամսվա ընթացքում տրամադրվում է առնվազն երկու տեսակցություն՝ մինչև երեք ժամ տևողությամբ:*

Նշված և արձանագրված այլ խնդիրներին օրենսդրական լուծում տալու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակվել և

⁴⁰ St'u <https://rm.coe.int/16806bf46f> կայքէջում՝ 31.03.2018թ. դրությամբ, կետ 107:

իրավասու պետական մարմինների կարծիքին է ներկայացվել ՀՀ քրեակատարողական օրենսգրքում և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագիծ, որով առաջարկվում է.

- ազատազրկման դատապարտված և կալանավորված անձանց կարճատև մեկնումներ տրամադրելու հիմքում դնել ոչ թե անձի կատարած հանցագործության ծանրության աստիճանը, այլ հաշվի առնել վերջինիս անհատական վարքագիծը և ռիսկայնությունը,

- կալանավորված անձանց համար նախատեսել երկարատև տեսակցության հնարավորություն,

- կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխա ունեցող դատապարտյալի համար նախատեսել կարճաժամկետ մեկնում տրամադրելու հնարավորություն՝ երեխային մանկատանը կամ ազգականի մոտ տեղավորելու նպատակով և այլն:

Պետք է նաև նշել, որ ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի իրացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունները կապված մերձավոր ազգականների հետ տեսազանգեր ունենալու հնարավորության հետ: Փոփոխություններ նախատեսող ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարծիքին: Առաջարկությունների հիման վրա լրամշակված նախագիծը ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 14-ին:

Փոփոխություններն էական նշանակություն ունեն ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազատությունից զրկված այն անձանց արտաքին աշխարհի հետ կապի պահպանման համար, որոնց մերձավոր ազգականները հանգամանքների բերումով հնարավորություն չունեն տեսակցել նրանց: Այդ անձանց համար նախատեսվում է մերձավոր ազգականների հետ տեսազանգ ունենալու հնարավորություն:

Այսպես՝ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման հավելվածի 185.1-րդ կետի համաձայն՝ *օտարերկրյա կալանավորված անձանց կամ դատապարտյալներին, որոնց մերձավոր ազգականները չեն կարող տեսակցել նրանց, ինչպես նաև այն կալանավորված անձանց կամ դատապարտյալներին, որոնց մերձավոր ազգականները չեն կարող օգտվել կարճատև տեսակցությունից, տրամադրվում է ամսվա ընթացքում երկու անգամ մինչև քսան րոպե տևողությամբ տեսազանգից օգտվելու հնարավորություն*: Նույն որոշման 185.5-րդ կետի համաձայն՝ *տեսազանգը կազմակերպվում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի՝ դրա համար տեխնիկական սարքավորումներով կահավորված սենյակում*:

Նշված փոփոխություններն ուժի մեջ կմտնեն 2018 թվականի նոյեմբերի 1-ից:

2.12 Իրավական պաշտպանության միջոցների հասանելիությունը Քրեակատարողական հիմնարկներում

Մշտադիտարկման այցերը, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկումը վկայում են, որ Քրեակատարողական հիմնարկներում մի քանի դեպքերում խոչընդոտներ են առաջ եկել՝ կապված իրավասու անձանց, այդ թվում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ազատությունից զրկված անձանց դիմումների և բողոքների հասցեագրման հետ: Մասնավորապես, նշված մի շարք դեպքերում Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը կա՛մ ձգձգում է դիմումների ընդունումը, կա՛մ ընդհանրապես հրաժարվում է ընդունել դրանք:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում առկա տեղեկությունները բավարար չեն ամրագրելու համար, որ այս խնդիրն ունի համակարգային բնույթ: Այդուհանդերձ արձանագրված նույնիսկ մի քանի դեպքերը պետք է բացառվեն:

Ազատությունից զրկված անձինք պետք է ունենան Քրեակատարողական հիմնարկի ղեկավարին կամ ցանկացած այլ լիազոր մարմնին դիմումներ և բողոքներ հղելու լիարժեք հնարավորություն:

Այս կապակցությամբ պետք է կարևորել Պաշտպանի գրության հիման վրա ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի օգոստոսի 29-ի ցուցումը, որով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետին հանձնարարվել է իրականացնել խիստ հսկողություն Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին դիմած կամ նրա ներկայացուցիչներին տեղեկություններ հայտնած անձանց նկատմամբ ճնշումներ կամ սպառնալիքներ գործադրելու դեպքերը բացառելու կապակցությամբ: Արդյունքում, 2017 թվականի ընթացքում նման դեպքերի քանակը նվազել է:

Արդյունավետ բողոքարկման ընթացակարգը կարևոր երաշխիք է ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի և նրանց իրավունքների խախտման դեպքերը բացառելու համար: ԽԿԿ-ն Միացյալ Թագավորության վերաբերյալ 1990 թվականի զեկույցում ընդգծել է, որ *բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու նպատակով ազատությունից զրկված անձանց պետք է ապահովել բողոք գրելու համար անհրաժեշտ համապատասխան առարկաներով, որոնք պետք է հատուկ վայրերում ազատորեն հասանելի լինեն վերջիններիս (օրինակ՝ գրադարանում): Բողոքների և դիմումների հանձնման մեխանիզմն անհրաժեշտ է այնպես կազմակերպել, որպեսզի*

ազատությունից զրկված անձը պարտավոր չլինի անձամբ ծրարը փոխանցել հիմնարկի վարչակազմին⁴¹:

Հայաստանի վերաբերյալ 2016 զեկույցում ԽԿԿ-ն շեշտել է, որ ազատությունից զրկված անձինք պետք է հնարավորություն ունենան ցանկացած ժամանակ գրավոր բողոք ներկայացնելու դրանց համար նախատեսված փակ արկղերում, որոնք պետք է տեղադրված լինեն վերջիններիս համար հասանելի վայրերում⁴²:

Դիմումներ և բողոքներ ներկայացնելու իրավունքի ապահովումն ուղիղ համեմատական է ազատությունից զրկված անձի՝ իր իրավունքների վերաբերյալ պատշաճ կերպով ծանուցվելու իրավունքի իրացմանը: Միջազգային չափանիշներից բխում է, որ Քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս ազատությունից զրկված անձինք իրենց համար հասկանալի լեզվով պետք է տեղեկացվեն իրենց իրավունքների և պարտականությունների, այդ թվում՝ բողոքարկման ընթացակարգերի վերաբերյալ:

Մինչդեռ, բողոքարկման իրավունքի վերաբերյալ պատշաճ կերպով տեղեկացված լինելու պահանջը ոչ միշտ է հետևողականորեն կենսագործվում: Դրա մասին կարող է վկայել, օրինակ, 2017 թվականի ընթացքում Քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց նկատմամբ կայացված պատժախուց տեղափոխելը որպես տույժի միջոց կիրառելու մասին որոշումների դեմ ներկայացված բողոքների թիվը: Այսպես, ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկության համաձայն՝ 2017 թվականի ընթացքում կալանավորված անձանց և դատապարտյալներին պատժախուց տեղափոխելու վերաբերյալ կայացված որոշումների դեմ ներկայացվել է ընդամենը 2 բողոք:

Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում ԽԿԿ-ն նշել է, որ ազատությունից զրկված անձինք թեև սկզբունքորեն հնարավորություն ունեցել են բողոքներ ներկայացնելու մի շարք մարմիններ, այնուամենայնիվ նրանց շրջանում առկա է տեղեկատվության պակաս բողոք ներկայացնելու ընթացակարգի վերաբերյալ: Ուստի, անհրաժեշտ է վերանայել քրեակատարողական հիմնարկներում բողոք ներկայացնելու ներքին մեխանիզմը՝ երաշխավորելու համար ազատությունից զրկված անձանց՝ կոնֆիդենցիալ բողոք ներկայացնելու իրավունքի գործնական լիարժեք իրացումը, ինչը հատկապես կապահովվի բողոքարկման ընթացակարգի վերաբերյալ վերջիններիս ճշգրիտ գրավոր տեղեկատվության տրամադրմամբ⁴³:

Ազատությունից զրկված անձի կողմից բողոքներ և դիմումներ ներկայացնելու իրավունքի գործնական իրացման կարևոր երաշխիք է դրանց գաղտնիության ապահովումը և գրաքննության ցանկացած դեպքի բացառումը, ինչը, սակայն, ոչ միշտ է պահպանվում: Այսպես, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների

⁴¹ Տե՛ս <https://rm.coe.int/1680698624> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 184:

⁴² Տե՛ս <https://rm.coe.int/16806bf46f> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ կետ 110:

⁴³ Տե՛ս նախորդ հղումը:

կողմից իրականացված մշտադիտարկման այցի ընթացքում պատժախցում գտնվող ազատությունից զրկված անձն իր դժգոհությունն է հայտնել Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի աշխատակիցների կողմից իր դիմումները չընդունելու կապակցությամբ («Արթիկ» քրեակատարողական հիմնարկ): Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների միջնորդությամբ Քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի աշխատակիցն ընդունել է Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմումը: Վերոհիշյալ դիմումը Քրեակատարողական հիմնարկի աշխատակցի հրահանգով մեկ այլ ծառայողի կողմից այցի պահին ենթարկվել է գրաքննության՝ պարզաբանելով, որ հնարավոր է դիմումում գրված լինեն անպարկեշտ արտահայտություններ:

Նման պրակտիկան անընդունելի է: Այսպես, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Պաշտպանին ուղղված բողոքները և այլ փաստաթղթերը, ինչպես նաև Պաշտպանի հարցումները կամ նրա կողմից ուղարկվող այլ փաստաթղթեր ենթակա չեն ստուգման կամ գրաքննության: Դրանք իրավասու մարմինների կամ կազմակերպությունների կողմից ստանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում պետք է ուղարկվեն Պաշտպանին:*

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *նամակագրությունն իրականացվում է ուղղիչ հիմնարկի վարչակազմի միջոցով և, առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու, ենթակա է արտաքին զննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով:*

Այսպիսով, ազատությունից զրկված անձանց բողոքներ և դիմումներ ներկայացնելու իրավունքի արդյունավետ կենսագործումն ապահովելու նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է Քրեակատարողական հիմնարկներում ապահովել բողոքարկման պարզաճ ընթացակարգ: Մասնավորապես, պետք է ուշադրություն դարձնել ազատությունից զրկված անձանց՝ բողոքներ և դիմումներ ներկայացնելու իրենց իրավունքի վերաբերյալ պարզաճ կերպով ծանուցվելու, գաղտնիության և ցանկացած արտաքին ճնշումներից զերծ պայմաններում բողոքարկման մեխանիզմ ներդնելու հարցերի ապահովմանը, ինչպես նաև բացառել ազատությունից զրկված անձանց դիմումների գրաքննության արտաբերական պրակտիկան:

2.13. Տրանսպորտային հաղորդակցում

2017 թվականի ընթացքում Պաշտպանին են հասցեագրվել բանավոր և գրավոր բողոքներ այն մասին, որ Վաղարշապատ (Էջմիածին) - Մարգարա խճուղուց

Արմավիրի մարզի Չոբանքարա գյուղի ուղղությամբ՝ դեպի «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ, հասարակական տրանսպորտ չի գործում:

Ըստ դիմողների՝ իրենք նշված խճուղուց դեպի «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ տանող ճանապարհով ստիպված են լինում ոտքով մոտ 3.5 կմ անցնել կամ օգտվել տաքսիների ծառայությունից: Վիճակն առավել բարդանում է ամռան և ձմռան ամիսներին: Այս մասին նշվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ 2016 թվականի զեկույցում⁴⁴:

Հարցի առնչությամբ ԽԿԿ-ն Դանիայի վերաբերյալ 2008 թվականի զեկույցում նշել է, որ *այն դեպքում, երբ ազատազրկման վայրը հեռու է տեղակայված տրանսպորտային կանգառներից, քրեակատարողական ծառայությունը պետք է քայլեր ձեռնարկի դեպի ազատությունից զրկման վայր կանոնավոր և հասանելի տրանսպորտային հաղորդակցություն ապահովելու ուղղությամբ*⁴⁵:

Նշված խնդրի առնչությամբ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը պարզաբանել է, որ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկը տրանսպորտով ապահովելու համար անհրաժեշտ է ձևավորել ներմարզային երթուղի: Ըստ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի՝ *ներմարզային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղային ցանցը կազմակերպում է համապատասխան տարածքային կառավարման մարմինը*:

Ըստ նախարարության՝ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ այցելող քաղաքացիներին տրանսպորտով ապահովելու նպատակով հարցը քննարկվել է Արմավիրի մարզպետարանի հետ: Սակայն մարզպետարանի դիրքորոշմամբ՝ ուղևորահոսքի պակասի և ոչ շահութաբերության պատճառով երթուղի կազմակերպել հնարավոր չէ:

Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հարցմանն ի պատասխան՝ Արդարադատության նախարարությանը հայտնել է, որ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի օրական այցելուների քանակը կազմում է առնվազն 30 անձ:

Հաշվի առնելով այն, որ առանց ուղևորահոսքի վերաբերյալ հստակ տեղեկատվության հնարավոր չէ ձևավորել կանոնավոր երթուղի, Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը տվյալ տարածաշրջանը սպասարկող միջմարզային փոխադրողի միջոցով իրականացրել է Քրեակատարողական հիմնարկի տրանսպորտային փորձնական սպասարկում:

⁴⁴ Տե՛ս

<http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/107efea7ef699b67309a61ffdf8d0f1e.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջեր 49-50:

⁴⁵ Տե՛ս <https://rm.coe.int/168069570a> կայքէջը՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 63:

Արդյունքում, Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը հայտնել է, որ օրական 4 երթով փորձնական կազմակերպել է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի տրանսպորտային սպասարկումը: Նշված ուղղությամբ շահագործվող տրանսպորտային միջոցներից, սակայն, օգտվել են 1-2 անձ: Հաշվի առնելով վերը նշվածը և երթուղու վնասաբերությունը՝ փոխադրող կազմակերպության կողմից նպատակահարմար չի համարվել դեպի «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ կանոնավոր երթուղու կազմակերպումը:

Ներկայացված պատճառաբանությունն անընդունելի է. ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի սահմանափակման հիմքում չի կարող դրվել երթուղու վնասաբերության վերաբերյալ փաստարկը:

Ելնելով վերոգրյալից, նկատի ունենալով ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի պարզաճ իրացման անհրաժեշտությունը և դրա կապակցությամբ պետության պոզիտիվ պարտականությունը՝ պետք է նախատեսել Վաղարշապատ (Էջմիածին) – Մարգարա խճուղուց դեպի «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ հասանելի տրանսպորտային հաղորդակցություն:

2.14. Ազատությունից զրկված անձանց կրթության իրավունքի ապահովում

Ազատությունից զրկված անձանց կրթության իրավունքի կարևորության մասին առկա են ինչպես ներպետական օրենսդրությամբ և միջազգային փաստաթղթերում ամրագրված դրույթներ, այնպես էլ միջազգային կառույցների արտահայտած դիրքորոշումներ:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:*

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ՝ *միջնակարգ կրթությունը պարտադիր է:*

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ *դատապարտյալն ունի հնարավոր և օրենքով նախատեսված կրթություն ստանալու իրավունք:* Նույնաբովանդակ դրույթ է նախատեսված նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով:

ԽԿԿ-ն իր գործունեության մասին 2-րդ ընդհանուր զեկույցում նշել է, որ. «...ազատագրված անձանց նորմալ կեցության համար ծայրահեղ կարևոր է իրագործել միջոցառումների բավարար ծրագրեր (աշխատանք, կրթություն, սպորտ և այլն): Այս ծրագրերի իրականացումը կարևոր է բոլոր հիմնարկների համար անկախ

նրանից, թե ում համար են նրանք նախատեսված՝ դատապարտյալների, թե կալանավորվածների:»⁴⁶:

Ազատությունից զրկված անձանց օգտակար բնույթի բավարար աշխատանքով ապահովելու, ժամանցի հնարավորություն ընձեռելու (սպորտ, խաղեր, մշակութային միջոցառումներ և ժամանցի այլ ձևեր), կրթական ծրագրերը հասանելի դարձնելու վերաբերյալ մանրամասն չափանիշներ են պարունակում նաև Եվրոպական բանտային կանոնները⁴⁷:

Եվրոպական բանտային կանոնների 28.7-րդ կանոնի համաձայն՝ ազատությունից զրկված անձանց կրթությունը պետք է գործնականում հնարավորին չափ ներհյուսված լինի երկրում առկա կրթական և մասնագիտական վերապատրաստման համակարգի մեջ, որպեսզի ազատ արձակվելուց հետո նրանք կարողանան առանց դժվարությունների շարունակել իրենց կրթությունը և մասնագիտական վերապատրաստումը:

Ազատությունից զրկված անձանց կրթության իրավունքի ապահովման կապակցությամբ ուսումնասիրություններ կատարելու նպատակով ինչպես 2016, այնպես էլ 2017 թվականներին կանխարգելման ազգային մեխանիզմի ներկայացուցիչներն այցելել են «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ: Ուսումնասիրվել են Քրեակատարողական հիմնարկի տարածքում գործող ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի երեկոյան դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ երեկոյան դպրոց) պայմանները:

Այցի ընթացքում տեղի են ունեցել առանձնազրույցներ երեկոյան դպրոցում սովորող ազատությունից զրկված անձանց, ինչպես նաև դասավանդող անձնակազմի հետ: Պարզվել է, որ ուսումնական հաստատությունում գրեթե առկա չեն 9-ից 12-րդ դասարանների համար նախատեսված դասագրքերը: Ըստ դասավանդող անձնակազմի՝ այդ պատճառով նվազում է առարկաների դասավանդման արդյունավետությունը: Դրա հետ մեկտեղ, առկա է նաև ռուսաց և անգլերեն լեզուների ուսուցիչների պակաս:

Բացի այդ, ըստ դասավանդող անձնակազմի՝ երեկոյան դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերն ունեն լրամշակման և կատարելագործման կարիք: Բանն այն է, որ դրանք չեն նախատեսում ուսումնական հաստատության գործունեության, մասնավորապես՝ դասաժամերին և դրանց քանակին առնչվող և այլ առանձնահատկություններ⁴⁸:

⁴⁶ Տե՛ս <https://rm.coe.int/1680696a3f> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 47:

⁴⁷ Տե՛ս <https://rm.coe.int/16806f5b92> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կանոններ 26.1-26.3, 26.6, 26.9, 26.10, 27.3, 27.6, 28.1-28.5 և այլն:

⁴⁸ Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2016 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/107efea7ef699b67309a61ffdf8d0f1e.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջեր 39-40:

Երեկոյան դպրոցն անհրաժեշտ դասագրքերով ապահովելու վերաբերյալ Պաշտպանի 2017 թվականի հարցման կապակցությամբ Կրթության և գիտության նախարարությունից ստացվել են պարզաբանումներ այն մասին, որ երեկոյան դպրոցի աշակերտների թիվը 37-ն է և վերջիններիս համար անհրաժեշտ դասագրքերն անվճար տրամադրվել են մարզի հանրակրթական դպրոցների դասագրքային ֆոնդից՝ ստացականներով:

Մինչդեռ, Կրթության և գիտության նախարարությունը պարզաբանել է, որ 2017 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ՊՈԱԿ-ին աջակցություն չի ցուցաբերել:

Դրանից բացի, 2018 թվականին Կրթության և գիտության նախարարությունը դիմել է ՀՀ արդարադատության նախարարություն և ՀՀ մարզպետարաններին՝ հնարավորության դեպքում Քրեակատարողական հիմնարկների գրադարանները գրքերով համալրման գործընթացին աջակցելու խնդրանքով:

2017 թվականի ընթացքում «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ կատարված այցի ընթացքում դասավանդող անձնակազմը հերթական անգամ բարձրաձայնել է դասագրքեր չունենալու խնդրի մասին: Նշվել է նաև ազատությունից զրկված անձանց համապատասխան դասարաններով բաշխելու ստեղծված բարդությունների մասին: Մասնավորապես՝ նախկինում դասարաններում բաշխումը կատարվել է ազատությունից զրկված անձանց գիտելիքները երեկոյան դպրոցի ուսուցիչներից բաղկացած հանձնաժողովի կողմից գնահատվելու միջոցով: Կատարված փոփոխությունների արդյունքում դասավանդող անձնակազմն այժմ պարտավոր է հարցումներ ուղարկել դպրոցներ՝ ազատությունից զրկված անձի կրթության մակարդակի մասին պաշտոնական տեղեկատվություն ստանալու համար: Նրանց պնդմամբ՝ ստեղծված պայմաններում առաջանում են ավարտած դասարանի մասին տեղեկատվություն ստանալու հետ կապված դժվարություններ, օրինակ՝ Գյումրի քաղաքում նախկինում բնակվող ազատությունից զրկված անձանց դեպքում 1988 թվականի երկրաշարժի հետևանքով տեղեկությունները չեն պահպանվել: Այսպիսի դեպքերում հանրակրթության վարչության կողմից առաջարկվում է առաջնորդվել անձի կրթության մակարդակի վերաբերյալ դատավճռում առկա տեղեկություններով, որոնք, սակայն, ոչ միշտ են ներառված դատական ակտում:

Ուսուցիչների համալրման հարցի կապակցությամբ Կրթության և գիտության նախարարությունը տեղեկացրել է, որ այն պետք է կարգավորվի «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն, ըստ որի՝ ուսուցչի թափուր տեղը համալրվում է մրցութային կարգով:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունն իր պատրաստակամությունն է հայտնել նաև «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի ՊՈԱԿ-ին աջակցել գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը լրամշակելու հարցում: Սակայն, երեկոյան դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը

լրամշակելու հետագա ընթացքի վերաբերյալ Կրթության և գիտության նախարարության կողմից տեղեկություններ չեն տրամադրվել:

Քննարկման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված անչափահասների (ըստ ՀՀ արդարադատության նախարարության 2018 թվականի փետրվարի 14-ի պարզաբանման՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվում է 5 անչափահաս) կրթության իրավունքի ապահովման խնդրին, որի ընթացքում ազատությունից զրկված անչափահաս անձանց կրթության իրավունքի ապահովման կապակցությամբ մտահոգություն են հայտնել նաև Կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչները:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունից ստացված գրավոր պարզաբանման համաձայն՝ ազատությունից զրկված անչափահասների կրթության իրավունքի ապահովման և արդյունավետ իրացման խնդրին լուծում տալու, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում նախկինում գործող դպրոցը վերաբացելու նպատակով հարցը գտնվում է ՀՀ արդարադատության նախարարության հետ քննարկման փուլում: Այս հարցի լուծումը լինելու Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Մշտական ուշադրության է արժանի նաև մասնագիտական կրթության ձեռքբերումը, քանի որ այդ հմտություններն ազատությունից զրկված անձանց հետագայում հնարավորություն են ընձեռում հասարակություն ավելի հեշտ ինտեգրվելու և նպաստում են նրանց վերասոցիալականացմանը:

Դրա հետ կապված, ՀՀ արդարադատության նախարարությունը տեղեկություններ է տրամադրել այն մասին, որ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ կազմակերպվել և անցկացվել են վարսահարդարման դասընթացներ, որոնց մասնակցել են 11 ազատությունից զրկված անձ և ստացել համապատասխան վկայականներ: Սա նաև դիտարկվել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունների ընթացքում:

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության՝ «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ն «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի հետ համատեղ իրականացրել է «Խեցեգործություն և խեցեգործության թրծման, ներկման տեխնոլոգիա», «Ժամանակակից կիրառական արվեստ», «Փայտամշակում և փայտի գեղարվեստական փորագրություն», «Համակարգչային հմտությունների ուսուցում» և «Ռուսաց լեզվի տարրական գիտելիքներ» դասընթացներ, որոնց մասնակցել է 32 ազատությունից զրկված անձ:

Ուստի, անհրաժեշտ է ապահովել ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ անչափահասների, կրթության իրավունքի պարզաճ իրացումը, մասնավորապես՝ ձեռնարկել միջոցներ ազատությունից զրկված անձանց կրթական գործընթացին առնչվող օրենսդրական և կազմակերպական հարցերը լուծելու ուղղությամբ:

2.15. Աշխատանք և զբաղվածություն

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց աշխատանքով և զբաղվածությամբ ապահովելը կարևոր է նրանց վերասոցիալականացման, հասարակություն վերախնտեգրման և, ի վերջո, ազատ արձակմանը լիարժեք նախապատրաստելու տեսանկյունից:

2017 թվականին արձանագրվել են Քրեակատարողական հիմնարկներում ինչպես աշխատանքով, այնպես էլ զբաղվածությամբ բավարար կերպով ապահովելու հետ կապված խնդիրներ:

Այսպես, 2017 թվականի ընթացքում Քրեակատարողական հիմնարկներում տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում վճարովի հիմունքներով ընդգրկված է եղել 201 դատապարտյալ, իսկ իրենց համաձայնությամբ չվարձատրվող աշխատանքներում՝ 238, այն դեպքում, երբ Քրեակատարողական հիմնարկներում պահվում է ազատությունից զրկված 3549 անձ⁴⁹: Ստացվում է, որ աշխատանքներում ներգրավված է ազատությունից զրկված անձանց մոտ 12 %-ը, ինչը բավարար ցուցանիշ համարել չի կարելի:

«Քրեակատարողական օրենսգրքի 17-րդ հոդվածը դատապարտյալների ուղղման հիմնական միջոցներին է դասում *աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածությունը*: Քրեակատարողական օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ *դատապարտյալը հնարավորության դեպքում ապահովվում է աշխատանքով կամ նրան իրավունք է վերապահվում ինքնուրույն իրեն ապահովելու աշխատանքով (...):* «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ պարբերության 2-րդ կետի համաձայն՝ *կալանավորված անձն իրավունք ունի աշխատելու*:

Քրեակատարողական հիմնարկներում անձի գտնվելը ժամանակի ինքնանպատակ կորուստ չէ: Ազատությունից զրկված անձինք աշխատելու միջոցով ձեռք են բերում անհրաժեշտ հմտություններ, որոնք հետագայում կարող են նպաստել հասարակություն վերախնտեգրմանը: Այն կարևոր նշանակություն ունի նաև

⁴⁹ Համաձայն ՀՀ արդարադատության նախարարությունից ստացված տեղեկության:

վերասոցիալականացման տեսանկյունից, քանի որ աշխատելու ընթացքում անձի մոտ ձևավորվում է հարգալից վերաբերմունք աշխատանքի, համակեցության նորմերի և հասարակության ներկայացուցիչների նկատմամբ: Աշխատանքն, ի վերջո, կարևոր է օրինապահ վարքագիծ ձևավորելու տեսանկյունից:

Քրեակատարողական հիմնարկներում պետք է լուծում ստանա նաև անձանց զբաղվածության այլ տեսակներով ապահովելու հարցը: Այս կապակցությամբ կարևոր են ինչպես Քրեակատարողական հիմնարկում զբաղվածության զանազան միջոցների առկայությունը և դրանց հասանելիությունը, այնպես էլ տարբեր միջոցառումների կազմակերպումը:

Պաշտոնական պարզաբանումների համաձայն՝ Քրեակատարողական հիմնարկներում 2017 թվականի ընթացքում անցկացվել են տարբեր միջոցառումներ՝ հիմնականում սպորտային մրցումներ և համերգներ: Օրինակ, 2017 թվականի փետրվար ամսին «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում ՀՀ շախմատի ֆեդերացիայի և քրեակատարողական ծառայության կողմից անցկացվել է արագ շախմատի մրցաշար, մարտ ամսին «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում կանանց միջազգային օրվա կապակցությամբ «Ակունք» ազգագրական համույթի կողմից կազմակերպվել է բարեգործական համերգ, մայիս ամսին «Կոշ» քրեակատարողական հիմնարկում անցկացրել է տոնական միջոցառում՝ նվիրված մայիսյան տոներին և այլն:

Կատարված ուսումնասիրությունները, սակայն, վկայում են, որ ոչ բոլոր Քրեակատարողական հիմնարկներում են անցկացվում այդպիսի միջոցառումներ: Ազատությունից զրկված անձինք հենց իրենց ինքնուրույն զբաղվածությամբ ապահովելու հարցում ունենում են օբյեկտիվ բարդություններ:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել է նաև բողոք կապված դատապարտյալի ստեղծագործ աշխատանքին խոչընդոտելու հետ: Մասնավորապես, ըստ բողոքի՝ Քրեակատարողական հիմնարկի վարչակազմն ազատությունից զրկված անձին արգելել է իր մոտ ունենալ մոմամատիտներ և գունավոր թղթեր՝ որպես հանձնուք, փոխանցելը, ինչի պատճառով անձը զրկվել է ստեղծագործելու հնարավորություն: Նշվածը պատճառաբանվել է ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ սահմանված իրերի առարկաների և սննդամթերքի սպառիչ ցանկով, որը կալանավորված անձանց և դատապարտյալներին արգելվում է իրենց մոտ ունենալ, ստանալ կամ ձեռք բերել հանձնուքներով, ծանրոցներով և փաթեթներով:

Խնդիրն այն է, որ նշված ցանկն ունի բացառություններ, որոնք են գրականությունը, թերթերը, ամսագրերը (բացառությամբ պոռնոգրաֆիկ նյութերի), դասագրքերը, տետրերը, փոստային ծրարները, բացիկները, դրոշմանիշերը, հասարակ մատիտները, գրիչները, սակայն գունավոր թղթերը, ջրաներկերը, մոմամատիտները և արվեստով զբաղվելու այլ առարկաները:

Ստացվում է, որ հանձնուքով կարելի է ստանալ տետր, գրիչներ և հասարակ մատիտներ, իսկ արվեստով զբաղվելու համար անհրաժեշտ այլ պարագաներ ստանալն արգելվում է: Այսպիսի մոտեցումը չի բխում ստեղծագործության ազատության և ազատությունից զրկված անձանց զբաղվածությանը վերաբերող ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական չափանիշներից:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն:*

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *ուղղիչ հիմնարկներում ստեղծվում են պայմաններ՝ դատապարտյալի ազատ ժամանակն արդյունավետ փնտրելու համար, և այդ նպատակով ուղղիչ հիմնարկում ստեղծվում են գրադարան, ընթերցարան, մարզասրահ կամ ժամանցի այլ վայրեր:* Նման կարգավորում է ամրագրված նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով, որի համաձայն՝ *կալանավորվածներին պահելու վայրերում ստեղծվում են պայմաններ՝ կալանավորված անձանց կողմից իրենց ազատ ժամանակը համապատասխան ձևով փնտրելու համար:*

Ուտի, անհրաժեշտ է՝

✓ **ավելացնել ազատությունից զրկված անձանց ներգրավվածությունն ինչպես Քրեակատարողական հիմնարկների կենցաղային սպասարկման, այնպես էլ հնարավոր այլ աշխատանքներում՝ հաշվի առնելով նրանց կարողությունների շրջանակը, մասնագիտությունը, սեռը, տարիքը և այլ նշանակություն ունեցող հանգամանքներ.**

✓ **պարբերաբար կազմակերպել ինչպես կրթական դասընթացներ, այնպես էլ մշակութային, սպորտային, տեղեկատվական և այլ միջոցառումներ, մշակել ազատությունից զրկված անձանց զբաղվածության ծրագրեր՝ խրախուսելով դրանց մասնակցությունը.**

✓ **խրախուսել ազատությունից զրկված անձի՝ ստեղծագործ աշխատանքով զբաղվելու ցանկությունը, հնարավորինս աջակցել դրան՝ ստեղծելով անհրաժեշտ նախապայմաններ.**

✓ **վերանայել ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ սահմանված արգելված իրերի առարկաների և սննդամթերքի ցանկը:**

2.16. Քրեակատարողական հիմնարկների ծառայողների աշխատանքային պայմաններ

Մարդու իրավունքների պաշտպանությունը համակողմանի մոտեցում պահանջող գործընթաց է: Այն ենթադրում է աշխատանք ու ուշադրություն բոլոր

մասնակիցներին: Այս առումով, կարևոր է հատկապես այն վայրերի աշխատակիցների վիճակն ու իրավունքների ապահովումը, ովքեր ծառայություն են իրականացնում ազատությունից զրկման վայրերում:

Քրեակատարողական ծառայողների՝ բարենպաստ պայմաններում աշխատելու հնարավորությունը Մարդու իրավունքների պաշտպանի մշտական ուշադրության կենտրոնում է այն հաշվառմամբ, որ մարդու իրավունքների պաշտպանությունը պահանջում է համակարգային մոտեցում և ներառում է նաև ծառայողների պաշտպանությունը:

Քրեակատարողական հիմնարկների վարչակազմի ներկայացուցիչների աշխատանքային պայմանների բարելավումը հանդիսանում է Քրեակատարողական հիմնարկների բնականոն գործունեության ապահովման հիմնական տարրերից մեկը: Աշխատանքային պայմանների բարելավման կարևոր նախապայմաններից է Քրեակատարողական հիմնարկներում թափուր հաստիքների համալրումը, որը կհանգեցնի վարչակազմի ներկայացուցիչների աշխատանքային զբաղվածության աստիճանի նվազեցմանը և կնպաստի նրանց կողմից աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարմանը և արդյունավետության բարձրացմանը:

Քրեակատարողական հիմնարկների ծառայողների աշխատանքային պայմաններին Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2016 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցում⁵⁰:

2017 թվականի ընթացքում կատարված ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել են բժշկական անձնակազմի արտաժամյա և գիշերային աշխատանքի հետ կապված խնդիրներ (օրինակ՝ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ):

Պարզվել է, որ բուժքույրական անձնակազմը տարվա ընթացքում 3 ամիս աշխատում է լրացուցիչ հերթապահությամբ՝ փոխարինելով արձակուրդում գտնվող գործընկերներին: Լրացուցիչ հերթապահությունն իրականացվում է առանց վարձատրության:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 184-րդ հոդվածի համաձայն՝ *արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար, ժամային դրույքաչափից բացի, վճարվում է հավելում՝ ժամային դրույքաչափի 50 տոկոսից ոչ պակաս չափով, իսկ գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար՝ ոչ պակաս, քան ժամային դրույքաչափի 30 տոկոսի չափով:*

Վերը նշված օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ՝ արտաժամյա*

⁵⁰Տե՛ս <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/107efea7ef699b67309a61ffdf8d0fle.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջեր 50-51:

աշխատանքը, չի կարող անցնել օրական 12 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից:

Ըստ նույն հոդվածի 4-րդ մասի՝ առանձին կատեգորիայի աշխատողների աշխատաժամանակի տևողությունը կարող է կազմել օրական 24 ժամ: Այդ աշխատողների աշխատաժամանակի միջին տևողությունը շաբաթվա ընթացքում չի կարող անցնել 48 ժամից, իսկ աշխատանքային օրերի միջև հանգստի ժամանակը չի կարող պակաս լինել 24 ժամից: Նման աշխատանքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Կարևորագույն նշանակություն ունի քրեակատարողական ծառայողների պատշաճ սոցիալական երաշխիքների, աշխատանքի անհրաժեշտ պայմանների ապահովումը: Այս մասին քրեակատարողական ծառայողները մշտապես իրավացիորեն ներկայացնում են Մարդու իրավունքների պաշտպանին ու նրա ներկայացուցիչներին:

Այսպիսով, անհրաժեշտ է լրացուցիչ հերթապահությունները կազմակերպել ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված դրույթներին համապատասխան:

Անհրաժեշտ է նաև շարունակական աշխատանք տանել քրեակատարողական բոլոր ծառայողների աշխատանքի սոցիալական երաշխիքների ու աշխատանքի պայմանների բարելավման ուղղությամբ:

2.17. Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելում

2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է մահվան 17 դեպք, որից 2-ը, նախնական քննության տեղեկություններով՝ ինքնասպանություն են⁵¹:

2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ,⁵² 2017 թվականին ինքնասպանության դեպքերը նվազել են 5-ով:

Չնայած ինքնասպանության դեպքերի թվի նվազմանը՝ իրավասու պետական մարմինների կողմից ինքնասպանության պատճառների ու նպաստող պայմանների

⁵¹ Համաձայն ՀՀ արդարադատության նախարարությունից ստացված տեղեկության:

⁵² Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2016 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը

<http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/107efea7ef699b67309a61ffdf8d0f1e.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջ 52:

վեր հանմանն ու կանխարգելմանն ուղղված աշխատանքները համակարգային առումով բավարար չեն:

Այս ուղղությամբ իրավասու տարբեր մարմինների ներգրավվածությամբ անհրաժեշտ են շարունակական ծրագրեր և համալիր միջոցառումներ՝ այդ մարմիններից յուրաքանչյուրի իրավասությանը և գործառույթներին համապատասխան:

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ ազատությունից զրկված անձինք Քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս կարանտինային բաժանմունքում անցնում են նախնական բժշկական զննություն, ինչն ունի կարևոր նշանակություն ինքնասպանությունների կանխարգելման հարցում: Կանոնավոր բուժզննումը կարող է ի հայտ բերել ինքնասպանության ռիսկայնություն ունեցող ազատությունից զրկված անձանց մի մասին և մասնակիորեն թեթևացնել անհանգստության զգացումը, որն ունենում են ազատությունից զրկման վայրեր նոր մուտք գործած բոլոր անձինք:

Քրեակատարողական հիմնարկ ընդունման պահից սկսած ազատությունից զրկված բոլոր անձանց հետ պետք է իրականացվեն սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ: Թեև դրա համար առկա են համապատասխան օրենսդրական հիմքեր, օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրամանի⁵³ հավելված 1-ի 22-րդ կետի 7-րդ ենթակետը, 26-րդ կետի 1-ին ենթակետը, այնուհանդերձ առկա չեն դրանց գործնական կիրառության գործուն մեխանիզմներ:

Օրինակ՝ քրեակատարողական բոլոր հիմնարկներում պետք է լինեն սահմանային վիճակներ կամ ինքնավնասման հակումներ կամ այլ խնդիրներ ունեցող ազատությունից զրկված անձանց համար անվտանգությունն ապահովող հատուկ սենյակներ:

Քրեակատարողական հիմնարկներ կատարված այցերի ընթացքում դիտարկումները ցույց են տալիս, որ լուծում չի ստացել ԽԿԿ-ի բարձրացրած խնդիրն այն մասին, որ *կյանքից զրկելու միջոցները (պատուհանավանդակի ձողերը, կտրրված ապակին, գոտիները, փողկապները և այլն) չպետք է հասանելի լինեն ինքնասպանության ռիսկի խմբին դասվող անձանց*⁵⁴: Միևնույն դիրքորոշումն է

⁵³ ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի թիվ 44-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 279-Ն հրաման:

⁵⁴ Տե՛ս ԽԿԿ-ի գործունեության մասին 3-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 1992 թվականի հունվարի 1-ից դեկտեմբեր 31-ն ընկած ժամանակահատվածը <https://rm.coe.int/1680696a40> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 59:

արտահայտվել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ 2016 թվականի զեկույցում⁵⁵:

Այսպես, ուսումնասիրելով 2011 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների հանգամանքները (կատարման տեղը, եղանակը և այլն), կարելի է եզրահանգել, որ ուղղիչ հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումների ծառայողները կա՛մ չեն կարողացել ի հայտ բերել սահմանային վիճակներ ունեցող (ինքնասպանության ռիսկի խմբին դասվող) ազատությունից զրկված անձանց, կա՛մ եթե կարողացել են, ապա պատշաճ միջոցներ չեն ձեռնարկել, որպեսզի կյանքից զրկելու առարկաները նման անձանց չլինեն հասանելի:

Ասվածի մասին է վկայում նաև ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած վիճակագրական տվյալները⁵⁶: Այսպես, 2011 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ինքնասպանության 27 դեպքերից 26-ը կատարվել են կախվելու միջոցով (ինքնաշեն պատրաստված պարանոլ, կոշկաքուղերով, սավանով, գոտիով) և միայն 1-ն է կատարվել այլ եղանակով՝ էլեկտրական էներգիայի գործադրմամբ:

Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների կանխարգելման գործում մեծ է նաև անվտանգության ապահովման, բժշկական սպասարկման ստորաբաժանումների ծառայողների և ազատությունից զրկված անձանց՝ հատկապես խցակիցների դերը:

Այսպես, ըստ ՀՀ արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 194-Ն հրամանի⁵⁷ 105-րդ կետի 17-րդ ենթակետի՝ *մասնաշենքի կամ մասնաշենքի բաժանմունքի պահակետում նշանակված ծառայողը՝ կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի դեպքում անհապաղ հայտարարում է երրորդ աստիճանի տարանջամ, և եթե դա տեղի է ունեցել ընդհանուր խցում, կացարանում կամ հիվանդասենյակում, ապա սննդի փոխանցման դռնակից մյուս անձանց առաջարկում է միջոցներ ձեռնարկել ինքնասպանությունը կանխելու և տուժողին օգնություն ցույց տալու նպատակով, անհրաժեշտության դեպքում խուց փոխանցելով պահակետում գտնվող համապատասխան առարկա:*

⁵⁵ Տե՛ս

<http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/107efea7ef699b67309a61ffdf8d0f1e.pdf> կայքէջում՝ 31.03.2018 թ.-ի դրությամբ, էջեր 52-59:

⁵⁶ Համաձայն ՀՀ արդարադատության նախարարությունից ստացված տեղեկության:

⁵⁷ Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության անվտանգության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 194-Ն հրաման:

Այսպիսի իրավական կարգավորումը գործնական կիրառության տեսանկյունից առաջացնում է մի շարք հարցադրումներ՝

1. Ի՞նչ կոնկրետ միջոցներ կարող են ձեռնարկել ազատությունից զրկված անձինք խցակցի ինքնասպանությունը կանխելու համար.

2. Ի՞նչ օգնություն պետք է ցույց տրվի տուժածին.

3. Ի՞նչ միջոցներ պետք է ձեռնարկվեն այն դեպքում, երբ ազատությունից զրկված անձը խցում պահվում է մեկուսի.

4. Վերը նշված կետի իմաստով ի՞նչն է համարվում «համապատասխան առարկա»:

Ազատությունից զրկման ցանկացած վայրում, այդ թվում՝ Քրեակատարողական հիմնարկներում, պետք է կազմակերպվեն իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներ: Օրինակ՝ պետք է մշակվեն ազատությունից զրկված անձանց համար նախատեսված դասընթացներ, որոնք կբովանդակեն տարբեր գործողությունների, այդ թվում՝ տուժածներին բժշկական օգնություն ցույց տալու հետ կապված խորհուրդներ և ցուցումներ: Ազատությունից զրկված անձանց նկատմամբ կարելի է նաև կիրառել խրախուսանքի միջոցներ այն դեպքերում, երբ վերջիններս կմասնակցեն հիշյալ դասընթացներին կամ կկանխեն ինքնասպանության փորձը կամ որևէ այլ կերպ կնպաստեն դրա կանխմանը:

Քանի որ առանձին պահվող ազատությունից զրկված անձի կողմից ինքնասպանություն գործելու հավանականությունն ավելի բարձր է, Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը նրանց վարքագծի նկատմամբ (հատկապես սահմանային վիճակների դեպքում) պետք է իրականացնի մշտական հսկողություն՝ առանձնակի ուշադրություն դարձնելով նրանց կասկածելի վարքագծին:

Արդիական է նաև Քրեակատարողական հիմնարկներում ինքնավնասման դեպքերի կանխարգելման հարցը: Արդարադատության նախարարության պարզաբանումների համաձայն՝ Քրեակատարողական հիմնարկներում առկա է ինքնավնասման դեպքերի նվազման միտում: Այսպես, եթե 2016 թվականին 3831 ազատությունից զրկված անձանց պարագայում Քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է ինքնավնասման 879 դեպք, ապա 2017 թվականին 3549 ազատությունից զրկված անձանց պարագայում՝ 607 դեպք:

Ինքնավնասման պատճառները, տրամադրված պարզաբանումների համաձայն, կարող են լինել տարբեր: Դրանք հիմնականում կապված են քրեական գործերի, տեղաբաշխման, անձնական խնդիրների, որոշ դեպքերում՝ հոգեկան անհավասարակշիռ վիճակի հետ և այլն:

Չնայած նախորդ տարվա համեմատ նվազման որոշակի միտումին՝ ինքնավնասումների ընդհանուր թիվը Քրեակատարողական հիմնարկներում շարունակում է մնալ բարձր⁵⁸:

Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության համագործակցության շրջանակներում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն անցկացնել են Քրեակատարողական վարչության ծառայողների վերապատրաստումներ բանտային բժշկության և ազատությունից զրկված անձանց իրավունքների վերաբերյալ, այդ թվում՝ ինքնավնասումների և ինքնասպանության կանխարգելման միջոցառումների:

Պաշտպանի աշխատակազմի և միջազգային կազմակերպությունների համագործակցության շրջանակներում 2017 թվականի ընթացքում անցկացվել են նաև Քրեակատարողական հիմնարկներում ինքնավնասումների և ինքնասպանությունների կանխարգելմանը նվիրված դասընթացներ, որոնց Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներից բացի, մասնակցել են նաև քրեակատարողական համակարգի սոցիալական և հոգեբանական աշխատանքների ոլորտի ծառայողներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները և անկախ փորձագետներ⁵⁹:

Ուստի, անհրաժեշտ է՝

✓ Քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս ազատությունից զրկված բոլոր անձանց տրամադրել հոգեբանի անհատական խորհրդատվություն, որի արդյունքում հնարավոր կլինի ի հայտ բերել ինքնասպանության ռիսկայնություն ունեցող անձանց, նրանց տեղաբաշխել իրենց վիճակի առանձնահատկություններին համապատասխան պայմաններ ունեցող խցեր կամ այլ վայրեր՝ իրականացնելով համապատասխան կանխարգելիչ աշխատանքներ.

✓ ապահովել Քրեակատարողական հիմնարկում գտնվելու ընթացքում ազատությունից զրկված անձանց հոգեբանական օգնության հասանելիությունը.

✓ երաշխավորել և պահպանել Քրեակատարողական հիմնարկներում հոգեբանների կողմից իրականացվող աշխատանքների արդյունքում ձեռք բերված բոլոր տվյալները.

✓ նախատեսել ինքնավնասման, ինքնասպանության ռիսկի խմբին դասվող ազատությունից զրկված անձանց կյանքից զրկելու միջոցներին անհրաժեշտ ժամանակահատվածով հասանելիությունը սահմանափակելու օրենսդրական հնարավորություն (օրինակ՝ պարան, կոշկաքուղեր, սավան, գոտի և այլն).

⁵⁸ Տե՛ս <https://www.panorama.am/am/news/2013/02/12/prisoners/586693> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ:

⁵⁹ Տե՛ս <http://www.ombuds.am/media/inqnavnasumner-inqnaspanutyunner.html> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ:

✓ ազատությունից զրկված անձանց նկատմամբ կիրառել քրեակարարողական օրենսդրությամբ նախատեսված խրախուսանքի միջոցներ՝ ինքնասպանությունների կանխարգելմանը նպաստելու համար.

✓ կազմակերպել դասընթացներ քրեակարարողական հիմնարկների վարչակազմերի ներկայացուցիչների համար՝ ինքնասպանության վրանգի նախանշանների մասին իրազեկելու նպատակով:

ԳԼՈՒԽ 3. ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՑԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2017 թվականի ընթացքում ստացված բողոքների և իրականացված մշտադիտարկման աշխատանքների արդյունքում վեր են հանվել դատարաններում ազատությունից զրկված անձանց պահելու համար նախատեսված խցերի պայմանների հետ կապված մի շարք, այդ թվում՝ օրենսդրական բնույթի խնդիրներ:

Երևան քաղաքի դատարաններ կատարված այցերի ընթացքում ուսումնասիրվել են ժամանակավոր պահման խցերի պայմանները, տեղի են ունեցել առանձնազրույցներ ազատությունից զրկված անձանց և նրանց ուղեկցող ստորաբաժանման ծառայողների հետ: Վեր հանված խնդիրները քննարկվել են ինչպես դատարանի նախագահի և դատարանի աշխատակազմի ղեկավարի, այնպես էլ դատական կարգադրիչների հետ: Այցերի արդյունքում ստացված տեղեկությունների համադրման և վերլուծության հիման վրա, վեր են հանվել նաև օրենսդրական կարգավորման բացեր և թերություններ⁶⁰:

2017 թվականի ընթացքում Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով դիմումատուն բարձրացրել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի խցերի պայմանների հարցը: Վերջինս, մասնավորապես, հայտնել է, որ խցերում ցուրտ է, առկա չեն ջեռուցման և օդափոխության համակարգեր:

Դատարաններում ազատությունից զրկված անձանց պահման պայմանների և սննդի ընդունման կազմակերպման մասով մշտադիտարկման աշխատանքներ կատարելու համար Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն այցելել են Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան:

Այցի պահին արձանագրվել է, որ շենքի նկուղային հարկում գտնվող 3 խցերը ջեռուցվում են գործարանային արտադրության կենցաղային էլեկտրական ջեռուցիչով: Ըստ կանխարգելման մեխանիզմի ստորաբաժանման կողմից կիրառվող չափիչ սարքերի տվյալների՝ տարածքում օդի ջերմաստիճանը 20 °C է եղել:

⁶⁰ ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի «Ձերբակալված և կալանավորված անձանց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ուղեկցման և պահպանման կարգը հաստատելու մասին» թիվ 351-Ն որոշումը բովանդակում է դատարանի խցերում ազատությունից զրկված անձանց պահման պայմաններին առնչվող մի շարք իրավական կարգավորումներ, սակայն դատարանների ժամանակավոր խցերում ազատությունից զրկված անձանց պահման պայմանների առանձնահատկությունները կանոնակարգող համակարգված և համապարփակ առանձին ակտ առկա չէ:

Այցի ընթացքում արձանագրվել է նաև, որ խցերի սանհանգույցներն ամբողջական պատով առանձնացված չեն բնակելի տարածքից: Դրա հետ մեկտեղ, անբավարար օդափոխության պատճառով՝ խցերը լցված են եղել ծխախոտի ծխով:

Ինչ վերաբերում է սնունդ չտրամադրելու խնդրին, ապա այցի պահին դատարանի խցերում պահվող անձանց հետ տեղի ունեցած առանձնագրույցի ընթացքում պարզվել է, որ երբ իրենք վեց և ավելի ժամ պահվում են դատարանի խցերում, սնունդ չի տրամադրվում:

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման հավելվածի 247-րդ կետի համաձայն՝ *չորս և ավելի ժամ տևողությամբ փոխադրման դեպքում կալանավորված անձը կամ դատապարտյալը պետք է ապահովվի սննդով:*

Ըստ ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի թիվ 351-Ն որոշման հավելվածի 15-րդ կետի՝ *չորս և ավելի ժամ տևողությամբ (երկարատև) ուղեկցման ընթացքում, որը ներառում է ուղեկցման ճանապարհը կամ դատավարական գործողությունը, ձերբակալված կամ կալանավորված անձն ապահովվում է սննդով, որը հատկացնում է համապատասխանաբար ձերբակալվածներին պահելու վայրերը կամ քրեակատարողական հիմնարկը:*

Քննության առարկա դարձած մեկ այլ բողոքով ազատությունից զրկված անձը հայտնել է, որ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի ժամանակավոր խցում պահվել է հինգ այլ անձանց հետ միասին, այն պարագայում, երբ մյուս խցերում պահվել է մեկ անձ կամ ընդհանրապես խուցն դատարկ է եղել:

Բարձրացված խնդրի կապակցությամբ ուսումնասիրություններ կատարելու նպատակով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն այցելել են Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան:

Այցի ընթացքում արձանագրվել է, որ ազատությունից զրկված անձանց պահելու համար նախատեսված է 5 խուց, որոնք ունեն մոտ 7-8 քառակուսի մետր մակերես: Հինգ խցերից մեկը շահագործվել է որպես պահեստ (այնտեղ պահվում են ստվարաթղթե արկղեր), իսկ մնացած չորս խցերից երկուսն ապահովված չեն եղել նստարանով: Խցերի սանհանգույցները, ինչպես Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանում, կիսատ պատով են առանձնացված եղել բնակելի տարածքից:

Այս կապակցությամբ ԽԿԿ-ն Մալթայի վերաբերյալ 2016 թվականի գեկույցում նշել է, որ *այդ խցերում ազատությունից զրկված անձինք պետք է պահվեն ապահով և պարզաճ վիճակում*⁶¹:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

⁶¹ Տե՛ս <https://rm.coe.int/16806b26e8> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 28:

✓ պարշաճ կերպով վերանորոգել դպրարաններում ազատությունից զրկված անձանց ժամանակավոր պահելու համար նախատեսված խցերը.

✓ խցերի սանհանգույցներն ամբողջական պատով առանձնացնել բնակելի տարածքից, նորոգել խմելու ջրի ծորակները և հետազայում ապահովել դրանց անխափան աշխատանքը.

✓ խցերում նախատեսել օդափոխության համակարգեր.

✓ պարշաճ կազմակերպել դպրարաններում չորս և ավելի ժամ պահվող ազատությունից զրկված անձանց սննդի ընդունումը.

✓ մշակել դպրարանի խցերում ազատությունից զրկված անձանց պահման պայմանների առանձնահատկությունները սահմանող համապարփակ կարգավորումներ:

ԳԼՈՒԽ 4. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից կատարվել են ազատությունից զրկված անձանց տեղափոխող⁶² հատուկ տրանսպորտային միջոցների պայմանների ուսումնասիրություններ: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են նաև հատուկ տրանսպորտային միջոցներին առնչվող բողոքներ::

Մասնավորապես, ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության՝ ազատությունից զրկված անձանց տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներում նրանց պահման պայմանները: Տեղում Ոստիկանության ծառայողների տրամադրած տեղեկության համաձայն՝ գումարտակի շահագործմանը հանձնված է 10 ավտոմեքենա, որից 6-ը՝ «ՈՒԱԶ-4741», 2-ը՝ «ՈՒԱԶ-3151», մեկական «ԳԱԶ ՍԱԴԿՈ» և «ԳԱԶ-66» մակնիշի ավտոմեքենաներ:

Անհատական բողոքների քննարկման, ինչպես նաև այցերի շրջանակում կատարված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնց լուծման հնարավոր ուղիների կապակցությամբ տեղի են ունեցել կարևոր քննարկումներ ՀՀ ոստիկանության և Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների միջև:

Արձանագրված խնդիրները ներկայացված են ստորև.

4.1. Ազատությունից զրկված անձանց ձեռնաշղթաներով տեղափոխում և անվտանգության ապահովում

Ազատությունից զրկված անձի նկատմամբ վերաբերմունքի տեսանկյունից կարևոր են ազատությունից զրկված անձանց տեղափոխման հետ կապված հարցերը:

Ուսումնասիրվել է ազատությունից զրկված անձանց հատուկ տրանսպորտային միջոցներում ձեռնաշղթաներով տեղափոխման, ինչպես նաև թափքի շարժման ընթացքում անձի անվտանգության ապահովման վիճակը: Մշտադիտարկման ուսումնասիրությունները, այդ թվում՝ ազատությունից զրկված անձանց հետ առանձնազրույցները վկայում են, որ ազատությունից զրկված անձանց տեղափոխությունը, որպես ընդհանուր կանոն, իրականացվում է ձեռնաշղթաներով: Դիտարկված տրանսպորտային միջոցների խցերում ազատությունից զրկված անձանց համար ամրագրոտիներ կամ անվտանգության այլ միջոցներ առկա չեն եղել:

⁶² Քրեակատարողական օրենսգրքում օգտագործվում է «փոխադրում», իսկ ՀՀ կառավարության 2016 թվականի 1128-Ն որոշման մեջ «տեղափոխում» տերմինը:

Իհարկե, ազատությունից զրկված անձանց տեղափոխումը կարող է պահանջել ձեռնաշղթաների կիրառում՝ ելնելով անվտանգության նկատառումներից: Սակայն սա չի նշանակում, թե դա պետք է լինի մշտական պրակտիկա:

Միջազգային պահանջները վկայում են, որ ձեռնաշղթաների կիրառումը պետք է լինի հիմնավորված՝ համատարած կիրառումը բացառելու պայմաններում: Այսպես, ԽԿԿ-ն Սերբիայի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում արձանագրել է, որ *յուրաքանչյուր դեպքում տրանսպորտային միջոցում ձեռնաշղթայի կիրառումը պետք է բխի որոշակի հիմնավորված ռիսկի առկայությունից, որը պետք է հստակ նշված լինի ազատությունից զրկված անձի անձնական գործում: Բացի այդ, ձեռնաշղթայի կիրառումն անձի համար չպետք է լրացուցիչ վնաս հասցնելու վրանգ ստեղծի:*

Ինչ վերաբերում է մեքենայի թափքի խցում գտնվող անձի նկատմամբ ձեռնաշղթա կիրառելու հարցին, ապա, նկատի ունենալով այն, որ երթևեկելիս հնարավոր են նաև պատահարներ, առկա են վնասվածքներ ստանալու ռիսկեր, հետևաբար անհրաժեշտ է բացառել տվյալ անձանց նկատմամբ ձեռնաշղթաներ կիրառելու պրակտիկան⁶³:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման հավելվածի 246-րդ կետի համաձայն՝ *կալանավորված անձին կամ դատապարտյալին ձեռնաշղթաներով կամ ոտնաշղթաներով փոխադրելը թույլատրվում է այն դեպքերում, երբ հիմնավոր կասկածներ կան ենթադրելու, որ կալանավորված անձը կամ դատապարտյալը կարող է դիմել փախուստի, վնասել իրեն կամ իրեն ուղեկցող անձանց կամ այլ կալանավորված անձանց կամ դատապարտյալների:*

Ելնելով անհրաժեշտությունից՝ կալանավորված անձը կամ դատապարտյալը փոխադրամիջոցից մինչև փոխադրման վայր կարող է տեղափոխվել ձեռնաշղթայով կամ ոտնաշղթայով կամ ուղեկցող անձին ձեռնաշղթայով ամրակցված վիճակում:

Բացի այդ, ԽԿԿ-ն Լեհաստանի վերաբերյալ 2011 թվականի զեկույցում արձանագրել է, որ *տրանսպորտային միջոցները հագեցած չեն անվտանգության սարքերով (օրինակ՝ անվտանգության գոտիներով կամ պաշտպանության կոշտ համակարգով)՝ պատահարի կամ խիստ արգելակի դեպքում ազատությունից զրկված անձանց պաշտպանելու համար: ԽԿԿ-ն անհրաժեշտ է համարել քայլեր ձեռնարկել՝ ազատությունից զրկված անձանց տեղափոխման համար օգտագործվող բոլոր տրանսպորտային միջոցները համապատասխան անվտանգության սարքերով ապահովելու ուղղությամբ⁶⁴:*

Դիտարկման արդյունքներն ուղարկվել են ՀՀ ոստիկանություն: Դրանից հետո կազմակերպվել է Պաշտպանի ներկայացուցիչների և Ոստիկանության համատեղ

⁶³ Տե՛ս <https://rm.coe.int/1680697c94> կայքէջում՝ 30.03.2018թ.-ի դրությամբ, կետ 53:

⁶⁴ Տե՛ս <https://rm.coe.int/168069791c> կայքէջում՝ 30.03.2018թ.-ի դրությամբ, կետ 80:

քննարկում: Ոստիկանության կողմից ներկայացվել են պարզաբանումներ այն մասին, որ տրանսպորտային միջոցի թափքում անվտանգության լրացուցիչ միջոցներ տեղադրելու հնարավորությունն արդեն իսկ դրվել է քննարկման:

Պետք է արձանագրել նաև առողջական խնդիրներ ունեցող անձանց տեղափոխման համար նախատեսված՝ հարմարեցված տրանսպորտային միջոցների բացակայությունը: Մասնավորապես, մշտադիտարկման աշխատանքները և Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են այն մասին, որ խիստ է նման տրանսպորտային միջոցի կարիքն այն դեպքերում, երբ ազատությունից զրկված անձը, առողջական վիճակով պայմանավորված, չի կարող տեղափոխվել նստած վիճակում կամ առկա է նրանց նստած տեղափոխելու հակացուցում:

«Ոստիկանության պարզաբանման համաձայն՝ ձերբակալված և կալանավորված անձանց տեղափոխելու համար նախատեսված տրանսպորտային միջոցները հատուկ կարիքներ ունեցող անձանց տեղափոխելու հնարավորությամբ կահավորված չեն: Քննարկվում է արդեն իսկ կահավորված նմանատիպ ավտոմեքենաներ ձեռք բերելու հարցը:

2017 թվականի մշտադիտարկման աշխատանքների ընթացքում, ինչպես նաև անհատական դիմումներով Պաշտպանին ներկայացվել են բողոքներ ազատությունից զրկված անձանց տեղափոխման ընթացքում վերջիններիս միմյանցից անջատ պահելու կանոնները չպահպանելու կապակցությամբ: Օրինակ՝ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող իրավապահ մարմինների նախկին աշխատակցի պնդմամբ՝ իր տեղափոխումն իրականացվել է ազատությունից զրկված և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող այլ անձանց հետ միասին:

«Ոստիկանության տրամադրած պարզաբանումների համաձայն՝ «Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 1128-Ն որոշման⁶⁵ հավելվածի 58-րդ կետի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց տեղափոխում են հատուկ տրանսպորտային միջոցի թափքի խցերում՝ անհրաժեշտության դեպքում ապահովելով նրանց անջատ պահելու պահանջը:

Մինչդեռ, «Քրեակատարողական օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատապարտյալը փոխադրվում է անջատ պահելու՝ քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված պահանջների պահպանմամբ: Նույն օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ուղղիչ հիմնարկում

⁶⁵ «Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի «Ձերբակալված և կալանավորված անձանց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ուղեկցման և պահպանման կարգը հաստատելու մասին» թիվ 351-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1128-Ն որոշում:

դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող, պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայության սպայական կազմի զինծառայող կամ նախկին զինծառայող, ինչպես նաև ոստիկանության զինծառայող կամ նախկին զինծառայող դատապարտյալն անջափ են պահվում մյուս դատապարտյալներից:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ պարբերության 5-րդ կետի համաձայն՝ դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող, ինչպես նաև ոստիկանության զորքերի զինծառայող կամ նախկին զինծառայող կալանավորված անձինք անջափ են պահվում մյուս կալանավորված անձանցից: Ըստ նույն հոդվածի 3-րդ մասի՝ նշված օրենքի 31-րդ հոդվածի երկրորդ մասում նախատեսված մեկուսացման հիմնական պահանջները պահպանվում են նաև ձերբակալված և կալանավորված անձանց փոխադրման ընթացքում:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքով և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքով, նախատեսված են ազատությունից զրկված անձանց անջատ պահելու սպառիչ դեպքեր, մինչդեռ ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 1128-Ն որոշման հավելվածով վերը նշված իրավական ակտերով նախատեսված անջատ պահելու պարտադիր պահանջները պայմանավորել են անհրաժեշտությամբ: Ստացվում է՝ ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 1128-Ն որոշման հավելվածի 58-րդ կետն ակնհայտորեն հակասում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի դրույթներին:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և սույն օրենքով նախատեսված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը: Նման պայմաններում Ոստիկանության պատճառաբանությունները չեն կարող ընդունելի լինել:

Ուարի, վերը շարադրվածի հիման վրա անհրաժեշտ է՝

✓ բացառել առանց հիմնավոր պատճառի անձանց փեղափոխելիս ձեռնաշղթաների կիրառումը.

✓ փրանսպորտային միջոցներն ապահովել անվտանգության անհրաժեշտ սարքերով.

✓ ազատությունից զրկված՝ հատուկ կարիքներ ունեցող անձանց փեղափոխման համար ձեռք բերել հարմարեցված փրանսպորտային միջոցներ.

✓ խիստ վերահսկողություն սահմանել ազատությունից զրկված անձանց փեղափոխելիս անջափ պահելու կանոնների պատշաճ կիրառության նկատմամբ.

✓ *փոփոխության ենթարկել ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի թիվ 351-Ն որոշման հավելվածի 58-րդ կետը՝ ապահովելով ազատությունից զրկված անձանց անջար պահելու ՀՀ քրեակարարողական օրենսգրքով և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված պահանջները:*

4.2. Տրանսպորտային միջոցների պայմաններ

Ուսումնասիրությունների ընթացքում համադրվել են հատուկ տրանսպորտային միջոցների խցերի և ազատությունից զրկված անձանց համար նախատեսված նստատեղերի մակերեսները: Արձանագրվել է, օրինակ, 1,4 մ² մակերեսով (օրինակ՝ «ՈՒԱԶ-3151» մակնիշի ավտոմեքենա) խուց, որտեղ տեղադրված են եղել առնվազն երկու անձի համար նախատեսված նստարաններ: Տրանսպորտային միջոցներում առկա է եղել նաև 1 անձ համար նախատեսված 0,5 մ² մակերեսով (օրինակ՝ «ԳԱԶ ՍԱԴԿՈ» մակնիշի ավտոմեքենա) խցեր:

Ազատությունից զրկված անձանց տեղափոխող տրանսպորտային միջոցների պայմանների վերաբերյալ չափանիշները ՀՀ ներպետական օրենսդրությամբ բացակայում են: Նշված տրանսպորտային միջոցների պայմանների, մասնավորապես՝ խցերի չափերի վերաբերյալ ուշագրավ են ԽԿԿ չափանիշները: Այսպես, ԽԿԿ-ի Լիտվայի վերաբերյալ 2001 թվականի⁶⁶, Ուկրաինայի վերաբերյալ 2002 թվականի⁶⁷ և Լեհաստանի վերաբերյալ 1998 թվականի⁶⁸ զեկույցների համաձայն՝ *անընդունելի է 0,4, 0,5 և նույնիսկ 0,8 մ² մակերես ունեցող խցերում անձանց տեղափոխելը՝ անկախ դրա տևողությունից:*

Հետևաբար, կարելի է արձանագրել, որ ազատությունից զրկված անձանց տեղափոխելու համար նախատեսված տրանսպորտային միջոցների խցերում ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի համար նախատեսված մակերեսը պետք է գերազանցի 0,8 մ²-ը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ազատությունից զրկված անձանց գերբնակեցված պայմաններում տեղափոխելը Եվրոպական դատարանը համարում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում⁶⁹:

⁶⁶ Տե՛ս <https://rm.coe.int/1680697331> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 117:

⁶⁷ Տե՛ս <https://rm.coe.int/1680698401> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 129:

⁶⁸ Տե՛ս <https://rm.coe.int/1680697913> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 68:

⁶⁹ Տե՛ս Իդալովն ընդդեմ Ռուսաստանի գործով 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 5826/03, կետեր 54, 61 և 103, Խուդոյրովն ընդդեմ Ռուսաստանի գործով 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 6847/02, կետ 117:

Վերոգրյալի կապակցությամբ ՀՀ ոստիկանության գրավոր պարզաբանման համաձայն՝ ուղեկցող գումարտակի հասուկ տրանսպորտային միջոցների խցերում յուրաքանչյուր անձի համար 0,8 մ²-ից ավել մակերեսի ապահովման պահանջի իրագործումն առկա տրանսպորտային միջոցների պայմաններում հնարավոր չէ: Դրա հետ մեկտեղ, ուղեկցող գումարտակի ծառայողներին հանձնարարվել է բացառել 0,5 մ² և 0,4-0,5 մ² մակերես ունեցող խցերում անձանց տեղափոխումը:

Ելնելով վերոգրյալից՝ անհարժեշտ է ձեռնարկել շարունակական միջոցներ հատուկ տրանսպորտային միջոցների խցերում յուրաքանչյուր անձի համար 0,8 մ²-ից ավել մակերեսի ապահովման պահանջի իրագործմանը հասնելու ուղղությամբ, ինչպես նաև ցուցաբերել հեղուկացման 0,5 մ² և 0,4-0,5 մ² մակերես ունեցող խցերում անձանց տեղափոխումը բացառելու վերաբերյալ հանձնարարականի կատարման նկատմամբ:

Ազատությունից զրկված անձանց տեղափոխելու համար նախատեսված տրանսպորտային միջոցներում օդափոխության և լուսավորության ապահովման պայմանների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ խցերում օդափոխությունը կատարվում է օդանցքի և դռան ճաղավանդակի կամ դրանց վրա առկա անցքերի միջոցով, ինչպես նաև մեքենայի թափքի վերևի կենտրոնական հատվածից (խցերից դուրս) օդանցքի («ՈՒԱԶ-4741», «ԳԱԶ-66» մակնիշի ավտոմեքենաներ) միջոցով: Օդափոխությունն իրականացվում է նաև ընդհանուր սրահի պատուհանների միջոցով («ՈՒԱԶ-3151» տրանսպորտային միջոցներ), ինչպես նաև օդորակիչ սարքերի միջոցով (օրինակ՝ «ԳԱԶ ՍԱԴԿՈ» մակնիշի ավտոմեքենա):

Որոշ տրանսպորտային միջոցների խցերում բնական լուսավորության հնարավորություն չկա: Արդյունքում, լուսավորությունն ապահովվում է էլեկտրական լամպերի միջոցով, որոնցից որոշներն ուսումնասիրության պահին մի քանի տրանսպորտային միջոցում գտնվել են անսարք վիճակում (օրինակ՝ «ՈՒԱԶ-4741», «ԳԱԶ ՍԱԴԿՈ» մակնիշի ավտոմեքենաներ): Մյուսներում խցի բնական լուսավորությունն ապահովվել է դեպի դուրս նայող պատուհանների միջոցով (օրինակ՝ «ՈՒԱԶ-3151» մակնիշի ավտոմեքենաներ):

Տրանսպորտային միջոցներում պատշաճ օդափոխության և լուսավորության վերաբերյալ Եվրոպական բանտային կանոնների 32.2-րդ կանոնը սահմանում է, որ *ազատությունից զրկված անձանց փոխադրումն անբավարար օդափոխության կամ լուսավորման կամ էլ ցանկացած այլ ֆիզիկապես ծանր պայմաններում արգելվում է:* Նմանատիպ կարգավորում առկա է նաև ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ»-ի 45-րդ կետի 2-րդ ենթակետում:

Նշվածի հետ կապված ՀՀ ոստիկանության գրավոր պարզաբանումների համաձայն՝ անբավարար լուսավորության և օդափոխության խնդիրները վերացվել են:

Անհրաժեշտ է մշտական ուշադրության կենտրոնում պահել տրանսպորտային միջոցներում բավարար օդափոխության և լուսավորության ապահովման հարցերը:

ԳԼՈՒԽ 5. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՆՈՒ ՎԱՅՐԵՐ

«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կրնվենցիայի կամընտիր արձանագրությամբ ստանձնած ազատությունից զրկման վայրերում վատ վերաբերմունքի կանխարգելմանն ուղղված գործառույթներն իրացնելիս՝ կանխարգելման ազգային մեխանիզմի ներկայացուցիչները մշտադիտարկման աշխատանքներ են կատարել ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում (այսուհետ՝ ՁՊՎ): 2017 թվականի ընթացքում կատարվել է 21 այդպիսի այց⁷⁰:

ՁՊՎ-ների վարչակազմերն արդյունավետ համագործակցել են Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների հետ վերջիններիս կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս: Աշխատանքի խոչընդոտներ չեն արձանագրվել: Արձանագրված խնդիրների լուծման հնարավոր ուղիների կապակցությամբ տեղի են ունեցել կարևոր քննարկումներ ՀՀ ոստիկանության շտաբի և Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների միջև:

Նշված աշխատանքների ընթացքում արձանագրվել են խնդիրներ, որոնք հանգում են հետևյալին.

5.1. Պահման պայմաններ

Դիտարկված ՁՊՎ-ներում արձանագրվել են պահման պայմանների հետ կապված խնդիրներ, որոնք կարելի է դասակարգել հետևյալ խմբերի.

- 1) խցերի պայմաններ,
- 2) լվացքի, լոգանքի կազմակերպում և սանիտարահիգիենիկ պայմաններ,
- 3) սննդի կազմակերպում,
- 4) զբոսանք:

1) Պատշաճ լուսավորությունը, այդ թվում՝ ցերեկային ժամերին բավարար լուսաթափանցելիությունն ազատությունից զրկված անձանց բարեկեցության և բնականոն կենսագործունեության ապահովման հիմնական տարրերից է:

Մի շարք ՁՊՎ-ների խցերում (Նոյեմբերյանի, Իջևանի, Ճամբարակի, Վարդենիսի, Դիլիջանի, Մարտունու, Աշտարակի, Թալինի, Եղեգնաձորի, Վայքի, Սիսիանի,

⁷⁰ ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի և Թալինի, Տավուշի, Գեղարքունիքի և Լոռու մարզային վարչությունների Նոյեմբերյանի, Թումանյանի, Իջևանի, Դիլիջանի, Տավուշի, Ճամբարակի, Վարդենիսի, Սևանի, Գավառի և Մարտունու, Վայոց ձորի և Այունիքի մարզային վարչությունների Եղեգնաձորի, Վայքի, Գորիսի, Սիսիանի, Մեղրիի և Կապանի, Շիրակի մարզային վարչության Արթիկի, Գյումրի քաղաքի Մուշի և Կումայրիի բաժինները և ՁՊՎ-ներ:

Գորիսի և Կապանի ՁՊՎ-ներ) բնական լուսավորությունը բավարար չէ: Ի հակադրություն՝ Մեղրիի ՁՊՎ-ի խցերում, օրինակ, պատուհանները բավարար չափերի են, ինչի արդյունքում խցերում ապահովված է բնական լուսավորություն:

«Նոստիկանության գրավոր պարզաբանման համաձայն՝ բնական լուսավորության աստիճանը պայմանավորված է բաժինների վարչական շենքերի դիրքով և պատուհանների չափերով: Այնուամենայնիվ, խցերը, ըստ Ոստիկանության, կապահովվեն լրացուցիչ արհեստական լուսավորությամբ:

Ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել է նաև, որ ՁՊՎ-ներում էլեկտրական լուսավորությունը չի անջատվում ողջ գիշերվա ընթացքում: ՁՊՎ-ների վարչակազմերի ներկայացուցիչները պարզաբանել են, որ էլեկտրական լուսավորությունը չի անջատվում խցում պահվող անձանց հսկելու համար: Արդյունքում, ազատությունից զրկված անձանց համար չեն ստեղծվում քնելու համար պատշաճ պայմաններ:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 574-Ն որոշմամբ»⁷¹ հաստատված հավելվածի 84-րդ կետը հակասում է ԽԿԿ չափանիշներին:

Նիդերլանդների վերաբերյալ ԽԿԿ-ի 2017 թվականի զեկույցի 26-րդ կետի համաձայն՝ *նոստիկանության բաժանմունքների խցերում գիշերային ժամերին լույսը կարող է միացված մնալ միայն դրա անհրաժեշտությունը հիմնավորելու դեպքում*⁷²: Նման անհրաժեշտություն կարող է առաջանալ, օրինակ, յուրաքանչյուր դեպքում ազատությունից զրկված անձանց, ինչպես նաև ՁՊՎ-ի վարչակազմի աշխատակիցների անվտանգության հիմնավորված նկատառումներով: Օրինակ՝ այդպիսի իրավիճակ կարող է լինել, երբ առկա լինի ազատությունից զրկված անձի վարքագծով պայմանավորված վերջինիս նկատմամբ հատուկ հսկողության անհրաժեշտություն, որը չի կարող իրականացվել գիշերային ժամերին խցում լուսավորության բացակայության պայմաններում:

Համաձայն «Նոստիկանության գրավոր պարզաբանման» «Նոստիկանության շտաբում մշակվում է «Կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 574-Ն որոշման լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագիծը, որտեղ կներառվեն նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի առաջարկները, այդ թվում՝ ՁՊՎ-ների խցերի լուսավորությունը գիշերային ժամերին անջատելու վերաբերյալ:

ՁՊՎ-ներում մշտադիտարկում իրականացնելիս ուսումնասիրվել է նաև ազատությունից զրկված անձանց պահման խցերը ռադիոընդունիչներով ապահովված

⁷¹ «Կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 574-Ն որոշում:

⁷² Տե՛ս <https://rm.coe.int/16806ebb7c> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ:

լինելը: Այսպես, Վայքի ՁՊՎ-ի խցերում այցի պահին առկա չի եղել ռադիոընդունիչ, այն տեղադրված է եղել ՁՊՎ-ի միջանցքում: Սույնի կապակցությամբ պետք է նշել, որ ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 574-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 27-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ *ՁՊՎ-ի մենախցերն ապահովվում են ռադիոընդունիչով:*

Նշվածի կապակցությամբ ՀՀ ոստիկանության գրավոր պարզաբանման համաձայն՝ Ոստիկանության Վայքի բաժնի ՁՊՎ-ում ռադիոընդունիչը տեղադրվել է եղել միջանցքում անվտանգության նկատառումներից ելնելով, քանի որ արձանագրվել են ինքնավնասման մի շարք դեպքեր, որոնք կատարվել են ռադիոընդունիչների մետաղյա ավեհավաքի, մարտկոցների մետաղյա թիթեղների կամ այլ դետալների միջոցով: Այնուամենայնիվ, նշված ՁՊՎ-ի խցերն ապահովվել են ռադիոընդունիչներով:

Ուստի, պետք է՝

✓ ձերբակալված անձանց պահման համար նախատեսված խցերում ապահովել բավարար բնական լուսաթափանցելիություն.

✓ հեղուկակառուցություն ցուցաբերել ՁՊՎ-ների խցերը ռադիոընդունիչով ապահովելու նկատմամբ:

2) Պարբերական լոգանքը հիգիենայի ապահովման պարտադիր պայման է, որի համար անհրաժեշտ են համապատասխան պայմաններ: Հիգիենայի տեսանկյունից հատկապես կարևոր է ազատությունից զրկված անձանց անկողնային մաքուր պարագաներով ապահովելը:

Կապանի ՁՊՎ-ն ունի վերանորոգման կարիք: Լոգարանն այցի ընթացքում չի ջեռուցվել:

Ոստիկանությունն այս կապակցությամբ գրավոր պարզաբանել է, որ Կապանի ՁՊՎ-ն ունի ընդհանուր վերանորոգման կարիք, ինչն արդեն նախատեսված է իրականացնել ընթացիկ տարում: Վերանորոգումից հետո կլուծվեն առկա խնդիրները, այդ թվում՝ լոգարանի ջեռուցման հարցը:

Այցերի ընթացքում որոշ ՁՊՎ-ներում արձանագրվել է անկողնային սպիտակեղենի ոչ բավարար վիճակ (օրինակ՝ Իջևանի, Արթիկի ՁՊՎ-ներ):

Վերը նկարագրված եղանակներով լվացքի կազմակերպման դեպքում խնդրահարույց է լվացքի պատշաճ ախտահանման հարցը՝ վարակիչ հիվանդությունների կանխարգելման տեսանկյունից, իսկ գրավոր պայմանագրերի բացակայության դեպքում՝ դրանցով ամրագրված ախտահանմանը ներկայացվող պահանջների և չափանիշների բացակայությունը:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ՁՊՎ-ներում սանիտարական միջոցառումներ անցկացնելու փաստը հաստատող փաստաթուղթ չի կազմվում, այդ թվում՝ չեն արձանագրվում միջոցառման անցկացման տարին, ամիսը և ամսաթիվը: Այցի ընթացքում սանիտարական միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ փաստաթղթեր

փակցված չեն եղել, իսկ ՁՊՎ-ների վարչակազմի ներկայացուցիչները տեղյակ չեն եղել վերջին անգամ հիմնական մաքրում կազմակերպելու մասին կամ չեն հիշել դրա իրականացման ամսաթիվը:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 574-Ն որոշման հավելվածի 183-րդ կետի համաձայն՝ *ՁՊՎ-ում ամեն օր անցկացվում է մենախցերի և այլ սենյակների խոնավ մաքրում՝ օգտագործելով ախտահանող միջոցներ, իսկ ՁՊՎ-ի բոլոր սենյակներում և մենախցերում անցկացվում է հիմնական մաքրում ոչ ուշ, քան յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:* Սակայն վերոնշյալ որոշմամբ չի սահմանվում, թե հիմնական մաքրում անցկացվելու ժամանակ ինչպիսի ախտահանիչ աշխատանքներ են իրականացվում:

Հաշվի առնելով, որ ՁՊՎ-ներ մուտք են գործում և պահվում ազատությունից զրկված բազմաթիվ անձինք, ովքեր կարող են լինել տարբեր վարակիչ հիվանդությունների վարակակիր, անհրաժեշտ է մշակել ՁՊՎ-ներում ախտահանման միասնական ձև՝ նախատեսելով նաև անկողնային պարագաների ախտահանման չափանիշներ, ինչը կբացառի վարակիչ հիվանդությունների տարածման հնարավորությունը:

ՀՀ ոստիկանությունն այս կապակցությամբ պարզաբանել է, որ շտաբի հերթապահ ծառայության վարչության ղեկավարության և Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների համատեղ քննարկումների արդյունքում հանձնարարվել է հիմնական մաքրման աշխատանքների կատարման ուղղությամբ ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Հաշվի առնելով վերոգրյալն անհրաժեշտ է՝

✓ **ապահովել ՁՊՎ-ներում լվացքի պատշաճ կազմակերպումը.**

✓ **մշակել և շրջանառել սանիտարական միջոցառումների անցկացման հստակ ժամանակացույց և մեխանիզմ:**

3) Ազատությունից զրկված անձանց բնականոն կենսագործունեության կարևոր երաշխիքներից է անհրաժեշտ, բավարար և բազմատեսակ սննդի տրամադրումը:

Ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ ՁՊՎ-ներում սննդի կազմակերպման համար առկա են կնքված պայմանագրեր, սակայն, օրինակ, Սիսիանի և Թալինի ՁՊՎ-ների կողմից կնքված սննդի մատակարարման պայմանագրերում նշված է եղել միայն յուրաքանչյուր օրապահիկ սննդի դիմաց վճարվող գումարի չափը, պայմանագրերով ամրագրված չեն եղել հիմնական կերակրատեսակների ցանկը և սննդին ներկայացվող հիմնական պահանջները:

Դրա հետ կապված ՀՀ ոստիկանությունը գրավոր տեղեկացրել է, որ սննդի մատակարարման համար կնքված պայմանագրերին կցվել են նաև նախատեսված հիմնական կերակրատեսակների ցանկը և սննդին ներկայացվող հիմնական պահանջները:

Միաժամանակ, արձանագրվել են պատշաճ կնքված սննդի կազմակերպման պայմանագրեր (օրինակ՝ Մուշի ՁՊՎ), որտեղ մանրամասն անդրադարձ է կատարված կողմերի իրավունքներին և պարտականություններին, ծառայության հանձնման և ընդունման կարգին, պայմանագրի գնին, կողմերի պատասխանատվությանը և այլ պայմաններին: Պայմանագրում ներառված է նաև հիմնական կերակրատեսակների ցանկը, շաբաթվա ճաշացանկը և այլն:

Դրական գնահատելով ՁՊՎ-ներում սննդի տրամադրման կազմակերպման աշխատանքները՝ այնուամենայնիվ անհրաժեշտ է այս ոլորտում ապահովել պարբերական և խիստ վերահսկողություն:

4) ՁՊՎ-ների մշտադիտարկումը թույլ է տվել արձանագրել ազատությունից զրկված անձանց զբոսանքի ապահովման հետ կապված խնդիրներ:

Որոշ ՁՊՎ-ների զբոսաբակերում առկա չեն նստելու հնարավորություն (Տավուշի, Թումանյանի, Թալինի, Մուշի, Վայքի, Եղեգնաձորի, Սիսիանի և Կապանի ՁՊՎ-ներ), աղբաման (Վարդենիսի, Աշտարակի, Սևանի, Եղեգնաձորի, Սիսիանի և Գորիսի ՁՊՎ-ներ) կամ մարմնամարզությամբ զբաղվելու միջոցներ (Եղեգնաձորի և Կապանի ՁՊՎ-ներ): Որոշ դեպքերում ծածկի չափերը և տեղակայումը բավարար չեն ազատությունից զրկված անձանց վատ եղանակային պայմաններից պաշտպանելու համար (Տավուշի, Ճամբարակի ՁՊՎ-ներ):

Հարկ է նշել նաև, որ Եղեգնաձորի ՁՊՎ-ի զբոսաբակում վատ եղանակային պայմաններում զբոսանքի կազմակերպման համար նախատեսված ծածկը չափազանց փոքր է:

Թեև ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 574-Ն որոշմամբ սահմանված չէ ՁՊՎ-ներում զբոսանքի համար նախատեսված վայրերում նստարան տեղադրելու, ինչպես նաև զբոսաբակը ծածկով ապահովելու պարտականություն, հարկ է նշել, որ դրանք նախատեսված են միջազգային չափանիշներով: Այսպես, Հունգարիայի վերաբերյալ 2014 թվականի զեկույցում ԽԿԿ-ն շեշտել է, որ *անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել զբոսանքի համար նախատեսված վայրերում հանգստանալու միջոցներ և անրարենպաստ եղանակի համար արդյունավետ ծածկեր տեղադրելու ուղղությամբ*⁷³:

Ոստիկանությունից ստացվել են պարզաբանումներ այն մասին, որ ՁՊՎ-ների զբոսաբակերում նստարան և աղբաման տեղադրելու, զբոսաբակի ցանցապատ ծածկի որոշ հատված թիթեղապատելու հարցերը ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 574-Ն որոշմամբ սահմանված չեն, սակայն Մարդու իրավունքների պաշտպանի կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակի շրջանակներում արված առաջարկությունների հիման վրա, ինչպես նաև հաշվի

⁷³Տե՛ս <https://rm.coe.int/1680696b7f> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 31:

առնելով միջազգային չափանիշները, այն իրագործվել է: Հանձնարարվել է ՁՊՎ-ների զրոսաբակերը կահավորել պահանջվող գույքով:

Ողջունելի է ՁՊՎ-ների զրոսաբակերը միջազգային չափանիշներին համահունչ կահավորելու պատրաստակամությունը, ինչպես նաև դրա կապակցությամբ տրված հանձնարարականը, որի պատշաճ կատարման նկատմամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը դրսևորելու է անհրաժեշտ հետևողականություն:

5.2. Բժշկական օգնության տրամադրում և արձանագրում

Ձերբակալված անձանց բժշկական օգնության կազմակերպման կապակցությամբ հատկապես պետք է կարևորել ազատությունից զրկված անձանց բժշկական պարտադիր զննությունը և դրա արդյունքների պատշաճ արձանագրումը:

Այցերի ընթացքում պարզվել է, որ ՁՊՎ-ներում ձերբակալված անձինք բժշկական զննության են ենթարկվում միայն այն դեպքերում, երբ **ունենում են գանգատներ կամ առկա են լինում տեսանելի մարմնական վնասվածքներ:**

Դրա հետ մեկտեղ, Եղեգնաձորի ՁՊՎ-ում գանգատներ ներկայացնելու դեպքում մարմնական զննությունն իրականացնում է ՁՊՎ-ի աշխատակիցը: Նոյեմբերյանի, Իջևանի, Դիլիջանի, Տավուշի, Ճամբարակի, Վարդենիսի, Սևանի, Գավառի, Մարտունու, Կապանի և Գորիսի ՁՊՎ-ներում հրավիրված բուժաշխատողի կողմից ազատությունից զրկված անձի բժշկական զննությանը մասնակցում է նաև ՁՊՎ-ի աշխատակիցը՝ անվտանգության ապահովման պատճառաբանությամբ: Գորիսի ՁՊՎ-ում բժշկական զննությանը մշտապես մասնակցում է ՁՊՎ-ի աշխատակիցը, մինչև հրավիրված բուժաշխատողի կողմից չներկայացվի արտաքին բժշկական զննությունն առանց ՁՊՎ-ի աշխատակցի մասնակցության կատարելու պահանջ:

Այցի ընթացքում արձանագրվել է նաև դեպք, երբ արտաքին զննության վերաբերյալ կազմվել է արձանագրություն Ոստիկանության բաժնի հերթապահ մասի և ՁՊՎ-ի աշխատակիցների կողմից (Վայքի ՁՊՎ): Նշված արձանագրության ուսումնասիրությունից պարզվել է, որ արտաքին զննությունն իրականացվել է վերջիններիս կողմից առանց բուժաշխատողների մասնակցության:

Այս պրակտիկան անընդունելի է: *Ազատությունից զրկված անձի բուժզննումը (ժամանման պահին կամ ավելի ուշ) պետք է կատարվի ազատությունից զրկման վայրում աշխատող անձնակազմի լսելիության սահմաններից և, եթե համապատասխան բժիշկը հակառակը չպահանջի՝ տեսադաշտից դուրս: Դրանից բացի, ազատությունից զրկված անձի բուժզննումը պետք է կատարվի ոչ թե խմբերով, այլ անհատականորեն:*

Ազատությունից զրկման վայրերում իրականացվող բժշկական զննությանը ԽԿԿ-ն անդրադարձել է նաև Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում: Մասնավորապես՝ ԽԿԿ-ն, վերահաստատելով նախորդ տարիների զեկույցներում տեղ գտած հանձնարարականները, նշել է, որ *ազատությունից զրկման վայր ընդունվելիս անձի առաջնային բժշկական զննությունը, հատկապես սրացված վնասվածքների գրանցումն ու հաղորդումը պարզաձև չեն իրականացվում: ԽԿԿ-ն խնդրահարույց է համարել, որ զննությունը կազմակերպվում է անձի՝ ազատությունից զրկման վայր ընդունվելու ընթացակարգի շրջանակներում, ուղեկցող ոստիկանների և քրեակադրոհական հիմնարկի վարչակազմի ներկայությամբ՝ խախտելով բժշկական գաղտնիության սկզբունքը*⁷⁴:

Ավելին, ՁՊՎ մուտք գործած ցանկացած անձ պետք է ենթարկվի արտաքին բժշկական զննության՝ անկախ նրա կողմից բժշկական զննության ենթարկվելու պահանջ ներկայացնելու կամ տեսանելի մարմնական վնասվածքների առկայության հանգամանքներից:

ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության 4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ ամփոփիչ դիտարկումների 10-րդ կետի «ե» ենթակետի համաձայն՝ *պետությունը միջազգային չափանիշներին համապատասխան պետք է ձեռնարկի արդյունավետ միջոցներ ազատությունից զրկված բոլոր անձանց՝ ազատությունից զրկելու սկզբնական պահից խոշտանգումների կանխարգելմանն ուղղված բոլոր հիմնարար իրավական երաշխիքներից գործնականում օգտվելու հնարավորությունն ապահովելու ուղղությամբ:*

Նման իրավունքներից է անկախ բժշկի կողմից բժշկական զննության ենթարկվելու իրավունքը, որը պետք է կատարվի ոստիկանության անձնակազմի լսելիության սահմաններից և, եթե համապատասխան բժիշկը հակառակը չպահանջի՝ տեսադաշտից դուրս: Պետությունը պետք է գործնականում երաշխավորի ազատությունից զրկված անձանց հետ առնչվող բժիշկների և այլ բժշկական անձնակազմի անկախությունը, ապահովի, որպեսզի նրանք պարզաձև արձանագրեն և փաստաթղթավորեն վատ վերաբերմունքի կամ խոշտանգման ցանկացած նշան և կասկած:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ բժշկական զննությունը պետք է իրականացվի միայն բժշկի կողմից և ազատությունից զրկման վայրի անձնակազմի լսելիության սահմաններից և տեսադաշտից դուրս:

Ստացված գրավոր պարզաբանումների համաձայն՝ ՀՀ ոստիկանությունը ընդունելի է համարում, որ ՁՊՎ մուտք գործած ցանկացած անձ անկախ որևէ հանգամանքից պետք է ենթարկվի արտաքին բժշկական զննության, սակայն խնդրի լուծումը պահանջում է տեխնիկական, ինչպես նաև ֆինանսական մեծ միջոցներ և այն

⁷⁴Տե՛ս <https://rm.coe.int/16806bf46f> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 17:

պետք է համաձայնեցվի շահագրգիռ պետական մարմնի՝ Առողջապահության նախարարության հետ: Ոստիկանությունը տեղեկացրել է նաև, որ Գլխավոր դատախազության նախաձեռնությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որտեղ ընդգրկված են Ոստիկանության, Առողջապահության և Արդարադատության նախարարությունների ներկայացուցիչներ՝ նշված հարցը քննարկելու և լուծում տալու նպատակով:

ՀՀ ոստիկանությունը տեղեկացրել է նաև, որ ՁՊՎ-ների բուժսենյակների դռների վրա սարքավորվել են միակողմանի տեսանելիություն ապահովող օրգանական ապակիներով դիտանցքեր, որպեսզի բժշկի անվտանգությունն ապահովելու նպատակով տեսողական հսկողություն իրականացնող ՁՊՎ-ի աշխատակիցը չնկատվի բուժզննության սենյակից:

Հարկ է նշել, որ հրավիրված բուժաշխատողները բուժօգնության կամ բուժզննության վերաբերյալ առանձին արձանագրություն ՁՊՎ-ներում չեն կազմում (օրինակ՝ Գորիսի և Մեղրիի ՁՊՎ-ներ): Պարզվել է նաև, որ բժշկի կողմից կազմված արձանագրությունը ստորագրում են նաև ՁՊՎ-ների վարչակազմի ներկայացուցիչները:

Ըստ ԽԿԿ-ի՝ *յուրաքանչյուր բժշկական հետազոտության արդյունք, ինչպես նաև ձեռքակալված անձի կողմից արված համապատասխան պնդում և բժշկի հետևություն պետք է պաշտոնապես գրանցվեն հետազոտող բժշկի կողմից և տրամադրվեն ձեռքակալված անձին և նրա փաստաբանին*⁷⁵:

Այս կապակցությամբ ՀՀ ոստիկանության գրավոր պարզաբանման համաձայն՝ բուժաշխատողի կազմած արձանագրության տակ ՁՊՎ-ների վարչակազմի ներկայացուցիչների կողմից ստորագրելու գործընթաց սահմանված չէ, և այդ մասին ևս մեկ անգամ կտեղեկացվեն պատասխանատու ոստիկանները:

Դրա հետ մեկտեղ, արձանագրվել են բուժզննության և բուժօգնության գրանցամատյանի մեջ համապատասխան գրառումներ չկատարելու դեպքեր, մասնավորապես՝ բացակայել են դեղապահարանում պահվող դեղորայքի օգտագործման վերաբերյալ գրառումները, որոնք, ՁՊՎ-ի վարչակազմի ներկայացուցիչների պնդմամբ, տրամադրվել են բժշկի բանավոր ցուցման հիման վրա (Արթիկի և Եղեգնաձորի ՁՊՎ-ներ):

ՁՊՎ-ների բուժմասերի պայմանների ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Եղեգնաձորի ՁՊՎ-ի բուժմասում տեղադրված է մանկական բժշկական երկաթյա թախտ, որը մեծահասակ անձին բուժօգնություն տրամադրելու համար չի կարող օգտագործվել:

Նշված ՁՊՎ-ում հայտնաբերվել է ժամկետանց «Յոդ»: Բացի այդ, ըստ ներկայացված պարզաբանումների, ժամկետանց դեղորայքի խոտանումն

⁷⁵ Տե՛ս <https://rm.coe.int/1680696a3f> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 38:

իրականացնում են ՁՊՎ-ի աշխատակիցները (օրինակ՝ «Յոդ» դեղորայքը նուսրացվում է ջրով և թափվում է ջրահեռացման համակարգ, իսկ ոչ հեղուկ ժամկետանց դեղորայքը խոտանվում է այրելու միջոցով), ինչն անթույլատրելի է:

Վերոգրյալի հետ կապված՝ ՀՀ ոստիկանությունը տեղեկացրել է, որ Ոստիկանության Եղեգնաձորի բաժնին հանձնարարվել է միջոցներ ձեռնարկել բժշկական սենյակի թախտը նորով փոխարինելու ուղղությամբ, ՁՊՎ-ում պահվող անձին դեղորայք տրամադրելու դեպքում այդ մասին գրառում կատարել «Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության» գրանցամատյանում և հիշեցվել է դեռևս 2013 թվականի ՀՀ ոստիկանության շտաբի կողմից տրված հանձնարարականի մասին, այն է՝ ժամկետանց դեղորայքը ոչնչացնելու համար տեղերում կազմավորել հանձնախմբեր, նրանց ներկայությամբ կազմել արձանագրություն ՁՊՎ-ներում առկա ժամկետանց դեղորայքի քանակի և անվանումների մասին ցուցակ ու տեղափոխել Ոստիկանության բուժվարչության պոլիկլինիկայի դեղատուն՝ դրանց ոչնչացման նպատակով:

Հարկ է նշել նաև, որ Մեղրիի ՁՊՎ-ի բուժմասի խոնավության աստիճանն այցի ընթացքում եղել է բարձր:

Այս հարցի հետ կապված ՀՀ ոստիկանության գրավոր պարզաբանման համաձայն՝ Մեղրիի ՁՊՎ-ի վարչակազմին հանձնարարվել է պարբերաբար օդափոխել բժշկական սենյակը՝ բարձր խոնավության աստիճանից խուսափելու համար:

Ուտրի, ՁՊՎ մուտք գործած ցանկացած անձի պարտադիր արտաքին բժշկական զննության նպատակով պետք է ձեռնարկել օրենսդրական և գործնական համապատասխան քայլեր՝ ելնելով խոշտանգման և վարվերաբերմունքի կանխարգելման անհրաժեշտությունից: Միաժամանակ, անհրաժեշտ է հետևողականություն ցուցաբերել Ուտրիկանության կողմից ՁՊՎ-ների վարչակազմերին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ:

Անհրաժեշտ է ազատությունից զրկված անձանց արտաքին բժշկական զննությունն իրականացնել ՁՊՎ-ների անձնակազմի լսելիության սահմաններից և տեսադաշտից դուրս: Պետք է բարձրացնել ՁՊՎ-ների անձնակազմի իրավասությունն իրենց կողմից բժշկական արձանագրությունը ստորագրելու անթույլատրելիության վերաբերյալ:

5.3. Փաստաբանի անարգել մուտքի իրավունք

Մշտադիտարկման այցերը ցույց են տվել, որ ՁՊՎ-ների վարչակազմի ներկայացուցիչները ոչ միշտ են իրազեկված «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածում կատարված և 2016 թվականի

հունվարի 9-ին ուժի մեջ մտած փոփոխությունների մասին, որոնց համաձայն՝ **ձերբակալված կամ կալանավորված անձն ունի իր պաշտպանությունը ստանձնելու նպատակով տեսակցության եկած փաստաբանի կամ իր պաշտպանի հետ առանձին, անարգել տեսակցելու իրավունք՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման, անկախ աշխատանքային օրերից կամ ժամերից:**

Հարկ է նշել, որ նշված օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված անձի տեսակցությունը փաստաբանի կամ պաշտպանի հետ տրամադրվում է այն դեպքում, երբ փաստաբանը կամ պաշտպանը ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ և փաստաբանական գործունեության արտոնագիր կամ փաստաբանի վկայական՝ **քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին ուղղված համապատասխան հավաստագրի հիման վրա:** Սույն մասում նշված հավաստագիրը քրեական վարույթն իրականացնող մարմնին ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին ուղարկում է անհապաղ:

Հիշյալ դրույթը, սակայն, խնդրահարույց է պաշտպանությունը ստանձնելու նպատակով եկած փաստաբանի հետ տեսակցության կազմակերպման տեսանկյունից, քանի որ պաշտպանությունը ստանձնելու նպատակով եկած փաստաբանը չունի դատավարական կարգավիճակ, և նրան քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին ուղղված համապատասխան հավաստագիր չի կարող տրամադրվել: Արդյունքում, պաշտպանությունը ստանձնելու նպատակով եկած փաստաբանը չունի տեսակցության կազմակերպման համար անհրաժեշտ օրենքով պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օբյեկտիվ հնարավորություն և չի կարող ապահովվել ձերբակալված անձանց արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքի իրացումը:

ՁՊՎ-ներում գտնվող ձերբակալված անձի և նրա պաշտպանությունը ստանձնելու նպատակով եկած փաստաբանի տեսակցությունը տրամադրելու համար չի կարող ողջամտորեն ներկայացվել այնպիսի պահանջ, որը չի բխում ներպետական, մասնավորապես՝ քրեադատավարական օրենսդրության պահանջներից: Հետևաբար, ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին ուղղված համապատասխան հավաստագիր ներկայացնելու պահանջ կարող է ներկայացվել պաշտպանին, այլ ոչ թե պաշտպանությունը ստանձնելու նպատակով եկած փաստաբանին:

Ուստի նկարագրված հարցի լուծման նպատակով անհրաժեշտ է համապատասխան փոփոխությունների ենթարկել «ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը:

5.4. Կապն արտաքին աշխարհի հետ

Արտաքին աշխարհի հետ կապի պահպանումը կարևոր նշանակություն ունի ձերբակալված անձանց համար, հատկապես՝ ազատության մեջ գտնվելու ընթացքում ձևավորած սոցիալական կապերը չկորցնելու տեսանկյունից:

Գրեթե բոլոր ՁՊՎ-ներում (բացառությամբ Նոյեմբերյանի, Իջևանի, Դիլիջանի, Ճամբարակի, Մարտունու ՁՊՎ-ների) տեսակցությունները տրամադրվում են ապակե միջնորմ ունեցող սենյակներում՝ սահմանափակելով տեսակցության ընթացքում անձանց ֆիզիկական շփման հնարավորությունը: Այդ շփումն ապահովվում է հեռախոսի կամ ապակե միջնորմի վրա առկա անցքերի միջոցով:

Այս հարցն ունի շարունակական բնույթ, որին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2016 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցում:

Չնայած նրան, որ ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 574-Ն որոշման 119-րդ կետը սահմանում է տեսակցությունների սենյակը հոծ արգելապատով և թափանցիկ պատնեշով առանձնացնելու պահանջ, նման մոտեցումը հակասում է միջազգային պահանջներին:

Այսպես, ԽԿԿ-ն քննարկվող հարցի կապակցությամբ Ավստրիայի վերաբերյալ 2015 թվականի զեկույցում ընդգծել է, որ *անազատության մեջ գտնվող անձանց տեսակցություններն իրենց ընդհանրի անդամների հետ, որպես կանոն, պետք է տրամադրվեն առանց ֆիզիկական առանձնացման: Միջնորմով տրամադրվող տեսակցությունը պետք է բացառություն լինի և կիրառվեն առանձին դեպքերում, երբ առկա է անվտանգության խնդիր*⁷⁶:

Վերոնշյալ հարցի վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մոխսենն ընդդեմ Ռուսաստանի* գործով վճռում: Ըստ տվյալ գործի փաստական հանգամանքների՝ գանգատաբերը տեսակցությունների ընթացքում ազգականներից առանձնացված է եղել ապակե միջնորմով և նրանց հետ հաղորդակցվել ներքին հեռախոսակապով: Տվյալ գործով Եվրոպական դատարանն արձանագրել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտում⁷⁷:

⁷⁶ Տե՛ս <https://rm.coe.int/1680653ec7> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 86:

⁷⁷ Տե՛ս Մոխսենն ընդդեմ Ռուսաստանի գործով 2008 թվականի հոկտեմբերի 9-ի վճիռ, գանգատ թիվ 62936/00, կետեր 80, 257-259:

Դատարանն իր արտահայտած դիրքորոշման մեջ, մասնավորապես, նշել է, որ թեև ապակե միջնորմով տեսակցությունների տրամադրումը կարող է հիմնավորվել անվտանգության նկատառումներով, այնուամենայնիվ, նշված միջոցը չի կարող համարվել անհրաժեշտ՝ անվտանգության հիմնավոր ռիսկի բացակայության դեպքում⁷⁸:

Այսպես, հանրաճանաչ միջազգային չափանիշների համաձայն՝ ազատությունից զրկված ցանկացած անձ ունի արտաքին աշխարհի հետ կապի իրավունք, որն ամրագրված է նաև ներպետական օրենսդրությամբ («Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ): **Ազատությունից զրկված ցանկացած անձը պետք է հնարավորություն ունենա օգտվել արտաքին աշխարհի հետ կապի իրավունքից՝ անկախ ազատությունից զրկման տևողությունից, քանի դեռ չկա արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի իրացման սահմանափակման ողջամիտ և հիմնավորված անհրաժեշտություն:**

Հարկ է նշել նաև, որ համաձայն ՀՀ ոստիկանության գրավոր պարզաբանման՝ ՀՀ ոստիկանության շտաբում մշակվում է ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 574-Ն որոշման լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագիծը, որտեղ, ի թիվս այլնի, կներառվեն նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացրած առաջարկությունները, այդ թվում՝ տեսակցության սենյակների թափանցիկ միջնորմերն ապամոնտաժելու վերաբերյալ:

Այցերի ընթացքում ուսումնասիրվել են նաև ՁՊՎ-ների տեսակցությունների սենյակների ընդհանուր պայմանները: Արթիկի ՁՊՎ-ի տեսակցության սենյակում բացակայել է թե՛ բնական, թե՛ արհեստական լուսավորությունը: Սենյակում լուսավորությունն ապահովելու միակ հնարավորությունը տեսակցության սենյակի դուռը բաց պահելն է:

Բացի այդ, տեսակցության սենյակի երկու մասերում էլ պատից դուրս են գալիս էլեկտրական մալուխներ, որոնց ծայրերը բաց են եղել, առանց էլեկտրամեկուսացման:

Այցի ընթացքում արձանագրվել է, որ Նոյեմբերյանի, Թումանյանի, Իջևանի, Ճամբարակի, Վարդենիսի, Դիլիջանի, Մարտունու ՁՊՎ-ներում քննչական գործողությունների և բժշկական օգնության կամ քննչական գործողությունների և տեսակցությունների տրամադրման համար նախատեսված է մեկ սենյակ:

Տվյալ դեպքում հնարավոր չէ ապահովել միաժամանակ ազատությունից զրկված անձի տեսակցության իրավունքի իրացումն ու անհրաժեշտ քննչական գործողության կազմակերպումը:

⁷⁸Տե՛ս Սիորապյան ընդդեմ Մոլդովայի գործով, 2007 թվականի հունիսի 19-ի վճիռ, գանգատ թիվ 12066/02, կետ 117:

Արտաքին աշխարհի հետ կապի ապահովման կարևոր երաշխիքներից է նաև հեռախոսակապի ապահովումը: Հեռախոսակապին առնչվող խնդիրները հիմնականում կապված են ՁՊՎ-ներում տաքսոֆոնների անսարքության կամ դրանցից օգտվելու հրահանգների բացակայության հետ:

Սիսիանի ՁՊՎ-ում այցի պահին տաքսոֆոնը չի աշխատել, որը, ըստ ներկայացված պատճառաբանության, պայմանավորված է վերանորոգման աշխատանքներով:

Մի շարք ՁՊՎ-ներում (Նոյեմբերյանի, Իջևանի, Տավուշի ՁՊՎ-ներ) այցի պահին տաքսոֆոնը չի աշխատել: Տաքսոֆոնն աշխատելու դեպքում, սակայն, հնարավոր չի եղել զանգահարել Մարդու իրավունքների պաշտպանի 116 «թեժ գծի» հեռախոսահամարին (Արթևիկի և Մուշի ՁՊՎ-ներ): Որոշ ՁՊՎ-ներում դա հնարավոր է եղել միայն որոշակի կոճակներ սեղմելուց հետո, օրինակ՝ Վարդենիսի ՁՊՎ-ում տաքսոֆոնից հնարավոր է եղել զանգահարել Մարդու իրավունքների պաշտպանի 116 «թեժ գծի» հեռախոսահամարին միայն վերոնշյալ թվերը հավաքելուց և վանդականիշ (#) կոճակը սեղմելուց հետո: Իսկ, օրինակ, Մուշի ՁՊՎ-ի տաքսոֆոնից, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի «թեժ գծի» հեռախոսահամարին, զանգ կատարելու համար պահանջվել է քարտ: Արթևիկի ՁՊՎ-ում Մարդու իրավունքների պաշտպանի «թեժ գծի» հեռախոսահամարին հնարավոր չի եղել զանգահարել նույնիսկ քարտի միջոցով:

Ստացվում է, որ առկա է տաքսոֆոններից օգտվելու համար որոշակի կոճակներ սեղմելու անհրաժեշտություն, որի կապակցությամբ ՁՊՎ-ներում ուղեցույցներ փակցված չեն եղել:

ՀՀ ոստիկանության գրավոր պարզաբանումների համաձայն՝ Տավուշի մարզային վարչության ենթակա ստորաբաժանումների ՁՊՎ-ների տաքսոֆոնները փոխարինվել են նորերով, իսկ Սևանի բաժնի ՁՊՎ-ի տեսակցության սենյակի հեռախոսը վերանորոգվել է: Դրա հետ մեկտեղ, ՀՀ ոստիկանության շտաբի ղեկավարության կողմից հանձնարարվել է ճշտել Մարդու իրավունքների պաշտպանի «թեժ գծի» հեռախոսահամարին զանգահարելու կարգը և ցուցանակների ձևով փակցնել տաքսոֆոնների մոտ:

Ողջունելի են հեռախոսակապի ապահովման և դրանից օգտվելու ուղղությամբ ՀՀ ոստիկանության կողմից ձեռնարկված քայլերը: Դրանք արձանագրվել են նաև Գորիսի, Կապանի և Մեղրիի ՁՊՎ-ներ կատարված մշտադիտարկման այցերի ընթացքում, որտեղ տաքսոֆոնների վրա փակված են եղել Մարդու իրավունքների պաշտպանի «թեժ գծի» հեռախոսահամարը և զանգահարելու համար պահանջվող հրահանգները:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

✓ փոփոխել ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 574-Ն որոշման 119-րդ կետի պահանջները՝ ապահովելով ազգայությունից զրկված

անձանց տեսակցությունների կազմակերպումն առանց ֆիզիկական շփման հնարավորությունը սահմանափակող ապակե միջնորմի.

✓ ՁՊՎ-ներում առանձնացնել քննչական գործողությունների և բժշկական օգնության կամ քննչական գործողությունների և տեսակցությունների տրամադրման համար նախատեսված պատշաճ պայմաններով սենյակներ:

**ԳԼՈՒԽ 6. ԽՈՇՏԱՆԳՄԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՄ ՊԱՏԺԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՐԳԵԼՔԸ ԵՎ ԴՐԱ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ**

Խոշտանգումների բացարձակ արգելքը ճանաչված է միջազգային հանրաճանաչ մի շարք փաստաթղթերում: Այն ամրագրում է ստացել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի 1984 թվականի կոնվենցիայում, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայում, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում և այլ միջազգային փաստաթղթերում:

Ներպետական օրենսդրությունը նույնպես ամրագրում է խոշտանգումների բացարձակ արգելքը: ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի համաձայն՝ *ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, մարմնական պատիժներն արգելվում են, և ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:*

Խոշտանգման բացարձակ արգելքի և դրա կանխարգելման տեսանկյունից առաջնային է նման արարքների քրեականացումը՝ նախատեսելով հանցանքի ծանրությանը համաչափ պատիժ:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի համաձայն՝ խոշտանգում է հանդիսանում *պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով:*

Խոշտանգումը՝ որպես ծանրացնող հանգամանք է նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածում (դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից ցուցմունք կամ բացատրություն կամ կեղծ եզրակացություն տալուն կամ սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը), իսկ

309-րդ հոդվածում (պաշտոնական լիազորություններն անցնելը) որպես ծանրացնող հանգամանք է նախատեսված բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ կիրառելը:

Նյութական իրավունքին անդրադառնալիս պետք է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքում 309.1-րդ հոդվածը ներառված է պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների գլխում, որտեղ հանցագործությունների մեծ մասին բնորոշ է հատուկ սուբյեկտը՝ պաշտոնատար անձը: Նշված գլխի իմաստով պաշտոնատար անձի հասկացությունը սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն՝ *պաշտոնատար անձինք են՝*

1) *մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք:*

2) *պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:*

Խոշտանգման հատուկ սուբյեկտը նույնպես պաշտոնատար անձն է կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձը: Պետք է նշել, որ խոշտանգման սուբյեկտի տեսանկյունից այս առումով առկա են խնդիրներ: Հարցը կայանում է նրանում, որ ազատությունից զրկման վայրերում անձինք կարող են ենթարկվել խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ դրսևորումների ներպետական օրենսդրության իմաստով պաշտոնատար անձ չհանդիսացող անձի կողմից, ինչը միջազգային հանրաճանաչ փաստաթղթերի տեսանկյունից նույնպես հանդիսանում է խոշտանգում կամ վատ վերաբերմունք:

Այսպես, հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձը կարող է ենթարկվել վատ վերաբերմունքի, օրինակ, սանիտարի կամ բժշկական սպասարկում իրականացնող անձի կողմից, ով չի իրականացնում ո՛չ իշխանության ներկայացուցչի գործառույթներ, ո՛չ կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական գործառույթներ, ուստի չի կարող հանդիսանալ խոշտանգման հանցակազմի սուբյեկտ: Նման դեպքերում արարքը խոշտանգման փոխարեն կորակվի որպես մարդու կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործություն, ինչը խնդրահարույց է: Սա է նաև պատճառը, որ բացակայում է երկրում խոշտանգումների և վատ վերաբերմունքի, ինչպես նաև դրանց կանխարգելման վերաբերյալ ընդհանուր և հստակ վիճակագրական պատկեր ստանալու հնարավորությունը:

Այնինչ միջազգային իրավունքում ինչպես խոշտանգման, այնպես էլ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դրսևորման ձևերը բազմատեսակ կարող են լինել, ՀՀ քրեական օրենսգրքի

տեսանկյունից խոշտանգման օբյեկտիվ կողմը դրսևորվում է ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելով:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել են 2017 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի, 309.1-րդ հոդվածի և 341-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով իրավասու մարմինների կողմից ստացված հաղորդումների, դրանց կապակցությամբ հարուցված քրեական գործերի վերաբերյալ վիճակագրական տվյալները:

Այսպես, ՀՀ հատուկ քննչական ծառայության տրամադրած վիճակագրական տվյալների⁷⁹ համաձայն՝ 2017 թվականի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով քննվել է 51 գործ, որից վարույթը կարճված գործերի թիվը 29 է, վարույթը կասեցված գործերի թիվը՝ 4-ը, իսկ նախաքննությունը շարունակվող գործերն 9-ն են: ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի հատկանիշներով քննվել է 47 գործ, որից 31-ի վարույթը կարճվել է, 3-ի վարույթը կասեցվել է և 6 գործերի նախաքննությունը շարունակվում է: ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 3-րդ հոդվածի հատկանիշներով քննվել է 1 գործ, որի վարույթը կարճվել է:

Նշված հոդվածների հատկանիշներով 2017 թվականի ընթացքում քննված 99 քրեական գործերից 16 քրեական գործ փոխանցվել է 2016 թվականից: Վերոշարադրյալ քրեական գործերից միայն մեկ քրեական գործով է (309.1-րդ հոդվածի հատկանիշներով) մեղադրական եզրակացությունն ուղարկվել դատարան: Պետք է նշել, որ նախորդ տարիների վիճակագրության համեմատ 309.1-րդ հոդվածի հատկանիշներով քննվող գործերի թիվն աճել է (2015 թվականի հունիսի 9-ից մինչև 2017 թվականի փետրվարի 7-ը ՀՀ հատուկ քննչական ծառայությունը ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի հատկանիշներով քննել է 20 գործ⁸⁰), սակայն վարույթը կարճված գործերի քանակի տեսանկյունից պատկերն էական փոփոխության չի ենթարկվել:

Խոշտանգման դեպքերում պետության պոզիտիվ պարտականության ապահովման տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունի խոշտանգման դեպքերի արդյունավետ քննությունը, ինչպիսի պահանջն ամրագրված է միջազգային փաստաթղթերում: Այսպես, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի 1984 թվականի կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ (...) *պետությունն ապահովում է, որպեսզի իր իրավասու մարմիններն անհապաղ և անաչառ քննություն*

⁷⁹ Համաձայն ՀՀ հատուկ քննչական ծառայությունից ստացված տեղեկության՝ 14.03.2018թ. դրությամբ:

⁸⁰ Համաձայն ՀՀ հատուկ քննչական ծառայությունից ստացված տեղեկության՝ 15.02.2017թ. դրությամբ:

անցկացնեն, երբ առկա է բավարար հիմք ենթադրելու, թե խոշտանգում է կիրառվել իր իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության մեջ բազմիցս նշվել է, որ *Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի տեսանկյունից պետության պոզիտիվ պարտականությունն է խոշտանգման դեպքերի արդյունավետ և մանրակրկիտ քննության իրականացումը*⁸¹: Վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռնարկվող քայլերի արագությունը, անկողմնակալությունը, ապացույցների պատշաճ հավաքումը, ստուգումը, գնահատումն ունեն առանցքային նշանակություն:

Արդյունավետ քննություն իրականացնելու վերաբերյալ սկզբունքներ և չափանիշներ է պարունակում նաև «Ապօրինի մահվան հավանական դեպքերի քննության մասին Մինեսոտայի արձանագրությունը»⁸²: Վերջինս արդյունավետ քննություն իրականացնելու սկզբունքներին է դասում՝ (1) արագությունը, (2) արդյունավետությունը և մանրակրկիտությունը, (3) անկախությունը և անկողմնակալությունը և (4) թափանցիկությունը:

Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ դրսևորումների դեպքերի արդյունավետ քննության կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության պարզաբանումների համաձայն՝ Դատախազության կոլեգիայի 2008 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ ամրագրվել են ՀՀ հատուկ քննչական ծառայության իրավասությանը վերաբերող նյութերը և քրեական գործերը, ենթակայության հիմքը պարզելուց անմիջապես հետո, դատախազի ուղեկցական գրությամբ ՀՀ գլխավոր դատախազին ուղարկելու և ուղարկված նյութերը և քրեական գործին վերաբերող մյուս գրագրություններն անմիջականորեն ՀՀ հատուկ քննչական ծառայություն ուղարկելու պահանջներ:

Նշվել է նաև, որ խոշտանգման և վատ վերաբերմունքի դրսևորման այլ ձևերի առթիվ քննված քրեական գործերով նախաքննության վիճակը քննարկվել է ՀՀ դատախազության կոլեգիայի 2017 թվականի հունիսի 23-ի նիստում: Նիստին ՀՀ գլխավոր դատախազի հրավերով մասնակցել են նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման ստորաբաժանման ներկայացուցիչներ:

Տեղի ունեցած քննարկման արդյունքում որոշվել է, որ խոշտանգման ենթադրյալ հանցագործությունների դեպքերի առթիվ քրեական գործերով նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս ապահովել, որպեսզի՝

- քրեական գործ հարուցելու հետ միաժամանակ կամ դրանից անմիջապես հետո ենթադրյալ խոշտանգման ենթարկված անձինք ճանաչվեն տուժող և

⁸¹ Տե՛ս Ասսենովն և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 28957/95, կետ 117, Ակտյն ընդդեմ Թուրքիայի գործով 1996 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 21987/93, կետ 98:

⁸² Տե՛ս <http://www.ohchr.org/Documents/Publications/MinnesotaProtocol.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ:

մանրակրկիտ հարցաքննվեն վատ վերաբերմունքի մասին իրենց պնդումների առնչությամբ,

- պատշաճ հավաքվեն, հետազոտվեն և գնահատվեն տուժողի վերաբերյալ բժշկական փաստաթղթերը, ինչպես նաև հարցաքննվեն այդ փաստաթղթերը կազմած անձինք,

- խոշտանգման դեպքի առթիվ քննված քրեական գործով արդարացնող հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական գործով վարույթը կարճելու և(կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներում մանրամասն գնահատական տրվի վատ վերաբերմունքի մասին հաղորդած անձանց հայտնած բոլոր հանգամանքներին, և այլն:

«Վախճանի դատախազության կողմից տրամադրված տեղեկության համաձայն՝ մի շարք այլ հարցերի հետ միասին որոշվել է անկախ մարմնի կողմից քննությունն իրականացնելու չափանիշը խստագույնս պահպանելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ապահովել ձերբակալված կամ կալանավորված անձանց մոտ մարմնական վնասվածքներ հայտնաբերելու վերաբերյալ իրազեկումների հիման վրա նախապատրաստված նյութերն անհապաղ «հատուկ քննչական ծառայություն ուղարկելու հետևյալ ուղենիշները՝

- երբ վարույթն իրականացնող մարմինը մարմնական վնասվածքների վերաբերյալ իրազեկման ուսումնասիրությամբ պարզում է, որ ձերբակալված կամ կալանավորված անձը վնասվածքները ստանալու հանգամանքների շուրջ հայտարարել է այդպիսիք խոշտանգման արդյունքում պատճառվելու մասին, անհապաղ նշանակել դատաբժշկական փորձաքննություն և անմիջապես նախապատրաստված նյութերը «դատախազության համապատասխան ստորաբաժանման ղեկավարի ուղեկցական գրությամբ ուղարկել «Վախճանի դատախազին՝ «հատուկ քննչական ծառայություն ուղարկելու հարցը քննարկելու համար,

- երբ իրազեկման առթիվ նյութեր նախապատրաստելու ընթացքում պարզվում է, որ ձերբակալված կամ կալանավորված անձի մարմնական վնասվածքներն ակնհայտ չեն համապատասխանում այն դեպքի հանգամանքներին, որի առթիվ քննվող քրեական գործով անձը ձերբակալվել կամ կալանավորվել է, իսկ վերջինս վնասվածքների առաջացման հանգամանքների վերաբերյալ բերում է անարժանահավատ և անհեթեթ պատճառաբանություններ, նախապատրաստված նյութերը նույն ընթացակարգով՝ «դատախազության համապատասխան ստորաբաժանման ղեկավարի ուղեկցական գրությամբ ուղարկել «Վախճանի դատախազին՝ «հատուկ քննչական ծառայություն ուղարկելու հարցը քննարկելու միջնորդությամբ:

«Վախճանի դատախազության կողմից ձեռնարկված այս քայլերը համարելով դրական՝ հարկ է նշել, որ խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ դեպքերի

արդյունավետ քննության իրականացումը չափազանց կարևոր է ոչ միայն մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու և սոցիալական արդարությունը վերականգնելու տեսանկյունից, այլև խոշտանգման հետագա դեպքերը կանխարգելելու տեսանկյունից: Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ դրսևորումների արդյունավետ, պատշաճ և հետևողական քննություն չիրականացնելը և կատարված արարքի համար անպատժելիությունը կարող է ավելացնել խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ դրսևորումների ռիսկը և նպաստել նման դեպքերի թվի աճին: Ուստի, իրավասու մարմինները խոշտանգման յուրաքանչյուր դեպքի քննությունը պետք է իրականացնեն պատշաճ ջանասիրությամբ՝ ուղղորդվելով միջազգային հանրաճանաչ չափանիշներով:

Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի տեսանկյունից պետության պոզիտիվ պարտականություններին է դասվում նաև խոշտանգումից տուժած անձանց փոխհատուցումը: Փոխհատուցմանն անդրադառնում է նաև «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի 1984 թվականի կոնվենցիան, որի 14-րդ հոդվածի համաձայն՝ *յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավական համակարգում պետք է ապահովի խոշտանգումներից տուժած անձի արդարացի և համարժեք փոխհատուցման իրավունքը:*

Այս կապակցությամբ պետք է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը 2016 թվականին լրացվել է 1087.3-րդ հոդվածով, որով կարգավորվում են խոշտանգումից տուժած անձանց փոխհատուցման հարցերը: Այսպես, ՀՀ քաղաքացիական նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *խոշտանգումից տուժած անձանց տրամադրվող փոխհատուցումը ներառում է այդ անձանց կրած նյութական, ոչ նյութական վնասների հատուցումը (compensation) և ռեաբիլիտացիայի իրավունքը:* Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *խոշտանգումից տուժած անձի ռեաբիլիտացիայի իրավունքը ներառում է բժշկական օգնության և սպասարկման դիմաց հատուցում սրանալու, ինչպես նաև անվճար հոգեբանական և անվճար իրավաբանական ծառայություններից օգտվելու իրավունքը:* Հոգեբանական ծառայությունները տրամադրվում են խոշտանգման մասին ենթադրյալ տուժողի կողմից հայտարարություն ներկայացվելուց հետո ողջամիտ ժամկետում՝ հաշվի առնելով տուժողի իրավաչափ շահերը: Հոգեբանական ծառայությունները մատուցվում են ավանդական և այլընտրանքային միջամտության եղանակներով՝ հաշվի առնելով տուժողի անհատական կարիքները:

ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1367-Ն որոշմամբ⁸³ սահմանվել են խոշտանգումից տուժած անձանց հոգեբանական ծառայություններից

⁸³ ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 26-ի «Խոշտանգումից տուժած անձանց հոգեբանական ծառայություններից օգտվելու կարգը և պայմանները սահմանելու մասին» թիվ 1367-Ն որոշում:

օգտվելու կարգը և պայմանները: Նշված որոշման հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ *խոշտանգումից տուժած անձանց հոգեբանական ծառայություններ տրամադրում է հոգեբանական ծառայություններ մատուցող մասնագիտական կենտրոնը, որը պետք է ունենա առնվազն 3 որակավորված հոգեբան մասնագետ և աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ, իսկ հոգեբանական ծառայությունների մատուցման նպատակով կենտրոնի հետ պայմանագիր կնքում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը:*

Նշված որոշումը, սակայն, չի հստակեցնում թե ինչպիսի հոգեբանական օգնություն է տրամադրելու կենտրոնը, ինչ չափորոշիչներով և սկզբունքներով է ուղղորդվելու, որ մարմնի կողմից և ինչպես է իրականացվելու կենտրոնի պատշաճ գործունեության նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև մի շարք այլ հարցեր: Մանրամասն կարգավորումների բացակայությամբ պայմանավորված դժվար է հստակ պատկերացում կազմել, թե նշված կենտրոնն ինչպես է կազմակերպելու խոշտանգումից տուժած անձանց արդյունավետ հոգեբանական օգնության տրամադրումը:

Խոշտանգման դեպքերի արդյունավետ քննությունն, ինչպես նաև խոշտանգումներից տուժած անձանց փոխհատուցման պատշաճ կազմակերպումը կարևոր նշանակություն ունեն խոշտանգման բացարձակ արգելքի և անձանց խոշտանգումներից պաշտպանելու տեսանկյունից: Ուստի, պետության կողմից դրանց ապահովումը կնպաստի երկրում խոշտանգումների կանխարգելմանը և սոցիալական արդարության վերականգմանը:

Հարկ է նաև նշել, որ խոշտանգման բացարձակ արգելքի տեսանկյունից անթույլատրելի է խոշտանգում կատարած անձանց քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու, համաներման կամ ներման հետևանքով:

«Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասով 309-րդ հոդվածի 2-րդ մասի, 309.1-րդ հոդվածի, 341-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համար վաղեմության ժամկետներ չկիրառելու պայման նախատեսված չէ:

Այսպես, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ բոլոր այն դեպքերում, երբ պետության ներկայացուցիչը դատապարտվել է խոշտանգման կամ վատ վերաբերմունքի համար, «արդյունավետ միջոցի» նպատակների իրագործման տեսանկյունից չափազանց կարևոր է, որ քրեական վարույթ **իրականացնելն ու անձին պարտի ենթարկելը սահմանափակված չլինեն վաղեմության ժամկետներով, ինչպես նաև անթույլատրելի է այդ անձանց նկատմամբ համաներման կամ ներման կիրառումը**⁸⁴:

⁸⁴ Տե՛ս Աբդուլսամետ Յամանն ընդդեմ Թուրքիայի գործով 2004 թվականի նոյեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 32446/96, կետ 55:

Հարցի հետ կապված ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն 2017 թվականի հունվարի 26-ի Հայաստանի վերաբերյալ 4-րդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումներում կոչ է արել բացառել *խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դրսևորման դեպքերում հանցանք կատարած անձանց վաղեմության ժամկետն անցնելու, համաներման կամ ներման հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու իրավական հնարավորությունը:*

Պետք է նշել, որ «Ներման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարծիքին: Նախագծի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմի կողմից այլ առաջարկությունների հետ միասին ներկայացվել են խոշտանգման համար դատապարտված անձանց նկատմամբ ներում շնորհելուն վերաբերող միջազգային իրավական վերոշարադրյալ մոտեցումները: Արդյունքում, 2017 թվական մարտի 7-ին ընդունվել է «Ներման մասին» ՀՀ օրենքը, որի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *ներում չի շնորհվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման համար դատապարտված անձին:*

Խոշտանգման բացարձակ արգելքի տեսանկյունից անընդունելի է մեղավոր անձանց քրեական պատասխանատվությունից ազատումը՝ ինչպես հայեցողական լիազորությունների կիրառման, այնպես էլ արարքը կատարելուց հետո որոշակի ժամանակահատված անցնելու հետևանքով: Դա չի բխում ինչպես միջազգային հանրաճանաչ չափանիշներից, այնպես էլ խոշտանգման դեմ պայքարի և դրա կանխարգելման տեսանկյունից:

Ուստի, անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ ՀՀ քրեական օրենսգրքում՝ ամրագրելով խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևեր կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ, ինչպես նաև համաներում կիրառելու արգելք:

ԳԼՈՒԽ 7. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ազատությունից զրկման վայրեր կատարված մշտադիտարկման այցերի, ինչպես նաև անհատական բողոքների քննարկման ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից վեր հանված օրենսդրական կարգավորման խնդիրները հիմնականում հանգում են հետևյալին.

7.1. Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համակարգը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2016 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցում անդրադարձ է կատարվել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի գործնական կիրառության ընթացքում հանդիպող հիմնական խնդիրներին, առկա օրենսդրական բացերին և կարգավորման թերություններին՝ ընդգծելով սկզբունքային փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտության մասին⁸⁵:

Նշված զեկույցում արձանագրվել է, որ առկա չեն պայմանական վաղաժամկետ ազատման մատչելի և կանխատեսելի ընթացակարգեր և չափանիշներ, որոնք պատշաճ կերպով կձանուցեն դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի (այսուհետև՝ Անկախ հանձնաժողով) նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին, հնարավորություն կտան անձին այդ կապակցությամբ ստանալ իրավաբանական օգնություն, ծանոթանալ իր վերաբերյալ Անկախ հանձնաժողովի նյութերին, անվճար ստանալ դրանց պատճենները, հայտնել բացարկներ, դատական կարգով բողոքարկել վերջինիս որոշումները և այլն:

2017 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից քայլեր ձեռնարկվեցին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի օրենսդրական կատարելագործման ուղղությամբ:

Մասնավորապես, նախկին՝ Քրեակատարողական հիմնարկի վարչակազմ, Անկախ հանձնաժողով, դատարան եռաստիճան համակարգից անցում կատարվեց Անկախ հանձնաժողով, դատարան երկաստիճան համակարգին: Նախատեսվեց պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի և անկախ հանձնաժողովների գործառույթների

⁸⁵ Տե՛ս

<http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/107efea7ef699b67309a61ffdf8d0f1e.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջեր 89-90:

տարանջատման մեխանիզմ: Սահմանվեցին իրական չափանիշներ, որոնք պետք է հաշվի առնվեն դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման ընթացքում: Ամրագրվեցին դատապարտյալի իրավունքներ, որոնք ուղղված են անձին վերաբերող որոշումների կայացմանը վերջինիս մասնակցությունն ապահովելուն:

Այնուամենայնիվ, չնայած նշված փոփոխություններն՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համակարգը գործնականում շարունակվում է գործել թերություններով, ինչն էլ բացասաբար է անդրադառնում նաև ազատությունից զրկվածների իրավունքների պաշտպանության վրա: Գործող համակարգի թերությունների, միասնական մոտեցումների բացակայության վեր հանման հարցում կարևոր է եղել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի ուժով Անկախ հանձնաժողովի կազմում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների ընդգրկվածությունը:

Դատապարտյալների պայմանական վաղաժամկետ ազատման այս համակարգի արդյունավետությունը գնահատելու տեսանկյունից կարևոր է վերաբերելի վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը: Այդպիսի տվյալների ուսումնասիրման կարևորությունը մատնանշվել է նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003 թվականի սեպտեմբերի 24-ի Պայմանական ազատման վերաբերյալ հանձնարարականի 43-րդ կետով, որում սահմանվում է հետևյալը. *«Որպեսզի պատկերացում կազմվի գործող պայմանական ազատման համակարգի նպատակահարմարության և հետագա զարգացման վերաբերյալ, անհրաժեշտ է իրականացնել գնահատում և կազմել վիճակագրություն, որը կարտացոլի անհրաժեշտ տեղեկություն այս համակարգերի գործունեության և պայմանական ազատման հիմնական նպատակների իրականացման տեսանկյունից դրանց արդյունավետության վերաբերյալ:»*⁸⁶:

Հետևաբար, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համակարգի ուսումնասիրությունն իրականացնելիս վերլուծվել են նաև համապատասխան վիճակագրական տվյալները⁸⁷: Զեկույցի մշակման շրջանակներում դիտարկվել է 2017 թվականի հուլիսի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի՝ քննարկվող համակարգի գործունեությանն առնչվող վիճակագրությունը: Մասնավորապես, ուսումնասիրվել են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ

⁸⁶ Տե՛ս [https://pjp-eu.coe.int/documents/3983922/6970334/CMRec+\(2003\)+22+on+conditional+release.pdf/f8708832-8086-4374-8537-63034a45cb67](https://pjp-eu.coe.int/documents/3983922/6970334/CMRec+(2003)+22+on+conditional+release.pdf/f8708832-8086-4374-8537-63034a45cb67) կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 43:


⁸⁷ Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության կողմից ստացված տեղեկության:

Անկախ հանձնաժողովի դրական ու բացասական եզրակացությունների թվերը, ինչպես նաև պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինվելու դեպքերի քանակը:

Քննարկման են առնվել նաև 2017 թվականի հուլիսի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի՝ Անկախ հանձնաժողովի եզրակացությունների և դատարանի որոշումների վիճակագրական տվյալները:


Ուսումնասիրությունը վկայում է, որ Անկախ հանձնաժողովի բոլոր դրական եզրակացությունները դատապարտյալների կողմից ներկայացվել են դատարան, իսկ դրանց պայմաններում դատարանի կողմից կայացված՝ անձանց պատժի կրումից ազատելու մասին որոշումները կազմում են ընդհանուր թվի 62%-ը: Միևնույն ժամանակ, Անկախ հանձնաժողովի՝ դատապարտյալների կողմից դատարան ներկայացված բացասական եզրակացությունների պայմաններում դատարանի՝ մերժելու մասին որոշումները կազմում են գործերի 57%-ը:

Ստորև ներկայացվում են 2017 թվականի հուլիսի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Անկախ հանձնաժողովի կողմից տրված դրական և բացասական եզրակացությունների պայմաններում, դատարանի որոշումների քանակի վերաբերյալ վիճակագրական տվյալները՝



Վիճակագրական տվյալներ 2017 թվականի հունիսի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Անկախ հանձնաժողովի դրական եզրակացությունների պայմաններում դատարանի կայացրած որոշումների վերաբերյալ

- Դատարանի դրական որոշումներ
- Դատարանի բացասական որոշումներ
- Դատական քննության փուլում գտնվող



Ընդհանուր՝ 166

Հարկ է նկատել, որ թեև կատարված փոփոխությունների արդյունքում խնդրո առարկա համակարգը կատարելագործվել է, այնուամենայնիվ նոր իրավակարգավորումների պայմաններում քննարկվող ինստիտուտի գործնական կիրառության ընթացքում առաջ են եկել մի շարք նոր խնդիրներ, որոնք համապատասխան օրենսդրական լուծումներ են պահանջում: Մասնավորապես, դրանք հանգում են հետևյալին.

«Ը քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատարանի կողմից **անկախ հանձնաժողովի եզրակացությունը դատարան ներկայացնելու համաձայնություն չտալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը** տվյալ դատարանի կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժապետակով փոխարինելու հարցը ներկայացնում է անկախ հանձնաժողովի կողմից եզրակացություն տալուց հետո՝ **երեք ամիս անց** (...):»

Դատարանի կողմից պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժապետակով փոխարինելը **մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում** պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը տվյալ դատարանի կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժապետակով փոխարինելու հարցն անկախ հանձնաժողով է ներկայացնում Հայաստանի Հանրապետության քրեական

դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը լրանալուց 45 օր առաջ (...)»:

Նշված կարգավորումներից բխում է, որ եթե դատապարտյալը չի օգտվում Անկախ հանձնաժողովի եզրակացությունը դատարան ներկայացնելու իր իրավունքից, ապա նա պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու է ներկայացվում 3 ամիս անց, մինչդեռ եթե եզրակացությունը ներկայացնում է դատարան և ստանում է մերժման վերաբերյալ որոշում, ապա՝ 6 ամիս անց:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դատապարտյալները, ովքեր ստացել են Անկախ հանձնաժողովի դրական եզրակացությունը, բոլոր դեպքերում այն ներկայացնում են դատարան, քանի որ դա կարող է դրական ազդեցություն ունենալ դատարանի կողմից կայացվող որոշման վրա: Մինչդեռ, հակառակ պարագայում անձը, կաշկանդված լինելով Անկախ հանձնաժողովի բացասական դիրքորոշմամբ, հաճախ հրաժարվում է պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան ներկայացնելուց: Դա պայմանավորված է նրանով, որ Անկախ հանձնաժողովի բացասական եզրակացության պայմաններում դատարանի կողմից մերժվելու դեպքում պայմանական վաղաժամկետ ազատման հարցը կարող է քննարկվել միայն 6 ամիս անց:

Վերոշարադրյալից ակնհայտ է, որ Անկախ հանձնաժողովի եզրակացությունը կարող է արտաքին ներգործություն ունենալ՝ նպաստելով դատապարտյալի կողմից այն դատարան չներկայացնելուն, և դա այն պարագայում, երբ Անկախ հանձնաժողովի կողմից ընդունվող եզրակացությունները չեն պարունակում որևէ հիմնավորում կամ պատճառաբանություն, որը կարտացոլի դրա կայացման հիմքերը և դատապարտյալի համար կապահովի դատարանում պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու իր հարցը ներկայացնելիս հնարավոր կանխատեսելի զարգացում:

Այսպես՝ «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգը սահմանելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի (այսուհետ՝ Նախագահի հրամանագիր) 16-րդ կետի համաձայն՝ «Հանձնաժողովի նիստն սկսվելուց հետո նիստին մասնակցող հանձնաժողովի անդամներին բաժանվում է մեկական քվեաթերթիկ, որում, ըստ օրակարգային հարցերի հերթականության, ընդգրկվում են դատապարտյալների անուն-ազգանունները: Քվեաթերթիկում յուրաքանչյուր դատապարտյալի անուն-ազգանունից հետո նշվում են «Կողմ եմ դրական եզրակացությանը» և «Դեմ եմ դրական եզրակացությանը» բառերը՝ նշման համար նախատեսված դատարկ

քառանկյուններում: Քվեաթերթիկները ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից»: Վերոնշյալ նորմից հետևում է, որ այն Անկախ հանձնաժողովի կողմից կայացվող եզրակացությունը հիմնավորելու կամ պատճառաբանելու որևէ պահանջ չի պարունակում. Անկախ հանձնաժողովի անդամները սահմանափակվում են միայն վանդակներում համապատասխան նշում կատարելով:

Մինչդեռ, Անկախ հանձնաժողովի դիրքորոշման հիմնավորվածությունը չափազանց կարևոր է մի քանի առումներով: Նախ՝ այն դատապարտյալի համար կապահովի Անկախ հանձնաժողովի եզրակացությունների կանխատեսելիությունը, քանի որ դրա հիմքում դրված փաստարկների շնորհիվ վերջինիս համար ակնհայտ կլինեն ի օգուտ կամ ի վնաս իրեն եզրակացություն կայացնելու հիմնական պատճառները, ինչպես նաև նրա համար հետագա վերասոցիալականացման ուղեցույց կհանդիսանան: Երկրորդ՝ հիմնավորումների առկայությունն օգտակար կլինի նաև հենց Անկախ հանձնաժողովի համար, քանի որ հետագայում դատապարտյալի՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը կրկին քննարկելու պարագայում, ուսումնասիրելով կոնկրետ դատապարտյալի անձնական գործը, ներառյալ՝ նախորդ եզրակացության հիմնավորումը, Անկախ հանձնաժողովի անդամների համար ակնհայտ կլինի անձի վերասոցիալականացման ընթացքը, ինչը կնպաստի առավել հիմնավոր եզրակացություն կայացնելուն:

Հետևաբար, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ Անկախ հանձնաժողովի եզրակացությունների հիմնավորվածությունը չափազանց կարևոր է ինչպես դատապարտյալի հետագա վերասոցիալականացումն ապահովելու, այնպես էլ հենց Անկախ հանձնաժողովի գործունեության արդյունավետության տեսանկյունից:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերի վերաբերյալ որոշումների հիմնավորվածությունը կարևորվում է նաև միջազգային փաստաթղթերում: Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003 թվականի սեպտեմբերի 24-ի Պայմանական ազատման վերաբերյալ հանձնարարականի 18-րդ կետի համաձայն՝ «Այն չափանիշները, որոնց դատապարտյալը պետք է բավարարի, որպեսզի պայմանական վաղաժամկետ ազատվի, պետք է լինեն հստակ և բացահայտ:»⁸⁸: Նույն հանձնարարականի 32-րդ կետի գ) և դ) ենթակետերով սահմանվում է, որ *որոշումն ընդունող մարմինը պետք է*

⁸⁸ Տե՛ս [https://pjp-eu.coe.int/documents/3983922/6970334/CMRec+\(2003\)+22+on+conditional+release.pdf/f8708832-8086-4374-8537-63034a45cb67](https://pjp-eu.coe.int/documents/3983922/6970334/CMRec+(2003)+22+on+conditional+release.pdf/f8708832-8086-4374-8537-63034a45cb67) կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 18:

մանրամասն քննարկի յուրաքանչյուր հիմք, ներառյալ դատապարտյալների կողմից իր օգտին ներկայացված դիրքորոշումը: Որոշումները պետք է արտացոլեն դրանք կայացնելու պատճառները և պետք է ծանուցվեն գրավոր եղանակով⁸⁹:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (76) 2 բանաձև 10-րդ կետով առաջարկվում է, որ *անդամ պետությունների իշխանություններն օրենքով սահմանված ժամկետներում դատապարտյալներին տրամադրեն պայմանական ազատում անմիջապես այն բանից հետո, երբ նկատվում են բարենպաստ կանխարեւոյուններ*⁹⁰:

Մինչույն ժամանակ, կայացվող եզրակացության հիմնավորվածությունը թույլ կտա Անկախ հանձնաժողովի կողմից առավել բովանդակային փաստաթուղթ ներկայացնել դատարան: Պետք է նկատել, որ Անկախ հանձնաժողովները չեն կարող ինքնանպատակ գործել: Մասնագիտացված Անկախ հանձնաժողովի հիմնական գործառույթը պետք է լինի դատարանին մասնագիտական եզրակացության տրամադրումը, որը կարող է մեծապես նպաստել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասնավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցի վերաբերյալ օբյեկտիվ դատական ակտ կայացնելուն:

Եզրակացությունը պատճառաբանելու և հիմնավորելու օրենսդրական պահանջի բացակայության պայմաններում այն դառնում է ձևական և շատ հաճախ համապատասխան որոշումը կայացնելու հարցում դատարանի համար որևէ նշանակություն չի ունենում: Ավելին, առավել մտահոգիչ է ներկայացված վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքներն առ այն, որ դատարանի կողմից կայացված պատիժը կրելուց ազատելու վերաբերյալ որոշումների թիվն ավելի մեծ է Անկախ հանձնաժողովի բացասական, քան դրական եզրակացությունների դեպքում: Նշվածը մտահոգիչ է Անկախ հանձնաժողովի գործունեության արդյունավետության և դատապարտյալների շրջանում դրա հեղինակության տեսանկյունից, քանի որ դատարանի կողմից մեծամասամբ Անկախ հանձնաժողովի եզրակացությունից տարբերվող որոշում կայացնելու պարագայում դրա նկատմամբ վստահության անկումն անխուսափելի է:

Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ գործող իրավակարգավորումների պայմաններում անհնար է ապահովել Անկախ հանձնաժողովի կողմից կայացվող եզրակացությունների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը: Այսպես, Անկախ հանձնաժողովի անդամները գործում են հասարակական հիմունքներով՝ ունենալով հիմնական զբաղվածություն: Ուստի, նման ծանրաբեռնվածության

⁸⁹ Տե՛ս [https://pjp-eu.coe.int/documents/3983922/6970334/CMRec+\(2003\)+22+on+conditional+release.pdf/f8708832-8086-4374-8537-63034a45cb67](https://pjp-eu.coe.int/documents/3983922/6970334/CMRec+(2003)+22+on+conditional+release.pdf/f8708832-8086-4374-8537-63034a45cb67) կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 32-րդ կետի գ) և դ) ենթակետեր:

⁹⁰ Տե՛ս <https://rm.coe.int/16804f2385> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 10:

պայմաններում անհնար է յուրաքանչյուր դատապարտյալի վերաբերյալ կայացնել հիմնավորված եզրակացություն, հատկապես, երբ առանձին դեպքերում Անկախ հանձնաժողովի նիստին կարող է ներկայացվել ընդհուպ մինչև 80 դատապարտյալի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը:

Կարելի է ենթադրել, որ Անկախ հանձնաժողովի անդամների ծանրաբեռնվածությամբ է պայմանավորված նաև Անկախ հանձնաժողովի եզրակացությունից տարբերվող դիրքորոշում ունենալու դեպքում Անկախ հանձնաժողովի անդամի կողմից հատուկ կարծիք ներկայացնելու դեպքերի սակավությունը: Մասնավորապես, Նախագահի հրամանագրի 24-րդ կետի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.1-ին և 1.2-րդ մասերով կամ 77-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանգամանքներից որևէ մեկի վերաբերյալ **հանձնաժողովի եզրակացությունից տարբերվող դիրքորոշում ունենալու դեպքում հանձնաժողովի անդամը կարող է ներկայացնել հատուկ կարծիք:** Հատուկ կարծիքը ներկայացվում է հանձնաժողովի նիստից հետո՝ երկօրյա ժամկետում»:*

Անկախ հանձնաժողովի անդամների՝ որպես տարբեր ոլորտների մասնագետների ներկայացված հատուկ կարծիքը կոնկրետ դեպքի վերաբերյալ կարող է պարունակել մասնագիտական վերլուծություն և օժանդակել դատարանին քննարկվող հարցի վերաբերյալ հանգելու հետևության:

Հետևաբար, դատապարտյալների հետագա վերասոցիալականացումն ու ուղղումն ապահովելու, ինչպես նաև որոշում կայացնելու համար դատարանին բովանդակային օժանդակություն ցուցաբերելու նպատակով անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել եզրակացությունների հիմնավորված պարտադիր պահանջ:

Խնդրահարույց են նաև Անկախ հանձնաժողովի նիստերի իրավազորությունը և քվեարկության ընթացակարգին առնչվող որոշ հարցեր: Մասնավորապես, Նախագահի հրամանագրի 14-րդ կետի համաձայն՝ *«Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի առնվազն 4 անդամ»:* Նախագահի հրամանագրի 30-րդ կետի համաձայն՝ *«Հանձնաժողովի եզրակացություններն ընդունվում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսից ավելիի ձայներով»:*

Մեջբերված նորմերի վերլուծությունից բխում է, որ թեև պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով Անկախ հանձնաժողովի առնվազն 4 անդամի մասնակցության դեպքում Հանձնաժողովի նիստերը համարվում են **իրավազոր**, այնուամենայնիվ եզրակացությունն ընդունվում է ոչ թե քվեարկությանը

մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, այլ **Անկախ հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի (7 անդամ) առնվազն կեսից ավելիի ձայներով:**

Այլ կերպ, ստացվում է, որ եթե նիստին մասնակցում է Անկախ հանձնաժողովի չորս անդամ, ապա ինչպես դրական, այնպես էլ բացասական եզրակացությունը կհամարվի ընդունված **նիստին ներկա անդամների միայն միաձայն քվեարկության դեպքում:** Հակառակ պարագայում Անկախ հանձնաժողովը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ որևէ եզրակացություն չի կարող կայացնել, իսկ Նախագահի հրամանագիրը նման իրավիճակների դեպքում որևէ լուծում չի նախատեսում:

Ուստի, անհրաժեշտ է հստակեցնել օրենսդրական կարգավորման այս բացը՝ սահմանելով նաև ձայների հավասար բաշխման դեպքում ի օգուտ դատապարտյալի դրական եզրակացություն կայացնելու պահանջ:

Հաջորդ համակարգային խնդիրը վերաբերում է պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցի քննարկմանը: Նախագահի հրամանագրի 7-րդ կետը պարտավորեցնում է Անկախ հանձնաժողովին համապատասխան պայմանների առկայության դեպքում պարտադիր քննարկել ոչ միայն դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, այլ նաև պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը և տալ դրական կամ բացասական եզրակացություն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.1-ին և 1.2-րդ մասերով կամ 77-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանգամանքների վերաբերյալ: Մինչդեռ, գործնականում Անկախ հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվում միայն դատապարտյալին՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը, իսկ նշանակված պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հնարավորությունը քննարկվում է այն բանից հետո, երբ պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ կայացվում է բացասական եզրակացություն: Վերոնշյալը, սակայն, չի բխում առկա իրավակարգավորումների բովանդակությունից և տրամաբանությունից:

Հարկ է նկատել, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելն ու պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելն ըստ էության տարբեր ինստիտուտներ են, որոնց գործադրման հիմքում ընկած հանգամանքները ևս տարբեր են: Հետևաբար, եթե առկա են միաժամանակ անձին թե՛ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, թե՛ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համապատասխան հիմքերը, ապա Անկախ հանձնաժողովը պետք է այս երկու հարցերն էլ քննարկման առարկա դարձնի և համապատասխանաբար տա եզրակացություն դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ առանձին-առանձին:

Այսպիսով, թեև օրենսդրությամբ նախատեսվում է համապատասխան հիմքերի առկայության դեպքում Անկախ հանձնաժողովի կողմից պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, նշանակված պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերի պարտադիր քննության պահանջ, այնուամենայնիվ ոչ հստակ և որոշակի կարգավորումների բացակայությունը քննարկվող ինստիտուտների գործնական կիրառության ընթացքում խնդիրներ է առաջացնում: Ուստի, անհրաժեշտ է նախատեսել համապատասխան լուծումներ, որոնք գործնականում կապահովեն դատապարտյալի՝ ոչ միայն պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, այլ նաև նրա նկատմամբ նշանակված պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերի քննարկումը և դրանց վերաբերյալ համապատասխան եզրակացությունների կայացումը:

Քննարկվող ինստիտուտի գործնական կիրառության ընթացքում շատ հաճախ ստացվում է փակուղային մի իրավիճակ այն դեպքերում, երբ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը մերժելու մասին որոշումը բողոքարկվում է ՀՀ վերաքննիչ կամ ՀՀ վճռաբեկ դատարան, և այդ գործընթացը վեց ամսից երկար է տևում: Տվյալ դեպքում մի կողմից հարց է առաջանում՝ արդյոք վեցամսյա ժամկետը լրանալու դեպքում կարող է պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը զուգահեռ ներկայացվել Անկախ հանձնաժողովին այն պայմաններում, երբ վերաքննիչ կամ վճռաբեկ ատյաններում դեռևս վարույթը շարունակվում է: Մյուս կողմից, եթե դատապարտյալը ստիպված լինի սպասել դատական վարույթների ավարտին, ապա կխախտվեն ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը կրկին Անկախ հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու ժամկետները: Այսպես՝ նշված նորմի համաձայն՝ «(...) *Դատարանի կողմից պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը տվյալ դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցն անկախ հանձնաժողով է ներկայացնում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը լրանալուց 45 օր առաջ, բացառությամբ սույն օրենսգրքի 116-րդ հոդվածով նախատեսված դեպքերի*»:

Հարկ է նկատել, որ այս հարցի վերաբերյալ պրակտիկայում միասնական մոտեցումները բացակայում են, և յուրաքանչյուր դեպքում տարբեր լուծումներ են

տրվում: Ուստի, իրավական որոշակիությունն ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ոլորտին առնչվող ներպետական տարբեր իրավակարգավորումներում խոսվում է ՀՀ արդարադատության նախարարության Պրոբացիայի պետական ծառայության կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ խորհրդատվական զեկույց տրամադրելու մասին:

Մասնավորապես, «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «(...) Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի կամ դատարանի պահանջի հիման վրա փարածքային մարմինը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու վերաբերյալ ներկայացնում է խորհրդատվական զեկույց:»:

ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 5.1-րդ մասի համաձայն՝ «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում **պրոբացիայի պետական ծառայության կողմից դատարանի կամ անկախ հանձնաժողովի պահանջի հիման վրա ներկայացված՝** պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ խորհրդատվական զեկույցը:»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 438-րդ հոդվածի 3.2-րդ մասով նախատեսվում է, որ «Անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայությունից պահանջել խորհրդատվական զեկույց, եթե այն արդեն չի տրամադրվել անկախ հանձնաժողովին:»:

Նախագահի հրամանագրի 8-րդ և 9-րդ կետերովի նախատեսվում է Անկախ հանձնաժողովի կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ խորհրդատվական զեկույց ստանալու նպատակով Պրոբացիոն պետական ծառայությանը դիմելու կարգը:

Վերը շարադրված իրավակարգավորումները վկայում են, որ ինչպես դատարանը, այնպես էլ Անկախ հանձնաժողովը կարող են դիմել Պրոբացիոն ծառայությանը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ խորհրդատվական զեկույց ստանալու նպատակով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Պրոբացիոն պետական ծառայության ռեսուրսների սահմանափակ ծավալը՝ խնդրահարույց է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի

մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերի վերաբերյալ բավարար որակի խորհրդատվական զեկույցներ տրամադրելը:

Ավելին, 2018 թվականի մարտ ամսին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ է ներկայացվել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ոլորտի փոփոխման վերաբերյալ նոր օրենսդրական փաթեթ: Առաջարկվող իրավակարգավորումներ նախատեսում են Պրոբացիոն պետական ծառայության կողմից խորհրդատվական զեկույց ներկայացնելու պարտադիր պահանջ, ինչն ավելի է բարդացնում իրավիճակը, ռեսուրսների սղության տեսանկյունից:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

✓ ***պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ ոլորտում Պրոբացիոն պետական ծառայությանը ներգրավելու դեպքում քայլեր ձեռնարկել նշված ծառայության կարողությունները զարգացնելու ուղղությամբ.***

✓ ***որոշում կայացնելու համար դատարանին բովանդակային օժանդակություն ցուցաբերելու նպատակով օրենսդրորեն սահմանել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու եզրակացությունների հիմնավորված պարտադիր պահանջ.***

✓ ***նախատեսել համապատասխան լուծումներ, որոնք գործնականում կապահովեն դատապարտյալի՝ ոչ միայն պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, այլ նաև նրա նկատմամբ նշանակված պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերի քննարկումը և դրանց վերաբերյալ համապատասխան եզրակացությունների կայացումը:***

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նշված, ինչպես նաև պայմանական վաղաժամկետ ազատման համակարգին առնչվող, սույն զեկույցում արտացոլված մյուս առաջարկությունների իրականացումը կարող է արդիական լինել նաև 2018 թվականի մարտին ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառված նախագծի ընդունման պայմաններում: Ուստի, անհրաժեշտ է հաշվի առնել դրանք նախագծի մշակման փուլում:

7.2. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի գործունեության հետ կապված խնդիրները

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործում է տեղաբաշխման հանձնաժողով (այսուհետ՝ Տեղաբաշխման հանձնաժողով), որը

քննարկում է օրենքով սահմանված կարգով պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելու, հիմնարկի տեսակը փոխելու, մեկ հիմնարկից նույն տեսակի մեկ այլ հիմնարկ տեղափոխելու, ինչպես նաև տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներ կատարելու համար փակ տեսակի ուղղիչ հիմնարկ ուղարկելու կամ կալանավորվածներին պահելու վայրում թողնելու կամ այլ վայր ուղարկելու հարցերը⁹¹:

2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների ուսումնասիրության արդյունքներով վեր են հանվել Տեղաբաշխման հանձնաժողովի գործունեության հետ կապված օրենսդրական և իրավակիրառ մի շարք խնդիրներ: Դրանք հիմնականում վերաբերում են պատժի կրման նպատակով ուղղիչ հիմնարկը որոշելիս կամ փոխելիս անձի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը հաշվի չառնելուն, Տեղաբաշխման հանձնաժողովի կայացրած որոշումների չպատճառաբանվածությանը, ինչպես նաև գործող քրեակատարողական օրենսդրությամբ խնդրի ոչ հստակ կարգավորմանն ու դրանով պայմանավորված՝ Քրեակատարողական օրենսգրքի դրույթների ոչ միասնական կիրառությանը:

Անդրադառնալով ազատությունից զրկված անձի՝ ընտանիքի հետ կապը պահպանելու իրավունքին՝ հարկ է նշել, որ այն ամրագրում է ստացել միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում:

Այսպես, Եվրոպական բանտային կանոնների 17.1-ին կետի համաձայն՝ *ազատությունից զրկված անձինք պետք է հնարավորության սահմաններում տեղաբաշխվեն իրենց տներին (...)* մոտ գտնվող ազատությունից զրկման վայրերում⁹²:

ԽԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում կրկին ընդգծել է, որ *հիմնավորապես սխալ է այն համակարգը, որի համաձայն արտաքին աշխարհի հետ ազատությունից զրկված անձանց կապի սահմանները որոշվում են որպես նշանակված պարտի մի մաս (և ըստ այն ռեժիմի, որով նա կրում է իր պատիժը)*⁹³:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ *անազատության մեջ գտնվող անձանց ընտանեկան կյանքը հարգելու*

⁹¹ Տեղաբաշխման հանձնաժողովի գործունեության իրավական հիմքերն ու կարգն ամրագրված են ՀՀ քրեակատարողական օրենսգրքով, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարի 2012 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի կազմը և գործունեության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի ապրիլի 21-ի թիվ ՔՀ-26-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 34-Ն որոշմամբ:

⁹² Տե՛ս նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի մեկնաբանությունները <http://www.refworld.org.ru/docid/55c36e8b4.html> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջ 7:

⁹³ Տե՛ս <https://rm.coe.int/16806bf46f> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, կետ 107:

իրավունքի անքակտելի մաս է բանտային իշխանությունների կողմից նրանց տրամադրվող օգնությունը՝ մերձավոր ազգականների հետ շփումները պահպանելու հարցում⁹⁴:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Վինթմանն ընդդեմ Ուկրաինայի գործով վճռում նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով կայանավորված անձի անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է «նախատեսված լինի օրենքով»: «Նախատեսված է օրենքով» եզրույթը ոչ միայն ենթադրում է համապատասխանություն ներպետական օրենսդրությանը, այլ նաև օրենքի որակին:

Դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ այն օրենքը, որը շնորհում է հայեցողություն պետական մարմիններին, ինքնին չի հակասում այդ պահանջին: Այնուամենայնիվ, **օրենքը պետք է բավականաչափ հստակությամբ պարզաբանի պետական մարմիններին շնորհված հայեցողության շրջանակը և կիրառման ձևը՝ հաշվի առնելով խնդրո առարկա միջոցի իրավաչափ նպատակը՝ ապահովելու կամայական միջամտությունից անձի պատշաճ պաշտպանությունը:**

Հետաքրքրական է, որ այս գործով Եվրոպական դատարանն անդրադարձել է Ուկրաինայի Քրեակատարողական օրենսգրքի 93-րդ հոդվածին, համաձայն որի՝ ազատազրկվածը, որպես կանոն, պատժի ողջ ժամկետը կրում է մեկ ուղղիչ կամ դաստիարակչական հիմնարկում **իր բնակության վայրի վարչական տարածքում:** Ըստ Դատարանի՝ նշված ընդհանուր կանոնը համապատասխանում է Եվրոպական բանտային կանոններին, ինչպես նաև այն պահանջին, որ իրավասու մարմինները պետք է աջակցեն դատապարտյալներին ընտանիքի հետ կապը պահպանելու հարցում:

Միևնույն ժամանակ, Դատարանը նշել է, որ օրենսդրական կարգավորումը, որը թույլատրում է ազատազրկվածի տեղափոխումը մի քրեակատարողական հիմնարկից մյուսը՝ միայն բացառիկ հանգամանքների դեպքում, երբ անձը չի կարող գտնվել «սկզբնական» հաստատությունում, խնդրահարույց չէ, **եթե դատապարտյալի նախնական տեղաբաշխման ընդհանուր կանոնը պահպանված է**⁹⁵:

Հարցի առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ արտասահմանյան երկրների քրեակատարողական օրենսդրությամբ ընտանիքի հետ դատապարտյալի շփումների ապահովումն ամրագրված է իբրև քրեակատարողական հիմնարկում անձին տեղաբաշխելու հարցը լուծելիս հաշվի առնվող կարևոր գործոն:

Մասնավորապես, Ֆրանսիայի քրեակատարողական օրենսգրքի համաձայն՝ մինչև դատապարտյալի համար քրեակատարողական հիմնարկ ընտրելն իրականացվում է կողմնորոշման վարույթ: Այն ներառում է անձի մասին բոլոր անհրաժեշտ

⁹⁴ Տե՛ս Մենսինան ընդդեմ Իտալիայի (թիվ 2) վճիռը, գանգատ թիվ 25498/94, կետ 61:

⁹⁵ Տե՛ս Վինթմանն ընդդեմ Ուկրաինայի վճիռը, 2014 թվականի հոկտեմբերի 23, գանգատ թիվ 28403/05, կետեր 78, 84-85, 88, 90:

տեղեկությունների հավաքումը՝ անձին տեղաբաշխելու նպատակով: Դրանք են դատապարտյալի անձնական հատկանիշները, վերջինիս անցյալը, ունակությունները, ֆիզիկական և հոգեկան առողջության վիճակը, սոցիալական վերաինտեգրման հնարավորությունները:

Օրենսգիրքն ամրագրում է, որ պատժի կրման ցանկացած պահի դատապարտյալը կարող է պահանջել, որ իր տեղաբաշխումը փոխվի: Պահանջը կարող է պայմանավորված լինել, մասնավորապես, ընտանեկան կապերով, վերաինտեգրման հեռանկարով կամ ազատագրկման ռեժիմի փոփոխության ցանկությամբ⁹⁶:

Իտալիայի «Քրեակատարողական համակարգի կանոնների և ազատությունից զրկման և սահմանափակման միջոցների կիրառման մասին» օրենքի համաձայն՝ դատապարտյալները տեղաբաշխվում են իրենց ընտանիքին մոտ գտնվող Քրեակատարողական հիմնարկում⁹⁷:

Պորտուգալիայի՝ «Ազատությունից զրկելու հետ կապված միջոցների կիրառման վերաբերյալ» որոշում-օրենքի տեղաբաշխման չափանիշներն ամրագրող 11-րդ հոդվածը սահմանում է, որ տարբեր Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալներին տեղաբաշխելիս հաշվի են առնվում սեռը, տարիքը, քրեադատավարական կարգավիճակը, ազատագրկման ժամկետը, ֆիզիկական և հոգեկան առողջությունը, ուղղման առանձնահատուկ մոտեցումների կարիքը, ընտանիքի բնակության վայրը, ինչպես նաև անձի կրթությունն ու աշխատանքը, որոնք կնպաստեն անձի սոցիալական վերաինտեգրմանը⁹⁸:

Անդրադառնալով ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելու և փոխելու, նույն տեսակի ուղղիչ հիմնարկ անձին տեղափոխելու վերաբերյալ ներպետական օրենսդրական կարգավորումներին՝ հարկ է նկատել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 69-րդ հոդվածն ամրագրում է, որ *դատապարտյալը պարտի ամբողջ ժամկետը, որպես կանոն, կրում է մեկ ուղղիչ հիմնարկում*:

Միևնույն ժամանակ, հոդվածը սահմանում է որոշակի բացառություններ՝ նշելով, որ *պարտի հետագա կրելը շարունակելու համար դատապարտյալին մեկ հիմնարկից նույն տեսակի մեկ այլ հիմնարկ տեղափոխել թույլատրվում է նրա հիվանդության, ուղղիչ հիմնարկի վերակազմակերպման կամ լուծարման, դատապարտյալի անձնական անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև տվյալ ուղղիչ հիմնարկում դատապարտյալի հետագա գտնվելուն խոչընդոտող այլ բացառիկ հանգամանքների դեպքերում*:

⁹⁶Տե՛ս <http://prison.eu.org/spip.php?article74> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ:

⁹⁷Տե՛ս http://www.prisonobservatory.org/upload/Italy_Peniten.pdf կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջ 18:

⁹⁸Տե՛ս <http://www.legislationline.org/documents/action/popup/id/4424> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ:

Օրենսգրքի 100-րդ հոդվածի համաձայն՝ պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը որոշում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովը՝ հաշվի առնելով 100-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված առանձնահատկությունները և ուղղիչ հիմնարկում դատապարտյալներին անջատ պահելու՝ քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածի պահանջները:

Օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Տեղաբաշխման հանձնաժողովը պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը փոխում է՝ հաշվի առնելով որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձի դրսևորած վարքագիծը, մեկուսացվածության աստիճանի նպատակահարմարությունը և նույն օրենսգրքի 68-րդ հոդվածի պահանջները:

Քրեակատարողական օրենսդրության մեջքերված կարգավորումների համադրված ուսումնասիրությունից բխում է, որ պատիժը կրելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը որոշվում է հետևյալ չափանիշների միաժամանակյա հաշվառմամբ՝ անձի կատարած հանցագործության ծանրության աստիճանը, նշանակված պատիժը, ռեցիդիվը (բուժական ուղղիչ հիմնարկ տեղափոխելու դեպքում՝ համապատասխան օգնություն կազմակերպելու անհրաժեշտությունը) և դատապարտյալներին անջատ պահելու պահանջները: Օրենսդրական այս չափանիշները կանխորոշում են անձի պատժի կրման մեկուսացվածության աստիճանը՝ բաց, կիսաբաց, կիսափակ, փակ կամ բուժական ուղղիչ հիմնարկ: **Միևնույն ժամանակ, օրենսդրական մակարդակում բացակայում են այն չափանիշները, որոնցով պետք է առաջնորդվի Տեղաբաշխման հանձնաժողովը՝ որոշելու համար, թե ըստ որոշված ուղղիչ հիմնարկի տեսակի՝ դատապարտված անձը կոնկրետ որ քրեակատարողական հիմնարկում է պատիժը կրելու:**

Թերևս, օրենսդրական հստակ կողմնորոշիչների բացակայության պատճառով է, որ Տեղաբաշխման հանձնաժողովի խնդրո առարկա որոշումները կայացվում են ոչ թե դատապարտվածի իրավունքների և ազատությունների, այդ թվում՝ արտաքին աշխարհի հետ կապի, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքների ապահովման պահանջից ելնելով, այլ «նպատակահարմարության» տեսանկյունից:

Ասվածն առավել առարկայական է դառնում հենց Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված այդպիսի բողոքների ուսումնասիրության արդյունքներով:

Մասնավորապես, Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկում անձը հայտնել է, որ պատժի հետագա կրելը շարունակելու համար Տեղաբաշխման հանձնաժողովի որոշմամբ տեղաբաշխվել է «Հրազդան» քրեակատարողական հիմնարկ, սակայն

հաշվի չի առնվել, որ վերջինիս ծնողները հաշվառված և բնակվում են Երևան քաղաքում:

Խնդրի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը տեղեկացրել է, որ անձը Տեղաբաշխման հանձնաժողովի որոշմամբ իր դիմումի հիման վրա «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի փակ տեսակի ուղղիչ հիմնարկից տեղափոխվել է «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի փակ տեսակի ուղղիչ հիմնարկ: Նշվել է, որ Քրեակատարողական վարչության օպերատիվ բաժնում առկա տեղեկատվության համաձայն՝ հետագա պատիժը կրելու համար անձին նպատակահարմար չէ տեղափոխել «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ:

Մեկ այլ դեպքում «Գորիս» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունը պատժի հետագա կրելը շարունակելու համար «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ տեղաբաշխվելու հարցում, քանի որ կինը հաշվառված և բնակվում է Երևան քաղաքում:

Հարցի կապակցությամբ, սակայն, պարզաբանում է ներկայացվել, որ Քրեակատարողական վարչության օպերատիվ բաժնում առկա տեղեկատվության համաձայն՝ հետագա պատիժը կրելու համար նպատակահարմար չէ անձին տեղափոխել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ:

Խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ մասնավոր և ընտանեկան կյանքի իրավունքի հարգումը պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման լուրջ երաշխիք է:

Ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ են պատժի կրման պայմաններին վերաբերող այնպիսի պահանջներ, որոնք բավարար կլինեն, որպեսզի պատժի կրման ընթացքում դատապարտյալը չկորցնի հասարակությունում նախկինում ձեռք բերած վարքի կանոնները և հմտությունները:

Այն պետք է նպաստի դատապարտյալների կենցաղի և աշխատանքի հարցերի կարգավորմանը, ընտանեկան և սոցիալական կապերի ամրապնդմանը:

Մեկ այլ դեպքում Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է ազատությունից զրկված անձի իրավունքների խախտում, երբ ցմահ ազատազրկման դատապարտված անձի խնդրանքը դստեր բնակության վայրին մոտ գտնվող այլ Քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու վերաբերյալ մերժվել է այն պայմաններում, երբ վերջինս պատժի կրման 22 տարիների ընթացքում ընդամենը մեկ անգամ է տեսակցել դստերը վերջինիս հաշմանդամության և հեռաբնակության պատճառով:

Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների ուսումնասիրությունը բավարար հիմքեր է տալիս եզրակացնելու, որ Տեղաբաշխման հանձնաժողովի՝ խնդրո առարկա հարցի կապակցությամբ ձևավորված պրակտիկան

միասնական չէ, ինչը որոշակի առումով պայմանավորված է օրենսդրական հստակ կարգավորումների բացակայությամբ:

Այսպես, դեպքերից մեկով անձը խնդրել է Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն իր ամուսնուն «Գորիս» քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու հարցում: Անձը տեղեկացրել է, որ Տեղաբաշխման հանձնաժողովը որոշում է կայացրել դատապարտված անձին «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու մասին՝ հաշվի չառնելով, որ վերջինիս ընտանիքը բնակվում է այլ քաղաքում, և այդ պայմաններում նրա ընտանիքի անդամները զրկված են լինելու նրան կանոնավոր այցելելու հնարավորությունից: Քրեակատարողական հիմնարկը փոխելու՝ քաղաքացու դիմումը Տեղաբաշխման հանձնաժողովի կողմից մերժվել է այն պատճառաբանությամբ, որ առկա չէ Քրեակատարողական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով՝ ուղղիչ հիմնարկում դատապարտյալի հետագա գտնվելուն խոչընդոտող որևէ բացառիկ հանգամանք:

Ի հակառակ վերը նշված դեպքի՝ Պաշտպանին ներկայացված մեկ այլ բողոքի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը պարզաբանել է, որ Հանձնաժողովի որոշմամբ դատապարտյալը տեղաբաշխվել է ընտանիքի բնակության վայրին մոտ գտնվող Քրեակատարողական հիմնարկ: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ որոշ դեպքերում, այնուամենայնիվ, մերձավոր ազգականների հետ կապի ապահովումը Տեղաբաշխման հանձնաժողովի կողմից դիտարկվել է Քրեակատարողական օրենսգրքի 69-րդ հոդվածի իմաստով որպես բացառիկ հանգամանք:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ անգամ օրենսդրական ուղղակի կարգավորումների բացակայության պայմաններում պետությունն՝ ի դեմս հանրային իշխանության կրողների, կաշկանդված է մարդու հիմնական իրավունքներով ու ազատություններով:

Կոնկրետ դեպքում Տեղաբաշխման հանձնաժողովը՝ որպես քրեակատարողական համակարգի մաս կազմող և պատժի կատարման փուլում կոնկրետ գործառույթներով օժտված պետական մարմին, պետք է առաջնորդվի Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով որպես անմիջականորեն գործող՝ մարդու հիմնական իրավունքների և ազատությունների հարգման պահանջով: Ասվածը նշանակում է, որ ուղղիչ հիմնարկը որոշելու կամ փոփոխելու օրենսդրական որոշակի կարգավորումների բացակայությունը չի կարող արդարացնել Տեղաբաշխման հանձնաժողովի՝ որևէ իրավաչափ շահով չհիմնավորված հայեցողությունն ու «նպատակահարմարությամբ» որոշումների կայացման պրակտիկան:

Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ որոշում է կայացվել այն դեպքում, երբ ցմահ ազատազրկման դատապարտված անձի խնդրանքը՝ իր մերձավոր ազգականների բնակության վայրին մոտ Քրեակատարողական հիմնարկ

տեղափոխելու վերաբերյալ, մերժվել է՝ հիմք ընդունելով Քրեակատարողական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված ընդհանուր կանոնը, այն է՝ պատժի ամբողջ ժամկետը մեկ ուղղիչ հիմնարկում կրելը: Բացի այդ, Տեղաբաշխման հանձնաժողովի կողմից վկայակոչվել է ցմահ ազատազրկման դատապարտված անձանց որոշակի ժամկետով պատիժ կրող դատապարտյալներից անջատ պահելու օրենսդրական կանոնը, ինչպես նաև տվյալ Քրեակատարողական հիմնարկում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պահելու համապատասխան պայմանների և անվտանգության համակարգերի բացակայությունը:

Պաշտպանն արձանագրել է, որ որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալի, արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու, ներառյալ՝ տեսակցություններ ունենալու իրավունքը դասվում է նրանց հիմնարար իրավունքների շարքին և դրանց իրացման համար նախատեսված պայմանները պետք է հնարավորին չափ թույլ տան պահպանել և զարգացնել ընտանեկան հարաբերությունները, իսկ քրեակատարողական համակարգը պարտավոր է աջակցել ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապեր հաստատելու և պահպանելու գործում, այդ թվում՝ ազատությունից զրկված անձանց տեղաբաշխելով իրենց մերձավոր ազգականների բնակության վայրերին առավել մոտ գտնվող Քրեակատարողական հիմնարկներում:

Տեղաբաշխման հանձնաժողովի որոշումների պատճառաբանվածության՝ քրեակատարողական օրենսդրության ուղղակի պահանջի բացակայությունը որևէ կերպ չի կարող պայմանավորել Տեղաբաշխման հանձնաժողովի բացարձակ հայեցողությունն ու բացառել վերջինիս հաշվետվողականությունը: Ի վերջո, Տեղաբաշխման հանձնաժողովը, փաստացի իրականացնելով վարչարարություն, կաշկանդված է հանրային իրավունքի սկզբունքներով:

Սրա հետ կապված, հարկ է նկատել, որ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ *վարչարարությունը բնորոշվում է հանրային իրավունքի բնագավառին առնչվելու հանգամանքով: Դա պետք է լինի վարչական մարմնի հանրային իրավունքի բնագավառում որոշակի հարցի լուծմանն ուղղված գործողություն, իսկ հանրային իրավունքի բնագավառը նշանակում է անձի հարաբերություններ պեղության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող⁹⁹:*

Հետևաբար, ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Տեղաբաշխման հանձնաժողովի որոշումների կայացման գործընթացն ազատությունից զրկված անձի իրավունքների երաշխավորման տեսանկյունից պետք է իրականացվի առնվազն վարչարարության հիմնարար սկզբունքների պահպանմամբ, ինչպիսիք են,

⁹⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/1369/02/09 գործով 2010 թվականի դեկտեմբերի 3-ի որոշումը:

մասնավորապես, հայեցողական լիազորությունների սահմանափակումն ու կամայականության արգելքը, վարչարարության համաչափությունը:

Հետևաբար, անընդունելի է, երբ պատժի ամբողջ ժամկետը մեկ ուղղիչ հիմնարկում կրելու ոչ բացարձակ կանոնը մեխանիկորեն վկայակոչվում է՝ դատապարտյալին մեկ Քրեակատարողական հիմնարկից մեկ այլ Քրեակատարողական հիմնարկ չտեղափոխելը պատճառաբանելու համար, որպիսի խնդիրն ուղղակիորեն բխում է Տեղաբաշխման հանձնաժողովի որոշումների չպատճառաբանված լինելուց:

Միայն Քրեակատարողական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված հիմքերով դատապարտյալին այլ Քրեակատարողական հիմնարկ տեղափոխումն անգամ գործող օրենսդրական կարգավորումների կիրառման փաստարկմամբ չի կարող ընդունելի լինել հետևյալ պատճառաբանությամբ՝

1. Քրեակատարողական օրենսգրքի խնդրո առարկա դրույթն ամրագրում է նույն Քրեակատարողական հիմնարկում նշանակված պատիժը կրելու ընդհանուր կանոնից բացառություններ՝ տվյալ հիմնարկում պատիժը կրելուն խոչընդոտող բացառիկ հանգամանքների մատնանշմամբ: Մինչդեռ, մերձավոր ազգականների հետ կապն ապահովելու համար անձին այլ Քրեակատարողական հիմնարկ տեղափոխելը պետք է դիտարկվի իբրև անձի վերասոցիալականացման անհրաժեշտ նախադրյալ և այս տրամաբանությամբ պետք է կիրառվի իբրև օրինաչափություն:

2. հիմնավոր չէ Տեղաբաշխման հանձնաժողովի այն դիրքորոշումը, որ անձին քրեակատարողական մեկ հիմնարկից մյուս հիմնարկ տեղափոխելու օրենսդրական հիմքերը սահմանափակվում են Քրեակատարողական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով: Բանն այն է, որ օրենսգրքի 110-րդ հոդվածը ևս ամրագրում է դատապարտյալին այլ՝ փակ կամ կիսափակ ուղղիչ հիմնարկ տեղափոխելու հնարավորություն՝ օրինապահ վարքագիծ դրսևորած դատապարտյալին տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ներգրավելու նպատակով:

Ակնհայտ է, որ որոշակի աշխատանքներին դատապարտյալի ներգրավվածության ապահովումը՝ այդ թվում քրեակատարողական մեկ հիմնարկից մյուս հիմնարկ տեղափոխելով, նպատակ ունի նպաստելու վերջինիս օրինապահ վարքագծի դրսևորմանը: Նույն կերպ, պետք է ապահովվի ընտանիքի հետ կապը պահպանելու նպատակով Քրեակատարողական հիմնարկի փոփոխությունը:

Ընդ որում, մերձավոր ազգականների հետ կապը չափազանց կարևոր նշանակություն ունի ոչ միայն ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով և Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի ապահովման, այլև անձին ազատ արձակելուն նախապատրաստելու՝ պետության գործառույթի իրացման տեսանկյունից: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի համաձայն՝ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման հարցը լուծելիս, ի թիվս այլնի,

հաշվի է առնվում նաև ընտանիքի և արտաքին աշխարհի հետ անձի կապը կամ խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը:

Խնդրի՝ օրենսդրական փոփոխությունների ճանապարհով լուծման ուղղությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում նախաձեռնվել է ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխությունների օրենսդրական նախագիծ, որը ներկայացվել է շրջանառության¹⁰⁰: Մասնավորապես, Նախագծի լուծումներով առաջարկվում է Քրեակատարողական օրենսգրքի 69-րդ հոդվածում որպես դատապարտյալին մեկ հիմնարկից նույն տեսակի մեկ այլ հիմնարկ տեղափոխելու հիմք, ի թիվս այլնի, դիտել նաև մերձավոր ազգականների հետ շփումներն ապահովելու նպատակը:

Այդպիսի լուծումը նպատակ ունի ուղղակիորեն ամրագրելու մերձավոր ազգականների հետ շփումն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ անձին մեկ այլ ուղղիչ հիմնարկ տեղափոխելու օրենսդրական հիմք՝ գործնականում դրույթի տարակերպ մեկնաբանությունն ու ընտրողական կիրառությունը բացառելու նպատակով:

Միևնույն ժամանակ, նոր քրեակատարողական օրենսդրության մշակման շրջանակներում փոփոխությունները պետք է իրականացվեն այն հայեցակարգային մոտեցումների ամրագրմամբ, որ պետությունը կրում է Քրեակատարողական հիմնարկ մուտք գործելու պահից անձին ազատ արձակմանը նախապատրաստելու պարտականություն, և ըստ այդմ պատժի կատարման գործընթացը պետք է կազմակերպվի անձի վերասոցիալականացման ու հասարակություն վերադարձին նպաստելու առաջնահերթ խնդիրների իրագործման տեսանկյունից:

Այս առումով, ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապը պահպանելու՝ դատապարտյալի իրավունքը պետք է հաշվի առնվի ոչ միայն պատժի կրման ընթացքում Քրեակատարողական հիմնարկի տեսակը փոփոխելու հարցը լուծելիս, այլև հենց պատժի կրման սկզբնական փուլում: Այս տեսանկյունից, օրենսդրական մակարդակում պետք է ամրագրում ստանան այն չափանիշները, որոնք հիմք կձևառայեն պատիժը կրելու նպատակով կոնկրետ ուղղիչ հիմնարկը որոշելու համար: Խոսքն առավելապես վերաբերում է ոչ թե գործող օրենսգրքով ամրագրված՝ ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելիս հաշվի առնվող ընդհանուր կանոններին, այլ անձնական հանգամանքներին (այդ թվում՝ մերձավոր ազգականների հետ կապը)՝ այդպիսով ապահովելով ազատությունից զրկված անձանց նկատմամբ անհատական մոտեցումը:

Ուստի, անհրաժեշտ է՝

¹⁰⁰ Տե՛ս http://pashtpan.am/images/Naxagic_kapn_artaqin_ashxarhi_het_2.pdf կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ:

✓ գործնականում ապահովել Տեղաբաշխման հանձնաժողովի որոշումների պատճառաբանվածությունը, մասնավորապես՝ ուղղիչ հիմնարկը որոշելու կամ անձին այլ ուղղիչ հիմնարկ տեղափոխելու հարցի վերաբերյալ Տեղաբաշխման հանձնաժողովի որոշումների բովանդակությունը պետք է արտացոլի անձի՝ մերձավոր ազգականների հետ կապի իրավունքի առաջնահերթության քննարկման արդյունքները.

✓ գործնականում ապահովել Քրեակարարողական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի միասնական կիրառությունը՝ բացառելով ցանկացած չարդարացված տարբերակված մոտեցում.

✓ նոր քրեակարարողական օրենսդրության մշակման շրջանակներում ամրագրել այն չափանիշները, որոնք հիմք կծառայեն պատիժը կրելու նպատակով ուղղիչ հիմնարկը որոշելու համար՝ հնարավորինս բավարարելով անձի պահանջմունքներն ու ապահովելով պատժի կատարման անհատականացումը:

7.3. Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննությունների արձանագրության ձևեր և ուղեցույց

Խոշտանգումների բացարձակ արգելքի կապակցությամբ միջազգային հանրությունը մշակել է անձանց խոշտանգումներից պաշտպանելու, դրանք կանխարգելելու և բացահայտելու համար մի շարք չափանիշներ:

Այսպես, խոշտանգման և վատ վերաբերմունքի դեպքերի արդյունավետ քննության կարևոր չափանիշներ է պարունակում «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արդյունավետ քննության մասին» ՄԱԿ-ի 2004 թվականի արձանագրությունը¹⁰¹ (այսուհետ՝ Արձանագրություն): Դրանով նախատեսվում են ուղեցույցներ ենթադրյալ խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի դեպքերի քննության, տուժողների բժշկական զննության և ձեռք բերված տեղեկություններն իրավասու մարմիններին ներկայացնելու համար:

Արձանագրության 104-րդ կետը սահմանում է, որ բժշկական զննությունը պետք է անցկացվի անկախ ենթադրյալ խոշտանգման դեպքից հետո անցած ժամանակահատվածից, սակայն այն անհապաղ անցկացնելը շատ կարևոր է, քանի դեռ չեն վերացել խոշտանգման ակնհայտ նշանները:

¹⁰¹Տե՛ս ՄԱԿ-ի 2004 թվականի արձանագրությունը. Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արդյունավետ քննության իրականացման և փաստաթղթավորման մասին ձեռնարկը <http://www.ohchr.org/Documents/Publications/training8Rev1en.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ:

Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի դրսևորման դեպքերի հետ կապված կարևորվում է բժշկական զննության արդյունքում կազմված արձանագրության դերը, որը կարող է էական նշանակություն ունենալ դրանց բացահայտման համար: Արձանագրության 83-րդ կետի համաձայն՝ բժշկական զննություն իրականացնողը պետք է անհապաղ կազմի հստակ գրավոր արձանագրություն: Այն պետք է ներառի առնվազն հետևյալը.

1. բժշկական զննության ենթարկված անձի հետ հարց ու պատասխանի հանգամանքները (բժշկական զննության ենթարկված անձի անունը, բժշկական զննությանը ներկա գտնվող անձանց անունները և նրանց կապը բժշկական զննության ենթարկված անձի հետ, զննության անցկացման հստակ օրը, ժամը, վայրը և այլն),

2. նախապատմությունը (բժշկական զննության ենթարկված անձի կողմից ներկայացված տեղեկությունները, ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի մեթոդները, ժամանակը, ֆիզիկական և հոգեկան առողջության բոլոր գանգատները),

3. ֆիզիկական և հոգեբանական զննությունը (կլինիկական հետազոտության արդյունքում հայտնաբերված ֆիզիկական և հոգեբանական ախտանիշների, այդ թվում՝ ախտորոշիչ հետազոտությունների մասին գրառումը և հնարավորության դեպքում՝ բոլոր վնասվածքների գունավոր լուսանկարները),

4. եզրակացությունը (ֆիզիկական և հոգեբանական ախտանիշների ու խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հնարավոր դեպքերի միջև հավանական կապի վերաբերյալ մեկնաբանությունը, ցանկացած անհրաժեշտ բժշկական և հոգեբանական օգնության կամ հետագա զննության հետ կապված ցուցումները),

5. արձանագրությունը կազմողի վերաբերյալ տեղեկությունը (բժշկական զննություն իրականացրած անձի կամ անձանց տվյալները, ստորագրությունը):

Արձանագրությամբ նախատեսվում են խոշտանգման և վատ վերաբերմունքի ենթարկված անձանց բժշկական զննության համար չափանիշներ: Դրա 175-րդ կետի համաձայն՝ *զննություն իրականացնողը պետք է նշի վերաբերելի բոլոր դրական և բացասական տվյալները՝ գրանցելով մարդու սխեմատիկ պատկերի կիրառմամբ բոլոր վնասվածքների տեղակայումը և դրանց բնույթը:* Այդ նպատակով Արձանագրության հավելվածով նախատեսված են հատուկ ձևաթղթեր, որոնք պարունակում են տղամարդու և կնոջ անատոմիական գծապատկերներ՝ նշումներ կատարելու համար համապատասխան ուղենիշներով:

Նշվածներն ունեն նաև կանխարգելիչ նշանակություն, և Արձանագրությունում տեղ գտած ձևաթղթերի ու ուղեցույցների կիրառումն անկախ բժիշկ մասնագետների կողմից էապես կնպաստի ինչպես խոշտանգման և վատ վերաբերմունքի դրսևորման

դեպքերի արդյունավետ քննությանը և բացահայտմանը, այնպես էլ դրանց կանխարգելմանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես կարևորել է Արձանագրության սկզբունքների և ուղեցույցների կիրառությունը խոշտանգման դեպքերի քննության ընթացքում Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համատեքստում պետությունների գործողությունների իրավաչափությունը գնահատելիս¹⁰²:

«Օրենսդրությամբ նախատեսված են ազատությունից զրկված անձին Քրեակատարողական հիմնարկ մուտք գործելիս նախնական բժշկական զննության ենթարկելու վերաբերյալ կարգավորումներ: Այս ոլորտի խնդիրներին մանրամասն անդրադարձ է կատարվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովման վերաբերյալ 2017 թվականի արտահերթ հրապարակային զեկույցում¹⁰³:

Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *ուղղիչ հիմնարկ փոխադրված դատապարտյալը բժշկական զննություն անցնելու (...) նպատակով մինչև յոթ օր ժամկետով տեղավորվում է կարանտինային բաժանմունքում:*

Բժշկական զննության վերաբերյալ ավելի մանրամասն կարգավորումներ է պարունակում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշումը, որի հավելված 1-ի 37-րդ կետը սահմանում է հետևյալը.

«Կալանավորվածներին պահելու վայր ընդունվելիս (այդ թվում՝ տարանցմամբ) անձինք անցնում են նախնական բժշկական զննություն, որի արդյունքներն արձանագրվում են համապատասխան մատյանում՝ բժշկական օգնություն ցույց տալու և մարմնական վնասվածք կամ առողջական վիճակի վերաբերյալ այլ գանգապ արձանագրելու նպատակով: Կալանավորված անձի կամ դատապարտյալի բժշկական զննության արձանագրումը պետք է ներառի՝

1) *բժշկական զննության ենթակա անձի կողմից արված բոլոր հայտարարությունների ամբողջական պատկերը (ներառյալ իր առողջական վիճակի նկարագրությունը և վատ վերաբերմունքի մասին ցանկացած հայտարարություն):*

2) *օբյեկտիվ բժշկական զննության արդյունքների ամբողջական պատկերը:*

3) *բժշկի եզրակացությունը՝ հիմնված սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերի վրա:*

¹⁰² Տե՛ս Բաթին և այլք ընդդեմ Թուրքիայի գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 33097/96 և 57834/00 կետ 100, Բոկեն և Կանդեմիրն ընդդեմ Թուրքիայի գործով 2009 թվականի մարտի 10-ի գանգատ թիվ 71912/01, 26968/02, 36397/03, կետ 48:

¹⁰³ Տե՛ս <http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/b8beba20cc5240c574dd202b118ce109.pdf> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ, էջեր 67-83:

Բոլոր բժշկական զննությունները պետք է անցկացվեն քրեակադրոդական կամ այլ ծառայողների խողության և տեսողության սահմաններից դուրս:»:

2017 թվականին մշտադիտարկման այցերի և համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքներով վեր են հանվել ազատությունից զրկման վայրերում արտաքին բժշկական զննության իրականացման հետ կապված համակարգային բնույթի մի շարք խնդիրներ: Դրանք առնչվում են զննության իրականացմանը ոչ բժշկական անձնակազմի ներկայությանը, բժշկական զննության համար ոչ պատշաճ սենյակային պայմաններին, զննության կազմակերպմանը խուզարկության հետ միաժամանակ՝ ազատությունից զրկված մի քանի անձանց մասնակցությամբ, բժշկական զննության արդյունքների ոչ պատշաճ արձանագրմանը:

Այսպես, արձանագրվել է, որ Քրեակատարողական հիմնարկներում բժշկական զննությունը կատարվում է օրվա պատասխանատու հերթապահի կամ նրա օգնականի, տեսուչի, ուղեկցող ոստիկանների ներկայությամբ, որպիսի հանգամանքը հաստատվում է արձանագրության մեջ վերջիններիս ստորագրությամբ: Բացի այդ, արտաքին զննությունը կատարվում է խուզարկության հետ համատեղ՝ կարճատև տեսակցությունների սենյակում կամ հսկիչ-անցագրային կետում: Իրականացված անմիջական դիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ հայտնաբերված վնասվածքներն անհրաժեշտ մանրամասնությամբ չեն նկարագրվում, գրառումները երբեմն կատարվում են միայն ազատությունից զրկված անձի խոսքերի հիման վրա, ջնջումներով և ուղղումներով:

Արձանագրված խնդիրները հիմք են տալիս եզրակացնելու, որ թե՛ արտաքին բժշկական զննության ընթացակարգի կազմակերպման, թե՛ հայտնաբերված վնասվածքների արձանագրման պրակտիկան չի համապատասխանում միջազգային իրավական չափանիշներին:

Բժշկական զննությունը միափոսակ և արդյունավետ անցկացնելու, խոշորանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի կանխարգելման և դեպքերի բացահայտման նպատակով անհրաժեշտ է մշակել և օրենսդրական մակարդակով ամրագրել ազատությունից զրկված անձանց բժշկական զննության արձանագրության ձևաթղթեր, դրանց լրացման ուղեցույցներ՝ Արձանագրության սկզբունքներին և չափանիշներին, դրա հավելվածներով նախատեսված ձևաթղթերին, անարոմիական գծապարկերներին և ուղեցույցներին համապատասխան:

7.4. Ազատությունից զրկված անձանց միջև ամուսնության գրանցումը. օրենսդրական և գործնական խնդիրներ

Ամուսնանալու իրավունքն անձի սահմանադրական իրավունքներից է: Սահմանադրությունը ճանաչում է ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք: Սա նշանակում է, որ ամուսնանալու իրավունքը պետք է լինի պատշաճ երաշխավորված թե՛ օրենքում, թե՛ գործնականում: Այն հավասարապես վերաբերում է ինչպես ազատության մեջ գտնվող, այնպես էլ ազատությունից զրկված անձանց:

2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալը տեղեկացրել է, որ ամուսնության պետական գրանցում իրականացնելու նպատակով ինքը և «Սևան» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալը ներկայացրել են դիմում, սակայն Քրեակատարողական վարչության կողմից այն մերժվել է այն պատճառաբանությամբ, որ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ արդարադատության նախարարի 2003 թվականի ապրիլի 2-ի թիվ 153-Ն հրամանով¹⁰⁴ դատապարտյալների միջև ամուսնության գրանցման կարգ նախատեսված չէ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից կատարված ուսումնասիրությունները վեր են հանել ազատությունից զրկված անձանց միջև ամուսնության գրանցման հետ կապված օրենսդրական և գործնական խնդիրներ:

Ամուսնանալու ազատությունն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ *ամուսնական փարիքի հասած կինը և փղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն*, իսկ 3-րդ մասի համաձայն՝ *ամուսնանալու ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ առողջության և բարոյականության պաշտպանության նպատակով*:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ մասը շեշտում է, որ ամուսնության իրավունքի սահմանափակումը կարող է նախատեսվել միայն նշված օրենսգրքով: Այսպես, նույն օրենսգրքի 11-րդ հոդվածը սպառիչ կերպով սահմանում է այն դեպքերը, երբ արգելվում է ամուսնություն կնքել, որոնք են.

- *եթե անձանցից թեկուզև մեկը գտնվում է մեկ այլ գրանցված ամուսնության մեջ,*
- *եթե ամուսնացողները մերձավոր ազգականներ են (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականներ՝ ծնողներ ու զավակներ, պապ, փայր ու թոռներ, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրներ ու քույրեր, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակներ),*

¹⁰⁴ ՀՀ արդարադատության նախարարի 2003 թվականի ապրիլի 2-ի «Ազատագրված վայրերում պահվող անձանց հետ ամուսնության գրանցման կարգը սահմանելու մասին» թիվ 153-Ն հրաման:

- *եթե ամուսնացողները գտնվում են որդեգրող-որդեգրված հարաբերությունների մեջ,*

- *եթե անձանցից թեկուզև մեկը դատական կարգով ճանաչվել է անգործունակ:*

Վերոշարադրյալը հիմք է տալիս պնդելու, որ ամուսնության համար օրենսդրական որևէ սահմանափակում պայմանավորված անձի՝ ազատությունից զրկված լինելու հանգամանքով նախատեսված չէ: Թեև ՀՀ քրեակատարողական օրենսգիրքն ուղղակիորեն չի սահմանում ազատությունից զրկված անձանց ամուսնանալու ազատությունը և դրա ապահովման ընթացակարգը, այնուամենայնիվ Քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *ուղղիչ հիմնարկի վարչակազմը ստեղծում է համապատասխան պայմաններ՝ ընտանիքի և արտաքին աշխարհի հետ դատապարտյալի կապն ապահովելու նպատակով:* Կալանավորված անձանց մասով նման կարգավորում նախատեսված է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածում:

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքն իր հերթին սահմանում է ազատությունից զրկված անձանց ամուսնության գրանցման ընթացակարգեր, մասնավորապես, նշված օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կալանավորված կամ ազատազրկման վայրերում պատիժ կրող անձանց հետ ամուսնության պետական գրանցումն իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի (այսուհետ՝ ՔԿԱԳ) ղեկավարը՝ քրեակատարողական համապատասխան հաստատության ղեկավարի համաձայնությամբ ընտրված վայրում:*

Ազատությունից զրկված անձանց ամուսնության գրանցման կարգը սահմանվում է ՀՀ արդարադատության նախարարի 2003 թվականի ապրիլի 2-ի թիվ 153-Ն հրամանով, որի հավելվածի 1-ին կետի համաձայն՝ *դատապարտյալի հետ ամուսնանալ ցանկացող անձը պետք է դիմում ներկայացնի ամուսնանալու վերաբերյալ իր մշտական բնակության վայրի կամ ուղղիչ հիմնարկի գտնվելու վայրի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին:* Նույն հավելվածի 4-րդ կետում նշված է, որ *ամուսնության գրանցումը կատարվում է ուղղիչ հիմնարկի վարչական շենքում:*

Թեև նշված իրավական ակտերում բացակայում են երկու դատապարտյալների միջև ամուսնության գրանցման վերաբերյալ կարգավորումներ և առանձին ընթացակարգ, անձի ազատությունից զրկված լինելու հանգամանքով պայմանավորված ամուսնության ազատության օրենսդրական արգելք նույնպես սահմանված չէ: Մարդու այնպիսի հիմնարար ազատության սահմանափակումը, ինչպիսին է ամուսնության ազատությունը, չի բխում ինչպես ՀՀ Սահմանադրության և այլ իրավական ակտերի կարգավորումներից, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային չափանիշներից:

Այսպես, ամուսնության իրավունքն ամրագրված է Եվրոպական կոնվենցիայի 12-րդ հոդվածով, որի համաձայն՝ *ամուսնական տարիքի հասած տղամարդիկ և կանայք ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք՝ այդ իրավունքի իրականացումը կարգավորող ներպետական օրենսդրությանը համապատասխան*: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, զարգացնելով նշված կոնվենցիայի կարգավորումը, շեշտել է, որ *ամուսնանալու իրավունքի իրականացումը հանգեցնում է սոցիալական, անձնական և իրավական հետևանքների*: Այն ենթակա է Պայմանավորվող պետությունների ազգային օրենսդրության կարգավորմանը, սակայն իրավունքի սահմանափակումները չպետք է այնպես արգելեն կամ սահմանափակեն դրա իրացումը, որ էապես վնասվի իրավունքի էությունը¹⁰⁵:

Հետևաբար, ամուսնության պայմանների նախատեսումը չպետք է թողնվի պետության ազատ հայեցողությանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Յարենովիչն ընդդեմ Լեհաստանի գործում¹⁰⁶ ընդգծել է, որ *անձնական ազատությունն ամուսնության իրավունքի իրացման համար անհրաժեշտ նախապայման չէ*: Նշված գործում գանգատաբերին, ով դատապարտյալ էր, չէր թույլատրվել մեկնել մեկ այլ Քրեակատարողական հիմնարկ՝ պատիժ կրող այլ անձի հետ ամուսնանալու նպատակով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից լեհական օրենսդրության ուսումնասիրման արդյունքում դատապարտյալների միջև ամուսնության գրանցման որևէ արգելք չի հայտնաբերվել: Այս կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր դիրքորոշման մեջ արտահայտել է, որ *ազատությունից զրկվելու հետ միասին անձն անխուսափելիորեն կամ ենթադրաբար զրկվում է նաև քաղաքացիական որոշ իրավունքներից և արտոնություններից*: Սա, այնուամենայնիվ, չի նշանակում, որ *ազատությունից զրկված անձինք չեն կարող իրացնել իրենց ամուսնության իրավունքը*: Եվրոպական դատարանը բազմիցս շեշտել է, որ *ազատությունից զրկված անձի համար շարունակում են գոյություն ունենալ այն հիմնարար իրավունքներն ու ազատությունները, որոնց իրացումը չի հակասում ազատությունից զրկելու իմաստին, իսկ յուրաքանչյուր լրացուցիչ սահմանափակում պետք է հիմնավորվի իրավասու մարմինների կողմից*: Մինչև ամուսնությունը, բնականաբար, որոշակի կազմակերպչական գործողություններ պետք է կատարվեն քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից: Ազատությունից զրկված անձանց համար դրանց պարզաճ իրացման ապահովումը պետության պոզիտիվ պարտականությունն է: Ի

¹⁰⁵ Տե՛ս Քրիստին Գուդվին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 2002 թվականի հուլիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 28957/95, կետ 99:

¹⁰⁶ Տե՛ս Յարենովիչն ընդդեմ Լեհաստանի գործով 2010 թվականի հունվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 24023/03, կետեր 27,28, 43-51, 53, 55, 58, 59, 62-64:

վերջո, նշված գործով դատարանը ճանաչել է Եվրոպական կոնվենցիայի 12-րդ հոդվածի խախտում:

Վերոշարադրյալ մոտեցումների լույսի ներքո հարկ է ընդգծել, որ ազատությունից զրկվելու հետ մեկտեղ անձի որոշ իրավունքներ էականորեն սահմանափակվում են: Սակայն պատժի բովանդակությունը չի սահմանափակվում միայն հանցագործություն կատարած անձին պատժելու նպատակով: ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասը որպես պատժի նպատակներ սոցիալական արդարությունը վերականգնելու և հանցագործությունները կանխելու հետ միասին, սահմանում է նաև պատժի ենթարկված անձին ուղղելու նպատակը: Այս առումով անչափ կարևոր է ազատությունից զրկված անձի՝ արտաքին աշխարհի հետ կապի պահպանումը, մասնավորապես՝ ընտանիքի անդամների հետ: Ուստի, ազատությունից զրկված անձանց ամուսնությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ վերջիններիս ուղղելու, օրինապահ վարքագիծը խթանելու և հասարակություն վերադառնալու տեսանկյունից:

Ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական օրենսդրական կարգավորումներից ակնհայտ է, որ ազատությունից զրկված լինելու հանգամանքը հիմք չէ անձի ամուսնանալու ազատության սահմանափակման համար: Դա վերաբերում է և՛ ազատությունից զրկված ու ազատության մեջ գտնվող անձանց ամուսնության, և՛ ազատությունից զրկված երկու անձանց միջև ամուսնության դեպքերին, բացառությամբ, եթե առկա են օրենսդրությամբ նախատեսված ամուսնության գրանցումը բացառող այլ հիմքեր:

Հետևաբար, ազատությունից զրկված անձանց միջև ամուսնության գրանցման մերժումը համապատասխան օրենսդրական կարգավորումների բացակայության հիմնավորմամբ հանգեցնում է անձի ամուսնության իրավունքի անհիմն սահմանափակմանը:

Ազատությունից զրկված անձանց միջև ամուսնության գրանցման ընթացակարգը և դրա սահմանումը պետության պոզիտիվ պարտականությունն է: Ուստի, համապատասխան իրավական ակտերում անհրաժեշտ է կարարել փոփոխություններ՝ նախատեսելով և հստակեցնելով ազատությունից զրկված անձանց միջև ամուսնության գրանցման ընթացակարգային կարգավորումները:

Այնուամենայնիվ, համապատասխան կարգի բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ անձի ամուսնանալու ազատության սահմանափակման համար:

7.5. Ներքին կանոնակարգի խախտում կատարելու հետևանքով ազատությունից զրկված անձի 24 ժամով ժամանակավոր մեկուսացում

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ *պարիժը կրելու սահմանված կարգը խախտելու համար ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ սահմանված կարգով կարող են կիրառվել նկատողություն, խիստ նկատողություն կամ պարժախուց տեղափոխելը մինչև տասնհինգ օր, իսկ անչափահաս դատապարտյալին՝ մինչև տասն օր ժամկետով, տույժի միջոցները:*

Ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ տույժի միջոցների կիրառման կարգը սահմանվում է ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ, որի հավելվածի 214-րդ կետի համաձայն՝ *կալանավորված անձի և դատապարտյալի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված տույժի միջոցները կիրառվում են համապատասխանաբար կալանավորվածներին պահելու վայրի և ուղղիչ հիմնարկի պետի որոշմամբ:*

ՀՀ արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 194-Ն հրամանի¹⁰⁷ հավելվածի 24-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ *քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահը կարգապահական խախտման, դրա պայմանները վերացնելու անհրաժեշտության, կալանավորված անձի կամ դատապարտյալի համապատասխան դիմելու դեպքերում քրեակատարողական հիմնարկի պետի բացակայության ժամանակ անվտանգությունն ապահովող հերթապահ խմբի կամ քրեակատարողական հիմնարկի այլ ծառայողի գրավոր զեկուցագրի հիման վրա կալանավորված անձին կամ դատապարտյալին **առավելագույնը 24 ժամով ժամանակավոր մեկուսացնում է մինչև քրեակատարողական հիմնարկի պետի ժամանելը՝ կազմելով համապատասխան արձանագրություն:***

Քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահին նման լիազորություն ընձեռելն այն դեպքում, երբ Քրեակատարողական օրենսգրքն ազատությունից զրկված անձի նկատմամբ տույժ (այդ թվում՝ պատժախուց տեղափոխել) կիրառելու իրավասությունը վերապահում է միայն Քրեակատարողական հիմնարկի պետին, կարող է հանգեցնել մի շարք խնդիրների: ՀՀ արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 194-Ն հրամանով չի սահմանվում ազատությունից զրկված անձին մինչև քրեակատարողական հիմնարկի պետի ժամանելն առավելագույնը 24 ժամով ժամանակավոր մեկուսացնելու մասին իրար հաջորդող որոշումներ կայացնելու առավելագույն սահմանաչափ: Բացակայում են

¹⁰⁷ ՀՀ արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության անվտանգության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 194-Ն հրաման:

մեկուսացման ընթացքում ազատությունից զրկված անձին պահելու պայմանների հստակ կարգավորումներ:

Բաց է մնում նաև այն հարցը, թե անձին ժամանակավոր մեկուսացնելուց հետո Քրեակատարողական հիմնարկի պետի կողմից նրա նկատմամբ պատժախուց տեղափոխելը որպես տույժի միջոց կիրառելու դեպքում արդյոք մեկուսացման մեջ գտնվելու ժամանակահատվածը հաշվանցվում է պատժախցում պահելու ժամկետի մեջ:

Խնդրահարույց է նաև այն, որ նման դեպքերում ազատությունից զրկված անձը կարող է մինչև 24 ժամով մեկուսացվել, սակայն ավելի ուշ Քրեակատարողական հիմնարկի պետի կողմից տույժի միջոց չկիրառվի կամ կիրառվի նկատողություն կամ խիստ նկատողություն:

Քրեակատարողական հիմնարկում տույժի միջոց կիրառելու իրավասություն չունեցող պաշտոնատար անձի կողմից անձին մեկուսացնելու վերաբերյալ որոշում կայացնելու, ինչպես նաև դրա արդյունքում ազատությունից զրկված անձի կարգավիճակի փոփոխման և ավելի ուշ նշանակված տույժի ժամկետների կապակցությամբ իրավական որոշակիությունն ապահովելու համար անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով հստակ կարգավորել վերոնշարադրյալ հարցերը: Մասնավորապես, պետք է սահմանել, որ ժամանակավոր մեկուսացված անձը չի կարող պահվել պատժախցում: Կարևոր է նախատեսել նաև մինչև 24 ժամ անձին ժամանակավոր մեկուսացնելու վերաբերյալ իրար հաջորդող որոշումներ կայացնելու արգելք:

Պետք է նշել, որ բարձրացված խնդիրներին լուծում տալու ուղղությամբ 2016 թվականից սկսած իրավասու մարմնի կողմից քայլեր չեն ձեռնարկվել, սակայն համապատասխան կարգավորումների անհրաժեշտությունը շարունակում է մնալ արդիական:

7.6. Քրեակատարողական համակարգում իրավասու մարմինների գործողությունների և անգործության բողոքարկման մեխանիզմ

Ազատությունից զրկված անձանց համար իրենց իրավունքների իրացման և պաշտպանության տեսանկյունից անչափ կարևոր երաշխիք է ազատությունից զրկման վայրի վարչակազմի գործողությունների և անգործության կամ որոշումների բողոքարկման հնարավորությունը, որը կնպաստի ազատությունից զրկման վայրի վարչակազմի լիազորությունների բարեխիղճ կատարման ապահովմանը:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի և այլ իրավասու մարմինների գործողությունները (անգործությունը) կամ որոշումները բողոքարկելու հնարավորությունն ամրագրում է ստացել նաև միջազգային չափանիշներում: Այսպես,

ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» 36-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ *ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ պետք է հնարավորություն ունենա բողոքներով և պահանջներով դիմելու քրեակատարողական մարմիններին, դատական իշխանություններին կամ այլ իրավասու մարմիններին (...), իսկ 4-րդ ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր պահանջ կամ բողոք ենթակա է անհապաղ քննության (...):*

Եվրոպական բանտային կանոնների 70.1-ին կանոնի համաձայն՝ *ազատությունից զրկված անձինք պետք է հնարավորություն ունենան բողոքներ կամ պահանջներ ներկայացնելու քրեակատարողական հիմնարկի պետին կամ ցանկացած այլ իրավասու մարմին: Ըստ Եվրոպական բանտային կանոնների մեկնաբանությունների¹⁰⁸ բողոքները քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կամ այլ իրավասու մարմինների որոշումների, գործողությունների կամ անգործության դեմ պաշտոնական առարկություններ են, և ազատությունից զրկված անձինք պետք է հնարավորություն ունենան բողոքներ հասցեագրել քրեակատարողական համակարգի նկատմամբ հսկողություն կամ վերահսկողություն իրականացնող ցանկացած իրավասու մարմին: Կարգավորող դրույթները պետք է նախատեսեն բողոքարկման հատուկ ընթացակարգ:*

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացել է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգում իրավասու մարմինների գործողությունների (անգործության) կամ որոշումների բողոքարկման մեխանիզմի բացակայության հարցը: Պետք է նշել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 7-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքի համաձայն՝ *պարիժները կատարող մարմինների և հիմնարկների պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն օրենքով իրենց վերապահված գործողություններ, իսկ պաշտոնատար անձանց գործողությունների կատարումը կարող է բողոքարկվել դատարան կամ օրենքով նախատեսված այլ մարմին: ՀՀ քրեակատարողական օրենսգրքը, սակայն, չի անդրադառնում Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի և այլ իրավասու մարմինների գործողությունների, անգործության կամ նրանց կողմից կայացված որոշումների բողոքարկման հստակ կարգին, դրա ժամկետներին, բողոքին ներկայացվող պահանջներին, բողոքների քննարկման և դրանց լուծման կարգին, ինչպես նաև նշանակություն ունեցող այլ հարցերին:*

Այսպես, գործող իրավական կարգավորումների պայմաններում անհրաժեշտություն է առաջանում օրենքով նախատեսել Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի և իրավասու այլ մարմինների գործողությունները,

¹⁰⁸ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական պենիտենցիար կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի մեկնաբանությունները <https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ:

անգործությունը կամ որոշումներն ազատությունից զրկված անձանց կողմից բողոքարկելու հստակ մեխանիզմ: Ընդ որում, բողոքարկման հնարավորությունը պետք է նախատեսվի նաև կալանավորված անձանց համար: Մեխանիզմը պետք է ներառի բողոքարկման ընթացակարգ, բողոքին ներկայացվող պահանջներ, ժամկետներ, բողոքարկման վարույթում բողոք ներկայացրած անձի իրավունքներ (օրինակ՝ վարույթի նյութերին ծանոթանալու իրավունք) և բողոքի քննարկման ընթացակարգ:

Ազատությունից զրկված անձանց բողոքարկման իրավունքի վերաբերյալ օրենսդրական ամրագրումներ կատարելիս պետք է հստակեցնել այն մարմինների շրջանակը, ովքեր իրավասու են քննարկել այդ բողոքները: Անհրաժեշտ է նաև ամրագրել բողոքների քննարկման առավելագույն ժամկետները՝ դրանք նախատեսելով ինչպես բողոքի քննարկումը սկսելու, այնպես էլ քննարկման արդյունքում վերջնական որոշում կայացնելու համար՝ անհարկի ձգձգումները բացառելու նպատակով:

Ազատությունից զրկված անձի կողմից համապատասխան բողոք ներկայացնելու համար ժամկետներ նախատեսելիս պետք է հաշվի առնել նաև այնպիսի հանգամանքների առկայության հնարավորությունը, որոնք կարող են խոչընդոտել ազատությունից զրկված անձի կողմից նախատեսված ժամկետներում բողոքն իրավասու մարմինն ներկայացնելը, ինչի արդյունքում անձը կզրկվի բողոքարկման հնարավորությունից: Ուստի, կարևոր է նաև անձի կողմից համապատասխան հիմքերի առկայության դեպքում բաց թողնված ժամկետը վերականգնելու օրենսդրական հնարավորության նախատեսումը:

Մեկ այլ կարևոր հարց է Քրեակատարողական հիմնարկների կամ իրավասու այլ մարմինների գործողությունների, անգործության կամ նրանց կողմից ընդունված ակտերի դեմ ազատությունից զրկված անձանց դատական կարգով բողոքարկման կապակցությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

ՀՀ գործող քրեակատարողական օրենսգրքն օրինականության սկզբունքին անդրադառնալիս չի նշում, թե բողոքները որ դատարանին են ընդդատյա՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության, թե վարչական դատարանին: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *վարչական դատարանին ընդդատյա չեն պատժի կատարման հետ կապված գործերը*: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ *ընդհանուր իրավասության դատարանի լիազորությունների մեջ է մտնում դատավճիռն ի կատար ածելիս ծագող հարցերի լուծումը*:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է կատարել նաև համապատասխան փոփոխություններ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում՝ նախատեսելով պատժի կատարման, ինչպես նաև անձին կալանքի փակ պահելու ընթացքում

Քրեակարարողական հիմնարկի վարչակազմի կամ իրավասու այլ մարմինների գործողությունների, անգործության կամ նրանց կողմից ընդունված ակտի դատական բողոքարկման ընթացակարգերի հատուկ կարգավորումներ, ազատությունից զրկված անձի կողմից բողոքարկման ժամկետներ, դատարանի կողմից հարցի քննարկման ժամկետներ, կայացվող դատական ակտի տեսակը, դրանով պայմանավորված՝ ակտի ուժի մեջ մտնելու ժամկետ, վերաքննության և վճռաբեկության կարգով դրանց բողոքարկումը:

Նշված գործերով դատական ակտի տեսակը սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն դեպքերը, երբ ազատությունից զրկված անձի՝ բողոքով ներկայացրած պահանջի բավարարումը բողոքարկման վարույթի ընթացքում դառնում է ժամանակավրեպ: Օրինակ՝ ազատությունից զրկված անձը բողոքարկում է Քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի աշխատակիցների անգործությունը կապված իրեն ցուցված դեղերը չտրամադրելու հետ, որոնք պետք է ընդուներ հստակ ժամանակահատվածում կամ, օրինակ, ցավեր ունենալու պարագայում, սակայն մինչև դատարանի կողմից բողոքի քննարկման արդյունքում ակտ կայացնելը նշված դեղերի տրամադրման անհրաժեշտությունը վերանում է:

Քրեակարարողական հիմնարկի և իրավասու այլ մարմինների գործողությունների, անգործության կամ իրենց կողմից կայացրած որոշման կամ ակտի բողոքարկման մեխանիզմի նախատեսումն էական նշանակություն կունենա ազատությունից զրկված անձանց իրավունքների պարզաճ իրացման համար: Մեխանիզմը սահմանելիս, սակայն, հարկ է կատարել մանրակրկիտ ուսումնասիրություն և նախատեսել վերոշարադրյալ բոլոր հարցերի կապակցությամբ հստակ կարգավորումներ: